

Շ.Թ. Թորոսյան

ԿԻԼԿԻԱՅԻ
ՀԱՅԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ -
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
1919-1920 թ.թ.

9147 325

Բ-Ձ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Շ. Թ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
1919—1920 ԹԹ.

2389



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1987

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԳՅԱՆ
Գրախոս՝ Հայկական ՄՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ

Քոռոսյան, Շ. Թ.

Բ 822 Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919—1920 թթ./[Խմբ.՝ Լ. Ա. Խուրշոյան], Երևանի պետ. համալս.—Եր.: Երևանի համալս. հրատ., 1987.—272 էջ:

Մենագրության մեջ լուսարանվում է Կիլիկիայի հայության պատմության 1901—1920 թթ. ժամանակահատվածը: Քննարկվում են Ազանայի 1909 թ. կոտորածի, առաջին աշխարհամարտի տարիներին Կիլիկիայի հայերի կացության, 1919—1920 թթ. հասարակական-քաղաքական կյանքի, ինքնապաշտպանական կոմիտեի, Կիլիկիայի ինքնավարության և հայ-ֆրանսիական հարաբերությունների հարցերը:

0505040000—01
704(02)—87 55—86

ԳՄԳ 63.3(220)

ТОРОСЯН ШМАВОН ТОРОСОВИЧ
НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНЫЕ
ДВИЖЕНИЯ АРМЯН КИЛИКИИ В 1919—1920 ГГ.

(на армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1987

ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդի մի սովոր հատվածի՝ կիլիկեհայերի 1901—1920 թթ. հասարակական-քաղաքական կյանքի, նրանց մղած հերոսական ինքնապաշտպանական կոմիտեի ու հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը գիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում:

Մի շարք հանգամանքներ՝ թեմայի կարևորությունն ու հետաքրքրությունը հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության ամբողջացման համար, նրա թերի մշակվածությունը՝ մի կողմից, և, որ ամենագլխավորն է, թուրքական պատմագրության կողմից կիլիկեհայերի պատմության նենգափոխումն ու խեղաթյուրումը՝ մյուս կողմից, առավել հրատապ են դարձնում նրա ուսումնասիրությունը:

Կիլիկեհայերի 1901—1920 թթ. պատմությունը մշակելիս ու շարադրելիս մեզ համար որպես սկզբնաղբյուր են ծառայել ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական (ՀՍՍՀ ՊԿՊԱ) ու ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական (ՀՍՍՀ ՊԿՀՀԱ) արխիվներում պահվող փաստաթղթերը, Ամբողջական Հայաստանի պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանի և ֆրանսիական քաղաքական ու զինվորական իշխանությունների միջև փոխանակված պաշտոնական գրությունները, կիլիկեհայ հասարակական-քաղաքական գործիչների, ականատեսների ու ժամանակակիցների հուշերը, պարբերական մամուլում հրապարակված հոդվածներն ու նյութերը և այլն: Օգտագործել ենք նաև սփյուռքահայ և օտար հեղինակների աշխատությունները:

Կիլիկեհայության մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի պատմության վավերագրերի զգալի մասը գտնվում է Սովետական Հայաստանի սահմաններից դուրս, հիմնականում՝ Փարիզի Նուբարյան մատենադարանում և Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքարանի արխիվում, որը և հասկանալի պատճառներով անմատչելի է մնացել մեզ համար: Այդուհանդերձ, մեծ թվով

փաստաթղթեր՝ զեկուցագրեր, տեղեկագրեր, պաշտոնական գրություններ, նամակներ և այլն, Մ. Նաթանյանի նախաձեռնություններով հրատարակվել են սփյուռքահայ առաջադիմական պարբերական մամուլի և հանդեսների էջերում. «Պայքար» տարեգիրք (Բոստոն), «Հասկ» ամսագիր (Անթիլիաս), «Զարթոնք» օրաթերթ (Բեյրութ) և այլն, որոնք էլ օգտագործվել են մեր կողմից:

Թեև սահմանափակ քանակությամբ, բայց ոչ պակաս արժեքավոր վավերագրեր գտնվում են նաև Սովետական Հայաստանի արխիվներում: Առանձնապես պետք է հիշատակել Հայաստանի բուրժուական հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի՝ Փարիզից ուղարկված զեկուցագրերը, որոնցում արժեքավոր տեղեկություններ կան մեծ տերությունների միջև հակամարտությունների, ֆրանսիական կառավարության արևելյան քաղաքականության ու Կիլիկիայի նկատմամբ որդեգրած նոր դիրքորոշման, հայ-ֆրանսիական հարաբերությունների և բազմապիսի այլ հարցերի մասին (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200): Կիլիկիահայերի հասարակական-քաղաքական կյանքը լուսաբանող կարևոր փաստաթղթեր կան նաև նույն արխիվի 57 և 282 ֆոնդերում, ինչպես նաև ՀՍՍՀ ՊԿՀՀԱ 4/114 ֆոնդում:

Կիլիկիահայերի, կամ ավելի շուտ, Կիլիկիայի հայաբնակ մի շարք շրջանների պատմության մշակմամբ որոշակիորեն զբաղվել են Սփյուռքում: Առանց դրվատանքի չի կարելի խոսել այն քաղաքների հայրենակցական միությունների և առանձին անհատների հայրենասիրական նախաձեռնության մասին, որոնք իրենց հայրենի քաղաքների ու գավառների պատմությունը կորստից փրկելու և սերունդներին հանձնելու նպատակով անգերագնահատելի աշխատանք են կատարել: Մեծ դժվարություններով և նյութական սուղ միջոցներով (հիմնականում նվիրատվությունների) նրանք կարողացել են հսկայական նյութ հավաքել ու ստվարածավալ հատորներ հրատարակել, որոնցից չուրաքանչյուրը յուրատեսակ հանրագիտարան-ժողովածու է այդ գավառների կամ քաղաքների պատմության, աշխարհագրության, ազգագրության, բարբառի, մշակույթի և այլնի մասին: Առաջին հերթին այս կապակցությամբ պետք է հիշատակել Մարաշի¹, Հաճընի², Այնթա-

պի³, Սսի⁴ և այլն պատմությունը նվիրված հաստատվոր աշխատությունները: Սակայն գիտական խոր վերլուծության պակասը, միակողմանիությունն ու սուբյեկտիվությունը, օգտագործված սկզբնաղբյուրներն ու գրականությունը չմատնանշելը, հետաքրքրության շրջանակների սահմանափակությունը, անկասկած, թուլացնում են վերոհիշյալ աշխատությունների գիտական արժեքը:

Հաճընի յոթամսյա հերոսամարտին է նվիրված Ս. Թերզյանի հետաքրքրաշարժ աշխատությունը⁵: Հաճընի հերոսամարտի ամբողջ տեղությունը ինքնապաշտպանների շարքերում մարտնչելը, նրանց հաղթանակների հրճվանքն ու պարտությունների դաժնությունը կիսելը, մի խոսքով՝ իրադարձություններին շատ մոտիկից ծանոթ լինելը հեղինակին հնարավորություն են տվել երբեմն ծայրահեղության հասնող մանրամասնությամբ վերարտադրելու և նկարագրելու մի բուռ հայ լեռնցիների անհավասար, կենաց-մահու գոյակոխիլը քեմալական հրոսակների դեմ: Ս. Թերզյանի աշխատության դրական կողմերը ըստ արժանվույն գնահատելով հանդերձ՝ անհրաժեշտ է նշել, որ ոչ միշտ կարելի է համաձայնվել նրա տեսակետների հետ: Մեզ համար հատկապես անընդունելի են նրա կողմից առաջ քաշվող Հաճընի անկման պատճառներն ու դրանցից բխող եզրակացությունները, որոնցում, մեր կարծիքով, բացահայտ է Թերզյանի միտումնավորությունը:

Կիլիկիահայերի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերն է շոշափել իր արժեքավոր հուշագրքում Ա. Կենճյանը⁶: Աշխատությունում լայնորեն օգտագործված փաստաթղթերը և հնչակյան պարբերական մամուլից կատարված քաղվածքները փաստորեն այն դարձնում են կարևոր սկզբնաղբյուր Կիլիկիայի 1901—1920 թթ. իրադարձությունների և մասնավորապես ինքնավարության հռչակման պատմության ուսումնասիրման համար: Առանձնապես հետաքրքիր են ինքնավարական շարժմանը վերաբերող հեղինակի վկայություններն ու եզրահանգումները, թեև

³ Տե՛ս Գ. Մարաֆյան, Պատմություն Այնթապի հայոց, հ. Ա և Բ, Լոս-Անջելես, 1953:

⁴ Տե՛ս Մ. Քելեշյան, Սիս մատյան, Բեյրութ, 1949:

⁵ Տե՛ս Ս. Թերզյան, Հաճընի ութամսյա դյուցազնամարտը, Բուենոս-Այրես, 1956:

⁶ Տե՛ս Ա. Կենճյան, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը և կիլիկյան ինքնավարության ակտը (Կիլիկյան հուշեր պատմության համար), 1919—1921, Բեյրութ, 1958:

¹ Տե՛ս Գ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934:

² Տե՛ս Հ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գողան-դաղի հայ գյուղերը, Լոս-Անջելես, 1942:

դրանցում պարզորոշ նկատվում է հնչական կուսակցության դե-
րի գերագնահատման միտումը:

Կիլիկիայի քաղաքական և տնտեսական կյանքի, կիլիկեհա-
յերի ինքնապաշտպանական կոնիվներին ու Կիլիկիայում ֆրանսիա-
կան իշխանությունների վարած հայադավ քաղաքականության
մասին հարուստ տեղեկություններ կան Հայկական լեզեոնի պատ-
մությանը նվիրված Տ. Պոյաճյանի աշխատությունում⁷: Անձնա-
կան տպավորությունների, լեզեոնականների ու ժամանակակից-
ների հուշերի և մեծ թվով փաստաթղթերի հիման վրա Տ. Պոյաճ-
յանը գրել է Հայկական լեզեոնի պատմությունը և մարտական
ուղին պատկերող արժեքավոր մենագրություն: Ել որքանով լե-
զեոնի պատմությունը անխզելիորեն կապված է կիլիկեհայերի
պատմության հետ, հեղինակը լեզեոնի պատմությունը շարագրել
է կիլիկյան իրադարձությունների ֆոնի վրա և այն դիտել որպես
կիլիկեհայ հասարակական-քաղաքական կյանքի անբաժանելի
մասը:

Մեզ հուզող թեմայի առանձին հարցերի մասին հարուստ
փաստական նյութեր կան նաև սփյուռքահայ հեղինակներ Ա. Ա-
թանասյանի⁸, Գ. Ահարոնյանի⁹, Վ. Խուպեսերյանի¹⁰, Ա. Կեսա-
րի¹¹, Մ. Ճիզմեճյանի¹², Ս. Սաղըրյանի¹³, Մ. Սերոբյանի¹⁴ և ու-
րիշների գործերում:

Դժվար է գտնել հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի
պատմությունը վերաբերող որևէ կարևոր իրադարձություն, որի
կողմով անտարբերությամբ անցներ բազմավաստակ պատմաբան
Լեոն: Իր վերջին շրջանի աշխատություններում¹⁵ նա, թեև հա-

րևանցիորեն, անդրադարձել է կիլիկեհայությանը հուզող մի շարք
հարցերի՝ նրանց ինքնապաշտպանական կոնիվներին, եվրոպական
տերությունների խարդախ ու երկդիմի քաղաքականությունը,
թուրքական ազգայնական շարժմանը և այլն, որոնցում, սակայն,
տեղ են գտել հակասական ու սխալ մտքեր: Այսպես, միանգամայն
իրավացիորեն նա քննադատում ու մերկացնում է ֆրանսիական
գաղութարարների հայակործան քաղաքականությունը Կիլիկիա-
յում, մերձեցումը քեմալականների հետ և հայ քաղաքական կու-
սակցությունների պառակտողական-եսասիրական գործունեու-
թյունը: Միաժամանակ դժվար է համաձայնվել մեծավաստակ
գիտնականի այն տեսակետի հետ, թե իբր ինքնապաշտպանու-
թյան նպատակով կիլիկեհայերի համագործակցությունը ֆրան-
սիացիների հետ «մի կատարյալ արկածախնդրություն էր»¹⁶, թե
իբր քեմալականների դեմ պայքարելու համար ֆրանսիացիներին
«հարկավոր էին ահագին ծախսեր»¹⁷ և այլն:

Վերջին շրջանում սովետահայ պատմաբանների ջանքերի
շնորհիվ որոշակի աշխատանք է կատարվել արևմտահայերի,
այդ թվում նաև կիլիկեհայերի պատմության բազմակողմանի ու-
սումնասիրության ուղղությամբ:

Կիլիկեհայության հասարակական-քաղաքական կյանքի հետ
առնչվող մի շարք հարցեր քննարկվել են պատմական գիտու-
թյունների թեկնածու Ռ. Սահակյանի մենագրությունում¹⁸: Չնա-
յած այն բանին, որ նրա ուսումնասիրության առանցքը թուրք-
ֆրանսիական հարաբերություններն են 1919—1921 թթ. և Կի-
լիկիան, բայց և այնպես Ռ. Սահակյանը իրավացիորեն մեծ տեղ
է հատկացրել կիլիկեհայ կյանքի այնպիսի հարցերի, ինչպիսիք
են հայերի վերադարձը Կիլիկիա, ինքնապաշտպանական կոնի-
վները և քեմալականների գործադրած բռնություններն ու կոտո-
րածները, թուրք-ֆրանսիական առնչությունները, Կիլիկիան քե-
մալականներին վերադարձնելը և դրա կործանարար հետևանք-
ները կիլիկեհայերի համար և այլն:

Աշխատության առանձին գլուխներ շարադրելիս օգտվել ենք
սովետահայ պատմաբաններ Վ. Պարսամյանի¹⁹, Ե. Սարգսյա-

⁷ Տե՛ս Տ. Պոյաճյան, Հայկական լեզեոնը, Ութթրթառն, 1965:
⁸ Տե՛ս Ա. Աթանասյան, Կիլիկիո մոտավոր անցյալին, Փարիզ, 1937:
⁹ Տե՛ս Գ. Ահարոնյան, Մեծ երազի ճամփուն վրա, Բեյրութ, 1964, Հուշա-
մատյան մեծ եղեոնի, Բեյրութ, 1965:
¹⁰ Տե՛ս Վ. Խուպեսերյան, Օրագրություն ուղեորության յնվրոպա Սահակ Բ
կաթողիկոսին Կիլիկիո, Հալեպ, 1928:
¹¹ Տե՛ս Ա. Կեսար, Այնթապի գոյամարտը, Բոստոն, 1945:
¹² Տե՛ս Մ. Ճիզմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակ-
ցության (1890—1925), Ֆրեզնո, 1930:
¹³ Տե՛ս Ս. Սաղըրյան, Կեսարյան հուշամատյան (1895—1945), Փարիզ,
1948:
¹⁴ Տե՛ս Մ. Սերոբյան, Դիտումներ և դատումներ, Բեյրութ, 1932:
¹⁵ Տե՛ս Ա. Աթանասյան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ,
Փարիզ, 1935, Անցյալից, Թիֆլիս, 1925:

¹⁶ Տե՛ս Ա. Աթանասյան, էջ 349:
¹⁷ Տե՛ս Ա. Աթանասյան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ,
էջ 221:
¹⁸ Տե՛ս Ռ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլի-
կիան 1919—1921 թթ., Երևան, 1970:
¹⁹ Տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967:

նի²⁰, Ջ. Կիրակոսյանի²¹, Հ. Ղազարյանի²², Հ. Պողոսյանի²³, Ա. Համբարյանի²⁴ և ուրիշների ծավալուն աշխատություններից, որոնցում մարքսիստական պատմահայեցողության դիրքերից քննարկվել են արևմտահայերի, այդ թվում նաև կիլիկեհայերի սոցիալ-տնտեսական դրություն, ազատագրական շարժումների, հայկական ջարդերի և, մասնավորապես, երիտթուրքերի կողմից հայերի ցեղասպանության նողկալի ծրագրի մշակման ու կենսագործման հարցերը:

Կիլիկեհայերի հասարակական-քաղաքական կյանքի որոշ հարցեր այս կամ այն չափով շոշափվել են սովետական արևելագետներ Ա. Ժելտյակովի²⁵, Ն. էֆենդիեայի²⁶ և Ա. Շամսուտդինովի²⁷ աշխատություններում: Սակայն նրանք միակողմանիորեն, մակերեսորեն են անդրադարձել այդ հարցերին, որն էլ հաճախ հանգեցրել է սխալ ու թյուր եզրակացությունների ու գնահատականների: Մյուս կողմից, կարծում ենք, գրել Կիլիկիայի 1918—1922 թվականների պատմությունը և միայն անցողակի հիշատակել կիլիկեհայերին, որոնք, համենայն դեպս, այդ պատմության ոչ երկրորդական կերտողներն էին, պետք է լուրջ թերութուն համարել վերահիշյալ աշխատությունների համար:

Փաստական նյութի հարստության տեսակետից ուշադրու-

²⁰ Տե՛ս Саркисян Е. К., Экспансионистская политика османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.

²¹ Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ., Երևան, 1965:

²² Տե՛ս Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967:

²³ Տե՛ս Հ. Պողոսյան, Ջեթունի պատմությունը 1409—1921 թթ., Երևան, 1969:

²⁴ Տե՛ս Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979:

²⁵ Տե՛ս Желтяков А. Д., Турецкое крестьянство—решающая сила в борьбе за национальное освобождение страны в 1918—1920 годах (канд. диссертация), Ленинград, 1955.

²⁶ Տե՛ս Эфендиева Н. З., Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии (1919—1921 гг.), Баку, 1966.

²⁷ Տե՛ս Шамсутдинов А., Национально-освободительная борьба в Турции (1919—1923), Москва, 1966.

թյան արժանի են ֆրանսիացի հեղինակներ էդուարդ Բրեմոնի²⁸, Պոլ Դյու Վեուի²⁹ և Միշել Պայարեսի³⁰ աշխատությունները: Ներանց զբաղեցրած բարձր պաշտոնները և Կիլիկիայի կյանքին քաջածանոթությունը, ինչպես նաև ֆրանսիական փաստաթղթերի առատորեն օգտագործումը նշված աշխատությունները կարևոր սկզբնաղբյուր են դարձնում Կիլիկիայի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ու մշակութային կյանքի պատմության ուսումնասիրության համար: Սակայն Կիլիկիան Ֆրանսիայի համար շահութաբեր երկրամաս դիտելու և Կիլիկիայի պատմությունն էլ այդ տեսանկյունով շարագրելու միտումը, հաճախ էլ հեղինակների սուբյեկտիվությունը մեծապես թուլացնում են դրանց արժեքը:

Թեմայի վրա աշխատելիս ոչ պակաս կարևորություն ենք տվել թուրք հեղինակների աշխատություններին: Դժբախտաբար հնարավորություն չենք ունեցել օգտագործելու թուրքական սկզբնաղբյուրները և հիմնականում սահմանափակվել ենք Արբեղյու Դամարի, Դալբըր Թեջեպի, էսատ Ուրասի, Շապուլյու էնվեր Բեհնանի, Յազղան Ֆահրիեի ու Սերգարլար Ներիմանի և ուրիշների աշխատություններով³¹: Սակայն նրանք, բացառությամբ էսատ Ուրասի, խուսափում են հանգամանորեն խոսել հայերի մասին: Այդ կցկտուր հիշատակումների մեջ անգամ չաք է ծակում նրանց միտումնավորությունը, պատմական հանրահայտ փաստերն ու անցքերը, հետևապես և արևմտահայության պատմությունը խեղաթյուրելու կանխամտածվածությունը, որոնք էլ խիստ անարժանահավատ են դարձնում նրանց գործերը:

²⁸ Տե՛ս Brémond E., La Cilicie en 1919—1920, Paris, 1921.

²⁹ Տե՛ս Du Véou Paul, La passion de la Cilicie (1919—1922), Paris, 1954.

³⁰ Տե՛ս Paillarés M., Le kémalisme devant les Alliés, Constantinople, Paris, 1922.

³¹ Տե՛ս Ariköglü Damar, Hatıralarım. Milli mücadele Çukurovadâ. Fransız işgöhi ve kanlı savaşlar, İstanbul, 1961. Dalkır Recep, Yiğitlik günleri. Milli mücadelede Çukurova, İstanbul, 1961. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950. Şapolyo Enver Behnan, Kuvayı milliye tarihi, Ankara, 1957. Yazgan Fahriye ve Serdarlar Neriman, Türkiye cumhuriyeti tarihi (1918—1955), İstanbul, 1956.

ԿԻՒԿԵՀԱՅԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅՅԱԼԻՑ

Պատմական աղբյուրների վկայությամբ դեռևս մեր թվականությունից առաջ զգալի թվով հայեր բնակություն էին հաստատել Կիլիկիայի արևելյան շրջաններում: Միջին դարերում և մասնավորապես 11-րդ դարի կեսերից, երբ Հայաստանը ասպատակում էին սելջուկ-թուրքերը, հայ նոր զանգվածներ անցան Կիլիկիա: Այսպիսով, 11-րդ դարի վերջերին Կիլիկիայում կուտակված հայությունը կարողացավ գերազանցություն ձեռք բերել մյուս ազգությունների նկատմամբ: Երկրի տարբեր շրջաններում առաջացան մի շարք ֆեոդալական տներ, կազմավորվեց Կիլիկիայի հայկական իշխանությունը, ապա և թագավորությունը:

Դժբախտաբար, Կիլիկիայի հայկական պետությունը հարատևել չկարողացավ: Եգիպտական մամլուքների երկարատև ու ավերիչ արշավանքներից հյուծված, քայքայված թագավորությունը 1375 թ. կործանվեց: Գրավվեց մայրաքաղաք Սիսը և հայ վերջին թագավոր Լևոն 6-րդը գերեվարվեց Եգիպտոս:

Սակայն օտար զավթիչների դեմ մղվող պայքարը դրանով չավարտվեց: Պարտված բանակի առանձին ջոկատներ ու Դաշտային Կիլիկիայի բնակչության մի մասը նահանջեցին դեպի հյուսիս և ամրանալով Տավրոսի փեշերին, շարունակեցին պայքարը: Ճիշտ է, անկախ պետականությունը վերականգնել նրանց այդպես էլ չհաջողվեց, բայց այնուամենայնիվ Տավրոսյան լեռնաշղթայի առանձին մասերում՝ Զեյթունում, Հաճընում, Կապանում, Սսում և այլուր ստեղծվեցին հայկական փոքրիկ իշխանություններ, որոնք որոշ ժամանակ պահպանեցին իրենց կիսանկախ գոյավիճակը¹, իսկ Զեյթունի իշխանապետությունը կարողացավ պահել իր կենսունակությունը և հարատևեց ընդհուպ մինչև 20-րդ դարի սկզբները:

1378 թվականից սկսած, Կիլիկիան պարբերաբար կառավա-

րում էին Ռամազան-օղլուների և Զյուլ-Գատրյանների ձորապետական ընտանիքները, որոնք փոքր ի շատե հզորանալով, հրաժարվում էին ճանաչել կենտրոնական իշխանությունը: Անհրաժեշտ է նկատել, որ նրանց կախումը կրում էր սոսկ ձևական բնույթ:

17-րդ դարի սկզբներից պատմության թատերաբեմ է դուրս գալիս Կոզան-օղլուների (Կոզանյանների) ընտանիքը, որը շուտով այնքան է հզորանում, որ 1640 թ. օգտվելով Ռամազան-օղլուների թուլությունից, ամբողջ Լեոնային Կիլիկիան ենթարկում է իր տիրապետությանը: Հետագայում Կոզան-օղլուների իշխանությունը բաժանվում է երկու մասի՝ Կոզանը Ղարբի (արևմտյան) և Կոզանը Շարբի (արևելյան): Վերջինս անվանապես ենթարկվում էր Հալեպի կուսակալությանը, որը և արտահայտվում էր տարեկան 25 հազար դուրուշ հարկատվությամբ²:

Իր հզորացումն ապրող Օսմանյան պետությունը աստիճանաբար հայացքը ուղղում է դեպի հարավ ու արևելք: 15-րդ դարի վերջերին սուլթան Բայազիտ 2-րդը թուրքական բանակների գրլուխն անցած շարժվում է դեպի Կիլիկիա, հաղթում եգիպտական զորքերին և նվաճում երկրամասը: Այդ շրջանից էլ Կիլիկիայի հետագա բախտը կապվում է Օսմանյան կայսրության պատմության հետ:

Թուրքական պետությունը, իհարկե, չէր կարող հանդուրժել Կոզան-օղլուների կենտրոնախույս ձգտումները և յուրաքանչյուր հարմար առիթը օգտագործում է այն վերացնելու համար: 1819 թ. սուլթան Մահմուդ 2-րդը մի մեծ զորաբանակով Կիլիկիա է ուղարկում Յոզղատի ձորապետ Չափան-օղլուին: Սկզբում նրան հաջողվում է հաղթել Հալեպի բռնապետ Հյուպեյ-օղլուին և ապա շարժվել Զեյթունի վրա: Սակայն հայ լեռնականները մի լավ դաս են տալիս անկող հյուսիսին և հարկադրում նրան փոխելու արշավանքի ուղղությունը դեպի Լեոնային Կիլիկիա: Այստեղ ևս Չափան-օղլուին հաղթանակ չէր սպասում: Բոկլու Պելեն կոչված վայրում տեղի է ունենում ճակատամարտ, որը և ավարտվում է Կոզան-օղլուների հաղթանակով: Չնայած ձեռք բերված հաղթանակին, պատերազմելը անխոհեմություն համարելով, Կոզան-օղլուները հնազանդվում են կայսրությանը:

Քիչ անց Կիլիկիան գրավվում է եգիպտացիների կողմից:

¹ Տե՛ս Հ. Պոզոսյան, նշվ. աշխ., էջ 508—511:

² Տե՛ս Հ. Պոզոսյան, նշվ. աշխ., էջ 515:

1832 թ., օգտավերով գահավիժող Օսմանյան կայսրության թուլութունից, հարավից Իբրահիմ փաշան ներխուժում ու գրավում է Պաղեստինը, Սիրիան, Կիլիկիան և ապա մխրճվում դեպի երկրի խորքերը: Սակայն եգիպտական գրավումը նույնպես կարճատև է լինում: Շուտով ստորագրվում է Ունքյար-Իսքենդիա պայմանագիրը և Կիլիկիայում վերահաստատվում է թուրքական տիրապետությունը: Հակառակ ակնկալությունների, ինչպես Գ. Չազմագճյանն է նշում, եգիպտացի նվաճողները բարյացակամ վերաբերմունք են հանդես բերել դեպի հայերը³:

Կողան-օղլունների իշխանության վերացման մի նոր փորձ է ձեռնարկվում 1865 թ.: Թուրքական բանակները Դերվիշ և Իսմայիլ փաշանների հրամանատարությամբ մտնում են Կիլիկիա: Չկարողանալով որևէ դիմադրություն կազմակերպել, Կողան-օղլուները անձնատուր են լինում: Հիշատակվում է, որ Դերվիշ փաշայի զորաբանակի առաջնորդներից մեկը հաճընցի է եղել⁴: Այսպիսով, ավարտվում է Կիլիկիայի բոլոր շրջանների վերջնական նրվաճումը Օսմանյան կայսրության կողմից: Ճիշտ է, Կողան-օղլուները 1878 թ. ապստամբում և փորձում են վերագրավել իշխանությունը, բայց դա նրանց հաջողություն չի բերում:

Օսմանյան զավթիչների Կիլիկիա մուտք գործելուց և հաստատվելուց հետո ամբողջ երկրամասը բաժանվում է երկու վարչամասերի և մտնում Ադանայի և Մարաշի փաշայությունների մեջ: 1834 և 1864—67 թթ. ձեռնարկված վարչական փոփոխությունների հետևանքով վերացվում են փաշայությունները և ստեղծվում են վարչական նոր միավորներ՝ վիլայեթներ: Կազմակերպվում են Ադանայի ու Հալեպի վիլայեթները: Հիշատակվում է, որ 1848 թ. Մարաշը հանձնվել է Ադանայում նստող Օսման փաշայի իրավասությունը⁵:

1860-ական թվականների վերջերին կայսրությունում վարչական նոր բարեփոխումներ են կատարվում: Ադանայի վիլայեթի կազմի մեջ են մտցվում Ադանայի, Տարսուսի (հետագայում՝ Մերսինի), Կողանի (Սսի), Զեբել-Բերեքեթի (Օսմանիեի) և Իշիլի (Սելեկիայի) սանջակները, իսկ հայաշատ Մարաշի, Այնթապի, Զեյթունի և Ալբրիստանի գավառները՝ Հալեպի վիլայեթի մեջ: Կո-

³ Տե՛ս Գ. Չազմագճյան, Դրվագներ Կիլիկիո նախընթաց կյանքին, «Հայրենիք» ամսագիր, 1931, № 3, էջ 138—139:

⁴ Տե՛ս Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 40:

⁵ Տե՛ս Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 249:

ղան-օղլուների իշխանապետության վերացումից հետո ձեռնային Կիլիկիան Կողանի սանջակի անվան տակ ենթարկվում է Հալեպի կուսակալությանը⁶:

Ուսումնասիրություններում և ժամանակակիցների հուշերում դառը հիշողություններ են պահպանվել Կողան-օղլուների բռնապետության մասին: Մանր հարկերը, օրենքի և օրինականության բացակայությունը, մարդկային տարրական իրավունքների ոտնահարումը և հալածանքները, կամայականություններն ու երկրամասում տիրող անիշխանությունը հարցականի տակ էին դրել Կիլիկեհայության ֆիզիկական գոյությունը⁷: Մեծ թվով հայեր հարկադրված լքում էին իրենց տունն ու տեղը և հեռանում դեպի ավելի ապահով երկրներ: Այդ շրջանում միայն Հյուսիսային Սիրիա և Լիբանան են գաղթել հազարավոր կիլիկեհայեր:

Անհամեմատ ծանր են եղել ազգային-կրոնական հալածանքներն ու խտրականությունը: Գյավուրը (անհավատը), այսինքն ոչ մահմեդականը, իրավունք չունեն դատարանում վկայություն տալու: Ձի կամ էջ նստող հայը թուրքական գյուղի մոտենալիս և կամ էլ մահմեդականի հանդիպելիս պարտավոր էր իջնել շորքոտանուց: Հ. Պողոսյանը իր գրքում բազմապիսի փաստեր է բերում հայ կղերի նկատմամբ կիրառված հալածանքների, բռնությունների ու սպանությունների վերաբերյալ: Մեծ թվով հայ հոգեվորականներ, այդ թվում կաթողիկոսներ ու բարձրաստիճան եկեղեցականներ, սպանվել և պատժվել են Կողան-օղլուների ձեռքով⁸: Եվ բոլորովին պատահական չէր կիլիկեհայերի այն օգնությունն ու օժանդակությունը, որ նրանք ցույց տվեցին սուլթանական բանակներին Կողան-օղլուների դեմ մղվող պայքարում:

Աշխարհակալ Օսմանյան կայսրությունը աստիճանաբար կորցնելով իր երբեմնի հզորությունը, գլորվում էր դեպի իր վերջալույսը: Կապիտուլյացիաների ռեժիմը, ներքին քայքայումը, տիրող դասակարգերի ալյասերումը, երկրում իշխող ռազմաֆեոդալական բարքերն ու հարաբերությունները և արտասահմանյան կապիտալից անվերջ ուժեղացող կախումը, մի կողմից, և ստորկայված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները,

⁶ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 531:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 521: Տե՛ս նաև Մ. Արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ (1808—1909), Երուսաղեմ, 1927, էջ 4124 և Գ. Չազմագճյան, նշվ. հոդվածը:

⁸ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 521—522:

մյուս կողմից, արագացնում էին կայսրության փլուզման պրոցեսը: 19-րդ դարում Հունաստանն ու բալկանյան երկրները թոթափում են թուրքական լուծը և անկախություն նվաճում: Կայսրությունից անջատվում են Եգիպտոսն ու Ալժիրը: Քայքայման պրոցեսը կանխելու նպատակով սուլթանների ձեռնարկած ջանքերն ու բարեփոխումները ցանկալի արդյունք չեն տալիս:

19-րդ դարում հրապարակված զույգ թանգիմաթները որոշակի իրավունքներ ու արտոնություններ էին ընձեռում նաև ոչ մահմեդական ժողովուրդներին: Խոստացվում էր հպատակների կյանքի, պատվի ու գույքի ապահովություն, հավասարություն օրենքի առաջ, դատարաններում վկայություն տալու և պետական ու գինվորական ծառայության ներգրավվելու իրավունք, ներքին կարգ ու կանոնի հաստատում և այլն:

Սակայն թուրքիայի պես հետամնաց ու միջնադարյան խավարում խարխափող երկրում նման բարեփոխումների կենսագործումը կապված էր մեծ դժվարությունների հետ և անգամ անհնարին էր: Իրականում այն, որպես մեռյալ տառ «մեծադղորդ խոստումներից հեռու շնաց և փաստորեն մնաց թղթի վրա»⁹: Այլ կերպ լինել էլ չէր կարող: Բոլոր նման կարգի բարեփոխումները չէին բխում տիրապետող դասակարգերի շահերից և նպատակ էին հետապնդում խաբելու համաշխարհային հասարակական կարծիքը և կանխելու ազգային փոքրամասնությունների ճակատագրով «հետաքրքրվող» ու սեփական շահեր հետապնդող մեծ տերությունների՝ թուրքիայի ներքին գործերին միջամտելու հնարավորությունը:

Չնայած հոթանդիմաթյան շրջանում քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ կիրառվող քաղաքական, սոցիալական ու ազգային-կրոնական խիստ սահմանափակումներին, կիլիկիահայերի տնտեսական ու մշակութային կյանքը աստիճանաբար սկսում է տեղաշարժվել ու զարգանալ: Կիլիկիայի աշխարհազրական նպաստավոր դիրքը, բարեբեր հողն ու արևադարձային կլիման բարենպաստ պայմաններ էին ստեղծում գյուղատնտեսությունից զարգացման և գյուղատնտեսական հումքի մշակումով զբաղվող արհեստների ու առևտրի հետագա ընդլայնման համար:

19-րդ դարի սկզբին Կիլիկիայում կային մի շարք հայաշատ

քաղաքներ, ինչպես Ադանան, Մարաշը, Այնթապը, Հաճընը, Զեյթունը, Մերսինը և ուրիշներ: Շնորհիվ իրենց առափնյա դիրքին ու արտասահմանի հետ շփմանը, կիլիկյան քաղաքները շուտով դառնում են առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոններ:

Քաղաքներից ամենամեծը և զարգացածը, անկասկած, Ադանան էր, որը 19-րդ դարի 80-ական թվականներին ուներ ավելի քան 80 հազար բնակչություն, որից 30 հազարը միայն հայեր էին: Եթե այս թվին գումարենք տարեկան շուրջ 20 հազար պանդուխտների, որոնք աշխատանք գտնելու նպատակով Ադանա էին գալիս Հաճընից, Մարաշից, Խարբերդից և նույնիսկ Տիգրանակերտից ու Մուշից¹⁰, ապա կստացվի 100 հազարի հասնող պատկանելի մի թիվ: Իր ժամանակի համար դա մեծ թիվ էր և Ադանան փաստորեն մտնում էր Օսմանյան կայսրության խոշորագույն քաղաքների շարքը:

Ադանայի շրջակայքի հողերը խիստ նպաստավոր էին բամբակի մշակության համար: Ֆրանսիան, որը բամբակի հումքի մեծ կարիք ուներ և փաստորեն կախման մեջ էր գտնվում ԱՄՆ-ից ու Անգլիայից, աստիճանաբար իր ուշադրությունը բևեռում էր Կիլիկիայի վրա: Բամբակագործությանը զարկ տալու և շահագործվածությունը մեծացնելու նպատակով ֆրանսիացի կապիտալիստները Կիլիկիա են բերում բամբակի նոր սերմեր ու բարձրացնում նրա հումքի գինը¹¹: Ադանայում կառուցվում են բամբակի հումքը մշակող և կտավ գործող մի շարք գործարաններ (Աշղզյան եղբայրների, Թրիփանի եղբայրների, Գոգոնաքիի, Փաթիրոնոսի, Սալիհ էֆենդու և այլն): Ադանայի կյանքին քաջածանոթ Հ. Թերզյանը քաղաքում հաշվում է շոգեքարշով աշխատող շուրջ քսան գործարաններ ու մի քանի տասնյակ մեծ ու միջին արհեստանոցներ¹²: Այս բոլորը, բնականաբար, մեծապես փոխել էին քաղաքի ներքին և արտաքին տեսքը ու Ադանային «...եվրոպական մեծ քաղաքի մը տպավորությունը կընեին»¹³: Առևտուրը և վաճառականությունը, քիչ բացառությամբ, ամբողջովին հայերի մենաշնորհն էր:

Լուրջ հաջողություններ էին ձեռք բերվել նաև մշակութային ասպարեզում: Գործում էին Աբգարյան, Արամյան և Աշխենյան

¹⁰ Տե՛ս Հ. Թերզյան, Ադանայի կյանքը, Կ. Պոլիս, 1909, էջ 6—7:

¹¹ Տե՛ս Հ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 166:

¹² Տե՛ս Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 8—9:

¹³ Հ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 9:

⁹ Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 230:

(աղջկանց) դպրոցները ու մի քանի մանկապարտեզներ: Աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր շուրջ երկու հազարի¹⁴: Հայերը Ադանայում ունեին երկու նվազախումբ և թատերական մի քանի խմբեր:

Ադանաբնակ հայերի տնտեսական, մտավոր ու մշակութային կյանքի մասին խոսելիս թուրք հեղինակ Արըկօղլու Գամարը հետևյալն է գրում. «Վիլայեթի կենտրոնում, սանջակում ու գյուղերում հայերը մեծ թիվ էին կազմում: Վիլայեթի ներսում ներմուծման և արտահանման ամբողջ գործը, առևտուրն ու արհեստները նույնպես նրանց ձեռքում էր գտնվում: Հողագործ հայերը սակավաթիվ էին... Այն ժամանակ, երբ թուրքերի մեծ մասը գյուղերում հողի ու փոշու մեջ աղքատ կյանք էին անցկացնում, տգիտությունից ու բժիշկների բացակայությունից երեխաների 70% մահացություն ունեին, նրանք զարգացած կյանք էին վարում և երեխաների մահացությունն անկասկածաբար իջեցրել էին 10-ի»¹⁵: Ապա ավելացնում է, որ «հայերը բոլոր բնագավառներում թուրքերից առաջ էին անցել»¹⁶:

Արագ քայլերով զարգանում էին նաև Այնթապը, Մարաշը, Մերսինը, Հաճընը և մյուս քաղաքները: Այնթապն ու Մարաշը իրենց արհեստագործական արտադրանքներով Արևելքում մեծ հրոշակ էին վայելում և նույնիսկ մրցում էին եվրոպական գործարանային ապրանքների հետ ու արտահանվում: Այնթապը առևտրական կապեր էր հաստատել Բեյրութի, Զմյուռնիայի, Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի և այլ քաղաքների հետ: Քաղաքում կար 2300 խանութ, 54 ներկատուն և կաշեգործարան, օձառի հինգ գործարան, 3800 դազգահ և այլն¹⁷: Այնթապը միաժամանակ հայտնի էր որպես ոչ միայն կիլիկիահայություն, այլև արևմտահայություն կրթական կենտրոններից մեկը: Այստեղ գործում էին կոլեջը, Կիլիկյան բարձրագույն վարժարանը կամ ճեմարանը, մի քանի դպրոցներ ու կրթասիրական ընկերություններ¹⁸: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Այնթապում ապրում էր շուրջ 80 հազար մարդ, որից 36 հազարը՝ հայ¹⁹:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

¹⁵ Arikoglu Damar, նշվ. աշխ., էջ 42—43:

¹⁶ Նույն տեղում, էջ 43:

¹⁷ Տե՛ս Ա. Կեսար, նշվ. աշխ., էջ 20:

¹⁸ Տե՛ս Գ. Սարաֆյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 653—809:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ կիլիկիահայության քանակի մասին տվյալներն ու կարծիքները տարբեր են և հակասական: Պաշտոնական վիճակագրության բացակայությունը չի ներում մատնանշելու ճիշտ կամ մոտավոր որևէ թիվ: Այնուամենայնիվ, մեզ հասած տեղեկությունների համեմատությունը որոշակի պատկերացում է տալիս այդ մասին: 19-րդ դարի սկզբին Կիլիկիայում ապրող հայերի թիվը, մեր կարծիքով, չի գերազանցել հարյուր հազարից: Դարի երկրորդ կեսին՝ քաղաքների զարգացման ու տնտեսական վերելքին զուգընթաց, բաղամապատկվել է նաև հայ բնակչության քանակը: Ըստ Պետերբուրգում լույս տեսած «Արաքսի» կիլիկյան աշխարհագրության դասագրքի, հայերի թիվը երկրամասում հավասար է եղել 97450-ի²⁰: Մեր կարծիքով այս թիվը խիստ պակասավոր է և վերաբերում է դարի առաջին կեսին:

Մյուս տվյալները, քիչ բացառությամբ, պտտվում են 200—220 հազարի շուրջը: Այսպես, ըստ Մ. Օրմանյանի, այն հավասար է 279 հազարի, ըստ Գ. Գուտուլյանի «Կիլիկյան աշխարհագրության»՝ շուրջ 200 հազարի²¹, ըստ Վ. Քյուրբեջյանի «Կիլիկիայի»՝ ոչ պակաս, քան 200 հազարի²²:

Արևիվային մի փաստաթղթի համաձայն 1910 թ. Կիլիկիայում հայերի թիվը ըստ սանջակների եղել է. Ադանայի սանջակում՝ 25 հազար, Սսի սանջակում (Հաճըն, Կարս-Բազար, Վահկա)՝ 47600, Մարաշի սանջակում (Զեյթուն, Կոկիսոն, Ալբիստան)՝ 86800, Օսմանիեի սանջակում (Բաղչե-Բուլանըխ, Համիդիե-Զիհան, Զոք-Մարզվան, Յարփուզ)՝ 44750, Մերսինի սանջակում՝ 7400, Հալեպի սանջակում (Այնթապ, Քիլիս, Անտիոք, Ալեքսանդրետ, Սուետիա-Քեսաբ)՝ 84900, հանրագումարը՝ 296450²³:

Ճրանսիացի հեղինակ է. Բրեմոնը, որը առաջին համաշխարհային պատերազմից հետո զբաղեցրել էր Կիլիկիայի կառավարչի պաշտոնը, այս կապակցությամբ գրում է. «Կիլիկիան Փոքր Ասիայի այն միակ երկրամասն է, որտեղ քրիստոնյաները մեծա-

²⁰ Տե՛ս Կիլիկիա, փորձ աշխարհագրության արդի կիլիկիո, Պետերբուրգ, 1894, էջ 39:

²¹ Տե՛ս Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 16:

²² Տե՛ս Վ. Քյուրբեջյան, Հայկական Կիլիկիա, Նյու-Յորք, 1919, էջ 31—32:

²³ Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 690, Թ. 11—12:

մասնություն էին կազմում: Այդ իսկ պատճառով թուրքական տարբեր կառավարություններ այստեղ ջարդեր կազմակերպեցին 1895, 1909, 1915—1918 թվականներին, յուրաքանչյուր անգամ ավելի մեծ շահերով: Սակայն 1912 թ. քրիստոնյա բնակչությունը տակավին մնում էր գերակշռողը (215 հազար՝ 185 հազարի դիմաց)²⁴:

Չնայած վերևում բերված թվական տվյալների տարբերությունն ու հակասությունը, այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կիլիկիայում ապրող հայերի թիվը եղել է շուրջ 200 հազար:

Թուրք պատմաբան է. Ուրասը, հենվելով 1914 թ. օսմանյան պաշտոնական մարդահամարի տվյալների վրա, ցույց է տալիս, որ Ադանայի վիլայեթում բնակություն հաստատած հայերի թիվը այսպիսի պատկեր է ներկայացրել. լուսավորչականներ՝ 50139, կաթոլիկներ՝ 2511, բողոքականներ՝ 5036, հանրագումար՝ 57686 մարդ²⁵, իսկ 1909 թ.՝ 48 հազար մարդ²⁶: Տվյալ դեպքում Ուրասը գրչի մեկ հարվածով ցանկանում է լուծել միաժամանակ երկու հարց. նվազեցնել կիլիկիահայության քանակը և նվազագույնի հասցնել Ադանայի 1909 թ. ջարդի հայ զոհերի թիվը:

Արրկօղլու Դամարից վերևում մեջբերված քաղվածքը՝ Ադանայում և վիլայեթում հայերի տնտեսական ու մտավոր զարգացման աստիճանի մասին, մեզ չպետք է մոլորեցնի: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է հայ ունեոր և հարուստ դասակարգին, որն իսկապես անվիճելի գերազանցության էր հասել մյուս ժողովուրդների նույնանման դասակարգերի նկատմամբ: Դրա կողքին բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիությունն ու մանր արհեստավորությունը, որպես կրկնակի շահագործման օբյեկտ, գտնվում էր անհամեմատ ծանր պայմաններում: Իրավազրկությունը, տնտեսական, քաղաքական և մանավանդ ազգային ու կրոնական հալածանքները, որոնք մեծ շահերի էին հասել «արյունոտ» սուլթանի՝ Աբդուլ Համիդի գահակալության երկ-

րորդ տասնամյակից, անելանելի վիճակ էին ստեղծել կիլիկիահայության համար:

Նպատակադրված ու որոշակի պայքար էր մղվում հայկական դպրոցների և նրանցում մայրենի լեզվի ուսուցման դեմ: Շատ գավառներում և մասնավորաբար Դաշտային Կիլիկիայում արգելվում էր դպրոցներում մայրենի լեզվի ուսուցումը և հայերեն խոսելը: Հիշատակություն կա, որ ենիչերիները կտրել են հայերեն խոսողների լեզուները²⁷: Դրությունը ոչնչով չի բարելավվում նաև հետագայում: Նման պայմաններում դարավերջին Կիլիկիան ամբողջապես, բացառությամբ Զեյթունի և Հաճընի, իրենից ներկայացնում էր համատարած թրքախոս մի երկրամաս: Դպրոցներից շատերում դասավանդումը կատարվում էր հայատառ թուրքերենով:

Գ. Գալուստյանը դպրոցների և հայերեն լեզվի նկատմամբ կիրառվող խտրականությունը նկատի ունենալով՝ գալիս է այն եզրակացություն, որ ներկայիս թուրքական գյուղերի մեծ մասի բնակչությունը ժամանակին եղել է հայ, բայց ընկնելով թուրք նրավաճողների ծանր լծի տակ, կորցրել է իր ազգային դեմքն ու մայրենի լեզուն և բռնի թրքացել²⁸: Նման միտք է հայտնում նաև Գ. Չագմազճյանը. «Հայ դեռատի սերունդը կրթելու համար, դպրոցները ոչ միայն արգելված էին, այլ հայերեն բառ արտասանողներուն լեզուները կտրված, որով վերոհիշյալ քաղաքներու (կիլիկյան—Շ. Թ.) մեջ ապրող հայերը կորուսած էին իրենց մայրենի լեզուն և դարձած էին թրքախոս»²⁹:

Մերսինի անգլիական փոխհյուպատոս Լիկիարդոպուլոսը 1892 թ. հունիսի 12-ին Հալեպի հյուպատոսի պաշտոնակատար Ա. Կետոնուն հայտնում է, որ Ադանայի վալի Խոջա Իզզեթ բեյի ժամանելուց հետո մոլեռանդությունը հասել է գագաթնակետին: «Քրիստոնյաները ընդհանրապես և հայերը մասնավորապես,— գրում է նա,— տուժում են դրանից. ամեն օր հարուցվում է ինչոր նոր գործ: Վերջերս նա պահանջեց իրեն ներկայացնել դրպրոցների ու եկեղեցիների ֆերմանները, արգելելով առանց Կոս-

²⁴ Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 4:

²⁵ Տե՛ս Esat Uras, նշվ. աշխ., էջ 143:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 565:

²⁷ Տե՛ս Գ. Սարաֆյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 5:

²⁸ Տե՛ս Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 46:

²⁹ «Հայրենիք» ամսագիր, 1931, № 3, էջ 140:

տանդնուպոլսից համապատասխան կարգադրութեան հետաքննութիւն անցկացնելը»³⁰:

Հայը նախկինի նման դիտւում էր որպէս ստրուկ, ռայա: Ամեն քայլափոխին կարող էին վիրավորել նրա ազգային ու կրօնական զգացմունքները, նրա երեսին շարտել «գլաւուր» ստորացուցիչ և վիրավորական արտահայտութիւնը: «Գլաւուրը» ըստեղծված էր աշխատելու, նյութական բարիքներ արտադրելու, իսկ թուրքը՝ վայելելու և իշխելու: Վաղուց մոռացութեան էին մատնել ի լուր աշխարհի հայտարարված թանգիմաթների մեծագործ խոստումները: Առաջվա պէս հայը դուրկ էր մարդկային տարրական իրավունքներից՝ դատարանում վկայութիւն տալու և իր իրավունքները պաշտպանելու: Ահա թե ինչ է գրում Մերսինի փոխհյուպատոսը. «Եթե մահմեդականը ուզում է վրեժ լուծել քրիստոնյայից, ապա դրա համար բավական է ներկայացնել հաստատող երկու վկաների, որ նա վիրավորել է մահմեդականի կրօնը. այս պատճառով և կամ էլ այդ մարդուն անպատվելու համար անմիջապէս բանտ կնետեն»: Եվ ավելացնում է, որ «բազմաթիւ թուրքեր հայերից փող են պահանջում ու միաժամանակ զգուշացնում, որ մերժելու դեպքում վրեժ կլուծեն»³¹:

Թուրք փաշան կամ բէյը կարող էր «գլաւուրի» հետ վերաբերվել այնպէս, ինչպէս նրա մեծութիւնը կցանկանար, որովհետեւ «...սպանվող ոչխարի մը համար դատ ու դատաստան կար, քայց զոհված հայերուն համար՝ ոչ դատ և ոչ դատաստան: Արդեն դատարաններու մեջ ալ հայերու վկայութիւնը չէր ընդունվիր»³²:

«Հայերը ստիպյալ սև կամ մուրթ գույն զգեստներ պիտի հագնեին: Գունավոր զգեստ կրողները պիտի պատժվեին: Կարմիր և կամ կանաչ հագուստ հագնողները անպայման կը սպանվեին:

Իգական սեռը՝ օր ցերեկով դուրս չէր կրնար ելլել: Կը սարսափեին առևանգումէ: Նույնիսկ գեղադեմ պատանիները ազատ պտտելու քաջութիւն չէին ունենար, հակառակ պարագային կորստյան կը մատնվեին. կամ կը սպաննեին և կամ բռնի կը թուրքացնեին այդպիսիները: Ատոր համար պատանի տղաները ցնցո-

տի հագուստներով և մրտոված դեմքով կը ստիպվեին գործել խանութներու մեջ»³³:

Տարբեր պատրվակներով և մանավանդ քաղաքական պատճառներով անվերջ ձերբակալւում ու բանտերն էին լցվում հարյուրներով հայ երիտասարդներ: Հետաքննութիւններն ու խուզարկութիւնները անցկացվում էին այլանդակ ձևերով ու ուղեկցվում կողոպուտով և առևանգումով: «Քաղաքական խնդիրներով զբաղարտութիւններն ու իխպարները (ծանուցում, ազդարարում — Ե. Թ.) սովորութեան կարգն անցած էին: Կիլիկիո գավառներուն մեջ բանտարկված հայերուն 9/10 մասը քաղաքական հանցանքով կամբաստանվեին: Ամեն տարի մի քանի անգամներ Հաճընեն, Զեյթունեն, Մարաշեն, Գյորթ-Յոլեն, Սիսեն և Ադանայեն հարյուրավոր հայեր կը բանտարկվեին միայն հայութեան հանցանքով»³⁴:

Սոցիալ-քաղաքական ու ազգային ճնշումները կիլիկահայութեանը բազմիցս մղել են ազատագրական մարտերի: Կիլիկահայութեան ազգային-ազատագրական շարժումների տարեգրութեան մեջ իր ուրույն ու բացառիկ տեղն ունի Զեյթունը: Նրա քառասունից ավելի հերոսամարտերը թուրքական բռնապետութեան դեմ ռզեւորել են համայն հայութեանը և միշտ վառ պահել նրա ազգային ոգին, հույսը պայծառ գալիքի հանդեպ:

Դեռ 1862 թ. Զեյթունի հերոսամարտից առաջ Կ. Պոլսում Մ. Նալբանդյանի և Հ. Սվաճյանի ջանքերով հիմնվել էր բարեգործական ընկերութիւնը, որը նպատակադրվել էր կրթելու նորահաս սերունդը, զարկ տալու գյուղատնտեսութեանը, զինելու ժողովրդին և անհրաժեշտութեան դեպքում ապստամբելու ու ազատագրելու Կիլիկիան³⁵: Բարեգործականին անդամակցել են ժամանակի հասարակական-քաղաքական այնպիսի հանրաճանաչ գործիչներ, ինչպէս Մերենցը, Ս. Թագվորյանը, Գր. Օտյանը և ուրիշներ: Հետագայում Կարապետ վրդ. Շահնազարյանը ձեռնամուխ է լինում իր փայփայած երազանքին՝ Կիլիկիայի ազատագրմանը, սակայն ոչ թե զենքով, այլ լուսավորութեամբ³⁶: Անկասկած է, որ Շահնազարյանի լուսավորական շարժումը ինքնին խը-

³⁰ Геноцид армян в османской империи, сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

³¹ Геноцид армян..., էջ 16:

³² «Հայրենիք» ամսագիր, 1931, № 3, էջ 140:

³³ «Հայրենիք» ամսագիր, 1931, № 3, էջ 140:

³⁴ Հ. Թեբգյան, նշվ. աշխ., էջ 28:

³⁵ Տե՛ս Արսեն Կիտուր, Հայ ազատագրութեան ճանապարհին, Բեյրութ, 1949,

էջ 4:

³⁶ Տե՛ս Արսեն Կիտուր, նշվ. աշխ., էջ 16:

բախուսելի և ողջունելի երևույթ էր հատկապես Կիլիկիայի համար: Բայց պայքարի այդպիսի կրավորական եղանակով Կիլիկիան ազատագրելու միտքը պարզապես միամտություն էր:

Արևմտահայության զանգվածային շարժերի օրերին, 1895 թ., Զեյթունը նորից է ապստամբում: Ինչպես Ապահն է նշում, Սասունից հետո սուլթանը որոշել էր հաշվեհարդար տեսնել նաև Զեյթունի հետ: Այդ նպատակով Կիլիկիա են բերվել լրացուցիչ զորամասեր: Զինվորական տենդոտ պատրաստություններ էին կատարվում Հալեպում, Մարաշում և Այնթապում³⁷: Ինչպես երեւում է վարդապետ Հակոբյանի հրիմյան Հայրիկին գրած զեկուցագրից, դեռևս 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Անտիոքը, Մարաշը, Այնթապը և Հաճընը իրենց շրջակա գյուղերով հարձակման են ենթարկվել ու թալանվել³⁸: Հիմքեր կային ենթադրելու, որ հերթը Զեյթունին էր: Սակայն, Զեյթունի հետ հաշիվ տեսնել թուրքական կառավարությանը այդպես էլ չի հաջողվում: Ստեղծվում է ինքնապաշտպանության մարմին, որն էլ կապեր է հաստատում Հաճընի ու հայաբնակ մյուս գավառների հետ: Հայ կտրիճները, թվով շուրջ 200 մարդ, 1895 թ. հոկտեմբերի 28-ին պաշարում են Զեյթունի զորանոցը, որտեղ տեղավորված էր բավականին զորք և մեծ քանակությամբ զինամթերք: Հաջորդ առավոտ կայազորը անձնատուր է լինում: Զեյթունի ելույթը զսպելու համար նրա վրա են արշավում Ալի փաշայի, Ռեմզի փաշայի և ապա վերջինիս փոխարինելու եկած էտհեմ փաշայի զորաբանակները: Երկարատև մարտերը հաջողություն չեն բերում կառավարական զորքերին: Զեյթունցիների փայլուն հաղթանակը նրանց համար ապահովում է 1896 թ. փետրվարի 10-ի պատվավոր հաշտությունը³⁹:

Հայ ազգային -ազատագրական շարժումները բնութագրելիս ու գնահատելիս թուրք պատմաբանները աշխատում են այն թյուր տպավորությունը ստեղծել, որ այդ շարժումները «ներմուծվում» էին դրսից, այսպես կոչվող կոմիտեների՝ քաղաքական կուսակցությունների կողմից և որ թուրքիայում համապատասխան պայմաններ չկային նման շարժումների առաջացման համար: Իրենց միտքը տեսականորեն հիմնավորելու ձգտումով էլ ահա նրանք հորինում են առասպելախառն այն զրույցները, որոնց նպատակը

մեկն է միայն՝ ցույց տալ, որ հայերը թուրքիայում ապրում էին լավագույն պայմաններում, վայելում էին թուրքական «բարեխնամ» կառավարության հովանավորությունը և այլն: Յազգան Ֆահրիեն և Սերդարլար ներիմանը, գլխավայր շրջելով ճշմարտությունը, գրում են, թե փոքրամասնությունները թուրքիայում «...երկար դարեր թուրքական հասարակության ներսում ապրում էին ազատ ու հանգիստ» և ավելացնում, որ նրանց շարժումները կոմիտեների մտացածին գործն է⁴⁰: Իսկ էսատ Ուրասի կեղծարարությունը հասնում է այնտեղ, որ հայտարարում է, թե արևմտահայերը (ըստ հեղինակի՝ օսմանցի հայերը—Շ. Թ.) «թուրքիայում հանգիստ կյանք էին վարում և առևտրով ու արհեստներով զբաղված, լիովին գոհ էին իրենց ապրելակերպից: Բանակում ծառայելու պարտականությունից ազատված լինելու պատճառով էլ նրանց թիվը գնալով աճում ու սոցիալական վիճակն էլ առավել ծաղկում էր»⁴¹: Մի այլ տեղում այս կապակցությամբ նույն կեղծարարը գրում է, որ բազմաթիվ քրիստոնյա հեղինակների իսկ վկայությամբ «...բոլոր պետությունների մեջ կրոնի ազատությունը հարգող միակ պետությունը Օսմանյան պետությունն է»⁴²: Ինչպես ընդունված է նման դեպքերում ասել, մեկնաբանություններն ավելորդ են: Թուրք պատմաբան Կուրանը իր սովորածավալ գրքում, խոսելով հայկական հարցի առաջացման, նրա նկատմամբ Կ. Պոլսի պատրիարքարանի և հայ գործիչների գրաված դիրքի մասին, գրում է. «...այդ թվականներին Օսմանյան պետությունը ղինվորական ծառայությունից ազատված հայերին պալատում և որոշ մինիստրություններում շատ բարձր պաշտոններ հանձնելուց չէր խուսափում և նրանց նկատմամբ մեծ վստահություն էր ցուցաբերում»⁴³: Դուրս է գալիս, որ Օսմանյան պետությունը իսկապես հովանավորել է հայերին, նրանց համար ստեղծել երջանիկ կյանքի հնարավոր բոլոր պայմանները և որ հայերն են ապերախտ գտնվել ու ըմբոստացել թուրքական պետության դեմ: Ուրասը և մյուս հեղինակները լուրմ են այն մասին, թե հայերն իրապես ինչու էին ազատվել ղինվորական ծառայությունից: Պարզ է, որ ոչ թե մահամեղականի նկատմամբ հային ինչ-որ առավելություն շնոր-

³⁷ Տե՛ս Ապահ, Հայ արժիվներու բույնը, Կահիրե, 1918, էջ 44—45:

³⁸ Տե՛ս Генощид армян..., էջ 92:

³⁹ Տե՛ս Ապահ, նշվ. աշխ., էջ 115—116:

⁴⁰ Տե՛ս Yazgan Fahriye ve Serdarlar Neriman, նշվ. աշխ., էջ 5:

⁴¹ Esat Uras, նշվ. աշխ., էջ 152:

⁴² Նույն տեղում, էջ 177:

⁴³ Ahmed Bedevi Kuran, Osmanli imperatorlugunda ve Türkiye cumhuriyetinde inkilâp hareketleri, Istanbul, 1959, s. 209.

հելու, այլ նրան ստրուկ, ուսյա, զենք կրելու անարժան և անվստահելի համարելու պատճառով: Որ հայ առանձին անհատներ թուրքիայում բարձր պաշտոններ են զբաղեցրել ու ազդեցիկ դիրք ունեցել, ճշմարիտ է: Միաժամանակ ճիշտ է և այն, որ անհատների բարձր պաշտոններն ու նյութական բարեկեցիկ վիճակը չեն կարող չափանիշ դառնալ մի ամբողջ ժողովրդի համար:

Կիլիկիահայությունը, ինչպես և ողջ արևմտահայությունը, իր ազգային ու սոցիալական ազատագրության ճանապարհին որոշ հույսեր էր կապել թուրքիայում հեղափոխականի համարում ձեռք բերած երիտթուրքական շարժման հետ: Սակայն 1908 թ. հեղաշրջմամբ տապալելով սուլթանին և գրավելով իշխանությունը՝ երիտասարդ թուրքերը իրենց գործն ավարտված համարեցին և հրաժարվեցին իրենց իսկ շուսյաժ խոստումներից: «Երիտասարդ թուրքերի իշխանությունը, — իրավացիորեն գրում է պրոֆ. Վ. Պարսամյանը, — չլուծեց ժողովրդին հուզող սոցիալական և ոչ մի հարց: Հակառակ սահմանադրության հռչակած սկզբունքներին, արևմտահայերը ձեռք չբերեցին կյանքի, գույքի և նպատի ապահովություն: Նրանք, ինչպես համիդյան ռեժիմի ժամանակ, ենթարկվում էին դաժան ճնշման ու հալածանքի, թուրք պաշտոնյաների ու քուրդ բեկերի կամայականություններին»⁴⁴:

Երիտասարդ թուրքերը չլուծեցին նաև հեղափոխության հիմնական խնդիրներից մեկը՝ ազգային հարցը: Դեռ ավելին. պարտությունից պարտություն քայլող և քայքայվող կայսրությունը փրկելու նպատակով նրանք ավելի սրեցին մահմեդական և ոչ մահմեդական ժողովուրդների ազգային-կրոնական ներհակությունները: Որդեգրելով և գործողության ծրագիր դարձնելով համիդյան տխրահռչակ համիսլամական ու համաթուրքական հետադիմական գաղափարները՝ նրանք «բարոզում էին թուրք ցեղի և թուրքական լեզվի «բացառիկության» ռասայական գաղափարը և ուրիշ ոչ մի ազգ, ոչ մի լեզու չէին հանդուրժում թուրքիայում»⁴⁵: Կանգ շտնելով ոչ մի դժվարության առաջ՝ երիտթուրքերը բոլոր միջոցներով, գաղտնի և բացահայտ, բռնի և կամավոր, երկրի թուրքացման, օսմանացման քաղաքականություն էին վարում:

Երիտասարդ թուրքերի իշխանության գլուխ անցնելուց հետո էլ ավելի ուժեղացավ թուրքիայի կախումը կապիտալիստական

մեծ տերություններից: Երկիրը կառավարելու երիտթուրքերի ապիկարությունը և քաղաքական արկածախնդրությունը կայսրությանը փաստորեն հասցրել էին փլուզման եզրին:

Այսօր թուրք պատմաբանները, կեղծելով ու խեղաթյուրելով պատմական հանրահայտ փաստերն ու իրողությունները, կաշվից դուրս են գալիս «ապացուցելու» հայերի մեղսակցությունը Ադանայի 1909 թ. ջարդերին, նրանց կողմից մեծաքանակ զենքի կուտակումը, ապստամբության ու անկախության համար պրոպագանդան և այլն: Ե. Ուրասը գրում է, որ հայերը շատ վաղ ժամանակներից սկսել էին համախմբվել ու բազմանալ Կիլիկիայում: Նրանք, շարունակում է նա, հաշվի առնելով Կիլիկիայի նպաստավոր դիրքը և մեծ տերությունների համար նրա նշանակությունը, որոշել էին այստեղ ապստամբություն բարձրացնել: Այդ նրպատակով էլ կուսակցությունները իրենց ուշադրությունը բևեռել էին Կիլիկիայի վրա⁴⁶: Ապստամբությունը նախապատրաստելու նպատակով, գրում է նույն հեղինակը, Մուշեղ եպիսկոպոսը շրջում էր վիլայեթի գավառներն ու գյուղերը, ստեղծում կամավորական խմբեր և օրինական ճանապարհով Կիլիկիա էր բերել 12840 հրացան: Բացի այդ, ըստ նրա, մեծ քանակությամբ զենք էր ներմուծվել գաղտնի միջոցներով⁴⁷:

Ուշագրավ է թուրք հեղինակների առաջ քաշած ապստամբության և զենքի ու զինամթերքի կենտրոնացման հարցը: Ինչպես երևում է փաստերից, խոսք չի կարող լինել նախապատրաստվող ինչ-որ ապստամբության և հայերի զինվելու մասին: Իրականում, եթե հայերը փոքր ի շատե զինված լինեին, վստահությունամբ կարելի էր պնդել, որ նրանք այնքան մեծաքանակ զոհեր չէին տա և բոլոր դեպքերում իրենց արյունը անհամեմատ թանկ կծախեին: Յուզենիչը վկայում է, որ «Ադանայում չի եղել ոչ մի ապստամբություն, ինչպես այժմ աշխատում է ցույց տալ կառավարությունը, այլ պարզապես առաջին ջարդի ժամանակ, ապրիլի 1-ին, հայերը ինչ-որ հրացաններով (որսորդական և այլն) պաշտպանել են իրենց կյանքը»⁴⁸:

Կիլիկիան, որ համեմատաբար զերծ էր մնացել 1894—1896 թթ. համիդյան համընդհանուր կոտորածներից, 1906—1907 թթ. իր վրա է գրավում թուրքական կառավարության ուշադրությունը:

44 Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 425:

45 Նույն տեղում:

46 S' u Esat Uras, նշվ. աշխ., էջ 558:

47 S' u նույն տեղում, էջ 559—560:

48 Генцид армян..., էջ 173:

նը: Կիլիկեհայերի ազգային կյանքի աշխուժացումը (դպրոցներ, թատերական ներկայացումներ, դասախոսություններ և այլն), հայերի նյութական բարեկեցության աճն ու գերազանցությունը առևտրի և արհեստագործության բնագավառում, հաշտ աչքերով շէր դիտվում ոչ մայրաքաղաքի և ոչ էլ տեղական պաշտոնեություն կողմից: Բռնությունների և ջարդերի համար հող նախապատրաստելու, հասարակական կարծիք ստեղծելու և մոլեռանդ խուժանը հայերի դեմ գրգռելու նպատակով Կ. Պոլիս են ուղարկվում բազմաթիվ բողոքագրեր ու ամբաստանագրեր, որոնցում խոսվում է նախապատրաստվող ապստամբության, պատենշնների շինությունների, կուսակցական գաղտնի ժողովների գումարման և զենքի-զինամթերքի հայտնաբերման շինծու փաստերի մասին⁴⁹: Նույնիսկ մեծաքանակ զորք է կենտրոնացվում Սիհուն և Զիհուն գետերի գետաբերանում՝ ափ հանվող հեղափոխականներին դիմադրելու համար, որին, սակայն, այդպես էլ չի հաջողվում հանդիպել կամ ձերբակալել գեթ մեկ հայ հեղափոխականի, որովհետև այդպիսին գոյություն չունեն:

Գեռես 1906—1907 թթ. գոյություն է ունեցել Յըլըզլի պալատի և Հալեպի «արտակարգ հրամանատարություն» կողմից մշակված կիլիկեհայության ջարդի հատուկ ծրագիր⁵⁰: Ինչպես վկայում է Մուշեղ եպիսկոպոսը, այդ մասին ինքը տեղեկանում է Ադանայի վալի Բահրի փաշայից, որը մի այցելություն ժամանակ նրա առջև է դնում նման ամբաստանագիր-հեռագրերի մի մեծ ծրար⁵¹:

Եվրոպացի ճանապարհորդներից մեկը 1906 թ. մարտի 5-ին գրում է, որ հայերի ձերբակալությունները շարունակվում են: Հալեպ են բերվել մեծ թվով բանտարկյալներ Զեյթունից, Մարաշից, Ադանայից և Հաճընից: Հալեպի նոր նահանգապետ Նազըմ փաշան շարունակում է նույն գործը: Նա մի իսկական դահիճ է, որը հրամայել է ձերբակալել քաղաքական բոլոր մեղադրյալներին և բերել Հալեպ, որպեսզի ինքը անձամբ դատի նրանց⁵²:

Գրությունը ավելի է լրջանում սահմանադրության հռչակումից հետո: Հայերը միամտություն են հանդես բերում՝ հավատարիվ

ասհմանադրության հռչակած «հավասարություն և ազատություն» մեծաբարբառ, բայց իրականում սնամեջ հայտարարություններին: Հայ-թուրք եղբայրության ցույցերն ու միտինգները, գրկախառնումներն ու համատեղ հավաքությունները թշնամաբար են ընդունվում հետադեմ և կրոնամոլ թուրք պարագլուխների կողմից: Այդ բոլորի մեջ նրանք տեսնում էին մահմեդականի արժանապատվության, Ղուրանի ու շարիաթի նվաստացում և վիրավորանք: Շատերը ըմբռնել և կշռադատել շէին կարողանում, թե ինչպես երեկվա ուշա-ստրուկը, գյավուրը այսօր մահմեդականի կողքին օսմանցու իրավունքն է կիսում: Գեռես «...այս պահերում կը դիտվեր և հայտնի կերպով կը տեսնվեր թե կարգ մը հետադեմ թուրք կրոնամոլներու շատ գեշ կազդեր այն թուրք և հայ ցույցը»⁵³: Այս «...ամենքը... բռնապետության վարժված և նույն միջոցին մեծ մասով պաշտոնանկ եղած պաշտոնյաներու շատ գեշ կազդեր»⁵⁴:

Սահմանադրության հռչակումով թուրք մեծահարուստները մեծապես վտանգված են տեսնում իրենց դիրքն ու հարստությունը: Եվ քանի որ հայերը անսահմանորեն նվիրվել էին սահմանադրական շարժմանը, նրանք էլ այժմ հակասահմանադրական շարժման թիրախն են դառնում: Սահմանադրության հռչակումից մեկ և կես ամիս անց Ադանայում սկսվում է «...խուլ կերպով ծայր տալ մեկ կողմին հակասահմանադրական շարժումը, և մյուս կողմին հայերու հանդեպ ջարդի սպառնալիք»⁵⁵:

Արդու-Գատերի, Քանիզադե Սայիդի, Քերիմ աղայի, Կերկելի Ալիի, Բայրաքդարադե Բեքիրի և այլ ճիվաղների ջանքերով զրույցներ են շրջում, որ հայերը գրավելու են զինարանը, որ Հաճընի հայերը հարձակվել են Ադանայի վրա, որ Ուլու ճամիի դուռը հայերի կողմից պղծվել է և այլն⁵⁶: Ուլու ճամիի դրոսանը կղկղանք քսելու զրույցների մասին Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանը Մուշեղ եպիսկոպոսին 1909 թ. փետրվարի 10-ին գրում է, որ «...այս ճանավար ազգը արյուն խըմելու գազանություն հագուրդ տալու համար իր սրբություն-

⁴⁹ Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, Ադանայի ջարդը և պատասխանատուները, Բոստոն, 1910, էջ 9—10:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 8:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 11:

⁵² Տե՛ս Генотид армян..., էջ 153—154:

⁵³ Հ. Թերզյան, Նշվ. աշխ., էջ 39:

⁵⁴ Նույն տեղում, էջ 40:

⁵⁵ Մուշեղ եպիսկոպոս, Նշվ. աշխ., էջ 19: Տե՛ս նաև Ադանայի եղեռնը, տեղեկագիր Հ. Պապիկյանի, Կ. Պոլիս, 1919, էջ 22:

⁵⁶ Տե՛ս Հ. Թերզյան, Նշվ. աշխ., էջ 44—45:

ները իր ձեռքով կը պղծե ըսելու համար, որ «հայը ըրավ»՝ դարերով այս մեթոդին հետևած են»⁵⁷:

Ադանայի շուկայում ոմն Մուհեդտինը և ընկերները օրը ցերեկով հայտարարում են. «Կյավուրներ ձեզ պիտի կոտորենք», իսկ Քյոյր Ահմեդը նամակներ է գրում գյուղացիներին, որ ջարդեն Հաճընի շրջակա հայկական գյուղերը և ապա բայրամի օրը դան Հաճըն՝ այն կոտորելու⁵⁸: Կարսից, Բաղչեից, Նաջարլիից և Շեյխ-Մուրադից տեղեկություններ են ստացվում սպանությունների, կողոպուտի և նախիրը քշելու մասին:

Մթնշուղտը շիկանում է ջարդի սպառնալիքով: Այս պայմաններում Մուշեղ եպիսկոպոսը շրջագայում է գավառները և հորդորում հայ բնակչությանը հավատարիմ լինել «սահմանադրասեր» կառավարությունը: Այս նույն օրերին մի թուրք խոջա, շրջելով գյուղերը, կոչ է անում. «Կյավուրները օձեր են, մինչև նրանց գրլուխը չճզմենք, մենք՝ մահմեդականներս, չենք կարող հանգստանալ»⁵⁹: Վալի Բահրի փաշային փոխարինած Ջևատ բեյին ուղղված բողոքները մնում են անհետևանք. «անբարեխիղճ կառավարությունը թույլ տված էր, որ ամբոխավար կրոնավորը շրջեր նահանգին մեջ, և այս անգամ զաղտնորեն հուզեր արդեն իսկ սահմանադրության հուշակված օրենքի վեր հայերուն դեմ գրգռվող շարաշահ մոլեռանդությունը»⁶⁰:

Լարված իրադրությունը մեղմացնելու և անդորրը խանգարողներին պատասխանատվության ենթարկելու նպատակով Մուշեղ եպիսկոպոսը մի ընդարձակ տեղեկագիր է ներկայացնում Ջևատ բեյին: Երբ վերջինս հրաժարվում է որևէ գործնական քայլի դիմել, տեղեկագրի պատճենները, որոնցում հանգամանորեն նկարագրված էր կացության պատկերը և նշված խոսվարարների անունները, ուղարկվում են Կ. Պոլիս՝ կառավարությանը, պատրիարքին, հայկական և թուրքական թերթերի խմբագրություններին: Միաժամանակ պահանջվում էր հատուկ հանձնաժողովի ուղարկումը Ադանա՝ փաստերը ստուգելու և մեղսակիցները պատասխանատվության կանչելու համար: Սակայն կառավարությունը

նր ոչ միայն ոչինչ չի ձեռնարկում, այլ իր հանցավոր լուսթյամբ փաստորեն խրախուսում է խոսվարարներին:

Ադանայում հրատարակվող «Բեհբերի Իթիդալ» թերթում հրապարակվում է մի ընդարձակ հոդված, որտեղ բացահայտ կոչ էր արվում կոտորելու հայերին: Միաժամանակ կուսակալի կողմից արգելվում է պատասխան հոդվածի հրապարակումը: Դեռավելին, երբ նրանից պահանջվում է մեղմել օրըստօրե սաստկացող սպառնալիքը և վերջ տալ սպանություններին ու հարձակումներին, նա զայրացած բացականչում է, թե ինչ եք ձեզ երևակայում⁶¹:

Ջարդերի անմիջապես նախօրյակին «Իթիդալ» թերթի կազմակերպած միտինգից հետո թուրք խուժանը թալանում է զինապահեստը այն ժամանակ, երբ այնտեղ էր գտնվում պահակազորքը: Ոչ մի արգելք չի հարուցվում խուժանին: Այս փաստը ինքնին վկայում է, «...որ զենքերը բաշխված են կառավարական հրամանով»⁶²: Մյուս կողմից՝ վալին դիմում է մայրաքաղաք և լրացուցիչ զորքեր պահանջում՝ հայկական խոսվույունը զրսպելու համար⁶³: Ջարդերին մասնակցելու համար Պաշասի բանտից ազատ են արձակվում 500 ոճրագործներ⁶⁴:

Որ կիլիկեհայության կոտորածի ծրագիրը նախօրոք էր հրդացվել ու մշակվել, երևում է նաև հետևյալից. ջարդերին նախորդող օրը վալիի նախագահությունում տեղի էր ունեցել նահանգական խորհրդի նիստ, որտեղ որոշվել էր կոտորածն սկսել ապրիլի 1-ին⁶⁵: Ջարդերն սկսելու վերաբերյալ Ադանայից հատուկ գրություններ են ուղարկվել գավառները⁶⁶: Ջարդի նախօրյակին և ընթացքում բոլոր մահմեդականները փաթթոցավորված էին⁶⁷ (պարզ է, հայերից զանազանվելու նպատակով): Արբիզոլու Դամարը գրում է, որ իրարանցումն սկսվեց հանկարծակի: Բայց

⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 33:

⁶² Զ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 26, Մուշեղ եպոս., նշվ. աշխ., էջ 48, Ս. Պարթևյան, Կիլիկյան արհամիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 60:

⁶³ Տե՛ս Arikoglu Damar, նշվ. աշխ., էջ 48:

⁶⁴ Տե՛ս Геноцид армян, էջ 168:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 181:

⁶⁶ Տե՛ս Զ. Պարթևյան, նշվ. աշխ., էջ 580—581, Զ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 24, Геноцид армян..., էջ 189:

⁶⁷ Տե՛ս Геноцид армян..., էջ 162, Մուշեղ եպոս., նշվ. աշխ., էջ 48—49, Զ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 26:

⁵⁷ Կիլիկյան կսկիծներ, վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական դիվանեն, Բեյրութ, 1927, էջ 73—74:

⁵⁸ Տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 23—24:

⁵⁹ Նույն տեղում, էջ 30 կ:

⁶⁰ Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 31 կ:

միաժամանակ շի մոռանում միամտաբար գրելու, թե մինչև իրադարձությունների զարգանալը իր կնոջն ու երեխաներին տեղափոխել էր ավելի ապահով վայր⁶⁸ (բնակարանը գտնվելիս է եղել հայկական թաղամասում): Նախանձելի կանխազգացում:

Ձատկի տոների կապակցությամբ փակված հայկական դըպրոցները, առևտրական գրասենյակները, խանութները և արհեստանոցները վերաբացվում են ապրիլի 1-ին: Հազարավոր հայ գյուղացիներ դաշտային աշխատանքի են գնում Ադանայի շրջակա այգիները: Կյանքը քաղաքում սկսում է վերազարթնել: Ապրիլի 1-ի վաղ առավոտյան թուրք խուժանը, փաթթոցավորված և հնարավոր բոլոր միջոցներով զինված (հրազեն, կացին, դաշույն, մանգաղ, եղան և այլն), մուլաների ուղեկցությամբ ողողում է Ադանայի գլխավոր փողոցներն ու շուկան: Առաջինը հարձակման են ենթարկվում շուկայում գտնվող հայերը, որոնք սկզբում շահասկանալով կատարվածի իմաստը, փորձում են փակել խանութները և փախուստի դիմել: Սակայն խուժանը աստիճանաբար դուրս է գալիս շուկայի սահմաններից և ընդգրկում ամբողջ քաղաքը: Քիչ անց լսվում են կրակոցներ, որոնք շուտով վերածվում են համազարկերի: Այսպես է սկսվում Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածը:

Մեր նպատակից դուրս է կոտորածի մանրամասնությունների մեջ մտնելը: Նշենք միայն, որ ապրիլի 1-ին սկսված կոտորածը տևում է երեք օր, որի ընթացքում բարբարոսական եղանակներով մորթվում են և սպանվում հազարավոր անմեղ հայեր: Ավերվում և հրկիզվում են հայկական թաղերը: Այն, ինչ արժեք էր ներկայացնում, հափշտակվում է քաղաքը հեղեղած թուրք խուժանի կողմից: Իսկ Շապանիե հայկական թաղամասը հիմնահատակ ավերվում և հողի է հավասարեցվում:

Ապրիլի 4-ից քաղաքը սկսում է խաղաղվել, բայց միայն մի քանի օրով: Կարգն ու կանոնը վերահաստատելու նպատակով Ռումելիայից ժամանած զորքի Ադանայում հայտնվելը ազդանշան է դառնում Ադանայի երկրորդ և իր շափերով ահավոր ջարդի համար: Ապրիլի 12-ի կեսօրն անց, երբ զորքը դեռ չէր հասցրել տեղավորվել Քըշլա-Մեյդանի զորանոցում, հանկարծ լսվում են կրակոցներ: Շուտով այն համընդհանուր բնույթ է ստանում և դրանով էլ փաստորեն վերսկսվում է կոտորածը, որն իրակա-

նացման իր եղանակով ու շափերով անհամեմատ գերազանցում էր նախորդին: Ջարդերին անմիջական մասնակցություն են ունենում նաև նոր ժամանած կանոնավոր զորամասերը:

Թուրք հեղինակները ամեն կերպ աշխատում են ապրիլի 12-ին վերսկսված ջարդի պատասխանատվությունը նետել հայերի վրա, որոնք իբր կրակել են զորքի վրա և այսպիսով պատճառ հանդիսացել նոր խոռվությունների համար⁶⁹: Նույն տեսակետն է զարգացնում նաև Արբեղոյու Դամարը: «Կասկածից վեր է, — գրում է նա, — որ երկրորդ խառնակությունը առաջ բերեցին հայ քաղաքական գործիչները, նպատակ ունենալով առիթ ստեղծել օտար միջամտության համար»⁷⁰: Հավանաբար ինչպես Ուրասը, այնպես էլ Արբեղոյուն սնվել են միևնույն աղբյուրից՝ Ջևատ բեյի տեղեկագրից, որտեղ իսկապես հիշատակություն կա ինչ-որ տնից հայերի կրակ բացելու մասին: Թուրք հեղինակները, իհարկե, գիտակցաբար մոռացության են տալիս շատ բան մատնող իթթի-հատական Իսմայիլ Սեֆայի այն հոդվածը, որ հրապարակվել էր «Իթիդալ» թերթում ապրիլի 22-ին (ն. տ.), այսինքն՝ ջարդերի վերսկսումից ընդամենը երեք օր շուտ: Հոդվածում սևով սպիտակի վրա գրված է. «Այն, ինչ կատարվեց, դեռ բոլորը չէ, այն քիչ է: Մենք միայն կարճատև դադար տվեցինք: Բայց մենք դեռ կը տեսնենք, թե ինչով կավարտվի այս բոլորը»⁷¹:

Սակայն փաստերն անհերքելիորեն ճիշտ հակառակն են ապացուցում: Հ. Պապիկյանը, որ Յուսուֆ Քեմալի հետ մեկտեղ թուրքական մեջլիսի կողմից գործուղվել էր Ադանա՝ դեպքերը հետաքննելու և մեջլիսին ղեկուցելու նպատակով, նշում է, որ վալիի տեղեկագրում մատնանշված տունը, որտեղից իբր թե հայերը կրակել են զորքի վրա, պատկանելիս է եղել մահմեդականի և ոչ թե հայի⁷²: Հետևաբար, կամ զրպարտություն է կրակելու պարագան և կամ էլ այն բացվել է թուրքերի կողմից՝ ջարդը վերսկսելու նպատակով: Հ. Պապիկյանը միաժամանակ դիտել է տալիս, որ Յ. Քեմալի տեղեկագրում անգամ այդ փաստը չի մատնանշվում, այլ միայն ակնարկվում է, որ «...հրացան նետված»

⁶⁹ Sı'ı Esat Uras, նշվ. աշխ., էջ 564:

⁷⁰ Arikoglu Damar, նշվ. աշխ., էջ 54:

⁷¹ Генцид армян..., էջ 186:

⁷² Sı'ı Հ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 28:

⁶⁸ Sı'ı Arikoglu Damar, նշվ. աշխ., էջ 48:

վայրերու մոտակաները կարգ մը հայոց տուններ կային»⁷³: Բայց ոչ ավելին:

Թուրք պատմաբանները որպես Ադանայի 1909 թ. ջարդերի պատասխանատու հիշատակում են նաև Ադանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի անունը: Էսատ Ուրասը ավելի որոշակի է գրում, որ «Ադանայի 1909 թ. դեպքերը նախապատրաստողներից էր հոգևորականի քողի տակ հանդես եկող մոլի կուսակցական (ըստ հեղինակի՝ կոմիտեական—Շ. Ք.) Մուշեղ եպիսկոպոսը»⁷⁴, իսկ Արբեղլուն ավելացնում է, որ հայերի հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը կոտորածի օրերին իր բնակարանում պայթած ռումբից զոհվել է⁷⁵, այն պարագայում, երբ նա Ադանայի դեպքերից դեռ մեկ ամիս առաջ, մարտի 4-ին, մեկնել էր Եգիպտոս՝ Ադանայում կառուցվելիք երկրագործական վարժարանի ծախսերի մի մասը եգիպտահայ մեծահարուստներից ձեռք բերելու համար:

Մի պարագա ևս՝ կապված Մուշեղ եպիսկոպոսի անվան հետ: Ինչպես արդեն նշվեց, ջարդերի օրերին նա գտնվում էր Եգիպտոսում: Երբ աղետի լուրը հասնում է Եգիպտոս, Մուշեղ եպիսկոպոսը թողնում է վարժարանի կառուցման հետ կապված գործերը և շտապում վերադառնալ իր աղետյալ հոտի գլուխը: Սակայն, որքան էլ տարօրինակ է, թուրքական իշխանությունները այդպես էլ չեն թույլատրում նրա վերադարձը Ադանա: Եթե իսկապես նա մեղադրվում էր ջարդերը նախապատրաստելու մեջ, ապա նրան ձերբակալելու և պատասխանատվության ենթարկելու ավելի հարմար առիթ թուրքական կառավարությունը չէր կարող գտնել: Բայց նա ոչ միայն չձերբակալվեց ու չկանգնեց դատարանի առաջ, այլ անգամ չթույլատրվեց նրա մուտքը Կիլիկիա այն պարզ նկատառումով, որ Մուշեղ եպիսկոպոսի ներկայությունը շատ կողմերով պիտի խանգարեր թուրքական «արդարության» վերականգնմանը Ադանայում:

Կոտորածն ու կողոպուտը, դժբախտաբար, միայն Ադանայով չսահմանափակվեցին: Ադանայի իրադարձությունների լուրը տեղ հասնելուն պես ամենուրեք, տանը թե ճանապարհին, շուկայում թե դաշտում, նույնիսկ Ադանայի վիլայեթի սահմաններից դուրս և Հալեպի վիլայեթի մի շարք գավառներում հայերը հարձակման

ենթարկվեցին: Մեծապես տուժեցին այն բնակավայրերը, որտեղ հայերն ու թուրքերը համատեղ էին ապրում և կամ էլ այն հայկական գյուղերը, որոնք շրջապատված էին թուրքական գյուղերով: Ավերվեցին, կողոպտվեցին ու հազարավոր զոհեր տվեցին Բաղչեն, Օսմանիեն, Միսիսը, Համիդիեն, Տարսոնը, Հասան-Բեյլին, Լափաշլըն, Անտիոքը, Բեյլանը, Քըրքը-Խանը, Այասը, Պայասը, Այնթապը և այլն:

Այս բոլորի կողքին չի կարելի հպարտությամբ շնչել Զեյթունի, Չոք-Մարզվանի (Դյորթ-Յոլ), Հաճընի, Սսի, Քեսաբի, Տընտըճագի, Շեյխ-Մուրադի հերոսական ինքնապաշտպանական կռիվները, որի շնորհիվ անխուսափելի ջարդից ու կողոպուտից փրկվեցին հազարավոր անմեղ կյանքեր:

Ողբերգական էին աղետի հետևանքները: Ադանա քաղաքի հայկական թաղամասերը ավերակույտի էին վերածվել: Հայկական եկեղեցիները, դպրոցները և ձեռնարկությունները հրկիզվել ու հիմնահատակ ավերվել էին: Կիլիկահայության կրած միայն նյութական վնասը, ըստ թուրքական կառավարության տվյալների, գնահատվում էր 96000 օսմանյան ոսկի: Հ. Պապիկյանն այս կապակցությամբ նշում է, որ եթե այդ գումարին ավելացվեր ևս մեկ զրո, միևնույն է, այն նվազեցված պիտի լիներ: Ըստ նրա հաշվումների կիլիկահայերի նյութական վնասը երեք միլիոն օսմանյան ոսկուց պակաս չէր⁷⁶:

Անհամեմատ մեծ էին կիլիկահայության մարդկային կորուստները: Ըստ հայկական աղբյուրների զոհվածների թիվը շուրջ 30 հազարի է հասել: Հ. Պապիկյանը նշելով հանդերձ այն խոշընդոտները, որոնք թույլ չեն տալիս ճիշտ եզրակացություն հանգել զոհերի ընդհանուր թիվը որոշելու, ավելացնում է, որ իր կարծիքով այն 20 հազարից ավելի է⁷⁷: Ս. Պարթևյանը նույնպես գտնում է, որ այն 20 հազարից ավելի պետք է լինի⁷⁸: Հ. Պապիկյանը իր տեղեկագրում մեջ է բերում պետական խորհրդի նախագատ ատյանի նախագահ Ֆայիգ բեյի, Մանասթըրի վիլայեթի դատական քննիչ Հ. Մոստիլյանի և Մերսինի կառավարիչ էսատ Ռեուֆի կողմից կազմված տեղեկագրից տվյալներ, ըստ որի զոհերի թիվը հավասար է եղել մոտավորապես 15 հազարի⁷⁹:

⁷³ Տե՛ս Հ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 20—21:

⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

⁷⁵ Տե՛ս Ս. Պարթևյան, նշվ. աշխ., էջ 32:

⁷⁶ Տե՛ս Հ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 19:

⁷³ Հ. Պապիկյանի տեղեկագիրը, էջ 29:

⁷⁴ Esat Uras, նշվ. աշխ., էջ 456:

⁷⁵ Տե՛ս Arikoglu Damar, նշվ. աշխ., էջ 54:

Ըստ Պապիկյանի «...կա ահռելի տարբերություն մը պաշտոնական թիվերուն և ուրիշներու կատարած հաշիվին միջև»: Սկզբից ցույց է տրվել 1500 ոչ մասմեդական և 1900 մասմեդական, իսկ ապա՝ 6000⁸⁰:

Էսատ Ուրասը ևս զբաղվում է զոհերի թվի «ճշտման» հարցով: Նա գտնում է, որ հայերի ներկայացրած 30000 և պատրիարքարանի ցույց տված 21330 թվերը խիստ շփազանցված են: Թուրքական պաշտոնական տվյալներով, գրում է նա, այն 10 հազարից չի գերազանցել: Ապա մեջ է բերում «La Turquie» թերթի նշած թվերը, ըստ որի զոհերի ընդհանուր թիվը հազարից էլ պակաս է և որից 250-ը մասմեդականներ են⁸¹: Իր մտքերը հաստատելու համար նա ավելացնում է, եթե ամբողջ վիլայեթում ապրող հայերի թիվը հավասար է 48 հազարի, ապա ինչպես կարող է հայերի կորուստը 21 կամ 30 հազար լինել: Դա կնշանակի, շարունակում է պատմության կեղծարարը, որ Ադանայում հայ չի մնացել⁸²: Ակնհայտ է, որ Ուրասը, ինչպես ժամանակին դա արել էին թուրքական իշխանությունները⁸³, աշխատում է նվազագույնի հասցնել զոհված հայերի քանակը:

Կ. Պուլսի ուսական դեսպան Զինովկը Զարբկովին հասցեագրած 18 ապրիլ (1 մայիս) 1909 թվակիր հեռագրում, հենվելով Մերսինի փոխհյուպատոս Մավրումատի տեղեկությունների վրա, հայտնում է, որ քրիստոնյա զոհերի թիվը հասնում է 15 հազարի⁸⁴:

Կովկասյան զինվորական օկրուգի շտաբի պետի պաշտոնական տար գեն. Յուդենիչի 1909 թ. հուլիսի 15-ի զեկուցագրում խոսվում է շարգերից հետո հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների, ձերբակալությունների ու կախաղանների մասին և ավելացվում, թե այն տպավորությունն է ստացվում, որ կարծես հայերը սպանած լինեն 30 հազար ազնիվ մասմեդականների⁸⁵: Ուրեմն՝ Յուդենիչը նույնպես քրիստոնյա զոհերի թիվը համարում է 30 հազար:

Պաշտոնական ճշգրիտ տեղեկությունների բացակայությունը

(դա հնարավոր էլ չէր թուրքական բռնապետության պայմաններում), անկասկած, դժվարեցնում է որոշելու թուրքերի կատարած նախճիրին զոհ գնացած կիլիկեհայերի վերջնական թիվը: Բայց վերևում արդեն հիշատակված տվյալների մոտավոր համեմատությունն անգամ կասկած չի հարուցում, որ այն 30 հազարից պակաս չի եղել:

Մեր կարծիքով կոտորածն ու կողոպուտը անհամեմատ փոքր չափեր կընդունեին, եթե գործնական ճնշում բանեցվեր երիտթուրքական կառավարության վրա: Մեծ տերությունների ռազմանավերը՝ «քաղաքակիրթ աշխարհի ուղարկված երկաթե այդ ոչնչությունները»⁸⁶, ոչնչով չփոխեցին իրերի գրությունը: Դեռ ավելին, «այս գեղեցիկ ու դժբախտ երկրեն պատան մը հափըշտակելու վայրագ ցանկություն մեջ զիրար արգիլելու»⁸⁷ մոլուցքով տարված ու իրենց հանցավոր անտարբերությամբ «եվրոպացիները քաջալերում էին մարդասպաններին ու թալանչիներին»⁸⁸: Բավական էր փոքրիկ մի ջոկատի ափ հանումը և թեկուզ ցույցի համար երկրի ներսը խորանալը, որպեսզի արգելվեր ջարդի երկրորդ շրջանի սանձազերծումը: Ռազմանավերի «սպաները՝ իբրև սոսկ զբոսաշրջիկ՝ ցամաք կելլեն քամարաներով դինված՝ երթալ ավերակներ ու դիակներ լուսանկարելու, մինչ իրենց նավազները՝ Մերսինի փողոցներն ինկած՝ հանրատուներ կը փնտոեն, ուխտավորի միամիտ ու ջերմերանդ թափորներով»⁸⁹:

Ետեկով գերմանացիների կողմից հացի բաշխման պարագայի մասին, Ա. Քեոզիկը գրում է, որ այն կատարվել էր ոչ այնքան սովալուկ հայ խլյակները կշտացնելու, որքան «անոթիններուն կատաղորեն հացին վրա նետվելու տեսարանը շատ զբոսցուցած ըլլալու էր բարեխիղճ գերմանները» և «ժողովուրդին այդ անձկագին խոյացումը դիտելու, և ուրիշ անգամ մըն ալ՝ պատուհանեն վարինները լուսանկարելու համար»⁹⁰:

Ամենուրեք ավեր, սուգ ու լաց: Այսպիսի պատկեր էր ներկայացնում Կիլիկիան 1909 թ. ապրիլյան կոտորածից հետո: Տասնյակ հազարավոր մազապուրծ հայ խլյակներ, անօթևան ու անոթի, դատապարտված էին սև ճակատագրի: Բավական է մեջ-

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

⁸¹ Տե՛ս Esat Uras, նշվ. աշխ., էջ 564:

⁸² Տե՛ս Esat Uras, նշվ. աշխ., էջ 565:

⁸³ Տե՛ս Геноцид армян..., էջ 169:

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 167—168:

⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 172:

⁸⁶ Ա. Քեոզիկ, Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պուլս, 1910, էջ 13:

⁸⁷ Ա. Պարեկյան, նշվ. աշխ., էջ 35:

⁸⁸ Геноцид армян..., էջ 171:

⁸⁹ Ա. Պարեկյան, նշվ. աշխ., էջ 122—123:

⁹⁰ Ա. Քեոզիկ, նշվ. աշխ., էջ 27:

բերել կաթողիկոսին հասցեագրված Ջավեն պատրիարքի № 417 և 31 դեկտեմբեր 1909 թվակիր գրությունից մի հատված, որպեսզի պարզ դառնա Կիլիկիայում տիրող կացությունը: «Իսկ թե ինչ է Կիլիկիո աղետյալ վայրերու վիճակը, որոնք Հալեպի և Ադանայի ամբողջ նահանգները կը կազմեն, մեկ բառով հայտնեմ թե ամենուրեք համատարած թշվառություն և կարոտություն կը տիրեն: Կարոտյալներու թիվը 80000 կը հաշվվի, 7—10000 երկսեռ որբեր, բազմաթիվ նորատի կիներ, այրի և անպաշտպան կը մնան, և թշվառներու այս մեծ բազմությունը կորուսած ամեն բան, կը տվայտի կիսամեռ թշվառության մեջ»⁹¹: Այնուհետև նշվում է, որ ստեղծվել է «Կիլիկյան որբախնամը», որը 1500 որբերի համար որբանոցներ է բացել Հաճընում, Չոք-Մարզվանում, Մարաշում, Այնթապում և Մերսինում:

Թվում էր, որ ջարդերից հետո գեթ թուրքական «սահմանադրասեր» կառավարությունը պիտի ջանար միջոցներ ձեռնարկել պատժելու աղետի պատասխանատուներին ու մեղսակիցներին և փորձելու ամոքել դժբախտ կիլիկեհայության ծանր վիշտը: Սակայն շուտով պարզ դարձավ, որ նման ակնկալությունները սին երազներ էին միայն: Երիտասարդ թուրքերի հայահալած քաղաքականությունը, բռնությունները, ձեռքակալությունները, ունեզրկման նոր փորձերը և ջարդերի պատճառներն ու պատասխանատուներին սքողելը մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ կացության բարվոքում սպասել նրանցից սոսկ միամտություն կլինի:

Գատարանը, որտեղ դատավորի ու դատախազի պաշտոններըն էին ստանձնել երեկվա դահիճները, անվերջ վճիռներ էր կայացնում ու մահվան կամ տաժանակիր աշխատանքի դատապարտում տասնյակ անմեղ հայերի: Վեց հայեր, որպես ջարդերի մեղսակիցներ, կախաղան են բարձրացվում և ուրիշներ տարբեր ժամկետներով տաժանակիր աշխատանքի դատապարտվում: Բանտերը լցվում են անմեղ հայերով: Մինչդեռ ջարդերի բուն պատասխանատուները՝ թուրք պաշտոնեությունն ու զինվորականությունը, չէին էլ մտածում թաքնվել: Եվ ինչու թաքնվեին, «երբ նրանք էլ հանդիսանում էին դատարանների և քննիչ հանձնաժողովների անդամները և նրանք էլ կարգ են պահպանում մի երկրում, որտեղ նրանց կողմից ջարդվել էր 25—30 հազար քրիստոնյա: Այն, ինչ կատարվում է զինվորական դատարաններում,

հատկապես Ադանայում, արդարադատության անվան տակ հանդիսանում է նրա շարագույն ծաղրն ու ծանակը»⁹²:

Վերևում հիշատակված Ջավեն պատրիարքի գրությունից միաժամանակ պարզ երևում է, որ երիտթուրքական կառավարությունը տարբեր պատրվակներով նոր հալածանքներ էր սկսել Հաճընի, Ջեյթունի և Չոք-Մարզվանի հայերի նկատմամբ: Բանտարկվել էին Հաճընի առաջնորդ Ներսես վարդապետը, Չոք-Մարզվանի առաջնորդական փոխանորդ տ. Սահակ քահանան և բազմաթիվ ազգայիններ: «Բայց այս հետապնդմանց բուն նպատակը, — շարունակում է Ջավեն պատրիարքը, — կը կարծվի ըլլալ Ադանայի աղետի միջոցին այդ լեռնական մերազնեից մինչև 24 ժամու հեռավորության մը մեջ գտնված հայ գյուղերու որևէ վնաս չհասցվելուն համար շրջակա այլազգ գյուղացվոց հետ կնքած պայմանագրություններն, որոնք շատ ախորժ չէին պատճառած»⁹³:

Խոսելով Կիլիկիայում տիրող դրության մասին, Մավրումատին 1909 թ. սեպտեմբերի 8 (21)-ին գրում է, որ նախորդ ռեժիմի ժամանակ իրադրությունը, երբ հայկական հարցը ավելի սուր էր դրված, անհամեմատ պակաս երկյուղալի էր, քան այժմ: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, որը պարտավոր էր վերականգնել կարգը և սահմաններ իրավունքը, ազատությունը և արդարությունը, այստեղ կարողացավ սերմանել միայն, ինչպես և մյուս վիլայեթներում, մեծագույն անիշխանություն»⁹⁴: «...բավական է լինել քրիստոնյա, որպեսզի նրա գործը դատարանում տանուլ տված լինի և նրան կախաղանի արժանի համարեն ամեն անգամ, երբ հակառակորդը հանդիսանում է մահմեդականը»⁹⁵:

Կացությունը ոչնչով չի բարելավվում և հետագա տարիներին: 1911 թ. դեկտեմբերի 13-ին Մ. Գարակյոզյանին գրած նամակում Սահակ կաթողիկոսը հարկադրված խոստովանում է, որ «Այն սև ու կարմիր օրերեն շուրջ երեք տարիներ անցան և մենք տակավին աչք հարտասուս և վրդովյալ հոգով կը թափառինք իբր ստվեր անմխիթար՝ ավերակաց և մշտնջենավոր սուգի այս երկրին Կիլիկիո մեջ, ուր նախճիրներեն վերապրածները կյանքի ավելի գերեզմանը կը պատկերացնեն... ուր որբանոցներեն դուրս, դեռ բյուրավոր անպաշտպան, ընտանեզուրկ որբերու և որբուհիներու

⁹² Геноцид армян..., էջ 172:

⁹³ ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 668, թ. 9:

⁹⁴ Геноцид армян..., էջ 205:

⁹⁵ Геноцид армян..., էջ 206:

⁹¹ ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 668, թ. 7:

երամենի վիրավոր թուշնոց նման կը թափառին փողոցներու և աղբ-
յուսներու մեջ»⁹⁶։

Նույն հուսահատական և անմխիթար վիճակի մասին է վը-
կայում դոկտոր Ս. Գաբրիելյանի նամակը՝ ուղղված Ամենայն
հայոց կաթողիկոսին. «Մեր թրքահայ եղբայրներուն վիճակը ա-
ղիողորմ է և ավելի քան երբեք հուսահատական այժմ, երբ մեր
բոլոր բարեսես ակնկալություններն օսմանյան «սահմանադրա-
կան» կառավարութենեն ևս շարաշար ի դերև ելան և ավելորդ ան-
գամ մալ համոզվեցանք թե թուրքերը, երիտասարդ թե ոչ, հա-
մամիտ են զմեզ անարժան համարել կենաց, ինչքի և պատվո ա-
պահովության»⁹⁷։

Այսպիսով, ոչ երիտթուրքական «հեղափոխությունը» և ոչ էլ
նրանց հուշակած սահմանադրությունը արևմտահայությունը շա-
ղատագրեցին ազգային ու սոցիալական ճնշման կապանքներից։
Ընդհակառակը, դա անհամեմատ մեծ շափեր ընդունեց ու խորա-
ցավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ
երիտթուրք ջարդարարները սկսեցին կենսագործել արևմտահա-
յություն ֆիզիկական բնաջնջման՝ ցեղասպանության հրեշային
ծրագիրը։

* * *

1914 թ. օգոստոսի 1-ին սանձազերծվեց առաջին համաշ-
խարհային պատերազմը։ Այն մղվում էր երկու հակամարտ խում-
բավորումների՝ Անտանտի և Նոյակ միություն միջև աշխարհի
վերաբաժանման համար։ Իմպերիալիստական խմբավորումների
շահերը սուր կերպով բախվում էին նաև Մերձավոր Արևելքում։

Գերմանական իմպերիալիզմը ամեն կերպ ձգտում էր տա-
րածվել դեպի Արևելք, որի հիմնական լծակն էր հանդիսանում
կառուցվող Բեռլին—Բաղդատ երկաթուղին։ Նա տարեցտարի
ամրապնդում էր իր քաղաքական, ֆինանսական և ռազմական
դիրքերը Թուրքիայում։ Հատկանշական է, որ պատերազմի նա-
խօրյակին Օտոմանյան պարտքում Գերմանիայի բաժինն արդեն
կազմում էր 21,3%, երկաթուղու շինարարության համար ներ-
դրված կապիտալում՝ 36,8% և թուրքական նավահանգիստների

կառուցման բնագավառում՝ երկրորդը Ֆրանսիայից հետո։ Կիլի-
կիայի բամբակն արժանացել էր գերմանական «Deutsche Le-
vantische Baumwollgesellschaft» ընկերության ուշադրությա-
նը, որը պատերազմի նախօրեին սկսել էր կառուցել մի շարք
գործարաններ և ձեռք բերել բամբակի ամբողջ հումքն արտահա-
նելու մենատիրությունը⁹⁸։ Անհամեմատ մեծ էր Գերմանիայի ազ-
դեցությունը թուրքական բանակի վրա, որը փաստորեն ավելի
քան երեք տասնամյակ գտնվում էր գերմանական զինվորական
մասնագետների հսկողության տակ (1885-ից՝ ֆոն դեր Զոլցի և
1913-ից՝ Լիման ֆոն Սանդերսի)։

Անգլիական իմպերիալիզմը, որ տասնամյակներ շարունակ
աշխատում էր ապահովել և ամրապնդել Հնդկաստանի ու մյուս
ասիական գաղութների մատուցները, Բեռլին—Բաղդատ երկա-
թուղագծի կառուցումով վտանգված էր տեսնում իր դիրքերն այս
շրջանում։ Գերմանիային արևելյան գործերից մեկուսացնելու և
նրա ազդեցությունը թուլացնելու նպատակով Անգլիան ձգտում
էր նվաճել Պաղեստինն ու Միջագետքը, իր ազդեցությունը տա-
րածել Իրանի ու Աֆղանստանի վրա։ Նման քաղաքականությունը
միաժամանակ ուղղված էր Ռուսաստանի դեմ, որը նույնպես
հույսեր էր փաշայություն Արևելքում իշխող դեր ձեռք բերելու հետ։
Մյուս կողմից Անգլիան, որի ֆինանսները որոշակի ներդրումներ
ունեին Օսմանյան կայսրության երկաթուղու և նավահանգիստ-
ների շինարարության մեջ ու արդյունաբերության տարբեր ճյու-
ղերում, նպատակ չունեի Գերմանիայի հետ մրցակցության պայ-
մաններում հրաժարվել արդեն իսկ նվաճված դիրքերից։ Անգլիան
գերիշխող էր նաև Թուրքիայի արտաքին առևտրում։

Ոչ պակաս շահագրգռվածություն էին հանդես բերում նաև
Անտանտի գծով Անգլիայի դաշնակիցները՝ Ֆրանսիան և Ռու-
սաստանը։ Ֆրանսիան պատերազմի նախօրյակին փաստորեն
դարձել էր Օսմանյան կայսրության վարկատուն և, բնականա-
բար, նրա բաժինը Օտոմանյան պարտքում կազմում էր շուրջ 2,5
միլիարդ ֆրանկ կամ նրա 60,3%-ը։ Ֆրանսիական կապիտա-
լիստները հսկայական գումարներ էին ներդրել Թուրքիայի լեռ-
նարդյունաբերության մեջ (մոտ 3,5 միլիարդ ֆրանկ) և տնտե-
սության այլ ճյուղերում։ Ֆրանսիացի արդյունաբերողներին էր

⁹⁶ Կիլիկյան կսկիծներ, էջ 97։

⁹⁷ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 672, թ. 3։

⁹⁸ *St'u* Раздел Азиатской Турции. По секретным документам 6.
министерства иностранных дел, под ред. Е. А. Адамова, Москва, 1924,
էջ 20։

պատկանում կայսրութիւնում ժխտաբար արտադրութեան և վերամշակութեան մենատիրութիւնը: Ֆրանսիան առանձնապէս հրապուրվում էր Կիլիկիայի բամբակով և ամեն ջանք գործադրում էր գերմանացի կապիտալիստների մրցակցութիւնը թուլացնելու համար:

Անհամեմատ թույլ էր Ռուսաստանի ինչպէս տնտեսական, այնպէս էլ ֆինանսական ազդեցութիւնը Օսմանյան կայսրութեան վրա և չնայած վերջին շրջանում ձեռնարկվող մի շարք կտրուկ միջոցառումների, նա այդ իմաստով գրավում էր ետին տեղերից մեկը: Այդ բոլորով հանդերձ, ցարական Ռուսաստանը Արևելքում ուներ որոշակի քաղաքական նպատակներ: Դարեր շարունակ նրա արևելյան քաղաքականութեան հիմնական խնդիրներից մեկն է եղել Սև ծովի բանալիների՝ Կոստանդնուպոլսի ու նեղուցների, ինչպէս նաև Արևմտյան Հայաստանի նվաճումը: Դա Ռուսաստանին հնարավորութիւն կտար անմիջական շփում հաստատել Միջին ու Մերձավոր Արևելքի երկրների հետ: Այդ նպատակն է հետապնդել դեռևս Ալեքսանդր 3-րդի օրոք կոմս Կապիստի կողմից մշակված Վոլգա—Միջերկրական ծով երկաթուղու կառուցման նախագիծը, որն անցնելով Կովկասով և Արևմտյան Հայաստանով, պետք է Մարաշի մոտով, Ալեքսանդրեաթի շրջանում, դուրս գար Միջերկրական ծով⁹⁹:

Բնական է, որ այդպիսի բարդ ու լարված քաղաքական իրադրութեան պայմաններում կարևոր նշանակութիւն ձեռք բերեր Թուրքիայի գրաված դիրքը: Թուրքիայի մասնակցութիւնը պատերազմին այս կամ այն խմբակցութեան կողմում որոշակի առավելութիւններ էր տալիս նրան: Այս տեսակետից ոչնչի առաջ կանգ չէր առնում Գերմանիան, որն ամեն կերպ հրապուրում ու գրգռում էր երիտասարդ թուրքերի նվաճողական-զավթողական ախորժակը, խոստանալով նրանց առջև բացել մեծ Թուրանի ճանապարհը դեպի արևելք: Գերմանիան հանձն էր առնում Օսմանյան կայսրութեան արևելյան սահմաններն այնպէս ուղղել, որ ապահովվեր Թուրքիայի անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմեդական ժողովուրդների հետ: Ահա թե ինչ էր հայտարարել Թուրքիայի ֆինանսների մինիստր Զավիդ բեյը. «Գերմանացիները վերջին օրերում գնալով ավելի են շռայլում իրենց խոստումները, այնքան հրապուրիչ, որ նրանց (այսինքն՝ կառավարութեան

գերմանոֆիլ անդամներին—Շ. Թ.) դիմադրելը շահագնաց դժվար էր»¹⁰⁰: Եվ իսկապէս երիտասարդ թուրքերը հրապուրվում էին նման խոստումներով:

Իր հերթին, նվաճողական քաղաքականութիւն էր վարում նաև թուրքական իմպերիալիզմը: 19—20-րդ դարերում նրա մղած մի շարք պատերազմները և նրանցում կրած պարտութիւնները (ռուս-թուրքական, իտալո-թուրքական, բալկանյան) ու տարածքային կորուստները, երիտթուրքական արկածախնդիրներին մղում էին ունանալի, կորցրած գաղութները վերանվաճելու, նոր երկրներ զավթելու և այդ ճանապարհով իրականացած տեսնելու իրենց պանթուրքական վաղեմի երազները: Ստեղծված ծանր կացութիւնից դուրս գալու և ստրկացված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հետ հաշիվ տեսնելու ուղին երիտասարդ թուրքերը տեսնում էին ոչ թե հարցի արմատական լուծման, այլ պատերազմի, նրա հաջող կէքի մեջ: Դա էլ նրանց մղում էր մի արկածախնդրութիւնից մյուսը:

Երիտասարդ թուրքերը իրենց առջև խնդիր էին դրել իրագործելու հեռուն գնացող զառանցական մի ծրագիր՝ զավթել Կովկասը, Ղրիմը, անգամ Վոլգայի ու Կամայի դաշտավայրերը, վերանվաճել Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրները և Հնդկաստանը¹⁰¹: Այդ փաստը շեն ժխտում նույնիսկ թուրք պատմաբանները: Այսպէս, պատմաբան Կարալ էնվեր Զիյան իր «Նոր Թուրքիան» գրքում որոշակի գրում է, որ երիտասարդ թուրքերը երկիրը պատերազմի մեջ ներքաշեցին՝ Եգիպտոսը, Թունիսը և այլ երկրներ վերանվաճելու նպատակով¹⁰²: Մյուս կողմից, թուրք հեղինակ Ահլին Աբդուլահատը փորձում է խեղաթյուրել պատմութիւնը և արդարացնել իմպերիալիստական պատերազմին Թուրքիայի մասնակցութիւնը: Խոսելով Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու պատճառների մասին՝ նա երկար կանգ է առնում Անգլիայի ու Ֆրանսիայի հետ վարվող բանակցութիւնների վրա և գրում, որ այդ բանակցութիւններում Թուրքիան իբր նպատակ էր հետապնդում իր տերիտորիալ ամբողջականութիւնն ապահովող հավաստիացումներ ստանալ, ոչ մի խոսք չասելով

¹⁰⁰ Раздел Азиатской Турции, էջ 65:

¹⁰¹ *Sht'u* История дипломатии, т. 3, Москва, 1965, էջ 6:

¹⁰² *Sht'u Karal Enver Ziya*, Yeni Türkiye. Türkiyenin siyasi olaylari, 1959, s. 44—45. Թերվում է ըստ Akşin Apdulahat, Atatürkün d iş politika ilkeleri ve diplomasisi, Istanbul—Ankara, 1964, s. 26.

⁹⁹ *Sht'u* Акопян С. М., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Ереван, 1967, էջ 159:

նրա զավթողական ծրագրերի մասին: Եվ քանի որ, գրում է նա, բանակցությունները դրական արդյունք չտվեցին, Թուրքիան հարկադրված զինակցեց Գերմանիայի հետ, որի հաղթանակի դեպքում Թուրքիային որևէ վտանգ չէր սպառնում կորցնելու իր ինքնուրույնությունը¹⁰³: Նա իր աշխատությունում մեջ է բերել Թալեաթի և Ռաուֆ բեյի միջև կայացած հատկանշական հետևյալ զրույցը. «Մենք, — հայտարարել էր Թալեաթը, — հայրենիքը կործանումից փրկելու համոզմամբ մտանք պատերազմի մեջ»¹⁰⁴:

Արևելքի ժողովուրդների՝ Բաքվում կայացած առաջին համագումարում (սեպտեմբեր, 1920 թ.) թուրք պատվիրակներ Վազարդին Շաքիրը և Իբրահիմ Տալին ևս ջանքեր չեն խնայել Թուրքիայի պատերազմին մասնակցելու, ավելի շուտ՝ ներքաշվելու մեղքը նետելու Գերմանիայի վրա: Իրենց ելույթներում թուրք պատվիրակները հայտարարում են, որ պատերազմում Թուրքիան զավթողական ոչ մի նպատակ չի հետապնդել, իսկ էնվեր փաշան ավելի առաջ է դնում հայտարարելով, թե իբր պատերազմին մասնակցելով երիտթուրքերը նպատակ են ունեցել պաշտպանելու Թուրքիայի անկախությունը և ազատագրելու ստրկացված ժողովուրդներին¹⁰⁵:

Նման տեսակետն անընդունելի է մեզ համար և արդեն իսկ մերժվել է սովետական պատմագրության կողմից¹⁰⁶: Սակայն մեր օրերում ևս գտնվում են հեղինակներ, որոնք շարունակում են պաշտպանել արատավոր այդ դրույթը, Թուրքիային ներկայացնելով որպես ակամայից պատերազմի մեջ ներքաշված անմեղ զոհի: Ն. Զ. էֆենդիևան այդպես էլ գրում է. «Դաշնակիցները (Գերմանիան, Ավստրիան և ուրիշներ) երրորդ անգամ նրան ներքաշեցին պատերազմի մեջ, որն ավելի կործանար եղավ, քան առաջին երկուսը»¹⁰⁷:

Իրականում, պատերազմի նախօրյակին և նույնիսկ սկզբում, Թուրքիան իրենից ներկայացնում էր սովերեն մի պետություն, սրտեղ, ինչպես իրավացիորեն նկատում է Ե. Լուրջուվեյտը, թուր-

քերը եղել և շարունակում էին մնալ «իրենց տան տերերը» և որ Գերմանիան պարզապես ի վիճակի չէր հարկադրել նրան պատերազմելու¹⁰⁸: Հետևաբար, Գերմանիայի հետ Թուրքիայի դաշնակցելը և նրա կողմում պատերազմելը պիտի բացատրել ոչ այնքան Գերմանիայի ճնշմամբ, մի քայլ, որ լրացուցիչ դաշնակիցներ հայթայթելու նպատակով ձեռնարկվել է վերջինիս կողմից, որքան Թուրքիայի ցանկությամբ, քանի որ նրա որդեգրած արկածախնդրական քաղաքականության իրականացումը երիտասարդ թուրքերը կապում էին գերմանական զենքի հաջողության հետ:

Պատերազմի նախօրեին վարվող բանակցությունները, Զեմալ փաշայի և թուրք այլ քաղաքական-պետական գործիչների փորձերը իրականում բոլորովին էլ Թուրքիայի տերիտորիալ ամբողջականությունն ապահովելու նպատակներ չէին հետապնդում: Նման քայլերով երիտասարդ թուրքերը նախ և առաջ ցանկանում էին մոլորեցնել համաշխարհային հասարակական կարծիքը և քուզարկել իրենց նվաճողական նպատակները: Որ իրապես երիտթուրքական պետական-քաղաքական որոշ գործիչներ դեմ էին Գերմանիայի հետ զինակցությանը, գաղտնիք չէ: Որ նրանցից ոմանք անգամ ունեին որոշակի անգլո-ֆրանսիական կողմնորոշում, նույնպես կասկածից վեր է: Սակայն նրանք չունեին այն ուժն ու զորությունը, որպեսզի կարողանային հակազդել կառավարության գերմանոֆիլ անդամների վրա և փոխել նրա արտաքին քաղաքականությունը: Այդ շատ պարզ երևում է Գերմանիայի հետ Թուրքիայի զինակցելու փաստից, երբ էնվերը, առանց հաշվի առնելու կառավարության անդամների կարծիքը, գաղտնի բանակցում էր գերմանական դեսպանի հետ և ռազմաքաղաքական դաշինք կնքում Եռյակ միության հետ: Եվ երբ 1914 թ. օգոստոսի 2-ին գաղտնի պայմաններում ստորագրվեց գերմանա-թուրքական ռազմաքաղաքական դաշինք, անգլո-ֆրանսիական կողմնորոշում ունեցողները փաստորեն կատարված իրողության առաջ կանգնեցին:

Որպեսզի առժամանակ չպարզեր իր քաղաքական դեմքը և շմտներ իր զավթողական նկրտումները, ինչպես նաև ժամանակ շահեր պատերազմական պատրաստություններ տեսնելու համար, Թուրքիան Գերմանիայի հետ դաշինք կնքելու հաջորդ օրն իսկ

¹⁰³ Տե՛ս AkŞin Apdülahat, նշվ. աշխ., էջ 17—22:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 26:

¹⁰⁵ Տե՛ս Первый съезд народов востока, Петроград, 1920, էջ 77—78, 108—116:

¹⁰⁶ Տե՛ս Саркисян Е., նշվ. աշխ., էջ 175, Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, Москва, 1966, էջ 4, 24, 29:

¹⁰⁷ Эфендиева Н. З., նշվ. աշխ., էջ 18:

¹⁰⁸ Лудшувейт Е. Ф., նշվ. աշխ., էջ 29:

չեզոքութիւն հայտարարեց: Նույն նպատակով Թուրքիան փորձեց պաշտպանական դաշինք կնքել նաև Ռուսաստանի հետ: Դա մի խարդախ և խորամանկ քայլ էր, որ ձախողվեց:

1914 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքական նավատորմը, առանց պատերազմի հայտարարելու, ուխտագրծորեն հարձակում է գործում ռուսական սևծովյան նավահանգիստների վրա: Դա էլ փաստորեն առիթ է ծառայում երկու երկրների միջև պատերազմի սանձազերծման համար:

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց մի քանի ամիս անց Անտանտի պետությունների միջև սկսվում է գաղտնի բանակցությունների երկարատև մի շրջան: Ռուսաստանում ֆրանսիական դեսպան Պալեոլոգը իր 1 (14)-ը մարտի 1915 թվակիր հեռագրում ցարական կառավարությանը հայտնում էր, որ «...հանրապետության կառավարությունը, քննարկելով հաշտության պայմանները, որոնք պետք է առաջադրվեին Թուրքիային, ցանկանում է կցել Սիրիան, ներառյալ Ալեքսանդրետի ծոցի մարզը և Կիլիկիան մինչև Տավրոսյան լեռնաշղթան»¹⁰⁹:

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության գրասենյակի պետի տեղակալ Ն. Ա. Բազիլիի՝ գլխավոր հրամանատարության շտաբի ղեկավանագիտական գրասենյակի ղերեկտոր Կուդաշևին ուղարկած հեռագրից երևում է, որ Ռուսաստանի կառավարությունը ֆրանսիական կառավարության ուշադրությանն է ներկայացրել հայերի՝ հիշյալ երկրամասի նկատմամբ սնուցած ձգտումները: Բայց, ավելացվում է հեռագրում, «...եթե Ֆրանսիան Մերսինի միացումը իր համար գտնում է կարևոր ու անհրաժեշտ, այդ դեպքում մենք, իհարկե, այն շարտի խոչընդոտենք»¹¹⁰:

Հետագա մի քանի օրերի ընթացքում ցարական կառավարությունը, նկատի ունենալով նաև իր ղավթողական ծրագրերը, համաձայնվում է ամբողջ Կիլիկիան Ալեքսանդրետի ծոցով և Մերսին ու Յումուրթալըք նավահանգիստներով տալ Ֆրանսիային¹¹¹:

Շուրջ մեկ տարի տևած բանակցությունները, աստիճանաբար ուրվագծվելով ու բյուրեղանալով՝ ծնունդ են տալիս Սայքս-Պիկո համաձայնությանը, ըստ որի Անգլիան ձեռք էր բերում Միջագետքը և ազդեցության ոլորտներ Պաղեստինում, Ֆրանսիան՝

Սիրիան, Կիլիկիան, Մոսուլի նավթաշատ շրջանը և արևմուտքից արևելք՝ Կիլիկիայից մինչև Տիգրանակերտ ձգվող գոտին, իսկ Ռուսաստանը՝ Կոստանդնուպոլիսն ու Արևմտյան Հայաստանը: Ծիշտ է, հետագայում որոշ տերիտորիալ խոստումներ տրվեցին նաև Իտալիային, բայց համաձայնագիրը հիմնականում պահեց իր բովանդակությունը:

Եվրոպայում պատերազմի սանձազերծումը և գերմանա-թուրքական ռազմաքաղաքական դաշինքի կնքումը այլևս կասկած չէին թողնում, որ սկսված պատերազմում Թուրքիան դիտորդի դերում չէր մնալու: Այն ավելի որոշակի է դառնում 1914 թ. օգոստոսի 3-ին հայտարարված ընդհանուր զորակոչով և ծավալվող պատերազմական տենդագին պատրաստություններով: Զենքի են կոչվում 18—45 տարեկան օսմանյան քաղաքացիները, այդ թվում և տասնյակ հազարավոր հայեր¹¹²: Սկսվում է զորքի տեղաշարժը և կենտրոնացումը սահմանամերձ շրջաններում:

Զորաշարժի հայտարարությունը միայն բավական էր, որ երկիրը դուրս գար իր զարգացման բնականոն հունից, խախտվեց նրա ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կյանքի սովորական ընթացքը: Հայ արհեստավորների և առևտրականների զորաբանակ կանչվելը, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել Կիլիկիայի ողջ տնտեսական կյանքը, մեծ հարված էր երկրամասի տնտեսությանը: Փակվում են արհեստանոցները, վաճառատներն ու առևտրական կետերը: Կանգ է առնում ներքին առևտուրը: Զգացվում է բնակչության անմիջական պահանջները բավարարող տեղական ապրանքների խիստ պակաս:

Մյուս կողմից, ղինվորականության և պատերազմի կարիքների համար երիտթուրքական կառավարությունը «մյուսադերե» (բառացի նշանակում է բռնագրավում) և «թեքալիֆի հարբիյե» (պատերազմական հարկ) անվան տակ սկսում է բռնագրավել հայ վաճառականների և արհեստավորների ունեցվածքը, փոխարենը մի թղթի կտոր՝ ստացական տալով, պատերազմի հաղթական ավարտից հետո վերադարձնելու պայմանով: Իսկ այն վաճառականները, որոնք կաշառքի միջոցով կարողանում էին փրկել իրենց հարստությունը, երկարատև պատերազմը և ապրանքի սո-

¹⁰⁹ Раздел Азиатской Турции, էջ 127:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 128:

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 136:

¹¹² Օսմանյան բանակում ղինվորական ծառայության կանչված հայերի թիվը, ըստ Գ. Պալաքյանի, շուրջ հիսուն հազարի է հասել (տե՛ս նրա Հայ Գողգոթան, հ. Բ, էջ 59): Մեր կարծիքով նշված թիվը խիստ փոքրացված է: Պետք է ենթադրել, որ զորակոչի ենթարկված հայերի թիվը անհամեմատ մեծ է եղել:

վը նկատի ունենալով, նպատակահարմար էին համարում այն չհանել պահեստից: Առևտուրը կասեցավ, — գրում է ականատեսը, — կյանքը սկսավ սղիլ: Անվստահությունը սովորական դարձավ: Ունեցողը՝ ունեցածին տերը չէր. շունեցողը, սակայն, ոչ մեկ կերպ կրնար կարիքին ճարը գտնել: Այս բոլորին վրա ճնշիչ բեռ մըն էր եղած զինվորականության անվերջ, անհատնում պահանջները»¹¹³:

Ավելի ծանր էր հայ գյուղացու դրությունը: Նրա ընտանիքի աշխատունակ և ֆիզիկապես առողջ անդամներին զորակոչելու պատճառով աշխատող ձեռքերի խիստ պակաս էր զգացվում: Զինվորական պետքերի բավարարման անվան տակ բռնագրավում, թալանում էին նրա աղքատիկ ունեցվածքը՝ գյուղատնտեսական մթերքները և նույնիսկ սերմացուն, գործիքները և բանող կենդանիները: Խլում ու տանում էին այն, ինչը քիչ թի շատ արժեք կարող էր ներկայացնել: Կիսամերկ ու բոբիկ հայ գեղջուկը օրն ի բուն, ձմեռվա ցրտին ու ամառվա շոգին, դատապարտված էր իր միջոցներով պատերազմական կարիքների համար «սուխրա» (չհատուցվող աշխատանք) կատարել, ճանապարհների, ամրությունների կառուցմանը մասնակցել և այլն: «Ամենուրեք սաստկությունը և սպառնալիքներու ներքև, — կարդում ենք Զավեն պատրիարքի անունով 1914 թ. սեպտեմբերի 27-ին ստացված նամակում, — կը գրավեն ժողովուրդին ցորենը, գարին, ձին, ջորին, ոչխարը, ձավարը, յուղը, թացանը, տրեխացու մորթիքը, գեղջիկուհու զլխի սավանները և այլն, և այլն. ունեցողը լուրի մընջիկ կուտա արդեն, իսկ շունեցողները պետք է զրամով ճարեն ու բերեն. հակառակ պարագային կը հանձնվին պատերազմական ատյանին»¹¹⁴:

Բռնագրավումներին ու դավթումներին զուգահեռ, վերևից եկած կարգադրությանը, երկրով մեկ ծավալվում է մի շարժում, որի նպատակն էր «օրինական» եղանակով դանձվող հարկերից դուրս նվիրատվության անվան տակ կորզել ժողովրդի վերջին ունեցվածքը: Հայր այստեղ ևս բացառություն կազմել չէր կարող: Յուրաքանչյուր հայ ընտանիք իր խղճով միջոցներից բանակի համար գործում էր գուլպաներ, բրդեղեն, ձեռք էր բերում հագուստեղեն, պարկեր և այլն: Նման դեպքերում հայն ավելի նվիր-

¹¹³ Գ. Սաբաֆյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 1050:

¹¹⁴ Զավեն աբեղայիսկոպոս, Պատրիարքական հուշերս. վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 54:

րատվություն ու հայրենասիրություն էր հանդես բերում, քան մահմեդականը: Հնարավոր է, որ այստեղ իր դերն է կատարել կառավարության և մահմեդական բնակչության կասկածանքն ու ատելությունը չվաստակելու, չգրգռելու պարագան: Այդուհանդերձ, փաստ է, որ պատերազմի սկզբնական շրջանում, այսինքն մինչև տարագրության սկիզբը, հայերի կողմից չի նկատվել օսմանյան տերության հանդեպ օրինազանցության կամ դավաճանության որևէ փորձ: Հլու հնազանդ և անտրտուն չնա տանում էր իրեն վիճակված ծանր բեռը:

Տնտեսության քայքայման պրոցեսը առավել մեծ շափեր ընդունեց հատկապես 1915 թ. գարնան ամիսներից, երբ Կիլիկիայից զանգվածաբար տարագրվել սկսեցին հայերը: Թուրք ականատեսը, խոսելով Ադանայի վիլայեթի պատերազմական տարիների կյանքի մասին, գրում է. «Հայերի դեպի Սիրիա տարագրությունը Ադանայի վիլայեթը իսկապես ամառվան մատնեց: Շուկայից, վաճառատնից և արհեստից ոչինչ չէր մնացել: Խանութները և աշխատավայրերը փակվեցին: Կլայեկիչի, զոզոզի բացակայությունը անգամ դժվարին կացություն էր ստեղծել... Երկիրը զրանքում էր խիստ ողորմելի վիճակում: Անոթությունը, աղքատությունը, բարոյական անկումը, փոքրի առջև խոնված բազմությունը, քարտերով տրվող ցեխի պես հացն ստանալու համար ժողովրդի իրարանցումը, այն ձեռք չբերողների ճիշերը, սովից ու շաթափվողները սովորական էին դարձել: Հաց մուրացողներին շափ ու սահման չկար: Փողոցները անոթիների և թշվառների տունն էին դարձել»¹¹⁵:

Պատերազմի առաջին ամիսները եկան ժխտելու թուրքական հրամանատարության կայծակնային հաղթանակի ծրագրերը: Թուրքական բանակները կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի հարվածների տակ, մեծաքանակ զոհերի գնով, լքում էին առաջավոր դիրքերը և դիմում նահանջի: Թուրքական բանակներին հաջողություն չէր սպասում նաև դեպի Սուեզի ջրանցքի շրջանը կազմակերպվող արշավանքում: Մյուս կողմից, դատարկ կրակոցի դեր կատարեց սուլթանի հայտարարած ջիհատը՝ քրիստոնեական աշխարհին ուղղված սուրբ պատերազմի կոչը:

Պատերազմական գործողությունների ընթացքը վկայում էր, որ պատերազմող կողմերից ոչ մեկն էլ ի վիճակի չէր արագ հաղ-

¹¹⁵ Arikoglu Damar, նշվ. աշխ., էջ 69:

թանակի հասնել, որ այն լինելու էր դիրքային ու երկարատև նման պատերազմը, ինչ խոսք, որ հեռանկարներ էր բացում երիտասարդ թուրքերի հայաջինջ ծրագրի իրագործման համար: Պատերազմը և նրանում հայ ժողովրդի բախտով «շահագրգռվող» եվրոպական մեծ տերությունների մասնակցությունը երիտթուրքերին ընձեռում էին լայն հնարավորություններ հայերի ֆիզիկական ունչացման իրենց վաղեմի ծրագրի կենսագործման ու արևմտահայության սպանդը կաղմակերպելու ճանապարհին:

Օգտվելով պատերազմի բերած անկախությունից, ինչպես վկայում են թուրքական պետական փաստաթղթերը, երիտթուրքական կառավարությունը վերջնականապես որոշում է հաշվհարդար տեսնել արևմտահայության հետ, նպատակ ունենալով դրանով իսկ կանխել հայկական հարցի հարուցման հնարավորությունը երբևիցե:

Ձուր են թուրք պատմաբանների այն փորձերը, որոնք հայերի նկատմամբ կիրառվող տարագրությունը աշխատում են արդարացնել երկրի անվտանգությունն ապահովելու պատրվակով: Փաստերը, սակայն, անաշու են: Դեռևս 1910 թ. օգոստոսի 10-ին երիտթուրքերի Սելանիկի համագումարում հատուկ որոշում էր ընդունվել ազգային փոքրամասնությունների, այդ թվում հայերի, արարների և քրդերի նկատմամբ կիրառվելիք ֆիզիկական բնաջնջման վերաբերյալ: Հաջորդ տարվա համագումարում արդեն մասնավոր քննարկման է ենթարկվում հայերի ցեղասպանության ծրագիրը և որն էլ իր արտացոլումն է գտնում համագումարի դազտնի բանաձևում: Նրանում որոշակի գրված է.

«1. Ըստ բնության օրենքներուն, ստորագաս ցեղերը պետք է գերադաս ցեղերուն կերն ըլլան:

2. Ձարդելը ազնվականության ցասումն է անարգ ցեղերու դեմ, որոնք նկատված են իբրև վտանգավոր թշնամիներ:

3. Անգամ մը, որ որոշված է, ջարդերու ծրագիրը պետք է գործադրել ամբողջությամբ, առանց որևէ մեկն ազդվելու և առանց տարվելու զգացական պարագաներե: Անգթություն չէ ասիկա, այլ գերադաս տարրի մը ոգիին արիասրտությունը:

4. Զինվորական անհրաժեշտություն մըն է ժողովուրդներու ջարդը, առանց տարիքի և սեռի խտրություն:

5. Թշնամի ցեղի մը մանուկները ջարդելը կանխարգել միջոց մըն է ազգային պաշտպանություն:

6. Իրենց մայրերու արգանդներուն մեջ իսկ ապրելու անարժան են այս մանուկները, իբրև աստվածամերժ շառավիղներ:

7. Կայսրության գոյությունը կախումն ունի երիտասարդթուրք (ժեռն-թուրք) կուսակցության ուժեն և բոլոր հակամարտ գաղափարներու դսպումեն»¹¹⁶:

Արևմտահայերի զանգվածային ջարդի որոշումն ընդունված էր: Դա էլ հետագայում դարձավ երիտթուրքական կառավարության ներքին քաղաքականության հիմնական խնդիրը: Սակայն միաժամանակ հայտնի է, որ նման մեծածավալ ծրագրի իրագործումը անհնարին էր խաղաղ պայմաններում: Ուրեմն մնում էր սպասել պատեհ առիթի: «...հայ տարրին ջնջումը թեև նախապես մտադրված էր,— կարդում ենք թուրքական կառավարության փաստաթղթերից մեկում,— բայց ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրությունը իրականացնելու կարելիություն չէին ընծայեր»¹¹⁷: Հիշատակություն կա, որ երիտասարդ թուրքերը մտադիր էին եղել ջարդերը սկսել բալկանյան պատերազմներից անմիջապես հետո: Սակայն, նկատի ունենալով արտաքին քաղաքական մի շարք հանգամանքներ, առժամանակ հրաժարվել են նրա կենսագործումից¹¹⁸:

1914 թ. աշնանը, երբ պատերազմն իր լիիրավ իրավունքների մեջ էր մտել, երբ հանգամանքները միանգամայն նպաստավոր էին, երիտթուրքական կառավարությունը Թալեհաթի նախագահությամբ և շեյխու-ուլ-իսլամի մասնակցությամբ վճռում է արևմտահայության ճակատագիրը: Որոշվում է չգոհանալ սուլթանների և երիտասարդ թուրքերի նախկինում կիրառած մասնակի ջարդերով և հայ տարրը արմատախիլ անել կայսրության բոլոր մասերում: Ստեղծվում է «հատուկ կազմակերպությունը» (թեշքիլաթը մախսուսի): Ընտրվում է այն եռյակը, որը լիազորվում էր արտակարգ իրավունքներով և որն էլ պիտի իրականացներ արևմտահայության տարագրությունն ու սպանդը:

1915 թ. փետրվարի 28-ին վիլայեթներ են ուղարկվում ծրարված գաղտնի հրամաններ էնվերի ստորագրությամբ: Նրանում պարզ ու որոշակի ասվում էր, որ կայսերական հրամանով

¹¹⁶ Կ. Գևորգյան, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, ԺԲ տարի, 1965, էջ 178—179:

¹¹⁷ Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 26:

¹¹⁸ Տե՛ս Զ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 234:

որոշված է ամբողջովին ոչնչացնել հայ ցեղը, որի համար անհրաժեշտ էին.

«1. Երկրում ապրող և օսմանյան հպատակ հայ անունը կրող հինգ տարեկանից բարձր բոլոր բաշխողականները¹¹⁹ քաղաքներից ու գյուղերից դուրս հանվելով պիտի շարժվեն:

2. Կայսերական բանակում ծառայող բոլոր հայերը, իրենց զորամասերից մեկուսացվելով, առանց որևէ միջադեպի տեղիք տալու, ընդհանուրի աչքից հեռու և թաքուն վայրերում պիտի գրնդակահարվեն:

3. Բանակում գտնվող հայ սպաները իրենց ծառայած զորամասերում պիտի բանտարկվեն՝ մինչև նրանց վերաբերյալ նոր կարգադրության ստացումը»¹²⁰:

Մեզ համար անհայտ պատճառներով հրամանը, որը պիտի իրականացվեր 48 ժամ անց ստացված լրացուցիչ կարգադրությամբ, չի կենսագործվում:

Ուշադրության արժանի է նաև հետևյալ փաստը: 1915 թ. սկզբներին Ադանայում գտնվող մի բարձրաստիճան թուրք պաշտոնյա իր մտերիմ հայ վաճառականին հայտնում է, որ «Հայոց գլխուն կրկին նոր փոթորիկ մը պիտի պայթի, որը պիտի գերազանցե ցարդ բոլոր պատահածները... ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան և հարստություննին պիտի գրավվի, նույնիսկ ձեր կիներն ու աղջիկները ձեզի չի պիտի մնան... Ես քիչ կըսեմ, դուն շատ հասկցիր... սա տեղեն ժամ առաջ հեռացիր, որպեսզի գալիք փոթորիկին մեջ դուն ալ չի խեղդվիս»¹²¹:

Հայ վաճառականը, մինչև Կիլիկիայից հեռանալը այս մասին հայտնում է Սահակ կաթողիկոս Խապայանին, որն իր հերթին հանդիպում է Կ. Պոլսից վերադարձող Ջեմալ փաշային և խնդրում ճշտել լսածը: Վերջինս հայտնում է, որ նախարարական նիստերում ինքն առաջարկել է խղճալ ու տեղահան չանել ողջ ժողովրդին, այլ բավարարվել կուսակցականներին ու մտավորական-

ներին մեկուսացնելով: Բայց, շարունակում է Ջեմալը, իր առաջարկը մերժվել է մեծամասնության կողմից¹²²: Ուրեմն, Ջեմալ փաշան ևս չի ժխտել հիշատակված որոշման գոյությունը:

Նույն թվականի մարտի սկզբներին Սահակ կաթողիկոսը հատուկ հանձնարարությամբ Կ. Պոլիս է ուղարկում մի հայ վաճառականի՝ գույժը պատրիարքին հայտնելու համար: Սակայն գերմանական ղեսպան Վանգենհայմից և Թալեաթից հանգստացուցիչ հավաստիացում ստանալով, պատրիարքը իր գործն ավարտված է համարում: Այս փաստը մեկ անգամ ևս ցույց է տալիս հայ կրդերի միամտությունն ու կույր հավատքը ղեպի երիտասարդ թուրք պետական-քաղաքական գործիչները:

Հետագա մի քանի ամիսների ընթացքում, ավարտելով խընամբով նախապատրաստվող համապատասխան աշխատանքները, իթթիհատականները ձեռնամուխ են լինում իրենց դիվային ծրագրի իրականացմանը:

Տեսականորեն հարցը վճռված էր: Բայց դա գործի միայն սկիզբն էր: Անհրաժեշտ էր այսուհետև խմորել խավարամիտ ու մոլեռանդ թուրք խուժանի միտքը, նրա աչքում հային ներկայացնել որպես օսմանյան հայրենիքի և մահմեդական կրոնի թրջնամու, դավաճանի, խորացնել հայ և թուրք համայնքների միջև արդեն գոյություն ունեցող անջրպետը և հող նախապատրաստել գալիք մեծ իրադարձություններին՝ «սրբազան գործին» նրան մասնակից դարձնելու համար: Ի դեպ պետք է նշել, որ նման ըստուգված և իրեն արդարացրած մեթոդը կիրառվել էր թուրքական իշխանությունների կողմից նախորդ բոլոր հայկական շարդերի ժամանակ, խուժանին փաստորեն վերածելով կույր ու անբան գործիքի: Եվ միանգամայն իրավացի է Ս. Պարթևյանը, երբ խոսելով 1909 թ. կիլիկյան կոտորածների մասին, գրում է, որ «... ոչ մեկ տեղ թուրք խուժանը, որքան որ ալ գրգռված ըլլա, շարդելու չելլար երբեք՝ եթե նախապես տեղական իշխանությունց քաջալերանքը չունենա և մեղսակցությունն ու աջակցությունը չապահովեն: Առանց ատոր շարդ եղած չէ թուրքի մեջ և չի կրնար ըլլալ»¹²³:

Այդ նպատակով էլ երիտթուրքական կառավարությունը ըսկըսում է արևմտահայությանը ներկայացնել քաղաքական մեղա-

¹¹⁹ Թուրք բարբարոսները այսպես էին անվանում հայերին:

¹²⁰ Մ. Քելեշյան, նշվ. աշխ., էջ 556 (հայատառ թուրքերեն): Նույնը տե՛ս նաև Ա. Անտոնյան, նշվ. աշխ., էջ 232—233: Ի տարբերություն Մ. Քելեշյանի, վերջինիս մոտ հրամանը թվագրված է 27 փետրվար 1918: Մեր կարծիքով նման հրաման 1918 թ. արձակվել չէր կարող, երբ արդեն իրողություն էր արևմտահայության ցեղասպանությունը:

¹²¹ Գ. Պալաֆյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 71: Տե՛ս նաև Ս. Սաղըրյան, նշվ. աշխ., էջ 74:

¹²² Տե՛ս Գ. Պալաֆյան, նշվ. աշխ., էջ 72:

¹²³ Ս. Պարթևյան, նշվ. աշխ., էջ Ը:

դրանքներ, նրան ամբաստանելով դավաճանութեան ու դասալր-
քութեան, թշնամի բանակներին գործակցելու և ապստամբութիւն
նախապատրաստելու մեջ: Որպէս փաստական ապացույց մեջ-
տեղ են նետւում հայկական եկեղեցիներում զենքերի ու ռումբե-
րի հայտնաբերման կեղծ ու մտացածին փաստերը:

Թուրքական իշխանութիւնները ամենուրեք ու միշտ դիմում
են միևնույն կեղծիքին: Պահեստներից հանելով ժանգոտած, ան-
գործութեան աստիճանի մաշված զենքերն ու զինամթերքները և
նկարահանելով ուղարկում էին մայրաքաղաք: Նման մի զավեշ-
տութիւն էլ կատարվել է Ադանայում: Տեղական իշխանութիւն-
ները մեծ թվով թուրքերի հազցնում են հայ ֆիդայու համազգեստ,
նրանց առջև դիզում պահեստներից բերված զենքերը և լուսա-
նկարում¹²⁴: Մի «ռումբ» էլ հայտնաբերվում է Կեսարիայի ս.
Լուսավորիչ եկեղեցու ժամկոշի մոտ, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ
վեց օխանոց մի կշռաքար և որի համար կախաղան էր բարձրաց-
վել մի հայ քահանա¹²⁵:

Ս. Պասթաճանը, նկարագրելով 1914—1915 թթ. ձմռան ա-
միսներին Կիլիկիայում տիրող անորոշ ու անստույգ իրավիճակը,
գրում է. «Կիլիկիո ամեն կողմերը խիստ ուշադրավ լռութիւն մը,
սպառնալից խաղաղութիւն մը կը տիրեր թուրք կառավարութեան
և ժողովրդական շրջանակներուն մեջ: Շիլ նայվածքներ, խեղդ-
ված վայրագ ատելութեան նշմարներ և միևնույն ատեն տենդա-
զին գործունեութեան և պատրաստութեան նշմարներ կը տեսնվե-
ին ամեն կողմ: Բարեկամութեան կեղծ արտահայտութիւններ հոս
ու հոն, և նույնիսկ կառավարական պաշտոնյաներու կողմէ վրան
բաց բարյացակամութեան հավաստիքներ կը տեղային»¹²⁶:

1915 թ. հունվարի սկզբներին Հաճընի ս. Գևորգ եկեղեցու
պատին փակցվում է մի հայտարարութիւն: Նրանում գրված էր.
«Մենք հաճընցիներս ամեն պարագայի տակ արթուն պետք է
ըլլանք: Ամեն հայ թող զենք զնե և ինքնապաշտպանութեան նվիր-
վի: Մեր արժանապատմութիւնը վիրավորող դավաճաններուն
արժանի պատիժը պիտի տանք»¹²⁷: Շուտով, սակայն, պարզվում
է, որ դա թուրքական իշխանութիւնների սարքած դավերի արդ-

շունքն էր: Այսպէս. հայ քաղաքական կուսակցութիւնները, որոնք
անտեղյակ էին հայտարարութիւնից, Կ. Կիլիկիայի գլխավորու-
թեամբ որոնումներ են կատարում և Չաթախում հայտնաբերում
Արամ Պոյաճյան անունով մի հայ պատանու: Նա խոստովանում
է, որ հայտարարութիւնը իրեն են տվել թուրքական իշխանու-
թիւնները և պահանջել այն փակցնել ս. Գևորգ եկեղեցու պատին:

Հայտարարութեան մասին անմիջապէս «տեղեկանում» են
թուրքական իշխանութիւնները: Սկսվում են ձերբակալութիւննե-
րը: Մեծ թվով հայեր նետվում են բանտերի նկուղները, որոնցից
վեցը այնուհետև աքսորվում և շորսն էլ կախաղան են բարձրաց-
վում, այդ թվում նաև Կ. Կիլիկիայնը¹²⁸:

Գրան հետևում են զենքի ու զինամթերքի որոնումները ամ-
բողջ Կիլիկիայում: Այստեղ իր դաժանութեամբ աչքի է ընկնում
Ադանայի պատերազմական ատլանի նախագահ Ավնի բեյը: Նա
մի ջոկատի ուղեկցութեամբ շրջում է կիլիկիան բոլոր քաղաքներն
ու գյուղերը և ահ ու սարսափ տարածում ամենուր: Միշտ և ամեն
տեղ նա գործում է միևնույն եղանակով: Իր մոտ է հրավիրում
հայ երեւելիներին, ձերբակալում և հայտնում, որ Օսմանյան կա-
ռավարութիւնը կասկածում է հայերի հավատարմութեան վրա,
որ հայերի մոտ մեծ քանակութեամբ պահված զենքեր կան: Եթե
հոժարակամ հանձնվեն դրանք, ապա իրենք ազատ են արձակ-
վելու, հակառակ պարագային սպառնում էր բռնութեան դիմել և
նույնիսկ տարագրել: Հայերը, շքանկանալով նոր բարդութիւննե-
րի տեղիք տալ, բերում և հանձնում են ունեցած հրացանները:
Ավնի բեյը չբավականանալով այդքանով, ծեծի ու սպառնալիքի
տակ պահանջում է նորերը: Շատ վայրերում հայերը հարկադր-
ված են լինում զենքերը գնել թուրքերից և հանձնել բեյին: Սա-
կայն հարցը դրանով էլ չի լուծվում: Հիմա նա արդեն դրութեան
տերն էր, կվարվեր այնպէս, ինչպէս ինքը կամենար:

Կիլիկիահայութեան տարագրութեան ծրագիրը մշակելիս, հա-
վանաբար, թուրքական կառավարութեան ուշադրութիւնից չեն
վրիպել հայաշատ այն քաղաքները, որոնք նախորդ կտորածնե-
րի ժամանակ ինքնապաշտպանութեան շնորհիվ խուսափել էին
մեծ կորուստներից և որոնք էլ այժմ որոշ ուժ էին ներկայացնում:

¹²⁴ Տե՛ս Հուշամատյան մեծ եղեռնի, էջ 340:

¹²⁵ Տե՛ս Ս. Սաղորյան, նշվ. աշխ., էջ 75:

¹²⁶ Գ. Սարաֆյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 940:

¹²⁷ Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 585: Տե՛ս նաև Հուշամատյան մեծ եղեռնի,
էջ 870 և Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 150:

¹²⁸ Տե՛ս Հուշամատյան մեծ եղեռնի, էջ 871 և Հ. Պողոսյան, նշվ. աշխ.,
էջ 586:

Այդպիսիներն էին Հաճընը, Դյորթ-Յոլը և, մասնավորապես, Զեյթունը:

Մյուս կողմից, երիտթուրքական կառավարությունը արևմտահայության սպանող կազմակերպելիս չէր կարող հաշվի չառնել Կիլիկիայի աշխարհագրական դիրքը: Չէ որ Կիլիկիայով պետք է անցնեին երկրի կենտրոնական վիլայեթներից և Արևմտյան Հայաստանից դեպի Սիրիայի և Միջագետքի անապատները քշվող քարավանները: Կիլիկյան հիշյալ քաղաքների և ողջ կիլիկահայության առաջնահերթ տարագրությամբ թուրքական կառավարությունը նպատակ էր հետապնդում վնասազերծելու դեպի անապատները տանող ուղիները, խուսափելու ամեն մի անակնկալից ու պատահականությունից: Սա, մեր կարծիքով, Կիլիկիայի ավելի վաղ ամայացման հիմնական պատճառն է հանդիսացել:

1914 թ. օգոստոսին մի խումբ զեյթունցի երիտասարդներ հրաժարվում են զորակայան ներկայանալ: Սա անմիջապես, որպես Զեյթունի գործերին միջամտելու առիթ, օգտագործվում է կառավարության կողմից: Օգոստոսի վերջերին վեց հարյուր զինվորով Զեյթուն է գալիս Մարաշի կառավարիչ Հայդար փաշան: Զեյթունցիները, հաշվի առնելով խիստ աննպաստ իրադրությունը, որոշում են շրջահարվել փաշայի հետ և նրան հանձնել լեռ բարձրացած էջերյաներին: Բայց փաշայի նպատակը դա չէր: Շուտով սկսվում են բռնություններն ու ծեծք ձեռքարկված երիտասարդների ընտանիքների նկատմամբ: Քիչ անց ձեռքարկվածներին ու գրավված զենքերը իր հետ վերցնելով, փաշան հաղթական մուտք է գործում Մարաշ: Շուրջ մեկ ամիս զեյթունցիները պահվում են բանտում: Այստեղ տանջամահ է լինում նազարեթ Չավուշը, իսկ մնացած զեյթունցիները ազատ են արձակվում:

Բայց այս փաստը, ըստ երևույթին, կառավարությանը բավարար հիմքեր չէր տալիս Զեյթունը տարագրելու համար: Անհրաժեշտ էր Զեյթունի համար ստեղծել այնպիսի վիճակ, որը հարկադրեր նրան զենքի դիմելու, ապստամբելու: Այդ նպատակով էլ ահա կայմակամ Հուսեյն Հյուսնիի և ժանդարմական հրամանատար Սուլեյմանի գլխավորությամբ սկսվում է պրովոկացիաների մի ամբողջ շարան: Աննկարագրելի բռնությունների ու հալածանքների են ենթարկվում դասալիքների ընտանիքները: Զեյթունցիներին՝ բռնություններին վերջ տալու բոլոր փորձերն ապարդյուն են անցնում: Այս ամենի հետևանքով «Զեյթունցիին խրոխտ հոգիին մեջ կուտակվող պատվո ու վրեժխնդրության

զգացումները օր մը պիտի պայթեին հանկարծ», — գրում է դեպքերի ականատես Տ. Անդրեասյանը¹²⁹: Դա էլ հենց թուրքական իշխանությունների ցանկությունն էր: Բայց զենքի դիմելու ոչ մի փորձ չի կատարվում: Զեյթունցիների ճնշող մեծամասնությունը խոհեմություն է համարում խուսափել իշխանությունների հետ բոլոր կարգի ընդհարումներից: Այդ բանին մեծապես նպաստում են նաև Սահակ կաթողիկոսի հորդորները և Մարաշից Զեյթուն ժամանած պատվիրակության խորհուրդները:

Այս միջոցին օրեցօր ստվարանում է կառավարական զորքը, որն էլ 1915 թ. մարտի 12 (25)-ին հարձակվում է ձերբակալությունից խուսափած և լեռ բարձրացած երկու տասնյակ զեյթունցիների վրա: Մեկ օր տևած կռիվներից հետո էջերյանները թողնում են վանքը և հեռանում: Շուրջ երկու շաբաթ տեղ համեմատական խաղաղությունից հետո, մարտի 25 (ապրիլի 7)-ին զորանոց են կանչվում մի խումբ զեյթունցիներ և անմիջապես ուղարկվում անհայտ ուղղությամբ: Սկզբում ոչ ոք չի ըմբռնում կատարվածի իմաստը: Սակայն շուտով տարագրվող քարավանները հաջորդում են իրար և Զեյթունն ամբողջությամբ դատարկվում է: Այսպես է սկսվում արևմտահայության տարագրությունը:

1915 թ. փետրվարի 25-ին Դյուտ եպիսկոպոսին գրած նամակում Սահակ կաթողիկոսը խոսում է Զեյթունում կատարվող դեպքերի մասին և ավելացնում, որ «...ըստ իս ամենքն ալ պատճառանքներ են, իրականությունն է, որ կառավարությունը խիստ միջոցներու պիտի դիմե, որոնց հետևանքը իր բովանդակ արհավիրքներով կրնանք ըմբռնել»¹³⁰:

Ուշադրության արժանի է մարտի 25-ի Զեյթունի տարագրության թվականը: Հետագայում թուրքական իշխանությունները փորձեցին արևմտահայության տարագրությունը արդարացնել այսպես կոչված Վանի ապստամբությամբ, մի իրադարձություն, որ կատարվեց Զեյթունի տարագրությունից 13 օր հետո միայն: Հետևաբար Զեյթունը ոչ մի առնչություն չի կարող ունենալ Վանի իրադարձությունների հետ: Ինչ վերաբերում է դասալիքների հարցին, ապա դա աննշան և նույնիսկ հիշատակության անարժան փաստ է հարյուր հազարավոր թուրք դասալիքների կողքին: Բայց ոչ հիշարժան այս դեպքը երիտթուրքական կառա-

¹²⁹ Տ. Անդրեասյան, Զեյթունի տարագրությունը և Սուեիո ապստամբությունը, Հալեպ, 1935, էջ 18:

¹³⁰ Կիլիկյան կսկիծներ, էջ 130:

վարութեան կողմից բարդացվեց, գունադարձվեց և քաղաքական սուր հարցի կերպարանք ստացավ՝ դառնալով Զեյթունի տարագրութեան պատրվակը:

Զեյթունի բախտին են արժանանում նաև Կիլիկիայի հայաբնակ մյուս քաղաքները: Հաջորդաբար տարագրվում են Հաճընը, Դյորթ-Յուրը, Հասան-Բեյլին, Սիսը, Մարաշը, Այնթապը, Ադանան և այլն: Այսպիսով, իրականանում է Կիլիկիան հայազուրկ դարձնելու երիտասարդ թուրքերի դիվային երազանքը:

Անկասկած է, որ Զեյթունի և կիլիկյան հայաշատ մյուս կենտրոնների հայերը պիտի գերադասեին զենքը ձեռքին, պատենշի վրա մինչև վերջին շունչը մարտնչել և անհամեմատ թանկ ծախել իրենց արյունը, եթե միայն կարողանային ըմբռնել արևմրտահայություն գլխին կախված բնաջնջման վտանգն իր ամբողջ ահավորությամբ: Այս հարցում իրենց բացասական դերը խաղացին նաև Սահակ կաթողիկոսի, որն ինչպես արդեն նկատեցինք, որոշ չափով տեղեկացված էր այդ մասին, անհարկի հորդորները, որոնք փաստորեն ապակողմնորոշեցին կիլիկահայությունը և ամլության մատնեցին նրա դիմադրական շարժումները: Եթե, գրում է Տ. Անդրեասյանը, զեյթունցիները «...երբեք գիտնային թուրք կենտրոնական կառավարության սույն դժոխային որոշումը՝ պիտի նախընտրեին անշուշտ՝ տեղվույն վրա դիմադրել մինչև վերջ, և մեռնիլ հերոսաբար»¹³¹: Այդ առավել պերճախոս երևում է Ֆրնտրեճագ հայաբնակ գյուղի օրինակով:

Երբ Զեյթունն արդեն տարագրված էր, զեյթունցիների մի փոքրիկ խումբ ապաստան է գտնում հարևան Ֆրնտրեճագում, որն ուներ շուրջ 300 տնտեսություն և 2200 բնակիչ¹³²: Գյուղ մտած զեյթունցիներից էլ Ֆրնտրեճագցիները տեղեկանում են Զեյթունի ճակատագրի մասին: Այս նույն օրերին հրաման էր եկել նաև Ֆրնտրեճագի տարագրության վերաբերյալ: Շրջակա թուրք գյուղացիների ցինիկ հայտարարությունները, որ հայերն, ինչ գնով էլ իրենց ունեցվածքը վաճառեն, շահելու են, քանի որ ճանապարհին այն թուրքերի կողմից հափշտակվելու է, մի կողմից, և իրողություն դարձած արևմտահայության զանգվածային տեղահանումն ու ոչնչացումը, մյուս կողմից, փոխում են Ֆրնտրեճագցու հոգեբանությունը: Որոշվում է դիմել ինքնապաշտպա-

նություն: Ֆրնտրեճագում են ապաստան գտնում նաև Դերեքյոյի և Քեշիֆլիի հայ գյուղացիները: Ստեղծվում է ինքնապաշտպանության խորհուրդ (Ս. Գալայճյան, Ն. Տեր-Վարդանյան, Ե. Քեհայան, Հովսեփ աղա և Խ. Գալայճյան), որի կարգադրությամբ ձերբակալվում են գյուղում գտնվող թուրքերը և ամբացվում դիրքերը: Ոչ թուրքական իշխանությունների հանձնվելու առաջարկները և ոչ էլ Սահակ կաթողիկոսի խորհուրդները չեն խախտում Ֆրնտրեճագցիների դիտավորությունները:

Օգոստոսի 1-ին թուրքական մի զորաբանակ, շուրջ 8000 զինվորով, Ղալիբ բեյի հրամանատարությամբ շարժվում է Ֆրնտրեճագի վրա: Կողմերի ուժերն ու միջոցները, սակայն, խիստ անհավասար էին: Ամբողջ մեկ օր արյունալի մարտեր մղելուց և հերոսաբար դիմադրելուց հետո սպառվում է Ֆրնտրեճագցիների ռազմամթերքը: Թշնամուն հաջողվում է պայթեցնել պատնեշները և ընդհուպ մոտենալ հայկական դիրքերին: Վերջին պահին հայ կտրիճները, դատարկ հրացանները դեն շարտելով, թշնամու կըրակին պատասխանում են քարերով: Բայց այսպես շարունակվել չէր կարող: Ի վերջո թուրքական զորքին հաջողվում է ներխուժել գյուղ և հաշվահարողաբար տեսնել ինքնապաշտպանների հետ: Անխնասրի են քաշվում բոլորը, առանց սեռի ու տարիքի խտրության: Սպանված հայերի թիվը գերազանցում էր 2000-ից¹³³:

Հիշարժան են նաև այն քաջորդիները, որոնք խույս տալով տարագրությունից ու թուրքական իշխանությունների հալածանքներից, կարողացել էին Ամանոսի լեռներում ստեղծել շուրջ հիսուն հոգուց բաղկացած թուրքիկ մի խումբ Ակո (Հակոբ) և Ավետիս Չավուշների գլխավորությամբ: Փոքրիկ այս խումբը, որը հիմնականում հսկողության տակ էր վերցրել Բաղչե, Իսլահիե, Խառնը գավառները, ահ ու սարսափ էր դարձել այստեղով երթևեկող թուրքական զորամասերի համար: Բազմիցս խումբը ընդհարվել էր թուրքական մեծաքանակ կանոնավոր զորքերի հետ և պատվով դուրս եկել անհավասար մարտերից: Պատերազմի երեք տարիների ընթացքում խումբը գործել է Ամանոսի լեռներում և զինադադարից հետո միայն Հալեպում հանձնվել անգլիական հրամանատարությանը: Նրա մարտիկները ակտիվ մասնակցու-

¹³¹ Տ. Անդրեասյան, նշվ. աշխ., էջ 21:

¹³² Տե՛ս Գ. Աղամյան, Կիլիկյան դրվագներ, Ֆրնտրեճագի հերոսամարտը, Փարիզ, 1921, էջ 25:

¹³³ Տե՛ս Գ. Աղամյան, նշվ. աշխ., էջ 29:

թյուն են ունենում Կիլիկիայի ինքնապաշտպանական կոմիտե-
րին¹³⁴։

Տարագրության տարիներին, հակառակ թուրքական իշխա-
նությունների գործադրած ջանքերին, տարբեր միջոցներով փոք-
րաթիվ հայերի հաջողվել էր խուսափել տարագրությունից, հետե-
վաբար և ստույգ մահից։ Նրանց ճնշող մեծամասնությունը «սա-
նայիններում» և «իմալեթիաններում» (արհեստանոց-գործարան)
աշխատող բարձրորակ հայ արհեստավորների ընտանիքների ան-
դամներն էին։ Այս հայերի թիվը ամբողջ Կիլիկիայում, հավա-
նաբար, մի քանի հազարից չի գերազանցել։ Գ. Պալաբյանը հի-
շատակում է, որ միայն Ադանայում մնացած հայերի թիվը շուրջ
7—8000-ի է հասել¹³⁵։ Մեր կարծիքով, հիշյալ թիվը շափազանց-
ված է և կամ էլ վերաբերում է 1915/1916 թթ. ձմռան ամիսներին,
այսինքն մինչև Պալաբյանի Ադանա ժամանումն ու փախուստը։
Որովհետև, ինչպես պիտի տեսնենք ստորև, իթթիհատականները
շափազանց անհանգստացած էին Կիլիկիայի տարբեր շրջաններում
անգամ փոքրաթիվ հայերի մնալով։

Բավականին մեծ էր այն հայերի թիվը, որոնք տարբեր ճա-
նապարհներով խուսափելով տարագրվող քարավաններից, աշ-
խատանքի էին ընդունվել Ինթիլիի և Այրանի շրջանում արագ
թափով կառուցվող երկաթուղու և Տավրոսյան փապուղու շինա-
րարություններում։ Նրանց թիվը սկզբում անցնում էր 50 հա-
զարից¹³⁶։ Երիտասարդ թուրքերը, մտահոգված մեծաթիվ հայե-
րի կենտրոնացումից այս շրջանում, 1915 թ. դեկտեմբերի 26-ի
և 1916 թ. հունիսի 16-ի Թալեաթի ստորագրած հրամաններով
սպառնում էին խիստ պատասխանատվության ենթարկել թուրք
այն պաշտոնյաներին, ովքեր իրենց անհեռատես քաղաքականու-
թյամբ թույլ էին տվել 40—50 հազար հայերի կուտակմանը։ Հը-
րամանով միաժամանակ պահանջվում էր մեկ շաբաթվա ըն-
թացքում նրանց տարագրել դեպի անապատները և արդյունքի
մասին հայտնել մայրաքաղաք¹³⁷։

1916 թ. սկզբներին ձեռնարկվում է վերոհիշյալ խլյակների
վտարումն ու Բաղչե—Մարաշ ճանապարհահատվածում նրանց

գաղանաբար ջարդի կազմակերպումը։ Ականատես Գ. Պալաբ-
յանը ցավով է խոսում գերմանացի զինվորականների դեպի հա-
յերն ունեցած մարդատյաց վերաբերմունքի մասին, որոնք թուր-
քական յաթաղանից մազապուրծ հայերին երիտթուրքական իշ-
խանություններին հանձնելով, պարծենկոտ հայտարարում էին,
որ «...թուրքերը միայն գիտեն հայերու հետ խոսելու եղանակը»¹³⁸։

1916 թ. հուլիսի 28-ին երիտթուրքական կառավարությունը
հատուկ հրամանով վերացնում է Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատ-
րիարքությունները և Կիլիկիայի ու Ադիթամարի կաթողիկոսու-
թյունները։ Այս բոլորի փոխարեն ստեղծվում է «Կաթողիկոս ա-
մենայն հայոց Թուրքիո և պատրիարք Երուսաղեմի ու Կ. Պոլսո»
ընդհանրական հոգևոր պաշտոնը։ Կիլիկիայի կաթողիկոս Սահակ
Խապայանը Սսից տարագրվում է Երուսաղեմ և ստանձնում
այն¹³⁹։

Երիտթուրքական կառավարությունը միաժամանակ մտա-
հոգվում է Կիլիկիայի հայազուրկ քաղաքները թուրքերով վերա-
բնակեցնելու հարցով։ Այդ նպատակով էլ կազմակերպվում է
տասնյակ հազարավոր թուրք մուհաճիրների (գաղթականների)
վերաբնակեցումը Այնթապում, Ջեյթունում, Հաճընում, Մարաշում
և այլուր։ Սրանք, նշում է ականատեսը, որոշ ժամանակ մնալով
մի բնակարանում, որպես վառելանյութ օգտագործում էին տան
փայտյա մասերն ու այն սպառելուց հետո փոխադրվում հարևան
բնակարանը և այսպես շարունակ։ Այս եղանակով հիշյալ քա-
ղաքների տների մեծագույն մասը պատերազմի տարիներին փաս-
տորեն վերածվում են ավերակների¹⁴⁰։

Փաստ է, որ տարագրության տարիներին կիլիկահայությունը
համեմատաբար փոքրաթիվ զոհեր տվեց, քան արևմտահայության
մյուս հատվածները։ Հաճախ այս հարցը սխալ կերպով է մեկ-
նաբանվում մեր պատմագրության մեջ և այն կապվում է հայե-
րի հանդեպ Ջեմալ փաշայի ունեցած իրր թի «խղճահարության
ու բարեգործության» հետ¹⁴¹։ Իրականում դրա պատճառը պիտի
փնտրել Սիրիայի ու Միջագետքի անապատներին Կիլիկիայի մոտ

138 Գ. Պալաբյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 38։

139 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2021, թ. 1։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ,
ֆ. 57, ց. 2, գ. 2033, թ. 16 (Օսմանյան կառավարության կրոնական նախարա-
րության հրամանի պատճենը)։

140 Տե՛ս Գ. Սարաֆյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 1043։

141 Տե՛ս նույն տեղում, էջ 1052։

134 Տե՛ս Զարթոնք-բացառիկ, Բելրութ, 1962, էջ 70—73, Ա. Քեչյան, Կարմիր
զրվագներ հերոսներու կյանքեն, Պուքրեշ, հ. Բ, 1939, էջ 46—70։

135 Տե՛ս Գ. Պալաբյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 137։

136 Տե՛ս Ա. Անտոնյան, նշվ. աշխ., էջ 57։

137 Տե՛ս նույն տեղում, էջ 58—59։

գտնվելու և տարագրութեան ճանապարհին քրդական ու այլ ցեղերի հարձակումներից կիլիկեհայերի դերժ մնալու մեջ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ կիլիկեհայերի մի սովոր մասը, հիմնականում կաշառքի միջոցով, կարողացավ խուսափել անպատ տարագրվելուց և ժամանակավոր բնակություն հաստատել Սիրիայի, Լիբանանի, Անդրհորդանանի ու Պաղեստինի տարբեր շրջաններում, որտեղ ֆիզիկական գոյութեան պայմանները անհամեմատ տանելի էին: Իրողություն է, որ Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայի հեռավոր շրջաններից տարագրված մի քանի հազարանոց քարավաններից միայն շատ փոքրաթիվ, հաճախ մեկ տասնյակից էլ պակաս մարդկանց էր հաջողվում կենդանի հասնել Հալեպ:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմրտահայերի մղած գոյապայքարի պատմության անբաժանելի մասն է կազմում Հայկական (Արևելյան) լեզեռնի պատմությունը, զորամաս, որին պատերազմից հետո մասնավորապես, բախտ էր վիճակվել նշանակալից ու կարևոր դեր խաղալու կիլիկեհայության պատմության մեջ:

Հայ ազգային պատվիրակության կողմ լեզեռնի դրոշի տակ էին համախմբվել հասարակական-քաղաքական տարբեր ուղղությունների և սոցիալական տարբեր խավերի պատկանող, բայց միևնույն ցանկություններ ու նպատակով համակված հազարավոր երիտասարդներ: Աշխարհի զանազան կողմերից եկած ու հազարավոր կիլիմետրեր ճամփա կտրած հայ երիտասարդությանը միավորել էր Թուրքական բռնակալության տակ հեծող հայրենիքի ու բազմատանջ ժողովրդի ազատագրության նվիրական նըպատակը:

Հայկական լեզեռնի ստեղծմամբ որոշակի նպատակ էր հետապնդում նաև ֆրանսիական կառավարությունը: Ֆրանսիական բանակը, որի ուժերը հիմնականում տեղաբաշխված էին ֆրանսագերմանական ռազմաճակատում, արևելքում ներկայացված էր փոքրաթիվ զորքով, որը, բնականաբար, որոշակի դեր խաղալ այստեղ մղվող մարտերում չէր կարող: Այդ բացը լրացնելու միտումով էլ ֆրանսիական կառավարությունը որոշում էր ստեղծել հայերից ու արաբներից բաղկացած զորախմբեր՝ լեզեռններ և

նրանց մասնակից դարձնել Թուրքիայի դեմ մղվող պատերազմին: Նման քայլի համար հիմք էին ծառայել մուսալեոցիները, որոնք 1915 թ. ամռան ամիսներին ամբողջ քառասունչորս օր Թուրքական կանոնավոր զորքերի ու խուժանի դեմ քաջաբար կռվելուց հետո ֆրանսիական նավերով փոխադրվել էին Եգիպտոս և ապաստանել Պորտ-Սայդում: Հայտնի է, որ Պորտ-Սայդում գտնվելու առաջին օրերից մեծ թվով մուսալեոցիներ ցանկություն էին հայտնել զինվորագրվելու դաշնակից բանակներին:

Արևելյան լեզեռնի ստեղծման գաղափարը հղացվել է 1916 թ. հուլիսին, երբ Կահիրեի «Ինթելիջենս սերվիս»-ի պետ գեներալ Կլեյտոնը այդ մասին հայտնել էր Լոնդոնում ֆրանսիական դեսպան Կամբոնին: Հետագա մեկ-երկու ամիսների ընթացքում լեզեռնի կազմակերպման հարցը մանրազնին քննարկման է ենթարկվել ֆրանսիական կառավարության կողմից և հավանություն գտել¹⁴²:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպանը մի խորհրդակցություն է գումարում, որին մասնակցելու համար հրավիրվել էին անգլիական կառավարության ներկայացուցիչ Մարկ Սայքսը, ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոն և հայ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը: Խորհրդակցությունում քննարկվում է լեզեռնի ըստ ստեղծման և նրանում հայերի մասնակցության հարցը: Ժորժ Պիկոյի այն հարցին, թե արդյոք հայերը կուզենային կամավորագրվել լեզեռնին, Պողոս Նուբարը պատասխանում է. եթե կայուն երաշխիքներ տրվեն, որ դաշնակից պետությունների հաղթանակից հետո պիտի փոխհատուցվեն հայերի զոհողությունները և բավարարվեն նրանց ազգային ձգտումները, ապա նրանք պատրաստ են կռվելու իրենց թշնամու՝ Թուրքիայի դեմ հանուն իրենց հայրենիքի ազատագրության: Այդ նպատակով հայերը պիտի մասնակցեն միմիայն Թուրքիայի դեմ մղվող պատերազմին: Հետևաբար նրանք ափ էին հանվելու Սիրիայում կամ Փոքր Ասիայում: Այստեղ էլ կողմերի միջև կնքվում է հետևյալ բանավոր համաձայնագիրը.

1. Հայ կամավորները պիտի կռվեն ոչ թե Եվրոպայում, այլ Փոքր Ասիայում, Պաղեստինում և Սիրիայում՝ Թուրքիայի դեմ:
2. Ֆրանսիան խոստանում է դաշնակիցների հաղթանակից

¹⁴² Տե՛ս Տ. Պոլսեյան, նշվ. աշխ., էջ 24:

հետո Կիլիկիայում հայերին տալ ինքնավարութիւն իր հովանաւորութեամբ:

3. Պողոս Նուբարի հեռագիրը Կահիրեում գտնվող իր որդուն ծածկագրված պիտի ուղարկվի ֆրանսիական արտաքին գործերի մինիստրի միջոցով¹⁴³:

Սակայն մի շարք փաստերից որոշակի երևում է, որ լեզեոնի ստեղծման և նրանում հայերի մասնակցութեան հարցը քննութեան առարկա էր դարձել ավելի վաղ, քան Լոնդոնի խորհրդակցութիւնը: Ֆրանսիական «Matin» լրագիրը 1920 թ. դեկտեմբերի 20-ի համարում գրել էր, որ այդ «համաձայնութիւնը կնքվեցավ Փարիզի մեջ 1916 հոկտեմբեր 8-ին և վավերացվեցավ Լոնդոնի մեջ 1916 հոկտեմբերի 27-ին»¹⁴⁴: Բայց, միաժամանակ, Պողոս Նուբարի իր որդուն՝ Առաքել Նուբարին գրած 1916 թ. հոկտեմբերի 27-ի նամակից հայտնի է դառնում, որ հայերի կամավորագրութեան խնդիրը ֆրանսիական կառավարութեան և Ազգային պատվիրակութեան միջև քննարկվել է հոկտեմբերի 8-ից էլ առաջ: «Հաստատում եմ,— գրում է Պողոս Նուբարը,— կամավորների հարցի կապակցութեամբ հոկտեմբերի 6-ի նամակս, որից հետո պաշտոնական հավաստիացում եմ ստացել, որ դաշնակիցների հաղթանակից հետո մեր ազգային բաղձանքները պիտի գոհացվեն»¹⁴⁵: Հետևաբար, համարձակորեն կարելի է պնդել, որ մինչև հոկտեմբերի 6-ը, այսինքն մինչև Պողոս Նուբարի առաջին նամակի գրվելը, ֆրանսիական կառավարութեան և Ազգային պատվիրակութեան միջև արդեն քննարկվել էր հայերի լեզեոնին մասնակցութեան հարցը և այդ կապակցութեամբ նախնական համաձայնութիւն կայացվել:

Խորեն քհն. Աճեմյանը ևս, խոսելով լեզեոնի ստեղծման մասին գրում է, որ համաձայնութիւնը կայացել էր Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ա. Բրիանի և Ազգային պատվիրակութեան նախագահ Պողոս Նուբարի միջև¹⁴⁶: Աճեմյանի այս վկայութիւնը և «Matin»-ի այն հաղորդագրութիւնը, որ համաձայնութիւնը կնքվել է Փարիզում 1916 թ. հոկտեմբերի 8-ին, փաս-

տորեն լրացնում են միմյանց և կարծել տալիս, որ բանակցութիւնները ֆրանսիական կառավարութեան և Ազգային պատվիրակութեան միջև տեւել են մի քանի օր (բոլոր դեպքերում այն պետք է սկսված լիներ հոկտեմբերի 6-ից շուտ) և ավարտվել հոկտեմբերի 8-ին: Այս բոլորից հետո մեզ թվում է, որ 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը գումարված խորհրդակցութիւնը Արևելյան լեզեոնի ստեղծմանը տվել է սոսկ օրինական տեսք:

Մեր կարծիքով սխալվում է Ա. Աթանասյանը, երբ Լոնդոնի խորհրդակցութեան մասին խոսելիս գրում է, որ «1916-ի գարնանը, Լոնդոնի ֆրանսիական դեսպանատան մեջ ժողով մը կը գումարվի Սըր Մարկ Սայքսի ներկայութեանը, օրակարգ ունենալով հայ կամավորներու լեզեոն մը կազմելու խնդիրը»¹⁴⁷:

1916 թ. նոյեմբերի 15-ին ֆրանսիական կառավարութիւնը հատուկ որոշում է ընդունում և սահմանում կամավորագրութեան սկզբունքները: Ըստ որոշման կամավորներ կարող էին արձանագրվել միայն հայերն ու արաբները, որոնք պիտի մասնակցեին Թուրքիայի դեմ մղվող պատերազմական գործողութիւններին: Լեզեոնը պիտի ղեկավարվեր ֆրանսիական բանակի սպաներով, բայց նրա մասը չպիտի կազմեր: Զինավարժութիւններ անցկացնելու համար լեզեոնը պիտի հաստատվեր Կիպրոս կղզում և ծախսերը պիտի հոգար ֆրանսիական կառավարութիւնը:

1916 թ. նոյեմբերի կեսերին Կահիրե է ժամանում ֆրանսիական ղինվորական մը պատվիրակութիւն զնդապետ Ռոմիեոյի գլխավորութեամբ: Պատվիրակութիւնը անմիջապես կապվում է եգիպտահայ Ազգային միութեան հետ և ձեռնարկում լեզեոնի ըստեղծմանը: Այս բոլորից հետո է, որ ֆրանսիական կառավարութեան և Ազգային պատվիրակութեան միջև կայանում է վերջնական համաձայնութիւնը 1916 թ. նոյեմբերի 26-ին, որը և հաստատվում է ֆրանսիական կառավարութեան 7 (966—9) 11 հատուկ օրինագծով¹⁴⁸:

Թուրք շարդարարներին չգրգռելու և նրանց վրեժխնդրութիւնից խուսափելու նպատակով որոշվում է լեզեոնն անվանել «Արևելյան» և ոչ թե «Հայկական»: Այդ մասին են վկայում Փա-

¹⁴³ Տե՛ս Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 8:

¹⁴⁴ Մ. Նարեկյան, Նյութեր ժամանակակից պատմութեան համար, «Պայքար» տարեգիրք, 1950, էջ 80:

¹⁴⁵ Du Vèou Paul, նշվ. աշխ., էջ 59—60:

¹⁴⁶ Տե՛ս Խ. Աճեմյան, Հայկական լեզեոնը, «Համազգային»-ի տարեգիրք, 1953, էջ 71:

¹⁴⁷ Ա. Աթանասյան, նշվ. աշխ., էջ 8:

¹⁴⁸ Տե՛ս Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 16: Տե՛ս նաև Գ. Լազյան, Հայաստան և հայ դատը, Կահիրե, 1946, էջ 191:

քիզում հրատարակվող «Այսօր» լրագրի 1951 թ. դեկտեմբերի 17-ի համարում տպագրված Պոլ Դյու Վեուի «Հայկական լեզեոնի առիթով» հոդվածը և Պողոս Նուբարի Մ. Պապաջանյանին գրած 1916 թ. դեկտեմբերի 14-ին նամակը: Դյու Վեուն գրում է. «Լեզեոնը կազմված էր. բայց հայ Ազգ. միությունը ինքն իսկ էր որ, հասկանալի կանխազուշտությամբ մը, և ոչ թե Ֆրանսիան, ուզեց որ «Հայկական» որակումը շարվի անոր՝ Թրքահայաստան մնացած հայերուն դեմ թրքական նոր վրեժխնդրություններ չգրգռելու մտքը»¹⁴⁹: Նույն կապակցությամբ Պողոս Նուբարը գրում է. «...առանց մոռացություն տալու զգուշությունից բխող բոլոր միջոցները և բոլոր նախազգուշությունները, որ գոյություն ունեցող պայմանները թելադրում են մեզ: Հիրավի, մենք չպետք է մոռանանք, որ Թուրքիայի ամբողջ հայ ազգաբնակչությունը, իբրև իսկական պատանդ, դեռևս գտնվում է թուրքերի ձեռքին և որ նա միշտ ենթակա է ամենակատաղի վրեժխնդրության նրանց կողմից»¹⁵⁰: Եվ այսքանից հետո զուր ու ավելորդ է Ա. Թյուրապյանի Ազգային պատվիրակության հասցեին արած քննադատությունը՝ կամավորական խմբերը «Հայկական լեզեոն» չկոչելու համար¹⁵¹:

Նախատեսված է եղել, ինչպես այդ երևում է Պողոս Նուբարի վերոհիշյալ նամակից, լեզեոնին մասնակից դարձնել նաև այն արևմտահայ կամավորներին, որոնք ծառայել էին կովկասյան ռազմաճակատում գործող կամավորական խմբերում և որոնք էլ ցարական իշխանությունների կողմից լուծարվել էին ենթարկվել 1915 թ. վերջերին¹⁵²: Պողոս Նուբարի նամակը, ինչպես կեսն է վկայում, 1917 թ. սկզբներին քննության է դրվել Թիֆլիսում կայացած մի բազմամարդ ժողովում ու մերժվել, իհարկե, նկատի ունենալով կովկասյան կամավորական ջոկատների ճակատագիրը¹⁵³:

Կահիրեում առաջին օրերը լեզեոնին անդամագրվում են շուրջ 600 մուսալիեցիներ, 300 եգիպտահայեր և 236 թուրքական բանակի հայ գերիներ ու դասալիքներ: 1916 թ. վերջերին նրանցից

էլ կազմվում է առաջին գումարտակը և ուղարկվում Կիպրոս: Զինավարժությունների համար ընտրված էր Ֆամակուստայից շուրջ 30 կմ հեռավորության վրա գտնվող Մոնարկա բնակավայրը:

Կամավորագրությանը նոր թափ հաղորդելու և ամերիկահայերի մասնակցությունը ևս ապահովելու նպատակով եգիպտահայ Ազգային միության անդամներ Մ. Տամատյանը, Ս. Սապահ-Գյուլյանը և Ա. Հանրմյանը 1917 թ. սկզբներին մեկնում են ԱՄՆ: Այստեղ ևս 1917 թ. մարտի 16-ին ստեղծվում է Ազգային միություն, որը և հատուկ կոչով դիմում է ամերիկահայությանը: Կամավորագրությունը անսպասելի արդյունքներ է տալիս: Մի քանի օրվա ընթացքում ցուցակագրվում են ավելի քան 5000 երիտասարդներ: Հետագա ամիսներում լեզեոնում ծառայել ցանկացողների թիվը հասնում է 10 հազարի: Սակայն փոխադրամիջոցների պակասի պատճառով նրանցից միայն 1200-ին է հաջողվում անցնել Ատլանտյան օվկիանոսը:

Կամավորների փոխադրումը, որն սկսվում է 1917 թ. հունիսին և ավարտվում նույն տարվա նոյեմբերին, հիմնականում կատարվում էր ապրանքատար նավերով, յուրաքանչյուրում շուրջ 70 մարդ: Հասնելով Ֆրանսիայի Բորդո նավահանգիստը, կամավորները գնացքով գալիս են Մարսել և նորից ծովով շարունակում ճանապարհը մինչև Պորտ-Սալիդ, որտեղից էլ՝ Կիպրոս:

Հետաքրքիր է նշել, որ ֆրանսիական «Ամիրալ Օրլի» փոխադրանավը Միջերկրական ծովում ենթարկվում է գերմանական սուզանավի հարձակմանը և խորասուզվում: Բարեբախտաբար կամավորներին հաջողվում է փոխադրվել մի այլ նավ և անկորուստ հասնել Պորտ-Սալիդ:

Կիպրոս կղզում այնուհետև ստեղծվում են լեզեոնի երկրորդ և երրորդ գումարտակները¹⁵⁴: Զինավարժություններին ղուգահեռ, հայ լեզեոնականներից կազմված մի ջոկատ պարեկում է Թուրքիայի հարավային ափերին գտնվող Քասթելորիզո կղզում: Այս

¹⁴⁹ «Զարթոնք» լրագիր, 13-ը փետրվարի 1952, № 97 (4252):
¹⁵⁰ Ան, Անցյալից, էջ 348:
¹⁵¹ Տե՛ս Ա. Թյուրապյան, Հայ ժողովուրդի դատաստանին առջև (1914—1924), Մարսել, 1925, էջ 11:
¹⁵² Տե՛ս Ան, Անցյալից, էջ 348:
¹⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 350:

շրջանում է, որ լեզեոնի մարտունակութունն ստուգելու նպատակով Կիպրոս է այցելում ֆրանսիական զեներալ Բայուն: Կազմակերպված զորավարություններից հետո զեներալը հայտնում է իր բացարձակ գոհունակությունը¹⁵⁵:

Մինչև ռազմաճակատ մեկնելը Արևելյան լեզեոնն իր շարքերում ունեցել է մոտ 5000 մարտիկ: Նրա մեկ գումարտակը, թվով շուրջ 1000 մարդ, բաղկացած էր արաբներից, իսկ մնացած երկու գումարտակները, ավելի քան 4000 մարդ՝ հայերից¹⁵⁶:

Շուրջ երկու տարի Կիպրոսում մարզվելուց հետո 1918 թ. մայիսին Արևելյան լեզեոնը փոխադրվում է Պորտ-Սալիզ ու մի քանի օր այստեղ մնալուց հետո Քանթարա-Ռամլե-Լյուդ ուղիով մոտենում է ռազմաճակատին, իսկ 1918 թ. օգոստոսի վերջին դիրքեր գրավում Ռաֆաթ-Արարա (Հաուարա) բարձունքի դիմաց գտնվող խրամատներում:

1918 թ. սեպտեմբերի կեսերին դաշնակիցների և թուրք-գերմանական բանակների շփման գիծն անցնում էր Երուսաղեմ ու Նաբլուս քաղաքների միջև ընկած շրճանով և ձգվում Հորդանան գետից մինչև Միջերկրական ծով: 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին անգլիական զորքերը փորձել էին ճեղքել գերմանա-թուրքական պաշտպանական գիծը և շարժվել դեպի հյուսիս: Բայց ձեռնարկված երկու հարձակումներն էլ որևէ արդյունք չէին տվել և թշնամուն հաջողվել էր կասեցնել անգլիական զորքերի առաջխաղացումը:

1918 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին սիրիա-պաղեստինյան ռազմաճակատում հիշատակության արժանի ընդհարումներ տեղի չեն ունենում: Պարզորոշ երևում էր, որ երկու կողմերն էլ այս ժամանակահատվածում զբաղված էին ուժերի վերազասակումով:

Դաշնակից զորքերի հրամանատարությունը ձգտում էր մեծաքանակ ուժերի հաշվին կոտրել գերմանա-թուրքական զորքերի դիմադրությունը և ուղի հարթել դեպի հյուսիս առաջխաղացման համար: Այդ նպատակով 1918 թ. կեսերից անգլո-ֆրանսիական հրամանատարությունը ստանում է նոր համալրումներ, որով զորքերի ընդհանուր թիվը հասնում է 70 հազարի: Միաժամանակ հարկ է շեշտել, որ դաշնակից զորքերն անհամեմատ լավ էին

զինված ու հանդերձված, ունեին բավարար քանակությամբ (մոտ 540) հրետանի և ինքնաթիռներ:

Դրա դիմաց գերմանա-թուրքական հրամանատարությունը աշխատում էր օգտագործել Սամարիայի լեռնային բնական ամրությունները և կառչելով դրանցից, փակել անգլո-ֆրանսիական զորքերի ճանապարհը: Թուրք-գերմանական ուժերը հիմնականում բաղկացած էին թուրքական 7-րդ, 8-րդ բանակներից և 2-րդ բանակի մի մասից, ինչպես նաև գերմանական 7 հազարանոց մի զորամասից, որոնք մտնում էին Լիման ֆոն Սանդերսի հրամանատարությանը ենթակա «Յըլդըրըմ» (կայծակ) զորամիավորման մեջ: Զորքի ընդհանուր քանակը հասնում էր 30 հազարի, որի տրամադրության տակ կար կրկնակի շափով պակաս հրետանի, քան անգլո-ֆրանսիական զորքերի¹⁵⁷:

Չնայած դաշնակից զորքերի թվական բացահայտ գերակշռությանը և տեխնիկական հագեցվածությանը, թուրք-գերմանական ռազմաճակատի ճեղքումը կապված էր մեծ դժվարությունների հետ: Լեռնային ու կտրտված տեղանքը, բնական ու արհեստական ամուր պաշտպանական գծերը որոշակի առավելություն էին տալիս թուրք-գերմանական զորքերին:

Արևելյան լեզեոնը, աչում ունենալով ալժիրական, իսկ ձախում՝ հնդկական զորամասեր, առաջադրանք է ստանում գրոհել ռազմաճակատի ամենադժվարին ու անմատչելի հատվածի վրա: Ինչպես Խորեն քհն. Աճեմյանն է վկայում, մինչև Արևելյան լեզեոնի ռազմաճակատ գալը անգլո-ֆրանսիական զորամասերը երեք անգամ գրոհել էին Ռաֆաթ-Արարա բարձունքի վրա և բոլոր երեք հարձակումներն էլ ետ էին շարժվել թշնամու կողմից¹⁵⁸: Պետք է նշել, որ դաշնակից զորքերի հրամանատարությունը մեծ կարևորություն էր տվել վերոհիշյալ բարձունքի գրավմանը: Դրանով հրամանատարությունը նպատակ է ունեցել գերմանա-թուրքական հրամանատարության ուշադրությունը գամել այս հատվածի վրա, հնարավորություն տալով հեծելազորին սրբնթաց առաջանալու ծովափնյա Սարոնի դաշտավայրով:

1918 թ. սեպտեմբերի 18-ի երեկոյան հայ լեզեոնները հրաման են ստանում հաջորդ օրվա գրոհի նախապատրաստության համար, որն էլ իրականում դառնալու էր նրանց անդրանիկ մարտական մկրտությունը: Լեզեոնի ճամբարում արտակարգ եռու-

¹⁵⁵ Տե՛ս Կամավորը, Կահիրե, 1927, էջ 37:

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

¹⁵⁷ Տե՛ս Лудшвейт Е. Ф., նշվ. աշխ., էջ 282—283:

¹⁵⁸ Տե՛ս Խորեն քհն. Աճեմյան, նշվ. հոդվածը, էջ 73:

զեռ է սկսվում: Վերջին նախապատրաստություններն են տեսնելովում գրոհի համար: Լեգեոնի սպա Ճան Շիշմանյանը հաջ մարտիկներին ոգևորելու և թևավորելու նպատակով դիմում է նրանց, որտեղ ի միջի այլոց ասում է.

«Տղաք, գիտեք վաղը առտու մեր հարսանքի օրն է, այն օրը, որուն բոլորս կը սպասենք: Ամեն զինվոր կազմ ու պատրաստ պետք է ըլլա առավոտյան ժամը 4-ին: Այս ժամը վրեժխնդրության և արդար հատուցման ժամ է. հայրենիքի ազատության համար է, որ պիտի մղենք նվիրական պատերազմը: Ատիկա միակ ծառայությունն է, որ մենք պիտի կատարենք հանդեպ մեր դժբախտ ազգին ու զայն երջանկացնենք մեր արյան գնով: Չեմ գիտեր, թե վաղվան վարագույրը երբ իջնե, մեզմե քանին պիտի իյնան ճակատամարտին մեջ, սակայն վստահ եմ, որ հայուն հրպարտ ճակատը ամոթի մրուրը պիտի շտեմնե, մեր անցյալը մեզի խթան և ապագան թող հավատք ներշնչե բոլորիս»¹⁵⁹:

Սեպտեմբերի 19-ի արշալույսին տրվում է հարձակման հրամանը: Արևելյան լեգեոնը անգլո-ֆրանսիական զորամասերի կազմում գրոհում է թշնամու դիրքերի վրա և շնայած անձրևի պես տեղացող գնդակներին, սլանում է առաջ: Թե՛ մարտերը տևում են մի քանի ժամ: Հայ լեգեոնականների համարձակ ու խիզախ հարձակումներից խուճապի մատնված թշնամին հարկադրված է լինում լքելու պաշտպանական առաջապահ գիծը և նահանջում դեպի երկրորդը: Սակայն այն էլ անառիկ պահել թշնամուն չի հաջողվում: Անկասելի թափով հայ կտրիճները նետվում են խուճապահար թուրքական զորքի վրա և ստիպում փախուստի դիմել: Շուտով գրավվում են նաև երկրորդ ու երրորդ պաշտպանական դիրքերը: Թուրքական զորքերը այնուհետև փորձում են հակադրոհի դիմել և վերագրավել կորցրած դիրքերը, բայց այդ ներանց չի հաջողվում:

Ավելորդ չէ հիշել, որ հարձակման նախօրյակին անգլիական մի ինքնաթիռ անցել էր թշնամու թիկունքը և թռուցիկներ սփռել, որոնցում գրված է եղել, որ իրենց դիմաց կանգնած է 60 հազարանոց հայկական մի զորաբանակ¹⁶⁰:

Ճակատամարտի մասնակից Ս. Զատիկյանը այսպես է նրկարագրում լեգեոնականների հարձակումը. «Լուսաբացին հետ տրված նշանի մը վրա բանակը սկսավ դուրս գալ իր խրամներն

և դանդաղ՝ կշռված քայլերով, ու մեծ զգուշությամբ առաջ շարժիլ դեպի թրքական դիրքերը... Հանկարծ փրթավ փոթորիկը ասոնի թնդանոթաձգությամբ մը. կարծես այդ վայրկյանին երկինքը պատռեցավ և ամպերը վար եկան որոտացող ումբերու ծուխ ու բոցերուն հետ...

Կարճ եղավ մենամարտը ու սաստիկ... Անարի թշնամին իր դեմ ցցված վրիժառու սվիններեն պաշտպանվելու անկարող՝ լքեց իր պաշտպանության բոլոր լավագույն դիրքերն և բռնեց լեղապատառ փախուստի ճամբան»¹⁶¹:

1918 թ. սեպտեմբերի 19-ին Ռաֆայի-Արարա բարձունքի գրավման համար մղված մարտերում հայ լեգեոնականները տալիս են 23 սպանված և 76 վիրավոր: Մարտերից հետո սպանվածների աճյունները փոխադրվում են Ռաֆայ գյուղի հարթավայրը և թաղվում եղբայրական գերեզմանում: Հետագայում լեգեոնականների ոսկորները տեղափոխվում են Երուսաղեմ, որտեղ էլ կանգնեցվում է հուշարձան:

Ռաֆայ-Արարա բարձունքի գրավումը հայ լեգեոնականների կողմից, մեծապես նպաստել է ռազմաճակատի մյուս կարևոր դիրքերի գրավմանը: Լեգեոնի աջ ու ձախ թևերում գործող զորամասերը իրենց հերթին հաղթահարում են թշնամու դիմադրությունը և առաջ շարժվում: Այստեղ է, որ փաստորեն քայքայվում է թուրքական ռազմաճակատը: Դրանով սկսվում է թուրքական զորքերի անկազմակերպ ու խուճապային փախուստը դեպի հյուսիս: Գերմանա-թուրքական հրամանատարության՝ դիմադրություն կազմակերպելու բոլոր փորձերը ոչ մի արդյունք չեն տալիս:

Արևելքում դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար, անգլիական գեներալ Ալեմբին բարձր է գնահատել հայ լեգեոնականների սխրանքը և Աղզային պատվիրակության նախագահ Պողոս Նուրարին հղած հեռագրում շեշտել է. «Հպարտ եմ, որ իմ հրամանատարության տակ ունեմ հայկական գունդ: Հայերը փայլուն կերպով կռվեցին և մեծ մասնակցություն ունեցան իմ հաղթանակում»¹⁶²:

Արարայի ճակատամարտում զոհված հայ լեգեոնականների թաղման արարողության ժամանակ լեգեոնի հրամանատար, զրնդապետ Ռոմիեոն իր դամբանականում ասում է. «Քնացեք ձեր

¹⁵⁹ Մ. Քարաբյան, Կամավորի մը հուշերը, Անթիլիաս, 1960, էջ 12—13:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

¹⁶¹ Կամավորը, էջ 42—43:

¹⁶² ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 845, թ. 14:

փառքին մեջ. դուք ճամբան բացիք արդարության և իրավունքին՝ որոնք դարերի ի վեր այս շրջաններեն վտարված էին. մենք պիտի գիտնանք արժանի ըլլալ ձեզի, որպեսզի այս հատուցումն ըլլա կատարյալ և տևական:

Կուխտեմ ձեր գերեզմանին առջև, այս գերեզմանին՝ զոր փառքի հուշարձանի մը պիտի վերածենք և զայն պիտի կոչենք Արարայի գերեզմանատունը, այս անվան մեջ միացնելու հիշատակը մեր մեռյալներուն, անոնց զոհաբերության, անոնց հաղթանակին և այն հորիզոնին զոր այդ հաղթանակը կը բանար անոնց հայրենակիցներուն ազգային բաղձանքներուն առջև»¹⁶³:

Ըստ մի այլ աղբյուրի, գնդապետ Ռոմիեոն, խոսելով հայ լեզեոնականների ցուցաբերած մարտական բարձր հատկությունների ու քաջության մասին, ասել է. «Հայկական գումարտակը (խոսքը երկրորդ գումարտակի մասին է—Շ. Թ.) ինքնարուխ թափով հասավ այդ դիրքի մոտ և Արարայի ուժեղ կրակի տակ դիմացավ մինչև հաղթանակը: Այդ դիրքը գերեզմանացիները դարձրել էին դիմադրության ամենաուժեղ առանցքը...»

Այս հողում, որտեղ ամեն մի շարժման մաս էր սպանում, մենք հպարտ մխիթարություն ունենք թաղելու հայ հերոսներին, որոնք ընկան առաջին շարքերում, ուղիղ թշնամու դիմացը, օրինակ տալով ամբողջ բանակին: Բոլորը արժանի են պատերազմի խաչին»¹⁶⁴:

Արևելյան լեզեոնը այնուհանդերձ մասնակցում է Սիրիայի և Լիբանանի մի շարք քաղաքների ազատագրմանը թուրքական բազմադարյան լծից: Բեյրութի ազատագրումից հետո Միջագետքի անապատներից վերադարձած տարագիր հայերից ստեղծվում է ևս մեկ գումարտակ և փոխադրվում Ալեքսանդրեստ:

Թուրքիայի պարտությունից և Մուղոսում ստորագրված դինադարից հետո լեզեոնում ծառայող հայ սպանների և առաջին հերթին Վ. Փորթուզալյանի, ինչպես և Ֆրանսիական նավատորմի սպա Տ. Թեքեյանի պահանջով լեզեոնը վերանվանվում է «Հայկական լեզեոն»: 1918 թ. նոյեմբերի 18-ին Վ. Փորթուզալյանը ժորժ Պիկոյին է հանձնում մի զրույթուն, որով խնդրում է վերանայել լեզեոնի կազմավորման պայմանները և այն այսուհետև անվանել «Հայկական լեզեոն», քանի որ «...անոնց (այսինքն հայերի ու արաբների—Շ. Թ.) միացումը մեկ դասավորումի, մեկ

խմբավորումի մեջ եղած է անոր համար, որ երկուքն ալ ուզած են թոթափել նույն լուծը: Այդ պատճառով գոյություն ունենալի դադարած է»: Ապա խոսվում է այն մասին, որ շատ հայ լեզեոնականներից «...քիչեր միայն պիտի վերանորոգեն իրենց զինվորագրությունը բանակի մը մեջ, որ ազգային և ինքնավար պիտի ըլլա»: Միաժամանակ Փորթուզալյանը խնդրում է նոր կանոնադրություն մշակել «Հայկական լեզեոնի» համար և այն հաստատել Ֆրանսիական կառավարության օրինագծով, «...որովհետև զինվորագրությունը «Արևելքի մեջ ծառայելու» բացատրությունը, որ բնականաբար Արևելյան լեզեոնին համար գործածված էր, Հայկական լեզեոնի մը նպատակին չի համապատասխաներ»¹⁶⁵:

Որ իսկապես Վ. Փորթուզալյանի և Տ. Թեքեյանի դիմումներից հետո է Արևելյան լեզեոնը վերակոչվել Հայկական, վկայում է Դյու Վեոն»¹⁶⁶:

Արևելյան լեզեոնի ստեղծման հանգամանքները և ընդհանրապես նրա դերն ու նշանակությունը ճիշտ չեն մեկնաբանվել պատմաբան Ն. Էֆենդիեայի կողմից: Խոսելով թուրքերի 1919—1921 թթ. ազգային-ազատագրական շարժման մասին, նա համառոտակի անդրադարձել է նաև Արևելյան լեզեոնի պատմությանը, որտեղ, մեր կարծիքով, թույլ են տրված մի շարք փաստական անճշտություններ: Իր աշխատության մեջ նա գրում է. «Դաշնակ կուսակցությունը դեռ պատերազմի ընթացքում ստեղծել էր հայկական լեզեոնը, որը սկզբում մաս կազմեց Ֆրանսիացի գնդապետ Ռոմիեոյի կողմից 1916 թ. նոյեմբերին Կիպրոս կղզում կազմակերպված Արևելյան լեզեոնին: Դաշնակիցների Բեյրութ մտնելուց հետո հայերը դուրս եկան Արևելյան լեզեոնից, քանի որ հայկական լեզեոնը նախատեսված էր Թուրքիայի դեմ կռվելու համար: Նրա քանակը, որ պատերազմի սկզբում 800-ից շեր գերազանցում, վերջում հասավ 4000 մարդու: Այս լեզեոնը պատերազմի ընթացքում շեր օգտագործվել և, պահպանվելով ամբողջությամբ, 1919 թ. վերջերին զգալի ուժ էր ներկայացնում: Հայկական լեզեոնի ստեղծման համար մեծ ջանքեր ներդրած հայ հոգևորականությունը անհամբերությամբ էր սպասում անգլիացիներին»¹⁶⁷:

¹⁶⁵ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 175—176:

¹⁶⁶ Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 64: Տե՛ս նաև «Զարթոնք» լրագիր, 13-ը փետրվարի 1952, № 97 (4252):

¹⁶⁷ Эфендиева Н. З., նշվ. աշխ., էջ 79:

¹⁶³ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 129—130:

¹⁶⁴ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 845, թ. 20:

Այնպես է ստացվում, որ մինչև Արևելյան լեգեոնի կազմակերպումը դաշնակցության կողմից արդեն իսկ ստեղծվել էր Հայկական լեգեոնը, մի բան, որ հեռու է իրականությունից: Ընդհանրապես, սխալ է Արևելյան լեգեոնը հակադրել Հայկական լեգեոնին, քանի որ Արևելյան լեգեոնը նույն ինքը Հայկական լեգեոնն է՝ մի շարք հասկանալի պատճառներով այդպես անվանված: Սխալ է և այն, որ իբր դաշնակցությունն է կազմակերպել լեգեոնը: Հայտնի է, որ ոչ դաշնակցությունը և ոչ էլ հայ հոգևորականությունը ոչ մի մասնակցություն չեն ունեցել լեգեոնի ստեղծմանը և լեգեոնականների հավաքագրմանը:

Մյուս կողմից, հանրահայտ փաստ է, որ Արևելյան լեգեոնը, բացի Արարայի ճակատամարտից, գործոն մասնակցություն է ունեցել սիրիական մի շարք քաղաքների ազատագրմանը: Հետևաբար ճիշտ չէ էֆենդիևան, երբ գրում է, թե իբր լեգեոնը չի օգտագործվել պատերազմում, որի պատճառով էլ պատերազմից հետո նշանակալից ուժ էր ներկայացնում:

Մի այլ տեղում, խոսելով Սալքս-Պիկո-Նուբար բանակցությունների մասին, էֆենդիևան ավելացնում է, որ նրանց միջև «...համաձայնություն էր կայացրել, ըստ որի հայերը դաշնակիցների հաղթանակից հետո չպետք է կռվեն եվրոպական կայազորների դեմ, նրանք պետք է կռվեն Թուրքական Ասիայում, Պաղեստինում և Սիրիայում ապրող թուրքերի դեմ»¹⁶⁸:

Այստեղ, մեր կարծիքով, բացակայում է տարրական տրամաբանությունը: Թե ինչու հայերը պետք է կռվեին Սիրիայում և Պաղեստինում ապրող թուրքերի դեմ, այն էլ դաշնակիցների հաղթանակից հետո, մնում է անհասկանալի: Պարզորոշ է մի բան, որ Ն. էֆենդիևան շատ ազոտ պատկերացում ունի լեգեոնի և ընդհանրապես հայ ժողովրդի պատմության շատ հարցերի վերաբերյալ, որից էլ առաջ են գալիս նշված սխալները:

Արևելյան լեգեոնի կազմավորման և 1916 թ. կոնդոտում կայացած խորհրդակցության մասին խոսող բոլոր հեղինակները հիշատակում են ֆրանսիական կառավարության և հայ Ազգային պատվիրակության միջև կայացած համաձայնություն, անգամ ստորագրված պայմանագրի մասին, որով Ազգային պատվիրակությունը խոստանում էր օժանդակել ֆրանսիական կառավարությանը կամավորներ հավաքագրելու գործում, իսկ Ֆրանսիան

դրա դիմաց խոստանում էր հայերին ինքնավարություն տալ Կիլիկիայում: Այդ մասին են վկայում նաև Պողոս Նուբարի վերոհիշյալ նամակները: Սակայն, ինչպես պարզվում է, նման գրավոր համաձայնագիր կամ պայմանագիր չի ստորագրվել: Հետևաբար հայ-ֆրանսիական զինվորական համագործակցությունը հիմնված է եղել Ֆրանսիայի բանավոր երաշխավորության, նրա «ասպետական» ազնիվ խոսքի, Պողոս Նուբարի և նրա համախոհների դեպի ֆրանսիական զիվանագիտությունն ունեցած կույր ու նայիվ հավատքի վրա:

Ազգային պատվիրակության այս վրիպումը, քաղաքական կարճատեսությունը, որը հետագայում ի շարս օգտագործվեց ֆրանսիական գաղութարարների կողմից, իրավացիորեն քննադատվել է մի շարք հեղինակների կողմից: «Պատերազմի ընթացքին հայ կամավորական խմբերու կազմությունը,— գրում է Լ. Զորմիսյանը,— ֆրանսիական բանակին մեջ հայ լեգեոնականներու մասնակցությունը ի՞նչ դաշնագրի հետևանքով տեղի ունեցած էր: Գոյություն ունե՞ր համաձայնական պետություններու (կամ գոնե անոնցմե մեկուն) և Ազգային պատվիրակության միջև ստորագրված և փոխանակված որևէ դաշնագիր, որ օրինական հիմ ծառայեր հայ կամավորական շարքման ստեղծումին»¹⁶⁹: Իհարկե ոչ:

Չնայած թույլ տրված սխալներին ու վրիպումներին, մարդկային ու նյութական լրացուցիչ զոհողություններին, Հայկական լեգեոնի ստեղծումն ու ձևավորումը դրական երևույթ էր կիլիկահայության կյանքում: Նրան Կիլիկիայում վիճակվելու էր շատ դժվարին, բայց միաժամանակ պատվաբեր մի դեր՝ թուրքական հորդաններից ապահովելու կիլիկահայության ֆիզիկական գոյությունը:

¹⁶⁹ Լ. Զորմիսյան, Կուսակցությունները, Բեյրութ, 1965, էջ 89:

ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՆ 1919 ԹՎԱԿԱՆԻՆ

1918 թ. սեպտեմբերի վերջերին պատերազմի բախտը Թուրքիայի համար արդեն որոշված էր: Սիրիա-պաղեստինյան ռազմաճակատում թուրքական «Յըլզըրըմ» զորամիավորման կրած մի շարք ծանր պարտությունները բարոյալքել էին թուրք զինվորին: Վատ զինված, գլխաբաց ու ոտաբոբիկ թուրքական զորամասերը առանց լուրջ դիմադրության լքում են սիրիական քաղաքները և նահանջում դեպի հյուսիս: Զանգվածային բնույթ էր կրում դասալքությունը, որը պատերազմի վերջին ամիսներին արդեն հավասար էր զործող բանակի 30—50% -ին¹:

1918 թ. հոկտեմբերի 1-ին անգլո-ֆրանսիական զորամասերը գրավում են Գամասկոսը, հոկտեմբերի 6-ին՝ Բեյրութը, իսկ 26-ին՝ Հալեպը: Անմիջական վտանգ է ստեղծվում պատերազմական գործողությունները Թուրքիայի տերիտորիան տեղափոխելու համար:

Նման պայմաններում Թուրքիային ոչինչ չէր մնում, քան դաշնակիցների ողորմածությունը հանձնվելը: Հենց նրա խնդրանքով էլ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուղրոս նավահանգրստում խարխսի նետած անգլիական «Ազամեմնոն» ռազմանավի վրա ստորագրվում է զինադադարը, որով դադարեցվում էին պատերազմական գործողությունները դաշնակիցների և Թուրքիայի միջև: Դաշնակիցների անունից զինադադարը ստորագրում է անգլիական միջերկրածովյան նավատորմի գլխավոր հրամանատար ծովակալ Սոմերսեթ Քալթորփը, իսկ թուրքական կառավարության անունից՝ ծովային մինիստր Լուսեյն Ռաուֆ բեյը, արտաքին գործերի մինիստրի տեղակալ Ռեշատ Հիքմեթ բեյը և փոխգնդապետ Սաադուլլա բեյը:

Մուղրոսի զինադադարի պայմանները ծանր էին Թուրքիայի համար: Նա խոստանում էր խզել բոլոր կարգի հարաբերություն-

ները իր դաշնակիցների հետ (հոդ. 23), զորացրել իր բանակները (բացառությամբ նրանց, որոնք նախատեսվում էին երկրի սահմանների պաշտպանության և ներքին կարգի պահպանման համար) (հոդ. 5), դաշնակիցների առջև բացելու նեղուցները (հոդ. 1), դաշնակիցներին հանձնելու զենքի ու զինամթերքի պաշարները և փոխադրամիջոցները (հոդ. 20) և այլն:

Մեզ համար, սակայն, առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում զինադադարի այն պայմանները, որոնք անմիջականորեն առնչվում էին Կիլիկիայի հետագա ճակատագրի հետ: Մուղրոսի զինադադարի 7-րդ հոդվածը դաշնակիցներին իրավունք էր վերապահում գրավելու Թուրքիայի ցանկացած կետը, եթե դրանցում «...դաշնակիցների անվտանգությանն սպառնացող դրույթուն ստեղծվեր»: 10-րդ հոդվածի համաձայն դաշնակիցները պիտի գրավեին Տավրոսի փապուղու սիստեմը: 16-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր Կիլիկիայից հեռացնել իր զորքերը, բացառությամբ նրանց, որոնք, ըստ 5-րդ հոդվածի, պիտի հսկեին երկրամասի ներքին կարգի պահպանությունը (նրանց քանակը հետագայում պիտի սահմանվեր դաշնակիցների և թուրքական կառավարության կողմից):

Այնուհետև արևելքում անգլո-ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատարության և թուրքական կառավարության միջև ստորագրվում է մի նոր փաստաթուղթ՝ Մուղրոսի զինադադարի գաղտնի հավելվածը: Գաղտնի հավելվածով Թուրքիան պարտավորվում էր Կիլիկիայից դուրս բերելու իր զորամասերը և Կիլիկիայի ինչպես զինվորական, այնպես էլ վարչական վերահսկողությունը հանձնելու դաշնակից զորքերի գլխավոր հրամանատարությանը:

Հավելվածն ամբողջությամբ մեջբերված է Մուստաֆա Բեմալի «Նոր Թուրքիայի ուղին» գրքի երրորդ հատորում, որն իր հերթին բաղվել է Ալի Սաիբի «Կիլիկիայի ռզբերությունը և Ուրֆայի ազատագրական պայքարը» աշխատությունից: Ըստ Ալի Սաիբի գաղտնի հավելվածը ստորագրվել է 1918 թ. դեկտեմբերին², բայց գնդապետ է. Բրեմոնը, որն անկասկած ավելի քաջատեղյակ է մասնավորապես Կիլիկիայի հետ առնչվող իրադարձություններին, գրում է, որ զինադադարի հավելվածը (ըստ Բրեմոնի՝ հավելյալ համաձայնագիրը) ստորագրվել է 1919 թ.

¹ SE'u Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919—1927, т. 1, Москва, 1929, стр. XXVIII (Գուրկո-Կրյամինի առաջարկներ):

² SE'u Мустафа Кемаль, նշվ. աշխ., հ. 3, էջ 258:

փետրվարի 20-ին³։ Մեր կարծիքով ավելի արժանահավատ է Բրեմոնի նշած թվականը։

Նկատի ունենալով այդ փաստաթղթի կարևորությունը, մեջ ենք բերում ամբողջությամբ։

«1. 6-րդ բանակի հրամանատար Ալի Իհսան փաշան պետք է փոխադրվի այլ շրջան։

2. 6-րդ բանակը կզինաթափվի և եգիպտական էքսպեդիցիոն կորպուսին կհանձնի հրետանին, գնդացիները և զենքերը այն վայրում, որն այս նպատակով պիտի նշանակվի։

3. Բնակչությունը պիտի զինաթափվի, երբ (անգլիական հրամանատարություն կողմից—խմբ.) հրամայվի այդ մասին։

4. Մեր վերահսկողության ենթակա շրջաններում գտնվող թուրքական ժանդարմական զորամասերը, երբ նրանց գոյությունը ավելորդ համարվի, պիտի արձակվեն ու զինաթափվեն։ Մինչև մեր հսկողությամբ ժանդարմների զորացրումը վերջինները պիտի ենթարկվեն եգիպտական էքսպեդիցիոն կորպուսի հրամաններին։

5. Կաշառակերության մեջ մերկացված թուրք պաշտոնյաները եգիպտական էքսպեդիցիոն կորպուսի կողմից պիտի տեղափոխվեն։ Նրանց փոխարեն նշանակված պաշտոնյաների անունները հաստատման համար պետք է հաղորդվեն եգիպտական էքսպեդիցիոն կորպուսին։

6. Եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը հայրենիք կուղարկի ցանկացող բոլոր հայերին։

7. Հանցագործ անձնավորությունները պիտի ձերբակալվեն։ Պիտի ձերբակալվեն նաև այն անձնավորությունները, որոնք կասկածվում են հասարակական կարգն ու անդորրը խախտելու մեջ։

8. Եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը պիտի վերահսկի Կոնյայի արևելքում գտնվող ամբողջ երկաթուղին։

9. Եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը պիտի վերահսկի հեռախոսային և հեռագրական բոլոր խոսակցությունները։

10. Եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը հայրենիք պիտի ուղարկի 6-րդ բանակի զորացրված զինվորներին՝ շաբաթական 900 մարդու շափով։

11. Թուրքական կառավարությունը վերադարձնում է դասա-

լքված (անգլիական բանակի—խմբ.) հնդիկ և այլ զինվորներին։

12. Թող հայտնի լինի, որ եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը իր հայեցողությամբ կարող է գրավել ցանկացած վայրը։

Մանոթություն.— 8-րդ հոգվածի «վերահսկում» բառը հետևյալ իմաստն ունի. եգիպտական էքսպեդիցիոն կորպուսը իրավունք պիտի ունենա ցանկացած ժամանակ և ցանկացած եղանակով ուղարկել և քաղաքացիական փոխադրումներ կատարել Բաղդադի գծով։ Միաժամանակ կորպուսին իրավունք է վերապահվում ցանկացած ժամանակ արգելել այս կամ այն բեռի փոխադրությունը Բաղդադի երկաթուղով։

Այս դրույթները համատեղ մշակվել են եգիպտական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատարության և Ստամբուլում գրանցվող թուրքական կառավարության կողմից⁴։

Ինչպես երևում է գաղտնի հավելվածի բովանդակությունից ու ոգուց, այն փաստորեն լրացնում էր Սուդրոսի զինադադարի և մասնավորապես նրա 16-րդ հոգվածի պայմանները, վճռելով Կիլիկիայի հետագա ճակատագրի հետ կապված խնդիրները։

Կիլիկիայության համար առանձնապես կարևոր էր հավելվածի 6-րդ հոգվածը, որով դաշնակից երկրների Արևելքում գրանցվող զորքերի գլխավոր հրամանատարությունը (ըստ հավելվածի՝ եգիպտական էքսպեդիցիոն կորպուսի) պարտավորվում էր կազմակերպել արևմտահայության այն բեկորների հայրենադարձությունը, որոնք պատերազմի տարիներին թուրքական կառավարության կողմից բռնագաղթվել էին Սիրիայի ու Միջագետքի ավազուտները։

Զինադադարի 16-րդ հոգվածի տրամադրություններին համապատասխան, դաշնակից ուժերի գլխավոր հրամանատարությունը 1918 թ. նոյեմբերի 28-ին թուրքական հրամանատարությունից պահանջում է դատարկել Կիլիկիան։ Միաժամանակ ֆրանսիական զորքերը ստանում են հետևյալ հրամանը. «Մինչև ղեկտեմբերի 13-ը թուրքերը պետք է դատարկեն Զիհունից արևելք ընկած տիրիտորիան, մինչև 17-ը՝ Սիհունի արևելքում և Ադանա—Տարսոն գծի հյուսիսում գտնվող տերիտորիան, մինչև 21-ը՝ ամբողջ երկրամասը մինչև Բողանթըի արևմուտքը՝ Կիլիկիայի դարպասը։ Ուշացող սպաները և զինվորները պիտի գերվեն. զենքերը և զինամթերքը, որոնք երկրամասում կմնան մինչև ղեկտեմբերի 21-ը,

³ Sire Brémond E., նշվ. աշխ., էջ 9։

⁴ Мустафа Кемаль, նշվ. աշխ., հ. 3, էջ 258—259։

պիտի գրավւեն. Արևելյան լեզեոնը թուրքական տարրերին կհետևի նրանց նահանջի ժամանակ և կապահովի աստիճանական գրավումը. գնդապետ Ռոմիեոն դաշնակիցների անունից կստանանի զինվորական հրամանատարությունը և Կիլիկիայի ժամանակավոր վերահսկողությունը»⁵:

Ըստ հայ լեզեոնականների հետ կնքված համաձայնության պայմանների, նրանց էր շնորհված առաջինը իրենց հայրենիքը ոտք դնելու իրավունքը: «Պայմանագրությունը զոր մենք կնքած էինք հայ կամավորաց հետ,— գրում է Դյու Վեոն,— իրենց կապահովեր առանձնաշնորհը առաջինը մտնելու իրենց հայրենիքին մեջ»⁶:

1918 թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիացի զենեքալ Համլենը դիմում է Ֆրանսիայի ռազմական մինիստրին և թույլտվություն խնդրում Հայկական լեզեոնն ու Կիպրոս կղզում գտնվող նրա պահեստները Կիլիկիա տեղափոխելու: Ըստ Համլենի ծրագրի Հայկական լեզեոնը պետք է ցամաք հանվեր Ալեքսանդրետում և դեպի հյուսիս առաջխաղալով, իրագործեր Կիլիկիայի գրավումը: Փարիզից ոչ մի պատասխան չստանալով, զենեքալ Համլենը հրամայում է իր տրամադրության տակ գտնվող զորամասերին նավ նստել և մեկնել Ալեքսանդրետ: Պոլ Դյու Վեոն վկայում է, որ զենեքալ Համլենը մինչ այդ նույնանման հրաման էր ստացել նաև զենեքալ Ալեմբրիցի⁷:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս շրջանում (1918 թ. նոյեմբեր—1919 թ. հունիս) Ֆրանսիան Սիրիայի ու Կիլիկիայի սահմանագլխին, բացառությամբ Հայկական լեզեոնի շորս գումարտակների, զինված ուժեր չուներ: Հետևաբար, երբ խոսվում է ֆրանսիական զորքերի մասին, ապա դրա տակ անպայման պետք է հասկանալ միայն Հայկական լեզեոնը: Հատկանշական է, որ անգամ հիշյալ փոքրաքանակ զորքի փոխադրումը նախ Ալեքսանդրետ և ապա Մերսին կատարվում է անգլիական նավերով, քանի որ Ֆրանսիան այն անելու ի վիճակի չէր:

1918 թ. նոյեմբերի 28-ին Հայկական լեզեոնը փի է հանվում Ալեքսանդրետում և գրավում այն: Լեզեոնի գումարտակներից մեկն այստեղից շարժվում է դեպի հյուսիս և իրագործում Դյորթ-Յոլ, Թոփրակ-Վալի ու Իսլահիե բնակավայրերի գրավումը: Մյուս

ճրկու գումարտակները ծովով մեկնում են Մերսին և խորանում Կիլիկիայի խորքը: Գումարտակներից մեկը գնդապետ Ռոմիեոյի հրամանատարությամբ մտնում է Ադանա և այն վերցնում իր հսկողության տակ: Երրորդ գումարտակը բաժանվում է երեք վաշտերի և իրականացնում Մերսին, Տարսոն ու Բողանթը քաղաքների գրավումը:

1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին Կիլիկիայում և նրան հարակից շրջաններում դեռևս գտնվում էին չզինաթափված մի շարք թուրքական զորամասեր: Դա ուղղակիորեն հակասում էր ինչպես զինադադարի, այնպես էլ գաղտնի հավելվածի պայմաններին, մի հանգամանք, որ դաշնակիցների կողմից ըստ արժանվույն չգնահատվեց և որը բազմաթիվ ու բազմապիսի դժբախտությունների պատճառ հանդիսացավ: Այսպես, Կիլիկիայում էր գտնվում Հաշիմ բեյի երեք հազարանոց ժանդարմական գունդը: Թուրքական մի քանի գումարտակներ ամրացել էին երկաթուղու երկայնքով: Թուրքական մի ամբողջ բանակ զենք ու զինամթերքով մնացել էր Կիլիկիայից արևելք ընկած երկրամասում՝ Եփրատ և Տիգրիս գետերի միջև⁸: Թուրքական այս մեծաքանակ ուժերի դիմաց միայնակ կանգնած էր Հայկական լեզեոնն իր սահմանափակ միջոցներով: «Այս իրավիճակը նկատի ունենալով,— գրում է Բրեմոնը,— մարդ հեշտությամբ կարող էր երեվակայել, թե որքան անկայուն էր Հայկական երեք փոքրիկ գումարտակների դիրքը: Մեր հաղթանակի ազդեցությամբ է, որ դիմագրավում էինք այս դժվարություններին»⁹:

Կասկածից վեր է, որ անգլո-ֆրանսիական զորքերի մուտքը Կիլիկիա և նրա գրավումը կատարվել է օրինական ճանապարհով, այսինքն՝ դաշնակիցների հետ թուրքական կառավարության ստորագրած զինադադարի պայմաններին համապատասխան: Սակայն պատմաբան էֆենդիեան, չզիտես ինչից ելնելով, այդ գրավումը համարում է ապօրինի և որը ըստ հեղինակի, խախտում էր Մուղրոսի զինադադարի պայմանները: «Սուլթանական կառավարության կապիտուլյացիայի հետևանքով,— գրում է նա,— անգլիական զավթիչները ի խախտումն Մուղրոսի զինադադարի պայմանների, գրավեցին Մոսուլի վիլայեթը և Կիլիկիան (Ադանան, Այնթապը, Ուրֆան, Մարաշը)»¹⁰:

⁵ Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 63 և Brémond E., նշվ. աշխ., էջ 6:

⁶ «Ձարթոնք» լրագիր, 13-րդ փետրվարի 1952, № 97 (4252):

⁷ Sté u Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 64:

⁸ Sté u Brémond E., նշվ. աշխ., էջ 7—8:

⁹ Նույն տեղում, էջ 8:

¹⁰ Эфендиева Н. З., նշվ. աշխ., էջ 30:

Մեզ համար, սակայն, այդպես էլ մինչև վերջ պարզ չի դառնում էֆենդիկայի կարծիքը, քանի որ իր աշխատություն մի այլ էջում, մոռացություն տալով իր իսկ կողմից արտահայտված տեսակետը, ճիշտ հակառակն է պնդում: «Մուղրոսի զինազաղարի կնքումից հետո դաշնակիցները,— գրում է նա,— շտապեցին օգտվել նրա այն պայմաններից, որոնք իրավունք էին տալիս նրանց գրավելու Թուրքիայի ցանկացած տերիտորիան»¹¹:

Զի կարելի համաձայնվել նաև էֆենդիկայի այն մտքի հետ, որ իբր անգլիական զորքերի մուտքը Կիլիկիա խախտում էր 1916 թ. ստորագրված Սալթս-Պիկո համաձայնությունը: «Անգլիան ավելի շուտ, քան մյուս պետությունները խախտեց Սալթս-Պիկո համաձայնությունը և աշխատեց հնարավորին չափ արագ գրավել Թուրքիայի ամենաբարեբեր հողերը՝ Կիլիկիան: 1918 թ. դեկտեմբերին անգլիական զորքերը գրավեցին Մերսին և Ադանա քաղաքները, իսկ 1918 թ. հունվար-փետրվարին՝ Ուրֆան, Մարաշը, Այնթապը, ինչպես նաև Բաղդադի երկաթուղու մի հատվածը»¹²: Ինչպես արդեն նշվեց, հիշյալ և կիլիկյան մի շարք այլ քաղաքների գրավումը կատարվել էր ֆրանսիական զորքերի միջոցով, որոնք այս շրջանում ներկայացված էին բացառապես Հայկական լեգեոնի շորս գումարտակներով¹³:

Մյուս կողմից, անգլիական զորքերի առկայությունը Կիլիկիայում դեռևս իրավունք չի տալիս եզրակացնելու, որ դա խախտում էր Սալթս-Պիկո համաձայնագիրը, որով Կիլիկիան մտնելու էր ֆրանսիական գոտու մեջ: Դա նախ և առաջ պայմանավորված էր ֆրանսիական զինված ուժերի փոքրաթիվությամբ: Պոլ Դյու Վեոն իր գրքում հանգամանորեն քննարկում է այդ հարցը, խոսում անգլիական զինվորական իշխանությունների նյութած դավերի մասին, բայց այդ բոլորից չի եզրակացնում, որ վերջին հաշվով Անգլիան նպատակ ուներ զավթելու Կիլիկիան: Վեոն միաժամանակ նշում է, որ գեներալ Համլենը, նկատի ունենալով իր ուժերի սահմանափակությունը և նրանց անկայուն վիճակը Կիլիկիայում, դիմում է գեներալ Ալեմբրին և լրացուցիչ ուժեր պահանջում: Հատկանշական են Ալեմբրի հետևյալ խոսքերը. «Ֆրանսիան պահանջեց Հայաստանը գրավելու նախապատվությունը: Չեր կառավարությունն էլ պատկանում է միջոցառում-

ների ձեռնարկումը: Եթե Ֆրանսիան զլանում է այն անել, այսինքն լրացուցիչ զորքեր բերել և ավարտել Կիլիկիայի գրավումը, ապա ինքը, որպես դաշնակից ուժերի գլխավոր հրամանատար, հարկադրված է այն իրագործել անգլիական զորքերով»¹⁴:

Մի այլ տեղում, խոսելով նույն հարցի մասին, Վեոն պարզորոշ գրում է, որ անգլիացիները ամեն կերպ դժվարացնում են ֆրանսիացիների կողմից Սիրիայի գրավումը, թույլատրելով գրավել միայն Կիլիկիան, որը Ֆրանսիային ոչինչ չէր տալու և որի օգուտը պիտի քաղեին միայն հայերը¹⁵:

Կիլիկիայում գտնվող ֆրանսիական զորքերը այն աստիճան աննշան և ողջ Կիլիկիան գրավելու անընդունակ էին, որ անգամ ինքնուրույն ստորաբաժանման մեջ հանդես չէին գալիս և մտնում էին անգլիական 21-րդ կորպուսի մեջ: Հետևաբար բոլորովին էլ տարօրինակ չէ, որ հենց անգլիական զորքերը գրավեցին Կիլիկիայի արևելյան շրջանները 1919 թ. սկզբին, բայց ոչ ի խախտումն Սալթս-Պիկո համաձայնության: Պոլ Դյու Վեոն այս կապակցությամբ պարզ ու որոշակի գրում է. «Այն շրջանները, որոնց գրավման պարտականությունը մեզ էր պատկանում և որտեղ մենք չէինք կարող մուտք գործել միջոցների բացակայության պատճառով, դրանց հրամանատարությունը նա (գեներալ Ալեմբրին—Շ. Թ.) հանձնեց անապատային հեծյալ կորպուսի հրամանատար գեներալին»¹⁶:

Գնդապետ է. Բրեմոնը, որը ֆրանսիական կառավարության 1918 թ. դեկտեմբերի 25-ի № 92189/11 հրամանով նշանակվել էր «Հայաստանի կառավարիչ», իր կողմից այդ պաշտոնն ստանձնելու մասին խոսելիս ավելացնում է, որ այն կատարվում էր անգլիական ու ֆրանսիական կառավարությունների 1916 թ. համաձայնության ոգուն համապատասխան¹⁷: Եվ ոչ մի խոսք վերոհիշյալ համաձայնության խախտման մասին:

Նման պայմաններում է, որ գեներալ Ալեմբրին հարկադրված է լինում Կիլիկիայի արևմտյան ու հյուսիսային շրջաններն ուղարկել գեներալ Լեսլիի 19-րդ հետևակային բրիգադը, որը Ադանա է մտնում 1919 թ. փետրվարի 15-ին: Մինչ այդ անգլիական զորքերը արդեն գրավել էին Քիլիս, Այնթապ, Մարաշ, Ուրֆա

¹¹ Նույն տեղում, էջ 75:

¹² Նույն տեղում:

¹³ *Sh'ou Brémond E.*, նշվ. աշխ., էջ 6—7:

¹⁴ *Sh'ou Du Véou Paul*, նշվ. աշխ., էջ 70:

¹⁵ *Sh'ou* նույն տեղում, էջ 78:

¹⁶ *Du Véou Paul*, նշվ. աշխ., էջ 71:

¹⁷ *Sh'ou Brémond E.*, նշվ. աշխ., էջ 8:

քաղաքները և արևելքում գտնվող մի քանի բնակավայրեր:

1919 թ. փետրվար-մարտ ամիսներից արդեն բանակցութուններ են սկսվում Անգլիայի և Ֆրանսիայի միջև՝ անգլիական զորքերին Կիլիկիայից դուրս բերելու և նրանց Ֆրանսիականով փոխարինելու համար: Երկար ձգձգումներից ու քաջբռնկներից հետո միայն երկու պետությունների միջև կայանում է համաձայնություն: Որպես այդ բոլորի հետևանք 1919 թ. մայիսի 5-ին Ադանա է ժամանում գնդապետ զը Փիեփափը և ստանձնում Կիլիկիայում Ֆրանսիական զինված ուժերի հրամանատարի պարտականությունները¹⁸: Նույն թվականի հունիսի 9-ին Ադանա են մտնում Ֆրանսիական բանակի աֆրիկյան երկու հեծելազնոցեր և հուլիսի 12-ին՝ 412-րդ զորագնդի երկու գումարտակ: Քիչ անց մի այլ գումարտակ Ալեքսանդրետի վրայով մտնում է Դյորթ-Յոլ և ամրանում քաղաքում¹⁹:

Սակայն անգլիական զորքերի հեռացումը կատարվում է միայն 1919 թ. հոկտեմբերի վերջերին, որով էլ փաստորեն սկսվում է Կիլիկիայի գրավման ֆրանսիական շրջանը:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած խայտառակ պարտությունը, երիտասարդ թուրք բախտախնդիրների քաղաքականության սնանկացումն ու անփառունակ վախճանը, մի կողմից, և անգլո-ֆրանսիական զորքերի մուտքը Կիլիկիա, մյուս կողմից, միանգամայն բարենպաստ պայմաններ ստեղծեցին պատերազմի երեք երկար տարիների ընթացքում Սիրիայի ու Միջագետքի անապատները տարագրված ու կոտորակված արևմտահայության բեկորների հայրենադարձության համար: Դաշնակից զորքերի ներկայությունը իրական երաշխիք էր նրանց տունդարձի, ֆիզիկական ապահովության ու անվտանգության համար:

Հայահալած թուրքական պետության պարտությունը և ստորագրված զինադադարը այն ազդանշանը հանդիսացավ, որը խրթանեց ու արագացրեց տարագիր հայերի հայրենի օջախ վերադարձը և նոր կյանքի հույս ներշնչեց: Դեռևս խաղաղության առաջին ամիսներին Սիրիայի հյուսիսային և Կիլիկիայի սահմա-

նամերձ շրջանները տարագրված հազարավոր հայեր, դեռ նետելով թափառականի ցուպն ու թոթափելով անապատի փոշին, բռնում են տունդարձի ճամփան: Չսպասելով որևէ հրահանգի կամ կարգադրության, ֆրանսիական ու անգլիական զորքերի հետ և կամ էլ նրանց հետևից հետիոտն, ցրտի և անձրևի պայմաններում, նրանք վերադառնում էին իրենց ավերված, հողին հավասարեցված հայրենի տները: Բնական է, որ նման պայմաններում հայրենադարձությունը պիտի կրեր անկազմակերպ բնույթ:

Ինչպես արդեն նշվել է, Մուգրոսի զինադադարի գաղտնի հավելվածի 6-րդ հոդվածը վերաբերում էր տարագիր հայերի հայրենադարձությանը: Արևելքում գործող դաշնակից զորքերի գլխավոր հրամանատարությունը, հիշյալ հոդվածի համաձայն, ստանձնում էր կազմակերպել այն հայերի վերադարձը Կիլիկիա, որոնք կցանկանային այն: Ի կատարումն այդ պարտավորության, 1919 թ. փետրվար-մարտ ամիսներից անգլիական և ֆրանսիական զինվորական իշխանությունները գործնական միջոցներ են ձեռնարկում և իրենց փոխադրամիջոցները ի սպաս դնում հայրենիք վերադարձող հայերին: Դրանով հայրենադարձությունը դրվում է ամուր հիմքերի վրա և ընդունում քիչ-շատ կազմակերպված բնույթ:

Բեյրութում և ծովափնյա մի շարք քաղաքներում ստեղծվում են հատուկ կենտրոնավայրեր, որոնցից տարագիրները ուղարկվում են Կիլիկիա: Վերադարձը կատարվում էր և ծովով և ցամաքով: Հայրենադարձները նավերով գալիս էին մինչև Ալեքսանդրետ ու Մերսին նավահանգիստները և այստեղից էլ մեկնում իրենց հայրենի քաղաքները: Տասնյակ հազարավոր հայեր վերադառնում էին երկաթուղով՝ Դամասկոս—Հալեպ—Ադանա և Ռաս-էլ-Այն—Հալեպ—Ադանա գծով:

Հայրենադարձությունը հսկում և իրականացնում էին հիմնականում ֆրանսիական բանակի սպաները հայ Ազգային միությունների հետ համատեղ: Քարավանները Հալեպից ուղարկվում էին գնդապետ Կուսքարի միջոցով և Ադանայում ընդունվում Հայկական լեգեոնի գլխավոր բժիշկ Լ. Ռոլանի և նրա օգնական Ճ. Չանգալյանի կողմից: Հարկ է ընդգծել, որ Լ. Ռոլանը իր ամբողջ եռանդն ու կարողությունը ներդնում էր հայրենադարձության հաջող կազմակերպման և հայրենի տները վերադարձող հայերի ընդունման ու տեղավորման գործին: Տ. Պոյաճյանը, որը երկար ժամանակ աշխատել է Ռոլանի հետ, նրա մասին հետևյալն է

¹⁸ St' u Brémond E., նշվ. աշխ., էջ 15:

¹⁹ St' u Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 79:

գրում. «Ամեն անգամ, որ գաղթականներով լեցուն շոգեկառքի մը ժամանումը կը ծանուցվեր, գիշեր թե ցերեկ, անիկա կայարան կը փութար պարպումի գործը ղեկավարելու համար: Հաճախ իր ձեռքով երեսա մը իր մոր ձեռքեն առնելով վար կիջեցներ, կամ ծերուկ մամիկի մը կօգներ, որ վագոնեն դուրս ելլե»²⁰:

Դժբախտաբար Լ. Ռոլանը երկարատև գործունեություն չունեցավ: Բազմաթիվ առիթներով նա ընդհարվում է Կիլիկիայում գտնվող և վարչական-զինվորական պաշտոններ զբաղեցնող ֆրանսիացի զինվորականների հետ՝ նրանց թրջասիրության մեջ մեղադրելով: Այս հողի վրա էլ, հավանաբար, 1919 թ. օգոստոսի 19-ի գիշերը Լուի Ռոլանը խորհրդավոր պայմաններում անհայտ մարդասպանների ձեռքով իր բնակարանում ծանրորեն վիրավորվում է և երկու օր անց վախճանվում:

Չնայած ձեռնարկվող բոլոր միջոցներին, տարագիրների վերադարձը հաճախ մեծ դժվարություններ էր ստեղծում: Նույն շոգեկառքով երբեմն Ադանա էին ժամանում երեք հազար և ավելի հայեր, որոնց բնակարանով և սննդամթերքով ապահովելու գործը լրացուցիչ բարդություններ էր հարուցում: Հայրենադարձներին տեղավորելու նպատակով Ադանայում կառուցվել էին ժամանակավոր մի շարք կայարաններ, ինչպես «Գուրոյի ճամբարը», «Ժորժ Պիկոյի ճամբարը», «Ռոլանի արվարձանը» և այլն, որոնցից առաջինն ուներ հողե աղյուսից կառուցված 140 բարաք և ի վիճակի էր միաժամանակ պատսպարել շուրջ 4000 մարդու, երկրորդը՝ ավելի քան 4000 և վերջինը՝ մոտ 800 մարդու: Հազարավոր ներգաղթողներ բնակություն էին հաստատում քաղաքի եկեղեցիներում, դպրոցներում, հասարակական շենքերում, հրապարակներում և նույնիսկ փողոցներում: Ինչպես է. Բրեմոնն է նշում, երիտասարդության ու տղամարդկանց մեծ մասի ոչնչացման պատճառով վերադարձողների ճնշող մեծամասնությունը (մոտ 80%) կանայք ու երեխաներ էին²¹:

Առավել մեծ դժվարությունների հետ էր կապված վերադարձողներին դեպի իրենց հայրենի քաղաքներն ու գյուղերը տեղափոխելու գործը: Ծանապարհների անմխիթար վիճակը, անապահովությունը և փոխադրամիջոցների պակասը արհեստականորեն դանդաղեցնում էին նրանց փոխադրությունը, սովորացնում Ադանայում կուտակված հայերի թիվը, որը իր հերթին պա-

հանջում էր լրացուցիչ բնակարանային ու պարենային միջոցների հայթայթում:

Ինչպես է. Բրեմոնն ու Դյու Վեուն են վկայում, ֆրանսիական իշխանությունները անում էին ամեն ինչ, որպեսզի բավարար օգնություն ցույց տրվեր կարոտյալներին: Ըստ նրանց, միայն Ադանա քաղաքում, առանց կրոնական ու ազգային խտրականության, բնակչությանը ձրի բաշխվում էր օրեկան 24 հազար կգ հաց²²: Այս նպատակի համար օգտագործվում էին նեհատ փաշայի կուտակած սննդամթերքի պաշարները և հարկերից գոյացող միջոցները:

Վիճակն անհամեմատ ծանր էր գավառներում: Տարագրված հայերի ինչպես շարժական, այնպես էլ անշարժ հարստությունը (տուն, հող, խանութ, արհեստանոց, գործիքներ) հափշտակվել էր թուրք բնակչության կողմից: Շատ վայրերում, ինչպես Զեյթունում, Հաճընում, Այնթապում և այլն, տների մեծագույն մասը ավերվել ու հողին էին հավասարեցվել: Այս կապակցությամբ Զեյթունում և շրջակայքում տիրող իրավիճակի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ռ. Էզաճյանի տեղեկագիրը: «Բուն Զեյթուն քաղաքին մեջ, — կարդում ենք այնտեղ, — գտնվող 1800 տուններն հազիվ երեսուն տուն մնացեր էր բնակելի: Մոտ գյուղերովը մեկտեղ 1100 անձ վերադարձած է: Ընդամենը քսանհավելի գյուղերու 30000 բնակչութենեն հազիվ 3000-ը վերադարձած է, և 1000—1500 մը ևս Հալեպ—Պաղոպա—Բոր Սաիտ և այլուր վերադառնալիք կը գտնվի: Ֆրնտըճազի մեջ մեկ տուն իսկ չէ մնացած բնակելի, իսկ Ֆունուզի մեջ հազիվ 3—4 տուն տեսանք բնակելի: Երբեմն գյուղեր կան, որ հազիվ հազ 1—2—3 վերադարձածներ ունեին»²³:

Զեյթունում տիրող իրավիճակի մասին հետաքրքիր են նաև ակնատես Ն. Զեյթունցյանի վկայությունները: «Երբեմնի շեն ու աղատ Զեյթունի ավերակներուն մեջ, — գրում է նա, — քաղաքի արևելյան ու արևմտյան սահմաններուն վրա, կիսախարխուլ քանի մը տուներ և կիսաքանդ զորանոցեն զատ մեզի բան չէր թողուցած մեր թշնամին»²⁴: Վիճակն այսպիսին էր նաև մյուս գավառներում:

²⁰ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 209:

²¹ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 209:

²² Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 13:

²³ «Զարթոնք» լրագիր, 28-ը սեպտեմբերի 1952, № 2 (4410):

²⁴ Ն. Զեյթունցյան, Զեյթունի վերջին դեպքերը (1919—1921), Ալեքսանդրիա, 1922, էջ 14:

Տուն վերադարձող հայերի բնակարանային և նյութական վիճակի թեթևացումն ու բարելավումը մեծապես պայմանավորված էր բռնագրավված ունեցվածքի՝ տուն ու հողի օրինական վերադարձով իրենց նախկին տերերին, հարց, որի կենսագործումը մի շարք պատճառներով կապված էր մեծ դժվարությունների, բարդությունների հաղթահարման հետ: Միշտ և ամենուրեք չէ, որ այդ հարստությանը տիրացած թուրքերը հոժարակամ վերադարձնում էին այն իրենց օրինական տերերին: Նրանք կեղծիքի ու խաբեության միջոցով աշխատում էին ապացուցել տվյալ կավվածքի կամ հողակտորի իրենց պատկանելիությունը և եթե անգամ այդ եղանակով հաջողություն չէին ունենում, փորձում էին դիմադրել, ուժի դիմել:

Մյուս կողմից, բազմաթիվ տարագիր ընտանիքներ տասնորդվել էին և նրանցից միայն առանձին անհատներ էին կենդանի մնացել: Ընտանիքի ավագի բացակայությունը և համապատասխան փաստաթղթերի չգոյությունը ինքնին ավելի էր խճճում առանց այն էլ դժվար լուծելի խնդիրները:

Այս պայմաններում գործին, բնականաբար, պետք է միջամտեին Կիլիկիան գրաված և տեղական թուրքական իշխանությունները: Այս կապակցությամբ հատուկ որոշում էր ընդունել 1919 թ. մայիսի 12—14-ը Հայֆայում կայացած խորհրդակցությունը, որը գրավող իշխանությունների վրա խնդիր էր դրել աջակցել հայերին իրենց բռնագրավված ունեցվածքին տիրանալու գործում:

Վերոհիշյալ որոշման կենսագործման նպատակով մի շարք վայրերում ստեղծվում են հատուկ դատարաններ, որոնք էլ զբաղվում են այդ հարցով: Այստեղ լսվում են հայերի պահանջները, քննարկվում նրանց փաստարկները և համապատասխան որոշումներ կայացվում:

Մեր կարծիքով այս կնճռոտ հարցը պատմագրության մեջ ըստ արժանվույն չի լուսաբանվել, որն էլ տեղիք է տվել սխալ հետևությունների: Պատմաբան Ա. Ժելտյակովին իր թեկնածուական դիսերտացիայում, որը նվիրված է ազգային-ազատագրական շարժմանը թուրք գյուղացիության մասնակցության հարցին, շոշափելով հայերի գույքի և ունեցվածքի վերադարձման հարցը, գրում է. Ժանդարմների օգնությամբ «...ֆրանսիացիները սկսեցին «երկրորդ դինադադարի» (նկատի ունի Մուղրոսի գինադադարի գաղտնի հավելվածը—Շ. Թ.) 6-րդ հողվածի իրագոր-

ծումը, որը պահանջում էր բնակարանի, գույքի և հողի վերադարձը վերադարձող հայ գաղթականներին, իսկ նրանք տասնյակ հազարներ էին: Գործնականում այս «վերադարձը» վեր էր ածվում թուրք բնակչության կողոպուտի, ընդ որում ամբողջ օգուտը ընկնում էր ֆրանսիացի և հայ սպաների, հայ առևտրա-վաշխառուական վերնախավի ձեռքը: Իսկ հայ աշխատավորները ոչինչ չէին ստանում և աղքատ, անթի գոյություն քարշ տալիս»²⁵:

Ա. Ժելտյակովը, առանց խորամուխ լինելու հարցի էություն մեջ, կրկնում է թուրք պատմաբանների հերյուրանքները և մեղանշում պատմական հանրահայտ փաստերի առաջ: Իր մտքերը հաստատելու համար նա ոչ մի ապացույց չի բերում:

Համաձայնվել Ա. Ժելտյակովի տեսակետի հետ, պիտի նշանակեր արդարացնել երիտթուրք ավազակային պետության և խուժանի կիրառած բռնությունները, թալանը, մի ամբողջ ժողովրդի նկատմամբ գործադրված ոճրագործությունները: Հաշտվել Ա. Ժելտյակովի հետ, պիտի նշանակեր արդարացնել տարագրության տարիներին թուրք բնակչության կատարած կողոպուտը և օրինականացնել նրա սեփականատիրական իրավունքները հայերից բռնագրավված հողի, բնակարանի, գույքի նկատմամբ: Կրկնում ենք, ոչ մի տեղ և ոչ մի եղանակով «թուրք բնակչության կողոպուտը» տեղի չի ունեցել: Եվ կարծեք չբմեղանալու համար է, որ Ա. Ժելտյակովը «կողոպուտը» վերագրում է ֆրանսիացի և հայ սպաներին, ինչպես նաև հայ առևտրա-վաշխառուական վերնախավին: Ավելորդ չէ հիշեցնել, որ ֆրանսիական բանակում (այդ թվում և հայկական լեգեոնում) ծառայող հայ սպաների թիվը մի քանիսից չի գերազանցել: Հետևաբար, մի քանի սպաներ կողոպուտել թուրք ժողովրդին, եթե նույնիսկ ցանկանային, ֆիզիկապես ի վիճակի չէին: Ինչ վերաբերում է առևտրավաշխառուական վերնախավին, ապա այդպիսին որպես դաս, միանգամայն հասկանալի պատճառներով այս շրջանում Կիլիկիայում գոյություն չունեն:

Մեր կարծիքով, Ա. Ժելտյակովի նման սխալ թեզերի արմատները պետք է փնտրել նրա կողմից օգտագործված թուրք հեղինակների «գիտական» աշխատությունների մեջ, որոնք կեղծ ու խաբեպատիր փաստերով փորձում են արդարացնել կատարված ոճրագործությունը և դրա մեղքերը բարդել հայերի վրա: Նույն

մտքերն են կրկնվում մեզ ծանոթ հեղինակ Դալքերը Ռեջեպի մոտ: Խոսելով վերադարձած հայերի ներկայացրած պահանջների մասին, նա գրում է, որ հայերը պահանջում էին ցածր գնով վաճառած անասունի լրիվ արժեքը և երեքից-չորս տարիների ընթացքում նրանից ստացվող եկամուտը: Կամ մոտենալով նախորին, նրանք վերցնում էին ցանկացած կովը կամ ձին, հայտարարելով, որ իրենցն է²⁶: Բացահայտ է հեղինակի միտումնավորությունը, որի նպատակն է ստվեր գցել վերադարձող հայերի արդար ու օրինական պահանջների վրա և հայերի մտացածին բռնություններով էլ արդարացնել Կիլիկիայում կատարված բեմալական ջարդերը: Նման զրպարտություններ ու հերյուրանքներ կարելի է գտնել նաև թուրք այլ հեղինակների մոտ²⁷:

Տեղին է նշել, որ թուրքական կառավարությունը 1918 թ. դեկտեմբերի 18-ի (18 կյանուն ի էվվել 1334) իր № 639 իրատեղով պարտավորվել էր տարագիր հայերի հայրենադարձությունը կատարել իր միջոցներով: Սակայն հետագայի դեպքերը ցույց տվեցին, որ թուրքական կառավարությունը ոչ միայն տրամադիր չէ քավելու իր նախորդների մեղքը և զբաղվելու իր զոհերի վիճակի բարելավման հարցերով, այլև պատրաստ է բոլոր միջոցներով խոչընդոտելու հայերի վերադարձը: Դեռ ավելին, թուրքային վերաբնակիչները (մուհաճիրները), որոնք պատերազմի տարիներին թուրքական կառավարության հատուկ որոշմամբ ու ջանքերով Կիլիկիա էին գաղթեցվել վանից, Կարինից, Խարբերդից և այլ վայրերից, իրենց տներն էին վերադարձվում ոչ թե թուրքական կառավարության, այլ Ֆրանսիական իշխանությունների միջոցներով:

Չնայած այս և նման խոչընդոտներին, բնական ու արհեստականորեն հարուցվող դժվարություններին, ներգաղթը շարունակվեց նաև հետագա ամիսներին և մեծ շափեր ընդունեց 1919 թ. ամռան-աշնան ամիսներին: Ֆրանսիական բարձր կոմիսարության տվյալներով 1919 թ. վերջերին հայերի թիվը Կիլիկիայում հաշվվում էր շուրջ 120 հազար²⁸: Միաժամանակ նշվում է, որ ավելի քան 50 հազար հայեր վերադարձել էին Ալնթապ, Մարաշ, Զեյթուն, Քիլիս քաղաքները: Հասկանալի է, որ Կիլիկիայում այս

տարիներին որևէ մարդահամար չի կատարվել և ֆրանսիական բարձր կոմիսարության հաղորդած 120 հազարը մոտավոր է: Առավել հավանական է, որ դա ֆրանսիական իշխանությունների միջոցներով Կիլիկիա վերադարձած և նրանց կողմից հաշվառման ենթարկված հայերի թիվն է: Այս իսկ պատճառով մեզ թվում է, որ հիշատակված 120 հազարը թերի է և չի արտացոլում Կիլիկիայում ապաստանած հայության ամբողջական թիվը: Հայտնի է, որ տասնյակ հազարավոր հայեր Կիլիկիա էին վերադարձել իրենց նախաձեռնությամբ, որոնք, բնականաբար, չէին հաշվառվել ֆրանսիական իշխանությունների կողմից: Այդ մասին են վկայում նաև հայ հեղինակների հաղորդած տեղեկությունները: «Դրվագ մը Կիլիկիո ողբերգութենին» հոդվածում Գ. Չագմագճյանը գտնում է, որ 1919 թ. մայիս-հունիս ամիսներին Կիլիկիայում հայերի թիվը գերազանցում էր 180 հազարից²⁹: Ա. Քեչյանի կարծիքով այդ թիվը հավասար էր 158 հազարի³⁰: Ա. Սաղըրյանի վկայությամբ Կիլիկիա վերադարձած հայերի քանակը անցնում էր 150 հազարից³¹:

Նյու-Յորքի «Քրիսչըն Սայենս Մոնիթոր» լրագրի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում Հայկական լեգեոնի հրամանատարներից Ճան Շիշմանյանը ի միջի այլոց կանգ է առնում նաև Կիլիկիայում հայերի թվի հարցի վրա և նշում, որ այն հավասար էր 300 հազարի³²: Ֆրանսիական կառավարության հասցեագրված և Ա. Ահարոնյանի ստորագրությունը կրող ծանուցագրում Կիլիկիայում հայերի թիվը 200 հազար է ցույց տրվում³³: Մ. Քելեչյանի կարծիքով ևս այն հասնում էր 200 հազարի³⁴: Մենք չենք հավակնում պնդել, որ վերոհիշյալ տեղեկությունները ավելի կամ պակաս շափով մոտ են ճշմարտությանը: Անկասկած է նաև, որ դրանք նույնպես պաշտոնական վիճակագրության արդյունք չեն, այլ մոտավոր: Մեր կարծիքով առավել հավանական է 180—200 հազարը, իհարկե ներառյալ Ալնթապը, Մարաշը, Զեյթունը և այլն:

Ավելի որոշակի է Կիլիկիայի տարբեր քաղաքներում և գա-

²⁶ Տե՛ս Dalkir Recep, նշվ. աշխ., էջ 21:

²⁷ Տե՛ս Şapolyo Enver Behnan, նշվ. աշխ., էջ 145, տե՛ս նաև Söylemezoğtu Galip Kemal, Yok edilmek istenen millet, İstanbul, 1957, էջ 81—82:

²⁸ Տե՛ս Du Vêou Paul, նշվ. աշխ., էջ 90, Brémond E., նշվ. աշխ., էջ 12:

²⁹ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1956, № 6, էջ 23:

³⁰ Տե՛ս Ա. Քեչյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 93:

³¹ Տե՛ս Ա. Սաղըրյան, նշվ. աշխ., էջ 294:

³² Տե՛ս «Հայրենիք» լրագիր, 3-րդ փետրվարի, 1921, № 2665:

³³ Տե՛ս նույն տեղում, 25-րդ հունվարի 1921, № 2657:

³⁴ Տե՛ս Մ. Քելեչյան, նշվ. աշխ., էջ 645:

վառներում կենտրոնացած հայերի թիվը: Միայն Ադանա քաղաքում այն 60 հազարից ավելի էր, Դյորթ-Յուլում՝ 12, Հաճընում՝ 8, Սոււմ՝ 7, Տարսնում՝ 4, Մերսինում՝ 3500³⁵, Այնթապում՝ շուրջ 22³⁶, Մարաշում՝ 26—27 հազար³⁷ և այլն:

Հարկ ենք համարում կիլիկեհայության քանակի կապակցությամբ անել հետևյալ պարզաբանումը: Խոսելով նախապատերազմյան շրջանի կիլիկեհայության թվի մասին, մենք հավանական ենք համարել 200 հազարը: Օրինական հարց կարող է ծագել, թե ինչպես պատահեց, որ մարդկային այնքան մեծ կորուստներից հետո կիլիկեհայության քանակը մնաց անփոփոխ: Հարցը նրանումն է, որ տարագրությունից Կիլիկիա վերադարձած հայերի մի զգալի տոկոսը կազմում էին ոչ կիլիկեցիները: Կիլիկիայի գրավումով ստեղծված նպաստավոր իրադրությունը և Արևմտյան Հայաստանի ու հայաշատ մյուս քաղաքների հետագա ճակատագրի անորոշությունը հարկադրում էր այդ վայրերի հայրենակարոտ հայերին նույնպես հանգրվանել Կիլիկիայում:

Հայկական այսպիսի հոծ զանգվածի առկայությունը Կիլիկիայում պետք է որ փոխեր երկրամասի տնտեսական ու մշակութային դեմքը, մի բան, որ չի ուշանում զգացնել տալ իրեն: Ամենուրեք խաղաղ շինարարական աշխատանքի կարոտ հայք ձեռնամուխ է լինում պատերազմի տարիներին ավերված ու քայքայված երկրամասի տնտեսության վերականգնմանը: Վերակառուցվում են ավերված ու հողին հավասարեցված բնակելի ու հասարակական շենքերը, դպրոցներն ու եկեղեցիները, կառուցվում են նորերը: Բացվում են բազմաթիվ վաճառատներ, առևտրական գրասենյակներ, մանուֆակտուրային արհեստանոցներ ու ֆաբրիկաներ: Ներմուծվում են բազմապիսի գյուղատնտեսական մեքենաներ, որոնք մեծապես նպաստում են գյուղատնտեսության վերականգնմանն ու ինտենսիվացմանը: Բացվում են «Բանկ Օտոմանի», «Բանկ դի Ռոմայի», «Բանկ դը Սիրիի» բաժանմունքները: Կանոնավորվում է փոստի աշխատանքը: Ամբողջությամբ վերակառուցվում է Մերսինի նավահանգիստը, որի վրա ծախսվում է շուրջ երեք միլիոն ֆրանկ³⁸:

1919 թ. դեկտեմբերի 8-ին Ադանայի Ազգային միության սը-

³⁵ S^h'u Brémond E., նշվ. աշխ., էջ 11—12:

³⁶ S^h'u Ա. Կեսար, նշվ. աշխ., էջ 35:

³⁷ S^h'u Գ. Գալատյան, նշվ. աշխ., էջ 779:

³⁸ S^h'u Ա. Սաղբրյան, նշվ. աշխ., էջ 296—297:

րահում արտասանած իր ճառում ֆրանսիացի զնդապետ Նորմանը, խոսելով հայ ժողովրդի ապրելու ու հարատևելու անսահման ձգտումների մասին, հայտարարել է, որ հայերը ոչ միայն քաղաքակրթված, այլ Կիլիկիան քաղաքակրթող և առաջադիմության մղող տարրերն են: Այդ բանում ես համոզվեցի, շարունակում է զնդապետը, երբ հայերի խաղաղ շինարարական աշխատանքի կենդանի վկան դարձա: Անցնելով Ադանայի փողոցներով ես ականատես եղա հազարավոր հայ արհեստավորների և առևտրականների քրտնաթոր աշխատանքին, որոնք մոռանալով դառն անցյալն ու վշտերը, հասարակական բարիքներ են արտադրում³⁹:

Վերակենդանանում է նաև հայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը: Ամենուրեք, ուր թեկուզ մի քանի ընտանիք հայ էր վերադարձել, ստեղծվում են Ազգային միության տեղական մարմիններ, որոնցում ներկայացված էին բոլոր հարանվանությունները և քաղաքական կուսակցությունները: Հայ հասարակական-քաղաքական, մշակութային ուսումնական և տնտեսական կյանքին վերաբերող բոլոր, ինչպես նաև կալվածական և այլ բնույթի հարցերն ու վեճերը, քննարկվում, իրենց լուծումն էին ստանում այս միությունների նիստերում: Ազգային միությունները անգնահատելի ու կարևոր դեր խաղացին մասնավորապես 1920—1921 թթ. ինքնապաշտպանական կռիվների ընթացքում՝ փաստորեն վերածվելով մարտական շտաբների:

Հասարակական-քաղաքական ու ազգային կյանքի զարթոնքը, անվիճելիորեն, կապված է հասարակական հայտնի գործիչ Միհրան Տամատյանի անվան հետ: Որպես ամբողջական Հայաստանի պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ, Մ. Տամատյանը Ադանա ժամանեց 1919 թ. հունիսին և Կիլիկիայում գտնվելու առաջին իսկ օրվանից խիստ օգտակար աշխատանք ծավալեց ինչպես հայ-ֆրանսիական հարաբերությունները բարելավելու, որոնց ձախողումը, սակայն, ոչ մի կերպ չի առնչվում նրա անվան հետ և հետևանք է ֆրանսիական կառավարության՝ հայ ժողովրդի ազգային շահերին դավաճանելուն, այնպես էլ Ազգային միությունների գործունեությանը նոր լիցք հաղորդելու և, որ մեր կարծիքով ամենակարևորն է, կիլիկեհայերի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու ուղղությամբ:

Մ. Տամատյանի անձնական գործերի մեջ պահպանվել է իր

³⁹ S^h'u Ա. Սաղբրյան, նշվ. աշխ., էջ 296—297:

իսկ կողմից կազմված «Կիլիկյան Ազգային միության վերակազմության նախագիծ»-ը, ուշագրավ փաստաթուղթը, որտեղ սահմանվում են Ազգային միությունների աշխատանքների շրջանակները, պարտականություններն ու իրավունքները: Ներկայացրած կարևորության պատճառով դրանից մեջքերում ենք մի քանի հոդվածներ:

«1. Կիլիկիա, իբրև գրավված հողամաս, այլևս դադրած ըլլալով թրքական երկրաբաժին մը ըլլալիս, քաղաքական պայմաններու ստեղծած արդի դրության մեջ, մինչև ցնոր տնօրինությունը Հայ Ազգային Միությունները պիտի վարեն Ազգային Քաղաքական և Քաղաքացիական գործերը, իբրև Ազգային Քաղաքական Վարչություն:

2. Ազգային Միություններու կազմակերպական շենքը պիտի հիմնվի համերաշխ գործակցության սկզբունքներուն վրա և մինչև կիլիկյան հողամասին քաղաքական ճակատագրին վերջնական սահմանումը՝ ազգային այս համերաշխ գործունեության մեջ ազգին բոլոր կրոնական և քաղաքական հատվածները հավասար ձայնի իրավունքով պիտի մասնակցին և մեծամասնության ու փոքրամասնության խնդիր պիտի շահուցվի Ազգային Միություններու կազմին մեջ: Ազգային Միություններու կազմին մեջ հավասար ձայնի իրավունքով աթոռ պիտի ունենան Հայկական Մայր եկեղեցին, Հայ Կաթոլիկ և Հայ Բողոքական եկեղեցիները և չորս քաղաքական կազմակերպությունները»:

Երրորդ կետով նախատեսվում էր, որ «Ազանայի Կենտրոնական Ազգային Միության մեջ աթոռ ու ձայն պիտի ունենան Կիլիկիոն վեհ. Կաթողիկոսը, անձամբ կամ իր ներկայացուցիչովը և Ամբողջական Հայաստանի Պատվիրակը»:

12-րդ կետում ընդգծվում է, որ ազգային, կրոնական կազմակերպությունների և Ազգային միությունների գործունեության ընթացքում խառնաձևումները կանխելու նպատակով «...Ազգային Միություններուն վերապահված պիտի մնա զուտ ազգային-քաղաքական և դիվանագիտական գործերու հարաբերությունները վարելու կոչումը և իրավունքը»:

Շրջանային միությունները իրենց գործունեության մասին ամիսը մեկ անգամ պարտավոր էին հաշվետվություն ներկայացնել Կենտրոնական գործադիր մարմնին (13-րդ հոդված):

«21. Կիլիկիո Ազգ. Միություններու Ազանայի Կենտր. Մարմինն է որ կը գծե Կիլիկիո Հայության հետևելիք քաղաքական ուղ-

ղությունը, համաձայն Ազգ. Պատվիրակության հրահանգներուն և համագումարներու որոշումներուն: Շրջանային Միությունները այս մասին պարտավոր են հետևիլ Կենտրոնական Միության հրահանգներուն»:

22—23 հոդվածներում խոսվում է գրավված հողամասերի քաղաքական և ղինվորական իշխանությունների հետ վարչական կամ քաղաքական բնույթ կրող խնդիրները վարելու իրավունքի մասին: Նման իրավունքը վերապահվում էր Կենտրոնական մարմնին՝ Ազանայում և շրջանային միություններին՝ շրջաններում: Այդ հարաբերությունները մշակելիս նկատի պիտի առնվեին միայն միության կողմից ընդունված որոշումները, առանց անհատական տեսակետները հաշվի առնելու:

«24. Հայ Ազգ. Պատվիրակության ներկայացուցիչը, իր այդ հանգամանքովն իսկ, կը մնա վերին միջնորդը քաղաքական և ղինվորական իշխանությանց մոտ, ինչպես նաև Պատվիրակության և Ազգ. Միություններու միջև, որոնց կը հաղորդե Պատվիրակության կարգադրությունները և հրահանգները Ազանայի Կենտր. Միության խողովակով»:

Կենտրոնական Ազգային միությունը պիտի բաղկանար կրոնական և քաղաքական կազմակերպությունների կողմից ընտրված երեքական անդամից⁴⁰:

Իրենց գործունեությունն են վերսկսում քաղաքական կազմակերպությունները՝ ռամկավար, հնչակյան, վերակազմյալ և դաշնակցություն կուսակցությունները, վերաբացվում են նրանց կից գործող ակումբները: 1919—1921 թթ. տարբեր ժամանակներով Կիլիկիայում հրատարակվում են «Հայ ձայն», «Տավրոս», «Կիլիկիա», «Քաղաքացի», «Ազատ Տավրոս», «Արարա», «Նոր աշխարհ», «Կիլիկյան սուրհանդակ» և «Նոր սերունդ» թերթերը⁴¹:

Ազգային միությունների և քաղաքական կուսակցությունների մասնավոր ուշադրությանն են արժանանում մատաղ սերնդի դաստիարակության ու կրթության հարցերը: Սակայն երիտասարդ թուրքերի հասցրած հարվածն անհամեմատ խորն էր այս բնագավառում: Պակասում էին դպրոցական աշխատանքի կազմակերպման տարրական պայմանները: Չնայած ստեղծված ծանր կացությանն ու դժվարություններին, 1919 թ. աշնանից Կիլիկիայի

⁴⁰ Տե՛ս «Հասկ» ամսագիր, 1950, № 7—8, էջ 209—211:

⁴¹ Տե՛ս Մ. Քելեշյան, նշվ. աշխ., էջ 876:

տարբեր շրջաններում, այնուամենայնիվ, սկսում են գործել մի շարք դպրոցներ:

Որբահավաքների և, մասնավորապես, Ռ. Հերյանի համբերատար ու հայրենանվեր ջանքերով փրկվում և հարազատ ժողովրդի ծոցն են վերադարձվում երիտթուրքական բարբարոսություն կենդանի վկաները՝ հայ որբերը, որոնց թիվը միայն Կիլիկիայում գերազանցում էր տասը հազարից: Ադանայում, Գյորթ-Յոլում, Հաճընում, Օսմանիեում, Հարունիեում, Տարսոնում, Մերսինում, Այնթապում, Մարաշում և այլուր հիմնվում են տասնյակ որբանոցներ⁴²:

Հազարավոր հայ որբեր դեռևս գտնվում էին Հալեպում, Բեյրութում և Արևելքի մյուս քաղաքներում, որոնց տեղափոխությունը Կիլիկիա մի շարք դժվարությունների պատճառով չհաջողվեց:

Հայրենադարձ հայերի խաղաղ շինարարական գործունեության մասին են խոսում ականատեսների և ուսումնասիրողների վկայությունները: Նրանք միաբերան շեշտում են, որ հայերի վերադարձը առիթ ստեղծեց «որ եռուզեռի խանդավառ ու արտասովոր վիճակ մը տիրե ամենուրեք»⁴³: «Եվ հայությունը, — գրում է Ա. Կեսարը, — իրեն հատուկ շինարար, խաղաղասեր, նույնիսկ անհիշաչար ոգիով մը կը լծվի աշխատանքի, քրտինք կը թափե վերաշինելու ավերված օջախները, շենցնելու արտ ու անդաստան, այգի ու պարտեզ, զարկ տալու առևտրին ու արհեստներուն, վերստեղծելու տնտեսական այն բարօր վիճակը, զոր թողած էր ետին 1915-ին»⁴⁴:

Արտասահմանում ապրող մեծ թվով հայ մեծահարուստներ, գործարանատերեր ու վաճառականներ փորձում են հողեր գնել, գործարաններ կառուցել, կալվածքներ հիմնել և այլն (Գ. Կյուլպենկյան, Ա. Մանուկյան և ուրիշներ): Հայերի Կիլիկիայում մեծամասնություն կազմելը, երկրամասի տնտեսական վերելքի առաջին ծիլերը «...այնքան ցցուն ու աներկբայելի գրավականներ էին, որ աշխարհի ամեն կողմերեն հայ ունևորին, մտավորակա-նին ու աշխատավորին ականարկները պահ մը դարձան դեպի նո-

⁴² St'as Brémond E., նշվ. աշխ., էջ 12:

⁴³ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 213:

⁴⁴ Ա. Կեսար, նշվ. աշխ., էջ 35:

րազատ Կիլիկիա, վայրկյան առաջ հոն հասնելու և մայր զանգվածին խառնվելու խուլաթոխ տենչանքով առլի»⁴⁵:

Տ. Պոյանյանը ևս կանգ է առնում 1919 թ. վերջերին Կիլիկիայում ապաստան գտած հայերի տնտեսական ու մշակութային կյանքի վրա և ոգևորված գրում. «Վերջացող տարին (1919) Կիլիկիո մեջ արձանագրած էր բազմաթիվ հաջողություններ: Շինարարությունը աննախընթաց բարձրության մը հասած էր: Հողամշակությունը անբաղդատելիորեն գերազանցած էր բոլոր նախորդ տարիները: Ներգաղթողները գյուղերու, ավաններու և քաղաքներու մեջ տնտեսական խիստ քաջալերական, հուսադրիչ և երբեմն ալ նախանձելի դիրքերու տիրացած էին»⁴⁶:

Սակայն այս բոլորի կողքին կային տասնյակ հազարավոր հայեր, հիմնականում ոչ կիլիկեցիներ, զուրկ տուն ու տեղից, որևէ ժառանգությունից, որոնք քարշ էին գալիս Ադանայի փողոցներում՝ օրվա հացի կարոտ: Պետք է կարծել, որ Ադանայում բնակություն հաստատած 60 հազար հայերի կեսից ավելին այսպիսիներն էին: Այդ մասին է վկայում Սահակ կաթողիկոս Խապայանի 1919 թ. դեկտեմբերի 29-ին Գևորգ 5-րդ կաթողիկոսին գրած նամակը: «Ավելի քան հիսուն հազար հոգի, — կարդում ենք նամակում, — ընդհանրապես այրիներ և որբեր Ադանայի նահանգին մեջ խոնված՝ ձմեռ եղանակին կապրին վրաններու տակ, տակերնին փսիաթի կտոր մը շունենալով, իսկ իրենց ծնընդավայրը գտնվողները ամեն օր կը մեռնին և կը գերեզմանվին, որովհետև թուրքին յաթաղանը իրենց կողին և սուրբ իրենց գլխին վրա առկախ կը տեսնեն»⁴⁷:

Լուրջ ուշադրություն է դարձվել նաև Կիլիկիայի առողջապահական վիճակի բարելավման և տարափոխիչ հիվանդությունների կանխման վրա: Փարիզում գտնվող Ազգային պատվիրակությունը իր 1920 թ. հուլիսի 9-ի նիստում միաձայն որոշել էր Կիլիկիա գործուղել բժշկական մի պատվիրակություն՝ կիլիկեհայության առողջապահական կարիքները բավարարելու նպատակով, որի ղեկավարությունն ու վարչությունը ամբողջովին և անմիջապես պետք է հանձնվին պատրիարքարանին, որպեսզի կամ ինք ղեկավարե և կամ իր հսկողությունը հանձնե Կիլիկիո Ազգ. պա-

⁴⁵ Ա. Քեչյան, նշվ. աշխ., էջ 133:

⁴⁶ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 274:

⁴⁷ ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2046, թ. 4:

տասխանատու մարմիններուն»⁴⁸։ Պատվիրակության կազմում էին բժիշկներ Հայրանյանը, Քաջբերունին, Մնացականյանը, Վարդանյանը, Գրիգորյանը, Աղամյանը, տիկին Սարգսյանը, Սամարյանը, Սարգսյանը, Ղազարոսյանը, Դամլամայանը, Մանկոյանը, բուժ. քույրեր Մասեհյանը, Քարամյանը և Ղազարոսյանը։ Կարմիր խաչի ամերիկյան և անգլիական ընկերությունները տրամադրել էին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր Աղանայում հիվանդանոց բացելու համար։ Իսկ Փարիզի Պաստորի ինստիտուտը սինձուկներ էր տրամադրել վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար⁴⁹։

Այսպիսով, տարագիր հայերի վերադարձը, երկրամասի տրնտեսական կյանքի վերականգնումն ու աշխուժացումը, մեծ շափերի հասնող շինարարական աշխատանքները Կիլիկիան աստիճանաբար մոտեցնում էին իր նախապատերազմյան վիճակին։ Ապահով ու հուսատու էր թվում, համենայն դեպս առերևույթ, կիլիկիեհայություն կյանքը 1919 թ. սկզբներից։ Անսահմանորեն մեծ էր նրա հավատքը վաղվա նկատմամբ։ Եվ նույնիսկ առանձին անցանկալի ու տխուր միջադեպերը և դրանց ցավալի հետեւանքները դասվում էին պատահականությունների շարքը և հոռետեսության հիմքեր չէին տալիս։

Նման լավատեսության համար կային մի շարք պատճառներ։ Նախ՝ նշենք անգլիական ու ֆրանսիական գրավող իշխանությունների կիլիկիեհայության հանդեպ բարյացակամ թվացող վերաբերմունքը։ Մեկ անգամ, երբ ՀԲԸՄ-ի հայտնի գործիչ Վ. Մալեզյանը «Ֆրանսիական հանրապետության Սիրիայի և Հայաստանի բարձր կոմիսար» Ժորժ Պիկոյի հետ հանդիպման ընթացքում վերջինիս ուշադրությունը փորձել է հրավիրել այն դժվարությունների վրա, որոնք Աղանայի Ազգային միության համար ստեղծվում էին մեծաքանակ տարագիրների միաժամանակյա Աղանա հասնելով և խնդրել է, որ ուղարկվող կարավանները կազմվեն փոքրիկ խմբերից ու տեղ հասնեն որոշ ընդմիջումներով, բարձր կոմիսարը բարկացկոտ պատասխանել է. «Փոխանակ շունորհակալ ըլլալու որ գերմարդկային ջանքեր կընեմ և ցարդ 90 միլիոն ֆրանկ ծախսեցի, որպեսզի մեծ թվով հայեր Կիլիկիա վերադառնան ժամ առաջ և երկիրը լեցվի բազմահոծ հայությունը, դուք դժգոհանք կը հայտնեք։ Ձեք հասկնար ուրեմն ծրագիրս որ

կը հարկադրե զիս աճապարել թուրքերուն Կիլիկիո մեջ մեծամասնություն կազմելը արգիլելու կանխահոգությունը»⁵⁰։ Ժորժ Պիկոյի խոսքերը իրապես մեզ դարմանք չեն պատճառում։ Համենայն դեպս, Ֆրանսիայի 1918 թ. վերջերին և 1919 թ. առաջին ամիսներին վարած քաղաքականության շահերը այդպես էին պահանջում։ Հիշեցնենք միայն, որ մի քանի ամիս անց նույն Ժորժ Պիկոն գնալու էր Անատոլիա և սիրաբանելու Մուստաֆա Քեմալի հետ։

1919 թ. փետրվարի 1-ին Աղանա է ժամանում գնդապետ է. Բրեմոնը, բայց ոչ որպես «Հայաստանի կառավարիչ» (տե՛ս ֆրանսիական կառավարության 1918 թ. դեկտեմբերի 25-ի № 92189/11 հրամանը), այլ որպես «Դաշնակիցների կողմից գրավված թշնամի տերիտորիաների» կառավարիչ⁵¹։

Աղանայի Ազգային միությունը և ողջ աղանաբնակ հայությունը հանդիսավոր կերպով դիմավորում և ընդունելություն են կազմակերպում, որտեղ գնդապետը ելույթ է ունենում ու մասնավորապես շեշտում հետևյալը. «Հայեր, գիտե՛մ, դուք շատ տառապեցաք։ Ձեր տառապանքները վերջ գտան այլևս։ Դուք ձեր արդար իրավունքին տերը պիտի ըլլաք։ Սրտանց կը շնորհավորեմ ձեզ։ Այսօր այս բեմեն ձեր փրկության ավետիսը կուտամ ձեզի։ Ուրախությամբ կը հայտնեմ ձեզի, թե Կիլիկիո մեջ հայկական նոր պետության մը հիմը հաստատելու գործը ինձի հանձնրված է»⁵²։

Սակայն պետք է նշել, որ սա առաջին ու վերջին շոայված խոստումը չէր։ Դեռևս պատերազմի տարիներին, երբ հայերն անհրաժեշտ էին Ֆրանսիային իր գաղութային նպատակների համար, ֆրանսիացի մի շարք պետական-քաղաքական գործիչներ նույնպես ջանացել էին ոչնչով ետ չմնալ Բրեմոնից։

1916 թ. մարտի 12-ին Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված նամակում Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործերի մինիստր Ա. Բրիանը, որը քիչ անց աճուրդի էր հանելու բազմահար հայերի անմեղ արյունը, գրում է. «Ձերդ Սրբությունը կարող է վստահ լինել և հավատացած, որ դաշնակից պետությունների համահաճությամբ, այս միևնույն զգացմունքներով կը ձեռ-

⁴⁸ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 838, Թ. 20։

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 845, Թ. 51—52։

⁵⁰ «Հասկ» ամսագիր, 1951, № 1, էջ 17։

⁵¹ Brémond E., նշվ. աշխ., էջ 8։

⁵² «Հայրենիք» ամսագիր, 1956, № 6, էջ 20։

նարկե նա հայ ժողովրդին ընձեռելու օրինական հատուցումներ, երբ հանգամանքներն այդ ներելու լինեն»⁵³:

1916 թ. հուլիսին Փարիզում ստեղծվել էր «Ֆրանսիա—Հայաստան» ընկերությունը, որն իր առջև նպատակ էր դրել աշակցել հայ ժողովրդի արգար դատին: Ընկերության կազմում ընտրվել էին այնպիսի հասարակական-քաղաքական ու գիտական կարկառուն ղեմքեր, ինչպես Ժ. Կլեմանսոն, Դընի Քոշենը, Անատոլ Ֆրանսը, է. Լամին, Ժ. Լեյկը, Պ. Բենլըվեն, Լ. Ռենոն, Ս. Սարրոն, է. Ֆլանդենը, Կ. դ'Օնելը, Ֆ. Բուլյոնը, Ռընե Բինոնը և ուրիշներ⁵⁴: Գևորգ 5-րդին հղած 1916 թ. հուլիսի 21-ի հեռագրում նրանք գրում են. «Նորերս կազմակերպված «Ֆրանս-Հայկական» և հայ ազգի ֆրանսիացի բարեկամների հանձնաժողովն ուղղում է Ձերդ Սրբոթյան յուր ամենաչեղձ համակրության զգացմունքները, ի ղեմս քրիստոնեական հավատով և քաղաքակրթությամբ զորացած նահատակ և հերոսական Հայաստանի և հավատացնում Ձեզ այն անձնավորության մասին, որ տաժում է դեպի հայ դժբախտ և ազնիվ ազգի դատը»⁵⁵:

Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն, ի պատասխան հայ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի նամակի, գրում է. «Շատ զգացված եմ Հայկական Ազգային պատվիրակության շնորհավորանքներից: Խնդրում եմ հավատալ Ֆրանսիայի երախտագիտությանն ու բարեկամությանը բոլոր ժողովուրդների նկատմամբ, որոնք նրա հետ տանջվել և պայքարել են ազատության ու իրավունքի համար»⁵⁶: Իսկ հանրապետության նախագահ Պուանկարեն 1919 թ. փետրվարի 19-ին պատրիարք-կաթողիկոս Թերզյան Պողոս-Պետրոս ԺԳ-ին գրել է. «Հանրապետության կառավարությունը այժմ կատարված չի համարում այն պարտականությունը, որ իր վրա է ծանրանում հայ բնակչության նկատմամբ: Նա գիտի այն օգնությունը, որին սպասում են Հայաստանի և մանավանդ Կիլիկիայի գեղեցիկ երկիրը՝ վայելելու համար խաղաղության և ազատության բարիքները»⁵⁷:

Ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաների այս և նման

հայտարարությունները և 1916 թ. հոկտեմբերին կնքված համաձայնագիրը, ինչ խոսք, ոգևորում, թևավորում և հուսադրում էին կիլիկահայերին, շոյում նրանց ազգային զգացմունքները: Այսքանն էլ բավական էր, որ ազատության ու հայրենիքի կարոտ հայը, ծովի փրփուրներին փարվող նավաբեկյալի նման, հավատք ընծայեր, ապավիններ Կիլիկիայում «ասպետական» Ֆրանսիայի ներկայությանն ու պաշտպանությանը և վերադառնար իր հայրենի տունը: Խոսելով ստեղծված իրավիճակի և տուն վերադարձող խանդավառ հայերի մասին, Ա. Կեննյանը գրում է. «Հոգեբանական այս ընդհանուր հիփնոզեն հմայված կիլիկեցի տարագիր հայությունը՝ շատ հասկնալի էր ուրեմն, որ ուզեր թևեր առնել, թռչելու համար դեպի Կիլիկիա, ուր պիտի ապրիլ ազատ ու ինքնավար...»⁵⁸:

«Բայց պետք է խոստովանել, — գրում է պրոֆ. Լեոն, — որ 1919-ի առաջին կեսն ընդունակ էր այդպիսի տրամադրություններ ներշնչել ամենքին: Համաշխարհային բարերարությունների գունագեղ ամիսներ էին դրանք: Ինչեր և ինչեր չէին խոստանում հաղթողները և ինչեր չէին սպասում նրանցից:

Եկել էր ուրեմն հատուցման օրը, երբ մարդիկ պիտի նստեին թուրքահայի արյունը գնահատեին ու ստանային նրա փոխարժեքը: Հրաշք չէր այս մանավանդ Կիլիկիայի հայության համար, որ տակավին նոր նոր էր վերադառնում շորսամյա տարագրությունից: Իրականությունը դեռ թուրքական էր, վարչությունը դեռ գտնվում էր թուրք պաշտոնյաների ձեռքին, բայց ամենազխաժորն այն էր, որ Կիլիկիան մաքրված էր թրքական զորքերից և գրավված ֆրանսիական զորքերով, որոնց մի մասը կազմում էր Հայկական լեգեոնը, հայ քաղաքական ապագայի այն ամուր նեցուկը, որի վրա կարծում էին թե պիտի կառուցվեր ոչ միայն Կիլիկիայի, այլև ամբողջ թուրքաց Հայաստանի բախտը: Ինչ կարող էր, ուրեմն, լինել կիլիկահայը, իր ակնկալած բոլոր բարեբախտությունների Ֆրանսիայի վերաբերմամբ, բացի պաշտողից, սքանչողից»⁵⁹:

Ապագան, սակայն, հերքեց նման լավատեսությունը, երբ թվացող հրաշքը վերածվեց աղետի: Շուտով պատվեց ֆրանսիական գաղութարարների հայասիրական կեղծ դիմակը և կիլիկե-

⁵³ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 745, թ. 39:

⁵⁴ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 761, թ. 16—18:

⁵⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 762, թ. 5:

⁵⁶ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 845, թ. 32:

⁵⁷ Paillares M., նշվ. աշխ., էջ 340:

⁵⁸ Ա. Կեննյան, նշվ. աշխ., էջ 6—7:

⁵⁹ Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 210—

հայությունը դեմ հանդիման կանգնեց այն ահալոր վտանգին, որով հղի էր 1919 թ. համեմատական խաղաղությունը: Դրանով սկսվում է կիլիկիահայության մաքառումների, կենաց ու մահվան երկամյա փորձությունը:

* * *

Միջազգային քաղաքական կյանքում 1919 թ. սկզբներից նկատվող փոփոխությունները և հաղթողների միջև ծավալվող խուլ պայքարը շուտով հաստատեցին կիլիկիայում կացության անապահովությունն ու կարճատև խաղաղության անկայունությունը: Ավարի առյուծի բաժինը կորզելու նպատակով դաշնակիցների միջև սկիզբ առնող հակամարտությունները, մի կողմից, և դրանից խրախուսվող ու օրավուր աշխուժացող միլիտարիստ-քեմալական շարժումը, մյուս կողմից, պատճառ են դառնում կիլիկյան իրադարձությունների թավալվող վարպետանքը:

Որ քեմալական շարժման ծավալումն անխղիչորեն պայմանավորված էր դաշնակիցների միջև անվերջ խորացող հակասություններով, վկայում է անգլիական «Sunday Times» թերթը: «Մուստաֆա Քեմալը և ազգային շարժումը, — գրում է այն, — որի պարագլուխն է հանդիսանում նա, արդյունք է դաշնակիցների միջև տարածայնության ու անվճռականության: Ժամանակի ընթացքում թուրքերը տեսան, որ դաշնակիցները միմյանց հանդեպ գնալով դառնում են ավելի ու ավելի կասկածամիտ, իսկ նրանց բանակները զորացրումների շնորհիվ՝ ավելի ու ավելի պակաս զորեղ»⁶⁰:

Մ. Պալարեսը նույնպես գտնում է, որ դաշնակիցների ներող, անորոշ և անտարբեր վերաբերմունքը, ինչպես նաև զինագաղարի պայմանների իրականացման վիժեցումը ծնունդ տվեցին թուրքական ազգայնական շարժմանը: Եթե իրագործվեին նախատեսվող զինաթափման միջոցառումները, ապա Մուստաֆա Քեմալը ի վիճակի չէր լինի կարճ ժամանակամիջոցում կազմակերպելու զինվորական մեծ ուժեր⁶¹:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը լուրջ հակասություններ առաջ բերեց Անգլիայի ու Ֆրանսիայի միջև ինչ-

պես եվրոպական, այնպես էլ մերձավորարևելյան հարցերում: Ֆրանսիան երազում էր օգտվել Գերմանիայի նկատմամբ ձեռք բերած հաղթանակից և այն վերածել երկրորդական տերություն: Այդ քայլով Ֆրանսիան նպատակ էր հետապնդում մեկընդմիջտ վերջ տալ իրեն սպառնացող գերմանական վտանգին և եվրոպական մայր ցամաքում հաստատել իր գերիշխանությունը:

Անգլիան նույնպես շահագրգռված էր Գերմանիայի՝ որպես իր ախոյանի տնտեսական դիրքերի թուլացմամբ, բայց ոչ այն աստիճան, որ ձեռնտու լիներ Ֆրանսիային: Բավարար ուժ ներկայացնող Գերմանիան դեռևս պետք էր Անգլիային՝ անհրաժեշտություն դեպքում այն Ֆրանսիայի ձգտումներին հակադրելու համար:

Ոչ պակաս խորն էին հակասությունների արմատները նաև Մերձավոր Արևելքում: Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներով Անգլիան գերիշխող դիրքեր էր զբաղվել Արևելքում, Ֆրանսիային հատկացնելով երկրորդական դեր: Ֆրանսիան, որ կարոտ էր Անգլիայի պաշտպանությանը եվրոպական խնդիրներում, կարծես հանդուրժում էր Արևելքում ստեղծված ուժերի նման հարաբերակցությունը: Սակայն այն բանից հետո, երբ Ֆրանսիան Անգլիայից շտապավ ալկնկավող աջակցությունը, հարաբերությունները երեկվա դաշնակիցների միջև գնալով սրվեցին և ի վերջո թշնամական բնույթ ստացան:

Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքների ամփոփումից դժգոհ էր մնացել նաև Իտալիան: Նա շտապավ այն տերիտորիալ զիջումները, որոնք խոստացվել էին նրան պատերազմի տարիներին և, հետևելով Ֆրանսիայի օրինակին, հնարավոր բոլոր միջոցներով աշխատեց խոչընդոտել և ամլացնել իր իսկ կողմից ստորագրված միջազգային պայմանագրերը: Թուրքիայից կոնցեսիաներ ձեռք բերելու և տերիտորիալ կորուստը այդ եղանակով փոխհատուցելու ալկնկալությամբ Իտալիան ևս մերձեցավ ու բարեկամական կապեր հաստատեց քեմալականների հետ և նույնիսկ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք մատակարարեց իր երեկվա թշնամուն:

Նման քաղաքական լարված իրադրության պայմաններում է, որ լուրջ շրջադարձ է կատարվում ֆրանսիական կառավարություն արևելյան քաղաքականության մեջ: Արևելքում Անգլիայի տիրապետող դիրքերը խախտելու ու թուլացնելու նպատակով, Ֆրանսիան հրաժարվում է իր որդեգրած արևելյան քաղաքակա-

⁶⁰ Вестник НКВД РСФСР, 1920, № 9—10, стр. 124.

⁶¹ Sûu Paillares M., նշվ. աշխ., էջ 50, 54:

նությունից և առաջինը փորձում ձեռք մեկնել թուրք ազգայնականներին: Զիջումների ու սիրաբանումների ճանապարհով Ֆրանսիան ձգտում էր վերականգնել իր քաղաքական ու տնտեսական դիրքերը Թուրքիայում և քեմալականներին օգտագործել ինչպես Սովետական Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի դեմ: Ֆրանսիական «Matin» թերթը 1920 թ. փետրվարի 3-ի համարում կոչ էր անում սիրաշահել Թուրքիային և այն պատենել դարձնել բոլշևիկյան գաղափարների դեմ⁶²:

Մ. Պալարեսը հանգամանորեն խոսելով Կոստանդնուպոլսում և Արևելքում գտնվող ֆրանսիական սպաների տրամադրությունների ու հոգեբանության մասին, սպաներ, որոնց համար հոգևոր սնունդ է եղել թուրքամուլ գրողներ Պիեռ Լոթիի և Կլոտ Ֆարբերի վեպերը, ցավով է նշում ակնհայտ քաղաքական դիմափոխությունը: Այդ սպաները միայն մեկ բան էին երազում. սիրաշահել Թուրքիային, նրանից ստանալ մեծամեծ շահույթներ և հարվածել Անգլիային: Իսկ այդ նպատակին հասնելու համար, ըստ Պալարեսի, նրանք միջոցների մեջ խտրություն չէին դնում⁶³:

Պալարեսը ակնատես է եղել ու գրի առել խիստ հատկանշական, ֆրանսիական սպաների իսկական դեմքը մերկացնող հետևյալ զրույցին.

«Սա իմ սուրը պիտի նվիրեմ,— ասում է մի սպա,— եթե հարկ լինի, Մուստաֆա Քեմալին:

— Ո՞ւմ դեմ:

— Անգլիայի դեմ:

Ահա մեր գրավման զորամասերի սպաների մեծամասնության հոգեկան վիճակը»⁶⁴:

Ֆրանսիայի արևելյան քաղաքականության մեջ կատարվող փոփոխությունները, բնականաբար, անհետևանք չէին կարող թողնել Կիլիկիան: Ֆրանսիան, որը Կիլիկիան զավթելու և զաղութի վերածելու վաղեմի երազանքներ ուներ, պատերազմից հետո, հանձինս հայերի, իր դիմաց գտնում էր մի նոր ախոյանի:

Այդ մասին է խոսվում Ռուսաստանի Կոմկուսի Կենտկոմին, Վ. Ի. Լենինին, Համառուսաստանյան Կենտգործկոմին, ՌՍՖՍՀ-ի արտաքին գործերի կոմիսարին, Կոմինտերնի գործկոմին և պատճենը՝ Սապա-Փյուլյանին հասցեագրված հնչակյանների ինֆոր-

մացիոն գրությունում: Նրանում շեշտվում է, որ սկզբնական շրջանում ֆրանսիական իշխանությունները թեև կասկածանքով էին նայում հոծ զանգվածներով անապատներից վերադարձող և Կիլիկիայում կուտակվող հայերին, բայց որևէ վտանգ չտեսնելով, բարյացակամ էին նրանց հանդեպ: «Բայց հայ ժողովրդի բացահայտ ելույթից հետո,— կարգում ենք նույն փաստաթղթում,— որով պահանջվում էր թուրքերի կողմից երկրի բացարձակ կառավարման վերացումը և Կիլիկիայի կառավարմանն ու վերակազմավորմանը ակտիվորեն մասնակցելու իր ազգային ու քաղաքական իրավունքի ճանաչումը, ինչպես նաև հայկական պատվիրակության կողմից Փարիզի կոնֆերանսին ուղղված Փոքր Ասիայում տերիտորիալ պահանջների պաշտոնական ներկայացումից և հատկապես միացյալ Հայաստանի վրա ամերիկյան հոգատարության ցանկության մասին հայտարարությունից հետո, որի տերիտորիայի մեջ մտցված էր Կիլիկիան, Ֆրանսիայի վերաբերմունքը Կիլիկիայում հայերի նկատմամբ ընդունեց բոլորովին այլ, բացահայտ թշնամական ընթացք: Այս պահից իմպերիալիստական Ֆրանսիան հանձինս հայերի տեսնում էր քաղաքական ու տնտեսական առումով կազմակերպված ու գիտակից մի ուժի և վտանգավոր գործոնի, որը լրջորեն կարող էր խոչընդոտել նրա զավթողական զաղութարարական քաղաքականությունն ու դիտավորությունները Կիլիկիայում»⁶⁵: Սվ, շարունակում են նամակի հեղինակները, ֆրանսիական իշխանությունները այսուհետև ամեն կերպ աշխատում են խանգարել հայ գաղթականների կենտրոնացմանը Կիլիկիայում, զանգվածաբար զինաթափում են հայ բնակչությանը, անդամահատում ու քայքայում Հայկական լեզեոնը և այլն:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում ֆրանսիական կառավարության և հայ Ազգային պատվիրակության միջև կնքված հայտնի համաձայնագրից ելնելով, Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի կողմից ստորագրված ու 1919 թ. փետրվարի 12-ին մեծ տերություններին հանձնված հողային պահանջների մեջ, ի թիվս հայկական նահանգների, մտցվել էր նաև Կիլիկիան: Սա Ֆրանսիայի համար տհաճ անակնկալ էր: Հայերի կողմից Կիլիկիայի պահանջը, ինչպես երևում է բազմաթիվ փաստերից, խիստ զրժգոհություն է առաջ բերել ֆրանսիական կառավարական շրջանակներում:

⁶² *St' u* Бюллетень НКВД РСФСР, 1920, № 4, էջ 12:

⁶³ *St' u Paillares M.*, նշվ. աշխ., էջ 65—85:

⁶⁴ *Paillares M.*, նշվ. աշխ., էջ 85:

⁶⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 3, թ. 29—30:

Այստեղ հարկ ենք համարում կատարել հետևյալ լրացումը: Եվրոպա մեկնող՝ Հայաստանի հանրապետության պատվիրակության նախագահին տրված հրահանգից երևում է, որ Հայաստանի հանրապետությունը ներկայացվող հողային պահանջների մեջ չի մտցրել Կիլիկիան⁶⁶: Պատվիրակության ղեկավար Ա. Ա. հարոնյանի ղեկուցագրերում միաժամանակ խոսվում է այն պատճառների մասին, որոնք հարկադրել են նրան խախտելու վերոհիշյալ հրահանգը և պահանջելու նաև Կիլիկիան: Ա. Ա. հարոնյանը իր № 60 անթվական ղեկուցագրում այսպես է հիմնավորում այն.

«Ինչպես տեսնում եք գրածիցս, նաև մեմորանդումից, որ ներկայացրել ենք տերություններին, ես Կիլիկիայի խնդրում պատասխանատվություն եմ հանձն առել Ձեր առջև և խախտել Ձեր ինձ տված հրահանգը մեր հողային պահանջների մասին, ուր Կիլիկիան չկար: Նախարարապետին գրածս մասնավոր նամակում ես առաջ եմ բերել այն ծանրակշիռ պատճառները, որոնք ինձ ստիպեցին այս ծանր պատասխանատվությունը հանձն առնել Ձեր հանդեպ: Այժմ վերստին անդրադառնում եմ նույն խնդրին.

1. Թուրքահայ բոլոր ներկայացուցիչները և ժողովուրդը առանց Կիլիկիայի Հայաստան ըմբռնել չեն ուզում և այս հայացքը վճռապես բաժանում է Պողոս փաշան: Կիլիկիան բռնելու տենչն ու կամքը ամենքի մեջ այնքան ուժեղ է, որ նրանք պատրաստ են ի՛նչև պառակտումը գնալ կովկասյան հայ հանրապետության հետ, եթե մենք չհամաձայնեինք: Այս վերջին հանգամանքը ես համարում եմ, անշուշտ դուք էլ ինձ հետ, որպես մեծագույն հարված մեր դատին: Խոսքս պառակտումի մասին է:

2. Կիլիկիայից հրաժարվելով, մենք փակում ենք այն լայն դուռը Ամերիկայի առաջ, որով այդ պետությունը, եթե համաձայնեի, պիտի իր ցանկությունը հեշտությամբ ու լիապես կատարեր հանդեպ Հայաստանի և այն անմիջապես: Սև ծովի ափերը տակավին նավահանգիստ չունեն շինած և երկրի խորքի հետ երկաթուղով կապված չեն:

3. Կիլիկիայից հրաժարվելով, մենք այն թողնում ենք Ֆրանսիային, որ իր կողմից կցում է այն Սիրիայի հետ, տանելով իր

հետ այն ստվար հայությունը, որ այժմ հարավից, Դամասկոսից, Հալեպից խումբ-խումբ այնտեղ է վազում: Անցյալ օրը Ֆրանսիական հրամանատարը մեզ գրում էր, որ ամեն շաբաթ հասնում են 2—3 հազար հայեր և արդեն Ադանայում հայերի թիվը հասնում է 18 հազարի:

4. Իսկպես Հայաստանի ազատված ազգաբնակչության մի խոշոր մասը հենց կիլիկեցի է, կամ սուետիացի և քաղաքական ոչ մի պայման, մասնավանդ Ֆրանսիական հովանու տակ, նրանց Կիլիկիայից չի քշի դեպի խոպան ու ավեր Հայկական լեռնաստանը: Պոլսի և Չմյուռնիայի հայությունը ստվար մասը, ինչպես և եգիպտահայ գաղութը շտապում է Կիլիկիայից հողեր գրավել:

Հովանավոր պետությունը Կիլիկիայից դուրս բուն Հայաստանում ուշադրության արժանի և իր ճիգերին համապատասխան ոչինչ չի գտնում, որի համար հանձն առնել ֆինանսական դժարություններ:

Ահա թե ինչու ես ստիպված եղա համակերպվել...»⁶⁷:

Որ Կիլիկիայի պահանջը դժկամությամբ և անզամ թշնամաբով է դիմավորվել Ֆրանսիայում, երևում է Ա. Ա. հարոնյանի բազմաթիվ ղեկուցագրերից: «Ֆրանսիական քաղաքականությունը, — գրում է նա, — տարաբախտաբար մեզ հակամարտ է: Կովախրնձորը Կիլիկիան է: Ֆրանսիան այժմ գրավում է Կիլիկիան մեր զորքերով (ուժ հազարանոց ֆրանսիական բանակի 5000-ը հայեր են, երեք հազարը միայն ֆրանսիացի, որ գործում են Կիլիկիայում) ու վճռապես հայտարարում է, թե Կիլիկիան Սիրիայի մի անբաժան մասն է և հայերը ոչ մի իրավունք չունեն»⁶⁸:

1919 թ. փետրվարի 26-ին Ա. Ա. հարոնյանը և Պողոս Նուբարը հրավիրվում են Գերագույն խորհուրդ՝ ներկայացնելու հայերի հողային պահանջները: Ինչպես գրում է Հայաստանի հանրապետության ներկայացուցիչը, իր ու Պողոս Նուբարի ելույթները և ներկայացրած հողային պահանջները բարյացակամ ընդունելություն են գտել Գերագույն խորհրդում, բացառությամբ ֆրանսիական ներկայացուցչի: Ահա թե ինչ է գրում Ա. Ա. հարոնյանը այս առթիվ. «Համեմատաբար զուսպ էր Ֆրանս. արտ. նախարար Պիշոն: Ձեզ գրել եմ, որ ֆրանսիական կառավարությունը և մասնավորապես Quai d'Orsay-ն շատ դժգոհ են մեզանից Կիլիկիան պահանջելու համար, որը նրանք կը կամենային կցել

⁶⁶ ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 11:

⁶⁷ ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 154—155:

⁶⁸ Նույն տեղում, թ. 154:

իրենց հովանավորած Սիրիային: Կիլիկիայի խնդիրն է այն ցրր-տության պատճառը, որ տիրում է ֆրանսիական պաշտոնական ու կիսապաշտոնական, ինչպես և գաղութային մամուլում»⁶⁹:

Հատկանշական է, որ հաջորդ օրն իսկ ֆրանսիական մամուլը հակահայկական հոգվածներ է տպագրում, իսկ «Temps»-ը իր առաջնորդողը նույնիսկ վերնագրում է «Հայկական կայսրությունը» և հայերին մեղադրում գաղութատիրության մեջ⁷⁰:

Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի գրաված դիրքի մասին է խոսում «Temps»-ի խմբագրապետ Հերպերտի զրույցը Ա. Ահարոնյանի հետ: Զրույցը հիմնականում բնթացել է Կիլիկիայի հարցի շուրջ, որի ժամանակ խմբագրապետը ցանկացել է իմանալ Ահարոնյանի կարծիքը՝ Կիլիկիան Հայաստանի սահմանների մեջ մտցնելու առթիվ: Ա. Ահարոնյանը բազմապիսի փաստերով ապացուցել է Կիլիկիայի՝ Հայաստանին կցելու անհրաժեշտությունը, մինչդեռ խմբագրապետը մի քանի անգամ շեշտել է, որ այդ հարցում հայերին արգելք կհարուցի Ֆրանսիան, որը «...դարերի ի վեր ահագին շահեր ունի Կիլիկիայում, իսկ դուք՝ հայերդ... Շատ ցավում եմ և ես, որ Հայաստանը տակավին չկազմակերպված՝ իմպերիալիստական հովեր է առնում»⁷¹:

Հայաստանի հանրապետության պատվիրակության ղեկավարի 1919 թ. հուլիսի 28-ի զեկուցագրում՝ ուղղված արտաքին գործերի մինիստր Պ. Ս. Տիրգրանյանին, նորից շեշտվում է Կիլիկիան Սիրիային միացնելու և այս երկու երկրամասերի մանդատը ձեռք բերելու Ֆրանսիայի ձգտումը: Խոսելով ֆրանսիական պահպանողական մամուլի («Temps», «Echo de Paris» և այլն) վերաբերմունքի և Հայաստանի հոգատարության հարցի մասին, Ա. Ահարոնյանը շարունակում է. «Բայց հակառակ դեպքում եթե Հայաստանի մանդատի խնդիրը նորից դառնա վիճելի Ամերիկայի հրաժարումով, Quai d'Orsay-ն նորից պնդելու է 1916 թվի դաշնագրով իրեն վերապահված իրավունքների վրա և պիտի պահանջի գուցե Կիլիկիայի կցումը Սիրիային ամբողջն իր մանդատի տակ: Այս հավանական հեռանկարն է պատճառը, որ կիսապաշտոնական «Temps»-ը և մի քանի այլ պահպանողական օրգաններ ժամանակ առ ժամանակ մեջտեղ են նետում 16 թվի դաշնագիրը: Ֆրանսիայի հինավուրց քաղաքակրթական իրավունք-

ներն ու միսիան Արևելքում, մյուս կողմից աշխատելով թուրքերին շատ անհաճո լլինել»⁷²:

Ա. Ահարոնյանը միաժամանակ դիտել է տալիս, որ Ֆրանսիայի դժգոհության միակ պատճառը Կիլիկիան չէ, այլ նաև Հայաստանի հոգատարության հարցը: «Ի դեպ է այստեղ ասել,— գրում է նա,— որ պաշտոնական Ֆրանսիայի մեր հանդեպ ցույց տված ցրտության խոշոր պատճառը միայն Կիլիկիան չէ, այլ մանավանդ այս assistanse-ի հարցը: Թե ինձ և թե փաշային ականավոր ֆրանսիացիք կիսապաշտոնապես հասկացրին շատ հաճախ, որ Ֆրանսիան շատ կուզեր Հայաստանի հովանավոր assistanse լինել ու շատ դժգոհ են Ամերիկային տված մեր նախապատվությունից»⁷³:

Սակայն Ա. Ահարոնյանի պնդումը, թե Ֆրանսիայի նման դիրքորոշումը պայմանավորված է մանավանդ Հայաստանի հոգատարության հարցով, մեր կարծիքով այնքան էլ հիմնավոր չէ: Ինչպես երևում է Պողոս Նուբարի Զավեն պատրիարքին գրած 1919 թ. ապրիլի 22-ի նամակից, Ֆրանսիան համաձայնվել է վերցնել միայն Սիրիայի և Կիլիկիայի հոգատարությունը: «Ֆրանսսա որոշած է, — շարունակում է Պողոս Նուբարը, — պահանջել հոգատարությունը Սուրիո և հավանաբար միայն Կիլիկիո, անջատելով դայն Հայաստանի միացյալ մասեն— անջատում, որուն դեմ մենք միշտ բողոքեցինք, պահանջելով ամբողջական Հայաստան մը»⁷⁴: Ապա ավելացնում է, որ ստեղծված իրավիճակը հարկադրում է դիմել ԱՄՆ-ի հոգատարությանը:

Ա. Թյուրապյանը ևս, խոսելով Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մեջ կատարվող շրջադարձի մասին, պնդում է, որ այն իբր պայմանավորված էր հայերի՝ Կիլիկիայի հոգատարությունը ԱՄՆ-ին տալու հարցի հետ: «Ամերիկյան մանդատի ետևեն վազելով,— գրում է նա,— ֆրանս-քեմալական համաձայնության ծնունդ տվինք, այս ալ բնական էր, քանի որ Ֆրանսսա Կիլիկիա կրնար մնալ համաձայնություն մը գոյացնելով կամ հայերու և կամ թուրքերու հետ և քանի որ հայերը ամերիկյան մանդատը կը պահանջեին, Ֆրանսսայի ուրիշ բան չէր մնար բայց եթե համաձայնիլ թուրքերու հետ՝ գոնե իր ապագա շահերը ա-

⁶⁹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 244:

⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

⁷¹ Գ. Լազյան, նշվ. աշխ., էջ 257:

⁷² ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 20—21:

⁷³ Նույն տեղում, գ. 193, թ. 246:

⁷⁴ Հուշամատյան մեծ եղևնի, էջ 1017:

պահովելու և Սուրբիո սահմանակից Ամերիկա մը շտեղծելու համար»⁷⁵:

Դուրս է գալիս, որ հայերն են Ֆրանսիայի՝ դեպի քեմալականները հակվելու հիմնական պատճառը, մի սխալ տեսակետ, որ անուղղակիորեն մեզ տանելու էր Ֆրանսիայի մերձավորարեւելյան քաղաքականության արդարացմանը: Հարկ չենք համարում հանգամանորեն կանգ առնել Քյուրապյանի՝ մեզ համար անընդունելի տեսակետի քննարկման վրա, քանի որ դեպքերի հետագա շարադրանքը ինքնաբերաբար մերժելու է այն:

Այսպիսին էր ֆրանսիական կառավարության դիրքորոշումը Կիլիկիայի հարցում, այն Ֆրանսիայի, որը պատերազմի ծանր տարիներին, երբ ի թիվս այլ ժողովուրդների, կարոտ էր նաև հայերի աջակցությանը, հանդիսավոր խոստում էր տալիս պատերազմի հաղթական ավարտից հետո բավարարելու կիլիկեհայերի ազգային բաղձանքները և Կիլիկիայի շրջանակներում նրանց ինքնավարություն շնորհել:

Այժմ, երբ պատերազմն ավարտված էր, երբ հայերն այլևս պետք չէին Ֆրանսիային, ուրեմն կարելի էր և չվերհիշել անցյալում տրված խոստումները: Արդյոք այդ մասին չի՞ վկայում Մ. Պայարեսի հետևյալ խոստովանությունը. «Պատերազմի ընթացքում, երբ կարիք ունեինք ավելի փոքրերին, քաջալերանքներ, խոստումներ էինք շռայլում, հանձն էինք առնում փրկելու բոլոր ճնշված ժողովուրդներին... Բայց ով է հիշում այսօր այն»⁷⁶: Իսկ նման խոստումներ, ինչպես նկատեցինք, քիչ չէին շռայլվել:

Սկզբում Կիլիկիան զավթելու ու գաղութացնելու, ապա այն քեմալականներին թողնելու ֆրանսիական կառավարության հեղհեղուկ ու երկերեսանի քաղաքականությամբ էլ պետք է բացատրել Ֆրանսիայի արևելյան քաղաքականության մեջ կատարված բացահայտ դիմափոխությունն ու կտրուկ շրջադարձը, քաղաքականություն, որն իր սուր ծայրով ուղղված էր Կիլիկիայում հայ տարրի ուժեղացման, երկրամասի հայացման, հետևաբար և Կիլիկիայի ինքնավարության դեմ: Կիլիկիայում տեղի ունեցող հետագա իրադարձությունները, որոնք ողբերգական հետևանքներ ունեցան կիլիկեհայության ճակատագրի համար, անխզելիորեն պայմանավորված են և արդյունք են թուրք ազգայնականների

նկատմամբ Ֆրանսիայի սնուցած թողտվության, իսկ հետագայում նաև սիրաշահման քաղաքականության:

Կիլիկիա մուտք գործելու առաջին իսկ օրվանից դաշնակից զորքերի հրամանատարությունը շատ քիչ ուշադրություն դարձրեց հայերենի վերադարձող հայերի ֆիզիկական ապահովությանը: Կիլիկեհայերի բազմաթիվ և բազմապիսի դիմումները, խնդրագրերը և բողոքները՝ լրջորեն զբաղվելու իրենց անվտանգության հարցերով, փաստորեն սկզբից ևեթ անուշադրության մատնվեցին:

Մյուս կողմից, Կիլիկիան գրաված իշխանությունների հանցազործ անտարբերությամբ ու բացահայտ թուլություններով քաջալերված թուրք ազգայնականները օրըստօրե ակտիվացնում են իրենց գործունեությունը: Նրանք դաշնակից զորքերի հրամանատարության աչքերի առջև, օրը ցերեկով, զինում են թուրք ազգաբնակչությանը, դրսից ստանում նյութական ու բարոյական զգալի օգնություն և Կիլիկիա վերադարձող հայերի դեմ ուղղված լայն պրոպագանդա մղում: Պոլ Դյու Վեոն իր գրքում դետեղել է Մահմուդ իմամի՝ թուրք բնակչությանը ուղղված հետևյալ կոչը, որն ամբողջությամբ մատնում է ազգայնական շարժման բուն նպատակները. «Էնվեր փաշան Կոնյայից գալիս է Կիլիկիան վերանվաճելու. դուք գիտեք հայ շների դավաճանությունը: Էնվերը կհաղթի նրանց: Օգնեցեք նրան. խեղդեցեք բոլոր քրիստոնյաներին, ոչ ոնք ոչ մի զենք չունեն. չխնայել ոչ երեխայի և ոչ էլ կանանց»⁷⁷:

Հակառակ դաշնակիցների և թուրքական կառավարության միջև ստորագրված մի շարք փաստաթղթերի, թուրքական պարտված բանակները, անկասկած հետին նպատակներով, չզինաթափվեցին և լրիվ սպառազինությամբ ու հանդերձանքով ամրացան Անատոլիայի տարբեր շրջաններում: Միայն Կիլիկիայում, ինչպես է. Բրեմոնն է վկայում, թուրքական բանակների նահանջի ժամանակ թուրք ազգաբնակչությանն է վաճառվել մոտավորապես 25 հազար մարտական հրացան⁷⁸: Մի այլ տեղում, նույն հեղինակը խոսելով 1919 թ. փետրվար-մարտ ամիսների հուզում-

⁷⁵ Ա. Քյուրապյան, նշվ. աշխ., էջ 15:

⁷⁶ Paillares M., նշվ. աշխ., էջ 335:

⁷⁷ Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 74:

⁷⁸ St' u Brémont E., նշվ. աշխ., էջ 6:

ների մասին, գրում է, որ թուրքերը և հայերը աչքերով չափում էին միմյանց, առաջինները՝ զինված, իսկ մյուսները՝ անզեն⁷⁹։

Ժամանակակիցները միաժամանակ խոսում են ֆրանսիացի սպանների վարած անառակ, ցոփ ու շվայտ, «հազար ու մի գիշերների» կյանքի մասին, որը վերջին հաշվով բարոյալքում ու կազմալուծում էր բանակը⁸⁰։ Այդ գործում անմասն չէին մնում նաև թուրքերը, որոնք միջոց չէին խնայում այդ սպաններին գրավելու, կաշառելու և սիրաշահելու համար։ Խիստ ուշագրավ են Մ. Պայարեսի վկայությունները այդ այսպես կոչված «հարեմական քաղաքականության» մասին։ «Փաշաները, բեյերը, — գրում է նա, — լայնորեն բացեցին իրենց դռները և քողազերծ ներկայացրեցին իրենց քնքուշ, գայթակղեցնող խանութներին մեր երիտասարդ սպանների ընշաքաղց հայացքներին»⁸¹։ Եվ կարծես Պայարեսին լրացնելու նպատակով Գ. Էպս. Պալաքյանը գրում է. «Ճիհատի այս կրոնամոլ առաքյալները բացին հարեմներու ամրափակ վանդակավոր պատուհաններն ու դռները, շպարով, սնկույրով և անուշահոտությամբ պարուրված թրքուհիները արձակեցին ամեն ազգի օտար սպաներու վրա, տանելով դուրին և հեշտ հաղթանակ»։ Եվ ստացվեց այնպես, «որ թուրք մայրաքաղաքը մտնող հաղթականները շուտով մոռացան թե իրենք պատիժի համար եկած էին թե վարձատրության...

Մինչդեռ թուրքերը ապշահար կը սպասեին իրենց տրվելիք արդար պատիժը կրելու, երբ տեսան թե փոքր ազգերու ազատության համար կովող զինվորները ավարի էին անցած, հետզհետե քաջալերված, շփացան, այն աստիճան, որ փոխանակ զինաթափ ըլլալու, նոր զենքեր ստացան գաղտնապես, երբ անգլիական բանակը Սուրիան կը թողուր ֆրանսիացիներուն»⁸²։

Անհրաժեշտ իրողություն է նաև այն փաստը, որ կիլիկյան իրադարձությունների վրա խիստ բացասաբար անդրադարձավ վարչական հին ապարատի պահպանումը իր թուրք պաշտոնյաներով։ Հակառակ թուրք հեղինակների պնդումներին, սուլթանական նախկին պետական հիմնարկությունները ամբողջությամբ մնացին անձեռնմխելի։ Կատարված միակ փոփոխությունն այն էր, որ դավառական կառավարիչների կողքին նշանակվել էր մե-

կական ֆրանսիացի սպա, որոնց հանձնարարված էր հսկելու նրանց գործունեությունն ու ֆինանսները և ապահովելու դաշնակից զորքերի անվտանգությունը⁸³, մի բան, որ այդպես էլ մինչև վերջ չհաջողվեց իրականացնել։ Գրավող իշխանությունների անվճռականության հետևանքով պետական այդ հիմնարկությունները շուտով վերածվեցին դաշնակիցների, և առաջին հերթին վերադարձող հայերի դեմ ուղղված, դավադրությունների օջախների։ Ոստիկանությունը (ժանդարմերիան) նույնպես գտնվում էր թուրք սպանների հսկողության տակ՝ Հաշիմ բեյի ընդհանուր հրամանատարությամբ։ Եվ միայն Հաշիմ բեյի իսկական դեմքը քողազերծելուց հետո ժանդարմերիայի պետ է նշանակվում ֆրանսիացի կյուպենը։

Թուրք պաշտոնյաները, վալիից մինչև վերջին կատարածուն, շարաշահելով իրենց դիրքն ու հեղինակությունը, ամեն կերպ արգելակում էին երկրամասում կյանքի նորմալացմանը, հարկերի ու տուրքերի կանոնավոր գանձմանը։ Նրանք տարագիր հայերից պահանջում էին 1919 թ. հարկերը, որոնք թուրքական կառավարության հատուկ որոշմամբ, ազատված էին մեկ տարվա հարկատվությունից։ Շատ հաճախ թողնելով Կիլիկիան փախչում ու միանում էին քեմալականներին⁸⁴։

Օգտվելով ստեղծված այսպիսի նպաստավոր իրադրությունից, 1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին թուրք ազգայնականները կազմակերպում են մի շարք խռովություններ ու հարձակումներ ֆրանսիական կայազորների և, մասնավորապես, հայ խաղաղ բնակչության վրա։ Այնուհանդերձ, կյանքը Կիլիկիայում մինչև 1919 թ. վերջերը, ինչպես վկայում է է. Բրեմոնը, կատարյալ հանգիստ ու ապահով էր⁸⁵։

Այս փաստը լավագույն վկայությունն է այն բանի, որ ազգայնական շարժումը ամբողջ 1919 թ. ընթացքում իրենից ներկայացրել է աննշան մի ուժ և որ ազգայնականների առանձին ելույթները, որոնց մասին խոսք կլինի ստորև, արդյունք էին ոչ այնքան ազգային շարժման հզորության, որքան գրավող իշխանությունների անտարբերության ու անվճռականության։

Կիլիկիայում տեղի ունեցող նույն իրադարձությունների մասին խոսող Ա. Ժելտյակովի մոտ նկատելի է իրականության չը-

⁷⁹ St' u Brémond E., նշվ. աշխ., էջ 17։

⁸⁰ St' u Ա. Արանասյան, նշվ. աշխ., էջ 27։

⁸¹ Paillares M., նշվ. աշխ., էջ 120։

⁸² Գ. Պալաքյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 249—250։

⁸³ St' u Brémond E., նշվ. աշխ., էջ 16 և Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 73։

⁸⁴ St' u Brémond E., նշվ. աշխ., էջ 20—21։

⁸⁵ St' u Brémond E., նշվ. աշխ., էջ 14։

պատճառաբանված ու շհիմնավորված գունազարդում և շափազանցում: Խոսելով 1919 թ. հունվարի սկզբներին Դյորթ-Յուլի վրա կատարված հարձակման մասին, նա գրում է, թե իբր ազգայնականներին հաջողվել էր գրավել քաղաքը և ունչացնել ֆրանսիական կայազորը⁸⁶, որը, ինչպես կտեսնենք, իրողության բացահայտ խեղաթյուրում է:

Թուրքական ազգայնական շարժման գունազարդման դիտավորություններ նկատելի են նաև Ն. էֆենդիևայի գրքում, որը իբր մտքերի հիմնավորման համար մեջբերել է Ե. Լուղշուվեյտի դիսերտացիայից հետևյալ հատվածը, որը մեր կարծիքով զուրկ է պատմականությունից. «Կիլիկիայում սկզբում 10000, իսկ քիչ անց 30000 զինված անզլիացիների և հնդիկների դեմ շտեմնված հերոսությամբ պայքարում էին մի բուռ՝ թվով 3300 պարտիզան»⁸⁷: Անվիճելի է, որ նման ընդհարումներ անզլիական զորամասերի և «պարտիզանների» միջև, այն էլ «հերոսական», տեղի չեն ունեցել:

1918 թ. դեկտեմբերի 29-ի, լույս 30-ի գիշերը Դյորթ-Յուլի նախկին կայմակամի նախաձեռնությամբ մի գաղտնի ժողով է գումարվում, որտեղ քննարկվում են թուրք երիտասարդությանը զինելու և հայերի դեմ պայքարելու նպատակով զորախմբերի ըստեղծման հարցերը: Ժողովը միաժամանակ դիմում է օսմանյան իշխանություններին և զենք ու զինամթերք պահանջում: Այս նույն օրերին մեծ քանակությամբ զենք է բաժանվում թուրք բնակչությանը: Միայն Օսմանիեի մուխթարի միջոցով թուրք գյուղացիությանն է բաժանվում 400 հրացան և անհրաժեշտ քանակությամբ զինամթերք:

1919 թ. հունվարի 1-ին թուրք զինված հրոսակները հարձակում են գործում Դյորթ-Յուլից մեկ-երկու կմ հեռավորության վրա զրոսանքի դուրս եկած հայ լեգեոնականների վրա և վիրավորում նրանցից շորսին: Դրան հաջորդում է Դյորթ-Յուլի և Պայասի հայերի պաշարումն ու զնդակոծումը: Հունվարի 12-ին նրանք գրավում են Դյորթ-Յուլի դիմացը գտնվող սարալանջը, խրամատներ փորում, կտրում որբանոցի ջուրը և կրակ բացում ֆրանսիական կայազորի վրա⁸⁸:

1919 թ. մարտի սկզբներին բացվում է մի այլ դավադրություն: Մարտի 3-ին ֆրանսիական իշխանությունները Ադանայում ձերբակալում են ժանդարմերիայի հրամանատար Հաշիմ բեյին: Հետաքննությունից պարզվում է, որ վալի Նազըմ բեյի և Հաշիմ բեյի գլխավորությամբ ու Կոստանդնուպոլսից ստացված ցուցումներով ստեղծվել էր ընդհատակյա մի կազմակերպություն, որը մայրաքաղաքից ստացվող հրահանգով պիտի գլխավորեր փետրվարի 21-ին նախատեսված ապստամբությունը: Այն պիտի ընդգրկեր ողջ Կիլիկիան և հարակից շրջանները: Այդ նպատակով ապստամբության գավառական կենտրոնները հեռախոսային գաղտնի գծերով կապվել էին Հաշիմ բեյի հետ: Մի այլ գաղտնի հեռախոսալարով վալին կապ է պահպանել Կոստանդնուպոլսի հետ: Ստեղծվել էին զենքի ու զինամթերքի մի քանի պահեստներ: Թուրք գյուղացիությանը բաժանված զենքի մասին են վկայում այն արձանագրությունները, որոնք հայտնաբերվել և գրավվել էին ֆրանսիական իշխանությունների կողմից⁸⁹: Սակայն մեզ համար անհայտ պատճառներով ապստամբությունը փետրվարի 21-ին տեղի չի ունենում:

Եթե, այսպիսով, վերացվում ու վնասազերծվում է Կիլիկիայի դավադրությունը, այնուամենայնիվ, թուրք ազգայնականներին հաջողվում է կազմակերպել հալեպահայերի 1919 թ. փետրվարի 28-ի ջարդը: Ինչպես «Ժամանակ» թերթն է գրում, դեռևս դրանից առաջ «էլ Արաբ» թերթը տպել էր հայերի դեմ ուղղված գրգռիչ մի հոդված, որը արգելվել էր անզլիական իշխանությունների կողմից⁹⁰: Այս փաստը ինքնին խոսում է այն մասին, որ Հալեպի ջարդը երկար ժամանակ էր նախապատրաստվել և ինչոր պատահական միջադեպի հետևանք չէր:

Ինչպես երևում է Ա. Չոպանյանին ուղղված «Հուսաբեր» թերթի խմբագրության նամակից⁹¹, որոշված է եղել ջարդն ու կողոպուտը սկսել կեսօրին, երբ հայերի մեծամասնությունը գտնվելիս կլինեի քաղաքի շուկայում ու փողոցներում: Բայց մի կոմիսարի անհամբերությունը, ինչպես կարդում ենք նույն նամակում, ազդանշան է դառնում ջարդերի ավելի վաղ սկսելուն: Զարդերին մասնակցում են ինչպես ամբոխը, այնպես էլ կանոնավոր զոր-

⁸⁶ St'a Желтяков А. Д., նշվ. դիս. աշխ., էջ 134:

⁸⁷ Эфендиева Н. З., նշվ. աշխ., էջ 42:

⁸⁸ St'a Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 68:

⁸⁹ St'a Brémond E., նշվ. աշխ., էջ 16—17, Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 73—74:

⁹⁰ St'a «Ժամանակ» լրագիր, 24-ը մարտի 1919:

⁹¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 19, Թ. 1—4:

մոնը խոստանում է պատժել ոճրագործներին և միջոցներ ձեռնարկել հրոսակախմբերին սանձելու համար:

1919 թ. առավել կարևոր իրադարձություններից մեկը, որը մեկ անգամ ևս բացահայտեց ֆրանսիական կառավարության իսկական դեմքը և որը խոր հիասթափություն պատճառեց վերապրող հայությանը և սառեցրեց նրա եռանդը, անկասկած, Հայկական լեզեոնի հետ խաղացված խաղն էր: Հայտնի է, որ դեռևս պատերազմի տարիներին կայացած համաձայնությամբ, Հայկական լեզեոնը Կիլիկիայում պիտի աճեր, բազմացվեր ու փաստորեն դառնար ինքնավար Կիլիկիայի հայկական բանակի կորիզը: Այդ իսկ պատճառով էլ կիլիկեհայությունը մեծ հույսեր էր կապում Հայկական լեզեոնի հետ և նրան ապավինում իր կյանքը: Սակայն փոփոխված իրադրության պայմաններում Հայկական լեզեոնը, ինչպես հայ ժողովուրդն ընդհանրապես, այլևս պետք չէին Ֆրանսիային: Այն արդեն կատարել էր իր գործը և այժմ նրա գոյությունը Կիլիկիայում ֆրանսիական գաղութարարների շահերի տեսակետից ոչ միայն համարվում էր ավելորդ, այլև վտանգավոր: Ֆրանսիայի և քեմալականների մերձեցման շահերը պահանջում էին հեղինակազրկել լեզեոնը և հող նախապատրաստել նրա աստիճանական զորացրումն արդարացնելու համար: Եվ Հայկական լեզեոնն անկարգապահության ու դավաճանության մեջ մեղադրելու, հետևաբար և զորացրելու առիթը շուտով մեծ վարպետությամբ նյութվում է ֆրանսիական հրամանատարության կողմից:

Նախ ֆրանսիական փոքրիկ մի ջոկատ 1919 թ. հունվարի սկզբներին սկսում է հետապնդել յոթ հայ լեզեոնականների, որոնք դժգոհ Կիլիկիայում Ֆրանսիայի վարած քաղաքականությունից ու հայ լեզեոնականների նկատմամբ ֆրանսիական հրամանատարության կիրառած խտրականությունից, հրաժարվում են ծառայել Ֆրանսիայի թրքամուլ քաղաքականությանը և բարձրանում են լեռները: Հիմք ընդունելով շրջակա թուրքական գյուղերի գյուղապետների ամբաստանություններն այն մասին, թե իբր լեզեոնականները կողոպտել են թուրքական գյուղերը և անպատվել թուրք կանանց, ֆրանսիական ջոկատը Ալեքսանդրետից հարավ գտնվող Հովուտ կոչվող վայրում պաշարում է նրանց: Ինչպես ժամանակակիցներն են վկայում, ֆրանսիական հրամանատարությունը խոստացել էր ներել լեզեոնականներին, եթե վերջիններս առանց դիմադրության անձնատուր լինեին: Լեզեո-

նականների անձնատուրությունից հետո ֆրանսիական հրամանատարությունը, դրժելով իր իսկ խոստումը, նախ հարկադրում է նրանց փորել իրենց գերեզմանները և ապա գնդակահարում բոլորին:

Որոշ ժամանակ անց, ինչպես վեհուն է գրում, այս բոլորից դժգոհ լեզեոնի Ալեքսանդրետում գտնվող շորրորդ գումարտակը ըմբոստանում է ֆրանսիական հրամանատարության դեմ և վերջիններս հարկադրված են լինում զորացրելու այն, քանի որ նրա վրա հույս դնել այլևս չէր կարելի⁹⁷:

Քանի որ Հայկական լեզեոնի վստահելիության և զորացրման հարցերը սուբյեկտիվ ու միակողմանի ձևով են ներկայացվել և գնահատվել պատմագրության մեջ, հարկ ենք համարում հանգամանորեն քննարկել Հայկական լեզեոնին և հայ լեզեոնականին վերագրված անկարգության հարցը և զորացրման հիմնական պատճառները:

Լեզեոնական և դեպքերին ժամանակակից Տ. Պոյաճյանը այսպես է նկարագրում Ալեքսանդրետի միջադեպը: 1919 թ. փետրվարի 16-ին մի խումբ հայ լեզեոնականներ քաղաքի սրճարաններից մեկում վեճի են բռնվում ֆրանսիական բանակում ծառայող ալժիրցի զինվորների հետ: Վերջիններս ուրախացող հայ լեզեոնականներից պահանջում են դադարեցնել հայկական երգերը և փոխարենը արարական երգեր երգել: Երբ լեզեոնականները հրաժարվում են կատարել նրանց պահանջը, ալժիրցի զինվորները հարձակվում են նվագողների վրա և ջարդում գործիքները: Սա էլ, ի վերջո, տեղիք է տալիս ընդհանրման: Այնուհետև ալժիրցի զինվորները հեռանալով սրճարանից, դարանակալում ու սպասում են հայ լեզեոնականների հայտնվելուն: Երբ լեզեոնականները դուրս գալով սրճարանից փորձում են զորակայան վերադառնալ, ալժիրցիների կողմից արձակված գնդակներից նրանցից երկուսը տեղն ու տեղը սպանվում են: Հայ լեզեոնականները անմիջապես վազում են զորանոց, վերցնում հրացանները և վերադառնում միջադեպի վայրը: Տեղի է ունենում փոխհրաձգություն: Մոտակայքում գտնվող և մահմեդականի պատկանող մի տնից արձակված գնդակից ծանրորեն վիրավորվում է լեզեոնականներից ևս մեկը, որից հետո նրանք հարձակվում են վերոհիշյալ տան վրա և փորձում դատաստան տեսնել ոճրագործի հետ:

⁹⁷ Sésu Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 69:

լեզեոնականները շարդում են դուռը, բայց մարդասպանին գրտնեւ շեն կարողանում, որը մինչ այդ արդեն ճողոպրել էր: Բնակարանն այնուհետև կողոպտվում է ամբոխի կողմից:

Հաջորդ օրը ֆրանսիական հրամանատարությունը ձերբակալում է հայ սպաներին ու ենթասպաներին և լեզեոնականներից պահանջում զինաթափվել: Այն բանից հետո, երբ լեզեոնականները, պատճառաբանելով ավերիցիների զինված լինելը, հրաժարվում են կատարել հրամանատարության կարգադրությունը, ծովափին է մոտենում ֆրանսիական «Քուիբլա» ռազմանավը և ըստ պահանջի ու մեղադրել լեզեոնականների զորակայանը: Եվ միայն անգլիացի փոխգնդապետ Իստվուտի միջնորդությամբ լեզեոնականները համաձայնվում են զինաթափվել:

Այս բոլորից հետո քաղաքի ոստիկանատան առջև մի ֆրանսիացի սպայի արձակած գնդակով սպանվում է բոլորովին անմեղ մի լեզեոնական: Քիչ անց նույն սպայի հրամանով ավերիցի զինվորները կրակ են բացում աշխատանքից զորանոց վերադարձող լեզեոնի ջորեպանների վրա ու սպանում նրանցից 13-ին և վիրավորում երեքին: Շուտով զինվորական ատյանը 1—15 տարվա բանտարկության է դատապարտում յոթ լեզեոնականների: Չորրորդ գումարտակն ամբողջությամբ կազմալուծվում ու զորացրվում է: 400 լեզեոնականներ դատապարտվում են թիապարտության և ուղարկվում Եգիպտոս, իսկ մնացած 400-ը բաժանվում են մյուս գումարտակների վրա, մինչդեռ միջադեպի բուն պատասխանատուներն ու հրահրողները՝ ավերիցի զինվորները, մնում են անպատիժ⁹⁸:

Ալեքսանդրիտի աղետալի միջադեպի ժամանակակից Գ. Չագմազձյանը նշում է, որ հայ լեզեոնականների և ավերիցի զինվորների միջև վեճն ու ընդհարումը առաջ էին եկել մի հայ աղջկա պատճառով (զինվորները փորձել են անպատվել հայ աղջկան, իսկ լեզեոնականները փորձել էին պաշտպանել նրան)⁹⁹: Այսպես թե այնպես, մեզ համար այնքան էլ կարևոր ու էական չէ այն, թե որն է վերջին հաշվով միջադեպի զրգապատճառը, քանի որ այն ոչնչով չէր փոխելու իրերի դրությունը: Առավել կարևորը և ուշադրության արժանին ֆրանսիական զինվորական իշխանությունների վերաբերմունքն է դեպի Ալեքսանդրիտի միջադեպը, որոնք խեղաթյուրելով ու գունազարդելով իրողությունը, աշխատեցին

հասարակական կարծիք ստեղծել Հայկական լեզեոնի և հայ լեզեոնականի անվստահելիության, անկարգապահության, հետևաբար և նրա զինարձակման մասին: Եթե իսկապես կատարվել էր զինվորական կարգապահության կոպիտ խախտում, պետք է պատժվեին միջադեպի ինչպես հայ, այնպես էլ ավերիցի մեղսակիցները: Սակայն, եթե մի դեպքում ֆրանսիական հրամանատարությունը բացահայտ խստությամբ, կամ ավելի ճիշտ է ասել թշնամանքով, վերաբերվեց հայ լեզեոնականների հետ, առանց դատ ու դատաստանի հաշվեհարդար տեսավ նրանց հետ, զորացրեց 800 հոգուց կազմված 4-րդ գումարտակն ամբողջությամբ, ապա նույն հրամանատարությունը բացահայտ ներողամտություն ցուցաբերեց դեպի ավերիցի զինվորները, չփորձեց պատժելու կամ նույնիսկ պատասխանատվության կանչելու միջադեպի հրահրողներից գեթ մեկին: Հենց այս փաստի մեջ է թաքնված ամբողջ գաղտնիքը և դրանով էլ միայն պիտի բացատրել ողջ եղելությունը:

Դժբախտաբար հետագա ուսումնասիրողները, առանց հետամուտ լինելու Հայկական լեզեոնի զորացրման բուն պատճառների մեջ, որոնց մասին խոսք կլինի ստորև, նույնությամբ կրկնում են ֆրանսիական հրամանատարության՝ լեզեոնի հասցեին նետված մեղադրանքները: Ֆրանսիական բանակի սպա Կ. Գրանկուրը, խոսելով Հայկական և Սիրիական լեզեոնների օգտագործման աննպատակահարմարության ու զորացրման հետ կապված հարցերի մասին, գրում է, որ թուրքերի դեմ մղվող մարտերը ֆրանսիական հրամանատարությանը բերեցին այն համոզման, որ կամ պետք էր ընդհանրապես վերացնել դրանք և կամ էլ հրաժարվել դրանց օգտագործումից, քանի որ նրանցից միայն տհաճությամբ կարելի էր սպասել¹⁰⁰: Ապա իր մտքերը մասնավորեցնելով Հայկական լեզեոնի վրա, նա գովում է հայ լեզեոնականի քաջությունը, տոկունությունը և հայրենասիրությունը: Սակայն, շարունակում է նա, Հայկական լեզեոնի օգտագործումը կիրիկիայում մի շարք միջադեպերի տեղիք տվեց, որոնք էլ ողբերգական հետևանքներ ունեցան: Այդ իսկ պատճառով լեզեոնն անպետք էր այս շրջանների գրավումն իրականացնելու համար¹⁰¹: Թե որքան անհիմն ու խախուտ են Գրանկուրի եզրակացու-

⁹⁸ Տե՛ս Ս. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 193—197:

⁹⁹ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1956, № 6, էջ 19:

¹⁰⁰ Տե՛ս Гранкур К., Тактика на Ближнем Востоке, М.-Л., 1928, էջ

52:

¹⁰¹ Տե՛ս Гранкур К., նշվ. աշխ., էջ 54:

թյունները, պարզ երևում է մի այլ ֆրանսիացու՝ Բրեմոնի հետևյալ խոսքերից, որ Հայկական լեզեոնը Կիլիկիայում գտնվելու ընթացքում ոչ միայն ցավալի միջադեպերի պատճառ չհանդիսացավ, այլ խիստ նշանակալից դեր խաղաց երկրամասի գրավման ժամանակ և արժանացավ ֆրանսիական հրամանատարության բարձր գնահատականին ու շնորհակալությանը¹⁰²։

Հայկական լեզեոնի մասին նույն սխալ տեսակետն է զարգացնում նաև Ն. Էֆենդիևան։ Մեջբերելով Գրանկուրի վերևում հիշատակված մտքերը, նա գրում է. «Հայկական լեզեոնի անվրատահելիությունը արագացրեց անգլիական բանակի 19-րդ կորպուսի մուտքը Կիլիկիա գեներալ Լեսլիի հրամանատարությամբ»¹⁰³։ Որպեսզի կարողանա հիմնավորել իր սխալ մտքերը, նա հարկադրված վկայակոչում է այնպիսի փաստեր, որոնք պարզապես աղավաղում են պատմական ճշմարտությունը։ «Անգլիական զավթիչները հույս ունեին, — գրում է նա, — որ հայկական ջոկատները ինքնուրույն գործողություններ կսկսեն, կգրավեն ամբողջ Կիլիկիան և հանդիսավորապես կընդունեն անգլիական զորքերին։ Բայց նրանց հույսերը շարդարացան։ Հայկական լեզեոնը ոչ միայն չսկսեց պայքարել թուրքերի դեմ, այլ նույնիսկ դեմ չէր պաշտպանելու նրանց ազգային-ազատագրական պայքարում»¹⁰⁴։

Եթե հայկական լեզեոնը մտնում էր ֆրանսիական բանակի կազմի մեջ և ենթակա էր ֆրանսիական սպաների հրամանատարությանը, իսկ դա անվիճելի ճշմարտություն է, բնականաբար խոսք լինել չի կարող ինքնուրույն ռազմական գործողությունների ծավալման ու Կիլիկիայի գրավման մասին։ Դա առավել անհնարին էր այն պարզ պատճառով, որ ֆրանսիական զորքերն իրենց հերթին (մինչև 1919 թ. վերջերը) ենթակա էին անգլիական հրամանատարությանը։ Իսկ ինչ վերաբերում է հայկական լեզեոնի թուրքերի ազգային-ազատագրական պայքարին աջակցելուն, այն պարզապես Ն. Էֆենդիևայի հնարածն է։

Ալեքսանդրեոսի միջադեպի պատճառներն ուսումնասիրելու և հանցապարտներին պատժելու նպատակով Ազգային պատվիրակությունը մի հուշագիր է հղում ֆրանսիական կառավարությանը, որտեղ ի միջի այլոց կարդում ենք.

«8. Ալեքսանդրեոսի պատահարի մասին քննություն մը բանալ և այդ առթիվ երևան բերված տվյալներու վրա պաշտոնագրկել հանցապարտ պաշտոնյաները, օրինակ՝ ջորեպաններու հրամանատարը որ ներկայիս Մերսինի զինվորական հրամանատարն է և որ գրգռած է Ալեքսանդրեոսի պատահարը և ատելությունամբ լեցված, հալածած է լեզեոնականները։ Խիստ պատիժի ենթարկել հանցավորները, ինչպես Ալեքսանդրեոսի թիրաջեորներու (ֆրանսիական բանակի զորատեսակ—Շ. Թ.) տեղակալը, որ առանց դատավարության հրացանազարկ ընել տված է լեզեոնի 13 դժբախտ ու բոլորովին անմեղ ջորեպանները»¹⁰⁵։

Միջադեպի թողած տպավորությունը փարատելու նպատակով ֆրանսիական իշխանությունները շուտով լուրեր են տարածում, թե իբր լեզեոնականների վրա կրակելու հրամանը արձակող ըսպան ազգություն հրեա է, որ նա հեռացվել է իր պաշտոնից ու տարվել Ֆրանսիա՝ դատվելու։ Սակայն, ինչպես երևում է Ազգային պատվիրակության հուշագրից, սպան ոչ միայն չէր պաշտոնագրկվել ու պատասխանատվության կանչվել, այլև ստացել էր պաշտոնի բարձրացում։

Ալեքսանդրեոսի միջադեպի մասին Ա. Ահարոնյանի՝ Հայաստանի կառավարությանն ուղղված զեկուցագրերից մեկում կարդում ենք. «...երեկ արտաքին գործոց նախարարությունը հաղորդեց մեզ պաշտոնապես, թե Ալեքսանդրեոսում մի ամբողջ հայ բատալյոն իբր թե ըմբոստացել է», որ իբր թե վիրավորվել են երկու թուրքեր, որից հետո ֆրանսիական մի գունդ կրակ է բացել, որի հետևանքով սպանվել ու վիրավորվել են 7 հայ լեզեոնականներ։ «Այս ամբողջ հեռագիրը, — միանգամայն տեղին նկատում է Ա. Ահարոնյանը, — պրովակացիայի բնույթ ունի։ Ըստ երևույթին աշխատում են հայ զորքը հեռացնելու պատրվակներ ստեղծել... Այսպես թե այնպես, պատահածը չափազանց տխուր է և Ֆրանսիայի դիրքը մեզ մտահոգ է անում»¹⁰⁶։

Չբավարարվելով ու շահամանափակվելով Ալեքսանդրեոսի գումարտակի զինարձակմամբ, ֆրանսիական հրամանատարությունը ձեռնամուխ է լինում նաև Կիլիկիայում տեղաբաշխված լեզեոնի մնացած գումարտակների աստիճանական թուլացմանը։ Լեզեոնի այն ջոկատները, որոնց վրա էր գրված Բաղդադի երկաթուղու անվտանգության ապահովումը Կիլիկիայի սահման-

¹⁰² *Sté. Brémond E.*, նշվ. աշխ., էջ 28։

¹⁰³ *Эфендиева Н. З.*, նշվ. աշխ., էջ 80։

¹⁰⁴ *Նույն տեղում*, էջ 79։

¹⁰⁵ *Տ. Պոյանյան*, նշվ. աշխ., էջ 234։

¹⁰⁶ *ՀՍՍՀ ՊԿՊԱ*, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 154։

ներում, հանվում ու հեռացվում են իրենց գրաված դիրքերից և ազատ արձակվում: Նրանց փոխարինելու են գալիս ալժիրական զորամասեր: Թե ինչ արագությամբ ու հետևողականությամբ է իրականացվում Հայկական լեգեոնի զորացրումը, պարզ երևում է այն փաստից, որ 5000-անոց լեգեոնը, ինչպես խոստովանում է Բրեմոնը, 1919 թ. աշնանը անգլիական զորքերը ֆրանսիականում փոխարինելու ժամանակաշրջանում, որով էլ փաստորեն ըսկըսվում էր Կիլիկիայի գրավման ֆրանսիական շրջանը, նվազել ու հասել էր 400—500 մարդու¹⁰⁷:

Հայկական լեգեոնի ճակատագիրը, իսկ դա միաժամանակ Կիլիկիայի սահմաններում ամփոփված հայության ճակատագիրն էր, հասկանալի պատճառներով չէր կարող անտարբերությամբ ընդունվել հայ հասարակության բոլոր խավերի կողմից, չնուգել նրանց: Լեգեոնի զինարձակումը այն պահին, երբ ֆրանսիական հրամանատարությունը Կիլիկիայում շուներ քիչ թե շատ բավարար քանակությամբ ուժեր նրա անվտանգությունն ապահովելու համար, կարող էր միանգամայն աղետալի հետևանքներ ունենալ կիլիկիական հայության համար:

Թե ինչպիսի ուշադրությամբ ու մտահոգությամբ էր արտասահմանի հայությունը հետևում կիլիկյան իրադարձություններին ու Հայկական լեգեոնի նկատմամբ կիրառվող ջարդարարական քաղաքականությանը, պերճախոս երևում է ԱՄՆ-ի ուսմակավարների՝ Մ. Տամատյանին ուղղված 26 ապրիլ 1919 թվակիր նամակից: Խոսելով «Կիլիկիո մեջ «բարեկամ» Ֆրանսայի հայերու հանդեպ ընդհանրապես և հայ զինվորներու մասնավորապես, թուրքին հետ միացած հալածանքը դադարեցնելու» անհրաժեշտության մասին, նամակագիրները ապա գրում են.

«Երեկ Ֆրանսան Փարիզը փրկելու համար, հետին մարդերեն օգնություն կակնկալեր, այսօր քիչ մը շունչ առնելուն պես Գերմանիա մը դառնալ սկսած է աշխարհի գլխուն: Դուք որ Ֆրանսայի գերերջանիկ խոստումներովը հայ երիտասարդությունը թափեցիք արյունի ճամփուն վրա և անոնք Սուրիո լեռներուն վրա թշնամիին ճակատած առննին ամենին բարձր գնահատականները կը ստանային, այսօր իրենց բնիկ հայրենիքին մեջ գազան թշնամիներուն առջև կը նախատվին և պատիժներու կենթարկվին: Երեկ նամակ մը ստացա, որով կը գրեն թե՛ հոն հայ

զինվորին կյանքը վտանգի տակ է: Ֆրանսա Ռուսիո նման հայկական բանակը կուզե լուծել, որ անոնք քաղաքացիին դիրքին մեջ թուրքերուն հանձնվին ջարդվելու: Մեզի ամեն օր կը հարցնեն թե զինվորութենե կլել ուղողներ կա՞ն, կըսեն, եթե չկան հանցանքներ կը գտնեն, կը դատապարտեն և Ալժերիա կը դրկեն բանտարկելու: Եթե զինվորությունը թողունք, թուրքերու վրեժխնդրության պիտի ենթարկվինք: Եթե մնալ ուզենք, Ֆրանսան որոշած է ամեն զինով մեզ պատժել... և դեռ շատ այսպիսի սրտամորմոք պատմություններ»¹⁰⁸:

Լեգեոնականների շարքերում հուզումներ են սկսվում: Նրանք գժգժում են ֆրանսիական սպաների թշնամական վերաբերմունքից. որոնք մեծ մասամբ Մարոկկոյում և Ալժիրում ծառայած և մահմեդական մտայնություն ունեցող զինվորականներ լինելով, ինչպես իրավացիորեն գրում է Մ. Սերոբյանը, ամեն կերպ «կուզեն սիրաշահել Կիլիկիո թուրքերը, առանց նկատի ունենալու, թե ատով կը վիրավորեն հայերուն դյուրազգացությունը և կամավորներուն արժանապատվությունը: Այսպիսով գոնե թուրքերեն սիրվեին...»¹⁰⁹:

Ալեկոծվող լեգեոնականներին հանդարտեցնելու և հանգրստացնելու նպատակով Մ. Սերոբյանը, իհարկե, Բրեմոնի կողմից ու խորհրդով, լինում է Այրանի լեգեոնականների մոտ, հանդիպումներ ունենում նրանց հետ և խորհուրդներ տալիս: Ապա այցելում է Ջեբելի կառավարիչ Անդրեին, որը Սերոբյանի վերադարձից հետո իր թարգմանիչ Վ. Խուպեսերյանին հայտնում է, որ «ձեռ եպիսկոպոսը գործունյա և կորովի մարդ է, բայց հայ մըն է»: «Հայ երկրի մը մեջ, — դառնացած շարունակում է Մ. Սերոբյանը, — հայ ըլլալիս հանցանք նկատող այսպիսի զինվորականներն էին, որոնք Կիլիկիո պարպումի ծնունդ տվող պատճառները ստեղծեցին: Եվ հայ կամավորը հիասթափեցավ և այլասերեցավ այս մտայնության հանդիսատեսը ըլլալով»¹¹⁰:

Հայ լեգեոնականներին ուղղված նամակով հանդես է գալիս նաև Մ. Տամատյանը: Նամակում նա հորդորում էր հայ լեգեոնականին քաղաքականությամբ շղթաղվել, հնազանդ ու հարգալից լինել ֆրանսիացի սպաների հանդեպ, «...անպայման համակերպիլ... բոլոր զինվորական կարգադրությանց, նույնիսկ եթե այդ

¹⁰⁸ «Ջարթոնք» լրագիր, 12-ր փետրվարի 1953, № 97 (4505):

¹⁰⁹ Մ. Սերոբյան, նշվ. աշխ., էջ 129:

¹¹⁰ Նույն տեղում:

¹⁰⁷ Sté. Brémond E., նշվ. աշխ., էջ 28:

կարգադրութիւնները երբեմն անհամապատասխան երևին» հայ լեզուականի «շահերուն և ակնկալութիւնաց»¹¹¹:

Լեզուների վիճակը լրջորեն հուզում է նաև հայ սպաներին: Լեզուականների հուսալքութիւնը փարատելու նպատակով նը-
բանք մի խորհրդակցութիւն են գումարում և կոչով դիմում հայ
մարտիկներին՝ հավատարմորեն, անկախ հանգամանքներից, շա-
րունակելու ծառայութիւնը: Ուշագրութիւն արժանի են կոչի հե-
տևյալ կետերը.

«Նկատելով, որ Հայկական լեզուների պահպանումը անհրա-
ժեշտ է հայ ազգին ներկային մեջ նեցուկ մը ըլլալու համար և
ապագա ավելի ընդարձակ և արդյունավոր գործունեութիւն մը
ծնունդ տալու համար,

Նկատելով, որ Հայկական լեզուների ջնջումը կամ ցրվումը թըշ-
նամիին համար հաղթութիւն մը պիտի ըլլա զոր չկրցավ զենքով
ձեռք բերել,

Նկատելով, որ Հայկական լեզուների անհետացումովը տուժո-
ղը պիտի ըլլա մի միայն հայ ազգը,

Նկատելով, որ օրե օր բարեփոխութիւններ կը մտցվին բա-
նակի կազմութիւն մեջ և անոր ազգային բնույթ մը կը տրվի,

Նկատելով, որ Հայկական լեզուներ վարձկաններու բանակ մը
չէ, այլ գաղափարական զինվորներու բանակ մը, որոնք զինվո-
րական պարտականութիւնը ստանձնած են հայ հայրենիքին հա-
մար,

Կը հրահանգվի բոլոր գիտակից հայ զինվորներու մնալ բա-
նակի մեջ, ստորագրել անմիջապես մեկ տարվա զինվորագրա-
կան թուղթը, կամ համենայն դեպս շարունակել իրենց սրբազան
գործը մինչև պատվիրակութենեն (որ այժմ Փարիզի մեջ միացած է
Հայկական հանրապետութիւն կառավարութիւն հետ) պաշտո-
նական հրաման մը դալը»¹¹²:

Ո՛չ ֆրանսիական կառավարութիւնը ուղղված հուշագրերն
ու խնդրագրերը և ո՛չ էլ հայ սպաների կոչը դրական որևէ արդ-
յունք չեն տալիս, ու Հայկական լեզուների քայքայման պրոցեսը
շարունակվում է նաև հետագա շրջանում:

Ամփոփելով Հայկական լեզուների դորացրման հետ կապված
հարցերը, հարկ ենք համարում անդրադառնալ այն պատճառնե-
րին, որոնք հակառակ ֆրանսիական հրամանատարութիւն հո-

րինած մեղադրանքներին ու որոշ հեղինակների պնդումներին,
պայմանավորեցին նրա զինարձակումը:

Հայկական լեզուների ստեղծման շարժառիթը, ինչպես արդեն
նկատեցինք, Կիլիկիայի ազատագրութիւն և երկրամասում հայ-
կական ինքնավարութիւն հարցն էր: Հայ լեզուականը հանձն-
առնելով պատերազմական տարիներին հատուկ բոլոր զրկանք-
ներն ու զոհողութիւնները, ընդհուպ մինչև զոհվելը, լեզուների դը-
րոշի տակ էր մտել իր հայրենիքի փրկութիւն հեռանկարով: Բայց
պատերազմի ավարտից հետո ֆրանսիական կառավարութիւն
քաղաքականութիւն մեջ կատարված փոփոխութիւնները, Կիլի-
կիայի նկատմամբ նրա զավթողական նկրտումները, ֆրանս-
թուրքական սիրաբանումները, որոնց կենդանի վկան էր դարձել
հայ լեզուականը, խոր հիասթափութիւն էր պատճառում նրան:
Լեզուականը համոզվում էր, որ պատերազմի ծանր տարիներին
տրված խոստումները կեղծ էին ու զուրկ բարոյական որևէ ար-
ժեքից: Եթե այս բոլորին գումարենք և այն խտրականութիւնը,
որ յուրաքանչյուր քայլափոխին տեսնում էր հայ լեզուականը,
ապա դժվար չէ պատկերացնել նրա հոգեկան վիճակը:

Հայ լեզուականը, չնայած իր կրած զրկանքներին, հանձն-
առած զոհողութիւններին և հավատարմորեն ծառայելու իր ձրգ-
տումներին, ավելի ցածր էր վարձատրվում, ավելի վատ էր սըն-
վում ու հագնվում, քան ֆրանսիական բանակի գաղութային զո-
րամասերի զինվորը, էլ չենք խոսում ֆրանսիացի զինվորի մա-
սին: Տարօրինակ է, բայց փաստ, որ 1916—1918 թթ. ընթացքում
ոչ մի լեզուական չի բարձրացել սպայի և նույնիսկ ենթասպայի
աստիճանի, այն ժամանակ, երբ լեզուականների շարքերում
կային մեծ թվով կրթված ու զաբազցած երիտասարդներ, թուր-
քական բանակի նախկին սպաներ: Ահա երևույթներ, որոնք վի-
րավորում էին լեզուականի ինքնասիրութիւնն ու հայրենասի-
րութիւնը և որոնք էլ ֆրանսիական իշխանութիւններից դժգո-
հելու առիթներ էին ծնում:

Հայ լեզուականների նկատմամբ ֆրանսիական զինվորա-
կան իշխանութիւնների գրաված թշնամական վերաբերմունքի
մասին արժեքավոր տեղեկութիւններ է պարունակում Մ. Տա-
մատյանին հասցեագրված Թ. Լուսինյանի նամակը: «Ներկայիս
լեզուների կյանքը, — գրում է նա, — դժոխային է: Ֆրանսիացի
սպաներուն վերաբերումը հանդեպ հայ զինվորին բացարձակա-
պես թշնամական է, մանավանդ որ Ալեքսանդրեոսի եղեռնին բուն-

¹¹¹ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 245:

¹¹² Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 228—229:

հեղինակները հոս են և անխնա հայ զինվորը կը նախատեն, կը հալածեն ու կը կեղեքեն: Սակայն հայ զինվորը հակառակ այս բոլորին, միշտ նկատի ունենալով տեղիս բեկորներուն ողբալի վիճակը, գերագույն համբերությամբ մը կը քամեն դառնության քաժակը ցմրուր... Սակայն ամեն ինչ, վերջապես, սահման մը ունի: Բաժակը երբ լեցվի, կը հորդի... Կյանքը բացարձակապես անհանդուրժելի է: Լեզեոնականներուն մեջ բուռն գրգռություն մը կը տիրե: Մեկ խոսքով լեզեոնը «հրաբուխի» վրա կապրի...»¹¹³:

Սակայն առավել անհամատեղելին և անհանդուրժելին հայ լեզեոնականի համար, անկասկած, իր ազատագրված կարծեցյալ հայրենիքում Ֆրանսիայի գաղութատիրական, զավթողական նրպատակներին ծառայելու միտքն էր: Հայ լեզեոնականն ունի իր սեփական, ֆրանսիականին հակադրվող ազգային իղձը, որը նրա համար վեր էր ամեն ինչից և որի համար երգվել էր ծառայել հավատարմորեն: Սրա մեջ պիտի փնտրել հայ լեզեոնականի՝ Ֆրանսիայի զավթողական նպատակներին ծառայելուց հրաժարվելու ու դժգոհության արմատները, որոնք միտումնավոր ձևով շրջանցվել ու մոռացություն են տրվել Գրանկուրի և այլոց կողմից: Եվ ինչպես այս առթիվ շվեյցարի լեզեոնական Ե. Աշտարակենցի հետևյալ անկեղծ խոսքերը և շհամոզվել դրանց արդարացիության մեջ. «Միայն մեկ կերպով կրնային արգելել մեր հայրենասիրության ջանքերը—զինաթափ ընել մեզ ու հեռացնել մեզ մեր գրաված վայրերեն: Եվ այդպես ալ ըրին: Պողանթիեն մինչև Յենիճե բոլոր կայաններու հայ լեզեոնականները վերցուցին և անոնց տեղը տվին ալճերացի մահմեդական զինվորներու:

Տարակույս չկա, որ այս փոփոխությունը արդյունք էր ոչ թե անպատճառ հայ լեզեոնականին անկարգապահ ընթացքին, այլ և ու մասնավորապես ֆրանսիական արտաքին քաղաքականության, որուն շնորհիվ թուրքը ավելի հանդուգն դարձավ և հայկական լեզեոնին դիրքը Կիլիկիո մեջ խախտեցավ»¹¹⁴:

Մ. Տամատյանը Ազգային պատվիրակությանը ուղղված իր տեղեկագրում խոսելով Կիլիկիայում ստեղծված իրավիճակի մասին, կանգ է առնում նաև Հայկական լեզեոնի խաղացած դերի ու նշանակության վրա և գտնում, որ «Կիլիկիո մեջ հանդես բերված

հայկական ճիզին այս գլուխը կարելի չէ փակել, առանց անգամ մըն ալ անդրադառնալու այն դերին, զոր կատարեց այստեղ Հայկական լեզեոնը: Լեզեոնը, որ, ինչպես գիտենք, արվեստական միջոցներով 5000-ի իր սկզբնական թիվին 1500-ի իջեցվեցավ և որ վերջերս իր վերջնական արձակումեն առաջ հաղիվ 750-ի վերածված էր աստիճանական զինարձակումով, այստեղ կատարեց նախախնամական դեր մը և որ վճռական պիտի կրնար ըլլալ եթե ֆրանսիացիք ուզեին: Բայց որչափ մեծ ու փառավոր եղավ իր դերը, նույն չափ դժբախտ եղավ այս հայկական զորագունդին ճակատագիրը: Կրնա ըսվիլ նույնիսկ որ հայ լեզեոնականներուն կրած ամենադառն հուսախաբությունները մինն են այն պատճառներեն, որոնք ընդհանուր բարոյալքում առաջ բերին կիլիկեհայ ժողովուրդին մեջ և որոշ շափով խորտակեցին անոր հավատքը և կորովը»¹¹⁵:

Եվ այսպես, լավագույն ակնկալություններով ու գալիքի հանդեպ վառ հույսերով և հավատքով սկսվող 1919 թվականը վերջանում էր կիլիկեհայության համար խիստ անորոշ ու խորհրդավոր անապահովության պայմաններում, երբ նա դեմ հանդիման կանգնած էր քեմալական նոր խժոժություններին: Կիլիկիայում անապահով կացությունը, ֆրանսիական իշխանությունների հայերի հանդեպ անհանդուրժողական ու թշնամական վերաբերմունքը, մեկ տարվա դառը փորձությունը տասանորդել էին կիլիկեհայի հավատքը ապագայի նկատմամբ:

Այդ երևույթը ավելի էր խորանում 1919 թ. հոկտեմբերի վերջերից, երբ շուրջ 30 հազար անգլիական զորքերին փոխարինելու են գալիս ֆրանսիական աննշան ուժերը, որոնք, դժբախտաբար, առաջին իսկ օրվանից շկարողացան կացության տերը դառնալ և դրանով էլ նպաստեցին թուրք ազգայնական տարրերի աշխուժացմանը Կիլիկիայում:

¹¹⁵ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 339—340:

¹¹³ «Զարթոնք» լրագիր, 23-ը հունվարի 1954, № 99 (4791):

¹¹⁴ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 203:

ԿԻՒԿԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ
1920 ԹՎԱԿԱՆԻՆ

1919 թ. վերջերից ֆրանսիական գաղութարարների՝ թուրքական ազգայնական շարժման նկատմամբ որդեգրած երկշտ, անվճռական ու տատանողական, բայց միշտ և ամենուրեք հակահայկական քաղաքականությունը կիլիկեհայությունը կանգնեցնում են լինել-չլինելու տխուր փաստի առաջ: Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը հաջորդած մեկ տարվա հարաբերական խաղաղությունից հետո կիլիկեհայության համար սկսվում է նոր փորձությունների ու ջարդերի, հանուն ապրելու իրավունքի և պատվի համար մաքառումների որքանով աղետալի, բայց նույնքանով հերոսական մի երկարատև շրջան: Գոյապայքարի հորձանուտն են նետվում Մարաշն ու Զեյթունը, Հաճընն ու Այնթապը, Ամասոսն ու Դյուրթ-Յոլը, Ադանան և ողջ Դաշտային Կիլիկիան: Կիլիկիա ներխուժած քեմալական հորդանների դեմ մղվող անհավասար կռիվներում իրենց անունը փառքով ու պատվով են պսակում հաղարավոր հայորդիներ: Ինքնապաշտպանական կռիվների տարեգրության մեջ ոսկե էջեր են գրում հերոսական Հաճընն ու անընկճելի Այնթապը:

Շատ կարճ ժամանակամիջոց՝ ընդամենը մեկ տարի էլ չէր անցել տարագիր հայի Կիլիկիա վերադարձից: Նա դեռ նոր-նոր էր բուժում անցյալի իր վերքերը, վերաշինում իր քանդված օջախը և առաջին քայլերը կատարում տնտեսական քայքայված դրությունը վերականգնելու ճանապարհին, երբ քեմալական վերահաս ջարդերի սպառնալիքի տակ հարկադրված եղավ ընդհատելու խաղաղ կյանքը և տաճնապ հնչեցնելու: 1920 թ. առաջին ամիսների իրադարձությունները, քեմալականների ընդհանուր ճակատով հարձակումը, ֆրանսիական իշխանությունների բացահայտ դավաճանությունն ու նրա արդյունքը հանդիսացող Մարաշի արյունալի դեպքերը մեկ անգամ ևս հաստատեցին այն միտքը, որ հույսը դնել միայն օտարի վրա չէր կարելի:

Նման պայմաններում օրվա առաջնահերթ խնդիր է դառնում ինքնապաշտպանության կազմակերպումը Կիլիկիայի բոլոր հայաբնակ գավառներում: Եվ պետք է ասել, որ հակառակ ֆրանսիական իշխանությունների հարուցած բազմապիսի դժվարություններին ու արգելքներին, կիլիկեհայությունը հիմնականում հաջողվում է կազմակերպել ինքնապաշտպանությունը և շատ շրջաններում պատրաստ դիմագրավել թշնամուն: Հետևաբար առանց չափազանցության կարելի է հայտարարել, որ եթե ստեղծված ծանրագույն ու դժվարագույն պայմաններում կիլիկեհայությունը համեմատաբար փոքրաքանակ զոհեր տվեց, ապա դա միայն ու միայն լավ կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ էր: Այդ մասին են վկայում նաև Մ. Տամատյանի հետևյալ խոսքերը. «Մեկ ու կես տարվա դառն իրադարձությանց և ահավոր անդոճներու մեջ միակ միլիթարական և սրտապնդիչ երեվույթը հանդիսացավ կիլիկյան ինքնապաշտպանության գործը: Կարելի է անվերապահ կերպով ըսել, որ կիլիկեցի հայը ինքնապաշտպանության տեսակետով արձանագրեց ամենեն փառավոր էջը զոր ունեցած ըլլան երբեք իր տարեգրությունները դարերե ի վեր»¹:

Պահպանվել է Մ. Տամատյանի կազմած ու մշակած՝ կիլիկեհայերի ինքնապաշտպանության նախագիծը, որը սահմանում էր ինքնապաշտպանության նպատակները և որոշում ղեկավարություն իրավունքներն ու պարտականությունները: Ինքնապաշտպանությունը ղեկավարելու նպատակով նախատեսվում էր ստեղծել Ազգային ինքնապաշտպանության մարմին՝ «հիմնվելով մի միայն անձնական արժանիքներու և հարմարություններու վրա»²: Ըստ նախագծի սերտ կապ պետք է հաստատվեր Ազգային միության և Ազգային պաշտպանության մարմնի միջև և յուրաքանչյուրը իր գործունեության մասին փոխադարձաբար իրազեկ դարձներ մյուսին: Ազգային պաշտպանության մարմինը պետք է աներ ամեն ինչ ինքնապաշտպանությունը ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպելու համար:

Նախագծի 3-րդ կետով նախատեսվում էր սերտ համագործակցություն հաստատել հայերի և այլազգի բրիտանականների միջև: Այդ իսկ նպատակով նրանց ունեցած զենքերը պետք է կենտրոնացվեին ինքնապաշտպանության համար նշանակված նպա-

¹ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 325:
² «Հասկ» ամսագիր, 1950, № 7—8, էջ 212:

տակահարմար վայրում: Նախագիծը անհրաժեշտություն էր համարում «որ ինքնապաշտպանությունը ըլլա անհատական, այլ հավաքական և կազմակերպյալ»³:

Առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում նախագծի 7-րդ կետը, որը փաստորեն բնորոշում էր ինքնապաշտպանության բուն նպատակն ու խնդիրը. «Բոլոր հայերուն պարտականությունն է,— հայության, մարդկության, իշխանությանց, քաղաքակրթության ու պատմության առջև բոլոր հայերուն պարտականությունն է... որևէ պարագային նախահարձակ ըլլալ և մեծ եղեռնի մը, հազարավոր անմեղներու կորուստին ահավոր պատասխանատվութենեն խորշիլ, իսկ եթե դժբախտաբար մեր հարևաններուն նախաձեռնությամբ անխուսափելին պատահի, ինքնապաշտպանությունը կամ անոր իբր անհրաժեշտ մաս ծառայող հարձակողականը միայն այնքան ատեն և միայն այն շափով առաջ քշել, որքանը հարկավոր է հաջող ինքնապաշտպանությունը ապահովելու համար, զգուշանալ ավելորդ արյունահեղութեն և մանավանդ բոլորովին հտ կենալ ավարառութեն և կիններու և մանուկներու դեմ զենք պարպելի, պատվի բռնաբարություններ և այլ ամեն կարգի արարքներ, որոնք իբրև վայրագություն կը բնորոշվին: Ամեն կոիվ, թշնամական ամեն արարք, գործադրված ամեն միջոց՝ մինչև ամենն ծայրահեղ միջոցները, ինքնապաշտպանության և միայն ինքնապաշտպանության համար պետք է ձեռք առնվին»⁴:

Ազգային պաշտպանության մարմինը «...որպես բացառիկ հանգամանքներու ծնունդ, առժամյա մարմին մը ըլլալով», ուղղակի հարաբերության մեջ չպետք է գտնվեր զինվորական իշխանություններին հետ (8-րդ կետ): Միաժամանակ Ազգային պաշտպանության մարմինը հակադիր չլինելով զինվորական իշխանություններին, պետք է հանդիսանար «անոնց գործը իր կարգին լրացնող և անոնց օժանդակող մարմին մը»: Զինադադար կրնալու և զենքերի հանձնման մասին որոշումներ կայացնելու պարտականությունն ընկնում էր Ազգային միության և Ազգային պաշտպանության մարմնի խորհրդակցական ժողովին, այն էլ ձայների բացարձակ մեծամասնության ղեպքում միայն⁵:

Նախագծի 10—11-րդ կետերում խոսվում է վերագաս մարմինների հրամանները չկատարողների պատժի, մթերքների բաշխման, բնակչության տեղավորման և այլ հարցերի մասին: 1920 թ. փետրվարի 15-ից բոլոր գինետները և հանրային զբոսավայրերը պետք է փակվեին (12-րդ կետ): Վտանգի ահազանգումից (եկեղեցիների զանգահարություն) հինգ րոպե անց յուրաքանչյուր զենք կրելու ընդունակ հայ պետք է գտնվեր իր համար նշանակված դիրքում (13-րդ կետ): Խոռվությունների սկսումից անմիջապես հետո բոլոր հայկական թերթերը գրաքննության պիտի ենթարկվեին: Հավաքույթներ և հանդեսներ կազմակերպելու համար անհրաժեշտ էր ստանալ Ազգային պաշտպանության արտոնությունը (14-րդ կետ) և այլն:

Նախագծում շեշտվող այն պահանջը, թե «որևէ պարագային նախահարձակ չլլալ» և «ինքնապաշտպանությունը կամ անոր իբրև անհրաժեշտ մաս ծառայող հարձակողականը միայն այնքան ատեն և միայն այն շափով առաջ քշել, որքանը հարկավոր է հաջող ինքնապաշտպանությունը ապահովելու համար» վառ վկայությունն է այն բանի, որ կիլիկահայությունը 1920—1921 թթ. գոյակոտիվների ընթացքում այլ նպատակ չի հետապնդել, քան իր ֆիզիկական անվտանգության ապահովումը՝ համամարդկային սուրբ ու անբռնաբարելի մի իրավունք:

Սակայն մինչև ինքնապաշտպանական կոիվներին անցնելը անհրաժեշտ ենք համարում քեմալական կամ թուրքական ազգայնական շարժման առաջացման ու զնահատման կապակցությամբ անել մի քանի դիտողություններ, շարժում, որն իր էությունով և հետապնդած նպատակներով փաստորեն շարունակում էր երիտասարդ թուրքերի հայասպան քաղաքականությունը: Ինչպես մեղ է թվում, առանց այդ բոլորի դժվար պիտի լիներ ըմբռնել ու հասկանալ կիլիկահայության 1919—1921 թթ. ողբերգությունն իր ամբողջ խորությամբ:

Ընդունելով հանդերձ, որ թուրքական ազգայնական շարժումն իր մի կողմով հակաիմպերիալիստական էր, այնուամենայնիվ պիտի շեշտել այն փաստը, որ այն ուներ նաև իր երկրորդ՝ զավթողական-նվաճողական կողմը, որտեղ առաջինը իրականում հանդես էր գալիս որպես քողածածկույթ, իսկ երկրորդը՝ որպես նպատակ: Ամբողջությամբ վերցրած՝ այն իր սուր ծայրով ուղղված էր Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների և, մասնավորապես, հայերի դեմ բուն Հայաստանում և

³ «Հասկ» ամսագիր, 1950, № 7—8, էջ 212:

⁴ «Հասկ» ամսագիր, 1950, № 7—8, էջ 212:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 212—213:

Կիրիկիայում: Քեմալական շարժման պատմությունը վրադրվող որոշ հեղինակներ հաճախ թուրք ազգայնականների հռչակած հակաիմպերիալիստական պիտակի զոհ դառնալով, միակողմանիություն և սուբյեկտիվություն են հանդես բերում դեպի շարժման միջոցներն ու նպատակները, դեպի շարժման գնահատման հարցերը: Նրանք մոռացություն են տալիս ու աչքաթող անում այդ երկրորդ կողմը, որը, մեր կարծիքով, գերակշռողն էր և քեմալականների համար ունեւր առավել կենսական նշանակություն: Որ դա իրականում այդպես էր, ընդունում է նաև Մուստաֆա Քեմալը: Խոսելով թուրքական ազգայնական շարժման մասին, նա գրում է, որ նրա հիմնական նպատակներից մեկն էլ եղել է «հայկական բանակի և պետության ոչնչացումը, որը թաթարապալարի նման դեռևս մնացել է մեր երկրի մարմնի վրա»⁶:

Բացահայտելով քեմալականների բուն դիտավորությունները, հնչակյանները մեր նշած փաստաթղթում գրում են, որ Մարաշի արյունալի իրադարձությունները և հազարավոր հայերի շարժերը մեկ անգամ ևս ցույց տվեցին, «...որ հայ ժողովրդի երդվյալ դահիճ «իթթիհատ» կուսակցությունը «միլլի» նոր անվան տակ նույն հետևողականությամբ շարունակում է Փոքր Ասիայում հայերի բնաջնջման իր ցավալի քաղաքականությունը»⁷: Այդ փաստը շեն ժխտում նույնիսկ թուրք հեղինակները: Նրանք վկայում են, որ «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ազգային կազմակերպության» առաջացումը պայմանավորված էր արևելյան վիլայեթները Հայաստանին տալու հարցով: Խոսելով թուրքական ազգայնական շարժման առաջացման մասին, էնվեր Բեհնան Շապուլյոն գրում է. «Կարծում եմ այս շարադրանքից դժվար չէ հասկանալ, որ Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ազգային կազմակերպությունը ծնունդ տվող կարևոր պատճառը և անհանգստությունը արևելյան վիլայեթները Հայաստանին տալու հավանականությունն էր»⁸: Իսկ Յազգան Ֆահրիեն և Սերդարլար Ներիմանը ավելացնում են. «Արևելյան վիլայեթների Հայաստանին տրվելը արգիլելու նպատակով ստեղծված «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ազգային կազմակերպությունը» էլ ավելի արմատա-

կան որոշումներ ընդունելու նպատակով մի կոնգրես հրավիրելու նախաձեռնություն հանդես բերեց»⁹:

Միանգամայն իրավացի է պրոֆ. Ա. Նսայանը, որը խոսելով քեմալական արշավանքի բուն նպատակի մասին, գրում է. «Արևմտյան իմպերիալիզմի դեմ ուղղված թուրքական ազատագրական պայքարը Հայաստանի համար դառնում էր նվաճողական, ավերիչ մի պատերազմ, որը ժողովրդասպան, բացարձակապես ռեակցիոն նպատակներ էր հետապնդում: Հայաստանի դեմ թուրքական նացիոնալիստների գործողությունները Օսմանյան կայսրության վաղեմի շարդարարական քաղաքականության շարունակությունն էին նոր պայմաններում, սակայն նոր նշանաբանով ու քաղաքական նոր դոկտրինայով քողարկված»¹⁰:

Մյուս կողմից, բազմապիսի փաստերը վկայում են այն մասին, որ քեմալականներն իրենց գործելակերպով ոչ միայն ետ չէին մնում երիտասարդ թուրքերից, այլև սերտ համագործակցություն ու կապ գոյություն ունեւր նրանց միջև: Թալեաթի, էնվերի և երիտթուրք մյուս պարագլուխների նամակագրությունը Մուստաֆա Քեմալի, նրանց «բարի» խորհուրդները, բազմաթիվ երիտասարդ թուրք հասարակական-քաղաքական ու զինվորական գործիչների, ինչպես նաև թուրքական մեջլիսի պատգամավորների անցումը Անատոլիա և քեմալականների ճամբարում ապաստան գտնելը առավել ևս հաստատում են այն:

Բիֆաթ Մեվլան-զադեն վկայում է, որ զինադադարի նախօրյակին, երբ պատերազմի ելքը թուրքիայի համար արդեն պարզ էր, իթթիհատ վե թերագզը կուսակցությունը «պատասխանատու թեև և ազատելու և կրկին իշխանությունը շարունակելու համար, զինադադար կնքելու հարկը զգացված ժամանակ Անատոլիայի ներքին մասերում մեջ, ուր հաղթական տերությունները չպիտի կրնային զինվորական ուժ ղրկել, նոր կառավարություն մը հիմնել խորհած, որոշումը տված և այս որոշումը ի հարկին գործադրելու համար միջոցներ ձեռք առած էր»¹¹: Որ երիտասարդ թուրքերը նման որոշում էին կայացրել, պարզորոշ երևում է նաև թուրքիայի կրթական նախկին մինիստր Շյուքրի բեյի և թուր-

⁶ Мустафа Кемаль, նշվ. աշխ., հ. 3, էջ 314:

⁷ ЗУВЗ №422Ա, ֆ. 4/114, ց. 2, գ. 3, Թ. 29:

⁸ Şapolyo Enver Behnan, նշվ. աշխ., էջ 22:

⁹ Yazgan Fahriye ve Serdarlar Neriman, նշվ. աշխ., էջ 21:

¹⁰ Ա. Նսայան, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը, Երևան, 1967, էջ 42—43:

¹¹ Մեվլան-զադե Բիֆաթ. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 408:

քիայի փոստի ու հեռագրատան նախկին ընդհանուր տնօրեն Բեֆիք Խալիտ բեյի միջև կայացած զրույցից: Թեև Թուրքիայի համար պատերազմի անհաջող ընթացքով ստեղծված կացությունը արտաքինից խիստ ողբալի է թվում, ասում է մինիստրը, սակայն, իրականում այդպես չէ: Վաղօրոք որոշվել է Անատոլիայի տարբեր վայրերում կենտրոնացնել մեծ քանակությամբ զինք ու զինամթերք և անհրաժեշտության դեպքում այնտեղ անկախ պետություն հիմնել: Զենքի ու զինամթերքի պաշարների ստեղծումը Անատոլիայում և նոր կառավարություն կազմելու պարտականությունը սկզբում, ինչպես Մեվլան-զադեն է գրում, հանձնարարված է եղել էնվեր փաշային: Բայց այն բանից հետո, երբ շարժումը գլխավորելու նպատակով Անատոլիա եկավ Քեմալը, նա հրաժարվեց այդ մտքից (որի համար հասել էր մինչև Տրապիզոն)¹²:

Թուրքիայի պարտությունից հետո հենց Անատոլիայում քեմալական շարժման ծավալումը և սուլթանական կառավարության կողքին, իբր թե նրանից անկախ կառավարության ստեղծումը կասկած չեն հարուցում Մեվլան-զադեի վկայությունների ճշմարտացիության նկատմամբ: Ուրեմն, առանց երկմտության կարելի է պնդել, որ Քեմալի գլխավորած ազգային շարժումը ոչ այլ ինչ էր, քան պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության կողմից մշակված ու նախապատրաստված շարժում:

Սակայն պարզամտություն պիտի լիներ թուրքական ազգայնական շարժման տնեցած հաջողությունները բացատրել միայն գրանով: Կարծում ենք, այդ հարցում իր որոշիչ դերն է խաղացել այն նյութական ու բարոյական օգնությունը, որ քեմալականները անշահախնդիր ստանում էին Կ. Պոլսի սուլթանական կառավարությունից: Հետևապես մենք առարկում ենք այն տեսակետի դեմ, որ ամեն կերպ աշխատում է անջրպետ անցկացնել Կ. Պոլսի սուլթանական կառավարության ու Քեմալի գլխավորությամբ Անատոլիայում ստեղծված կառավարության փոխհարաբերությունների միջև և անգամ շատ որոշակի դրանք հակադրել միմյանց: Բազմամթիվ փաստերը անհերքելիորեն խոսում են ոչ ի օգուտ այդ տեսակետի, այլ ընդհակառակը, վկայում են այն գաղտնի, բայց սերտ համագործակցության մասին, որ գոյություն ունի Կ. Պոլսի ու Անկարայի միջև:

Պատերազմն ավարտված էր: Այն տանուլ տված Թուրքիան ծնկաչոք սպասում էր հաղթողների դատավճռին: Թուրքիայի համար ստեղծված անորոշ իրավիճակը և մեծ Հայաստանի ստեղծման հեռանկարը, ինչպես վկայում է Մեվլան-զադեն, սուլթանական կառավարությանը հարկադրում էին մտածել հակամիջոցների մասին¹³: Բայց հասկանալի պատճառներով բացահայտորեն գործել նա չէր կարող: Մայրաքաղաքում տնօրինություն էին անում հաղթողների զորքերը: Կ. Պոլսի նավահանգստում խարխալ էին նետել անգլիական, ֆրանսիական, իտալական և հունական ռազմականները: Այնտեղ էին գտնվում Անգլիայի և Ֆրանսիայի բարձր կոմիսարները: Այս պայմաններում Կ. Պոլսի սուլթանական կառավարությանը ոչինչ չէր մնում, քան թե ու թիկունք դառնալ, սատարել այն շարժմանը, որը ծրագրվում էր բարձրացնել Անատոլիայում: Եվ սկսվում է թուրքական դիվանագիտության ավանդույթներին հատուկ մի զավեշտություն: Հաղթողների աչքերին փոշի փչելու և նրանց ապակողմնորոշելու նպատակով սուլթանական կառավարությունը առերես թշնամական դիրք է գրավում անատոլիական շարժման նկատմամբ, պատերազմ հայտարարում ու զորամասեր ուղարկում «ապստամբների» դեմ և նույնիսկ Քեմալին ձերբակալելու հրաման արձակում:

Ինչպես Մեվլան-զադեն է նշում, «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության կազմակերպության» ստեղծման միտքը հղացել է սուլթանական կառավարությունը: Արտաքին գործերի մինիստրությունում գումարվել է մի գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվել է կյանքի կոչել վերոհիշյալ կազմակերպությունը, որը հնարավոր բոլոր միջոցներով պիտի ջանար ազդել համաշխարհային հասարակական կարծիքի վրա, ցույց տար, որ արևելյան նահանգներում մեծամասնություն են կազմում թուրքերը¹⁴:

Նույն օրերին Կ. Պոլսում երիտթուրքական բանակի սպաների ջանքերով ստեղծվում է «Մահիկ-աստղ» կազմակերպությունը, որին նախագահելու համար հրավիրված էր Մուստաֆա Քեմալը և որն էլ պետք է պայքարեր Թուրքիայի անձեռնմխելիության համար: Սուլթանի և Դամադ Ֆերիտ փաշայի հանձնարարությամբ վերոհիշյալ կազմակերպությունը բանակցում է «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության կազմակերպության»

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 412—413:

¹³ Տե՛ս Մեվլան-զադե Թիֆար, նշվ. աշխ., էջ 329:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

հետ: Որոշվում է. եթե Բ. Դուռը «Արևելյան նահանգները Հայաստանին միացնող դաշնագիր մը ստորագրելու ստիպվի, այս նահանգներուն մեջ Հայաստանի կառավարութեան իշխանութիւնը պետք չէր ճանչնալ և թե ի հարկին զենքի զիմելով պաշտպանութեան համար հիմակվրնե արևելյան նահանգներուն մեջ զինված ուժի մը պատրաստութեան աշխատելու է, և փաստերով ցույց տված է, որ եվրոպական տերութիւնները Հայաստանին կցվելիք այս հողամասին մեջ հայերուն գերիշխանութիւնը պաշտպանելու համար ուժ չպիտի կրնային ղրկել»¹⁵:

Ուշադրութեան արժանի է Մուստաֆա Քեմալի Անատոլիա մեկնելու պարագան: Պատմագրութեան մեջ ընդունված է այն տեսակետը, ըստ որի սուլթանը և կենտրոնական կառավարութիւնը, ցանկանալով ազատվել ընդդիմադիր ու ժողովրդականութիւն վայելող կասկածելի զենեքալից, նրան որպէս երրորդ բանակի հրահանգիչ որոշում են ուղարկել Անատոլիա և այդ եղանակով մեկուսացնել մայրաքաղաքից: Ինչպէս մեզ է թվում, Մուստաֆա Քեմալի Անատոլիա գործողումը, իրականում, ազգայնական շարժումը գլխավորելու նպատակով կազմակերպել էր սուլթանական կառավարութիւնը: Այդ շատ որոշակի երևում է Մեվլան-զադեի հետևյալ խոսքերից. «Գնդապետ Մըստաֆա Քեմալ փաշան Անատոլու ղրկողը Ֆերիտ փաշայի կառավարութիւնը եղած է և ասոր ուժ տվող ալ սուլթան Մուհամմետ Վահիտեթիին. անոր տրված պաշտոնը երևութապէս բանակի քննիչ, իսկ իրականութեան մեջ բանակեն անկախ պահեստի ուժ մը պատրաստել էր:

Բ. Դուռը անոր ընդարձակ իրավասութիւն տված և թագավորն ալ առանձին գրութիւն մը հանձնած էր»¹⁶:

Սուլթանական և քեմալական կառավարութիւնների միջև եղած կապի մասին է խոսում նաև թուրքական իրականութեանը լավատեղյակ Ա. Անտոնյանը իր «Հայերուն գրութիւնը զինադադարեն հտք» հոդվածում: Խոսելով քեմալական շարժման առաջացման, նպատակի և նրա ստեղծած հակասուլթանական պատրանքների մասին, նա ավելացնում է. «Մուստաֆա Քեմալ փաշայի և Բեուֆ բեյի ստեղծած «Ազգային շարժումը» Անատոլուի նահանգներուն մեջ, ապստամբական ձեռնարկ մը չէ: Արտաքուստ այնպէս կերևա որ թուրք բանակին և նավատորմին այս երկու կարող ու գործունյա սպաները պետութեան մեջ պետութիւն մը

ստեղծած են և կը գործեն բոլորովին ինքնակամ, կը գործեն նույնիսկ հակառակ այն խարխլած, անգույն բանին, որուն վերածված է այսօրվան թուրք կառավարութիւնը Պոլսո մեջ: Բայց այս երեւութիւն տակ, նպատակի ու միջոցներու նույնութիւն մը գոյութիւն ունի Պոլսո մեջ և այդ «Ազգային շարժումին» վարիչներուն միջև, որովհետև, ինչ որ կը փորձեն ձեռք բերել այս վերջինները, էպպես Թուրքիո վեհապետին, թուրք կառավարութեան և թուրք ժողովուրդին սրտանց բաղձացած մեկ բանն է,— միակ բանը որուն կրնան բաղձալ տակավին,— Անատոլուի փրկութիւնը:

Ու միշտ Պոլսոն է, որ թրքական այս անհավասարելի կեղծավորութեամբ, արտաքուստ իբր թե կը պախարակե այդ շարժումը, ինքզինք անգոր ցույց տալով զայն զսպելու, և ներքնապէս ոչ միայն կը քաջալերե եղածը, այլ նույնիսկ կը զորացնե զայն, դյուրացնելով նոր համախոհներու խմբավորումը այդ շարժման շուրջը, և նոր ու կարող վարիչներ հայթայթելով անոր»¹⁷:

Մ. Տամատյանի թղթածրարներում գտնված և հավանաբար նրա գրչին պատկանող (այն հրապարակող Մ. Նաթանյանը նշում է, որ ստորագրութեան անընթեռնելիութեան պատճառով իրեն չի հաջողվել պարզել հեղինակին: Սակայն փաստաթղթի ոճն ու ոգին, ինչպէս գրում է Նաթանյանը, ենթադրել են տալիս, որ նրա հեղինակը Մ. Տամատյանն է) փաստաթղթերից մեկում նույնպէս ակնարկվում է Կ. Պոլսի և Անկարայի միջև ստեղծված խաբուսիկ թշնամանքի մասին: «Կը խաբվին անոնք,— կարդում ենք փաստաթղթերից մեկում,— որոնք կը կարծեն, թե Մուստաֆա Քեմալ կը գործե Պոլսո կամքին հակառակ, կամ կերևակայեն թե նպատակը, որուն կը ձգտի ան, բացարձակապէս պաշտպանողական է, այսինքն, պատրաստված է միակ մտածումով մը՝ խուսափելու համար խաղաղութեան դաշնագրին այն պայմաններեն, որոնք պարտադրված են Թուրքիո»¹⁸:

Կիլիկիայի կաթողիկոսի մեզ արդեն ծանոթ 29 դեկտեմբերի 1919 թվակիր նամակում, ուղղված Ամենայն հայոց կաթողիկոսին, նույն հարցի կապակցութեամբ կարդում ենք. «Թրքական նոր կուսակցութիւն կազմված է նոր անունով, միլլի, ազգայնական, բայց հին հոգով և խմբով: Առերևութ կենտրոնական իշխանու-

¹⁵ Մեվլան-զադե Բիֆար, նշվ. աշխ., էջ 331—332:

¹⁶ Նույն տեղում, էջ 327:

¹⁷ «Պահակ» բացառիկ, Բոստոն, 1921, էջ 120:

¹⁸ «Պայքար» տարեգիրք, 1951, էջ 54—55:

թյան ընդդեմ, իսկապես անկե կը հրահանգվի, թերևս համաձայնականներու մեկեն կամ մյուսեն»¹⁹:

Խոսելով 1920 թ. առաջին կեսի Կիլիկիայի քաղաքական կացության, ֆրանսիական իշխանությունների վերաբերմունքի և թուրքական ազգայնական շարժման մասին, «Հայրենիք» օրաթերթը ավելացնում է, թե ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ «անցյալ տարի միլի կազմակերպությունը Դամադ Զերիտ փաշայի վարչապետության օրով և անոր թուլություններու ու նյութական աջակցությամբ կատարվեցավ»²⁰: Նույն թերթում հրատարակված իր հոդվածում Ե. Սահակյանը ևս գտնում է, որ քեմալական շարժումը նախաձեռնվել ու հրահրվել է Պուսում: «Պուսո թուրք կառավարությունը,— գրում է նա,— նախատեսելով այս բոլորը (Սերի գաշնագրով Թուրքիային հասցված հարվածը—Շ. Թ.), Արևելքի հատուկ դիվանագիտությամբ մը, ներսի գավառները դրկեց, իբրև թե կառավարական որոշ միտինով, մի ոմն՝ Մուստաֆա Քեմալ, որ իր տեղը չհասած, իբրև թե ըմբոստացավ իր կառավարության դեմ, բայց իրականին մեջ ձեռնարկեց այն շարժումին, որ մտածված ու ծրագրված էր բուն իսկ Պուսո մեջ»²¹:

Մ. Պալարեսը, որն իր պաշտոնի բերումով քաջատեղյակ էր այս թվականների թուրքական իրադարձություններին, իր գրքում խոսում է 1919 թ. մայիսին Գելիբոլուի դինապահեստի վրա կատարված հարձակման ու ղենքի հափշտակման մասին: Այն փաստը, գրում է նա, որ շուրջ 250 ազգայնականներ առանց որևէ դիմադրության հանդիպելու հարձակվում ու կողոպտում են ղենապահեստը այն ժամանակ, երբ այն պաշտպանված էր մի ջոկատի կողմից, վկայում է սուլթանական իշխանությունների մեղսակցության մասին²²: Նույն հարցի կապակցությամբ նա մի այլ տեղում գրում է. «Քիչ առ քիչ (Քեմալը—Շ. Թ.) քաշում և համախմբում է կայսերական բանակը: Վերահաստատում է և ամբողջացնում կազմերը կենտրոնական կառավարության մեղսակցությամբ, որը այս դիմադրական ուժի մեջ տեսնում է խաղաղության խորհրդաժողովի վրա ցանկացած պահին ճնշում գործադրելու միջոցը»²³:

Տառացիորեն նույն մտքերն է զարգացնում նաև Վեուն. «Այն տարրերը,— գրում է նա,— որոնց կազմակերպումը հանձնարարվում էր իրեն (Քեմալին—Շ. Թ.), սուլթանի կարծիքով ճնշում պիտի բանեցնեին դաշնակիցների վրա խաղաղության դաշինքը քննարկելիս»²⁴:

Հետևաբար, ոչ սուլթանական զորամասերի «պատժիչ արշավանքները» քեմալականների դեմ և ոչ էլ Քեմալի ձեռքակալման՝ կենտրոնական կառավարության հրամանը, որոնց նպատակն էր բողոքել Անատոլիայի և Պուսի միջև եղած գաղտնի զինակցությունը, մեզ չպետք է մոլորեցնեն: Հանրահայտ փաստ է, որ կենտրոնական կառավարության կողմից Անատոլիա՝ Քեմալի դեմ պայքարելու անվան տակ ուղարկված զորամասերը ոչ միայն չէին կոպտում ազգայնականների դեմ, այլ շատ հաճախ միանալով «ապստամբներին», սովորացնում էին նրանց շարքերը: Պալարեսը նշում է, որ դաշնակից կառավարությունները նույնիսկ մերժել էին Դամադ Զերիտ փաշայի զորակոչ հայտարարելու այն առաջարկը, որով իբր թե վերջինս ուղում էր պայքարել Կոնյայի ազգայնականների դեմ, իհարկե, վախենալով, որ նրանք էլ կարող էին անցնել «հակառակորդի» կողմը²⁵:

Կ. Պուսի և Անկարայի միջև հաստատված գաղտնի կապերի մասին, թեև անուղղակիորեն, վկայում են նաև այն բանակցությունները, որոնք 1919 թ. հոկտեմբերի 20—23-ը Ամասիայում տեղի էին ունեցել Քեմալի և սուլթանական կառավարության ներկայացուցիչ, ծովային մինիստր Սալիհ փաշայի միջև: Բանակցությունների ոգին և ստորագրված փաստաթղթերը վկայում են, որ փաստորեն երկու կառավարությունների միջև Թուրքիայի համար կենսական բոլոր հարցերի շուրջը կնքվել էր դաշինք: Հոկտեմբերի 21-ին ստորագրված փաստաթղթում սևով սպիտակի վրա գրված է, որ «Կենտրոնական կառավարության և ազգային կազմակերպության միջև կայացել է համաձայնություն բոլոր հիմնական հարցերի շուրջը: Նրանց միջև չի մնացել հայացքների աննշան տարաձայնություն»²⁶: Կենտրոնական կառավարությունը բազմաթիվ հարցերում, այն է՝ երկրի սահմանների, ոչ մահադականներին տրվելիք իրավունքների, Թուրքիայի տնտեսական,

¹⁹ ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2046, թ. 4:

²⁰ «Հայրենիք» լրագիր, 19-ը մայիսի 1920, № 2449:

²¹ Նույն տեղում, 7-ը հունվարի 1921, № 2642:

²² St' u Paillares M., նշվ. աշխ., էջ 54—55:

²³ Նույն տեղում, էջ 105:

²⁴ Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 108:

²⁵ St' u Paillares M., նշվ. աշխ., էջ 97:

²⁶ Мустафа Кемаль, նշվ. աշխ., Կ. 2, էջ 232:

տեխնիկական ու արդյունաբերական կարիքների և այլն, համա-
միտ է եղել ազգային կազմակերպության կարծիքներին²⁷։

Պուլսի կառավարության և ազգայնականների միջև տեղի ու-
նեցող բանակցությունների մասին Քեմալը խոսել է նաև առաջին
անգամ Անկարա մուտք գործելու առթիվ արտասանած ճառում։
Նա շեշտում է այն միտքը, որ ազգայնականներին հաջողվել էր
հայացքների շուրջ լիակատար համաձայնության գալ կենտրո-
նական կառավարության հետ²⁸։

Եվ վերջին հաշվով, ովքե՞ր էին գլխավորում և ուղղություն
տալիս այսպես կոչված ազգային-ազատագրական պայքարին
Թուրքիայում։ Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ երեկ-
վա թուրք կալվածատերերն ու հողատերերը, փաշաներն ու բե-
յերը, առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ներկայացու-
ցիչներն ու թուրքական բանակի սպաները, կարճ ասած՝ թուր-
քական տիրապետող ու շահագործող դասակարգն ամբողջու-
թյամբ։ Այս հարցում մեզ համար ուղեցույց է հանդիսանում
1920 թ. դեկտեմբերի 21-ին սովետների 8-րդ համագումարում
Վ. Ի. Լենինի՝ քեմալականներին տված գնահատականը։ Պատաս-
խանելով այն հարցին, թե ովքե՞ր են կանգնած Թուրքիայում իշ-
խանության գլուխ, Վ. Ի. Լենինը հայտարարում է. «...կադետնե-
րը, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատրաստ են
մեզ Անտանտին ծախելու»²⁹։

Եվ դա, բնականաբար, չէր կարող իր հետքը չթողնել շարժ-
ման ինչպես ուղղության և ընթացքի, այնպես էլ հետապնդած
նպատակների վրա։ Իր ձեռքը վերցնելով ազգային-ազատագրա-
կան պայքարի ղեկը և հետապնդելով իր նեղ դասակարգային շա-
հերը, թուրքական ազգային բուրժուազիան աշխատում էր մի կող-
մից շարժմանը տալ հակաիմպերիալիստական, հեղափոխական
ու ժողովրդական բնույթ, իսկ մյուս կողմից հետապնդում նեղ
ազգայնական, շովինիստական նպատակներ, արգելակում շարժ-
ման վերածմանը ժողովրդական-հեղափոխականի, պայքարում
կոմունիստների և կոմունիստական գաղափարների դեմ Թուրքիա-
յում։ Սրանում էլ կայանում է քեմալական շարժման երկվություն-
նը։

Քեմալական շարժման ճիշտ գնահատականը տվել է Սուլեյ-
ման Նուրին, որը Կոմինտերնի 3-րդ կոնգրեսում ունեցած իր ե-
լույթում բնութագրելով այն, հայտարարել է. «Այս ազատագրա-
կան շարժման գլուխը նորից կանգնեցին նույն փաշաները՝ Քե-
մալ փաշայի և մյուսների նման։ Քեմալ փաշայի դերն ու դիտա-
վորությունները նույնն են, ինչ որ էին թուրքական հին կարգե-
րում։ Անկարայի կառավարությունը մի կողմից Թուրքիայի ինք-
նուրույնության համար Անտանտի դեմ զինված պայքար մղելով,
մյուս կողմից պայքարում է ամեն մի կոմունիստական շարժման
դեմ։ Ընկեր Սուրբիի գլխավորությամբ մեր ընկերների ոչնչացու-
մը և մեր շատ ընկերների բանտում գտնվելը ապացուցում է, որ
Քեմալը ուժեղ պայքար է մղում կոմունիստների դեմ»³⁰։

Թուրքական ազգային-ազատագրական շարժման առաջա-
րած հեղափոխական պատրանքների մասին է խոսվում նաև
1921 թ. դեկտեմբերի 29-ի Թիֆլիսի մամուլի բյուրոյի ինֆորմա-
ցիոն բաժնի ակնարկում։ Կանգ առնելով Թուրքիայում տիրող
կացության վրա, ակնարկի հեղինակը հարց է տալիս, թե ի՞նչ
բան է «Հեղափոխական Թուրքիան» և պատասխանում. «Արդյո՞ք
իսկապես մենք գործ ունենք դեմոկրատական շարժման հետ,
արդյո՞ք իսկապես քեմալականների շարժումը հանդիսանում է
Արևելքի զարթոնքը։ Ահա հարցեր, որոնք ջանում ենք պարզել
ընկնելով ժամանակակից Թուրքիա։ Դժբախտաբար նրան, ով ընկ-
նում է Թուրքիա, չհրաժարվելով մեր մամուլի կողմից ստեղծված
տերմինաբանությունից—«հեղափոխական Թուրքիա», «կարմիր
Արևելք» և այլն, սիզբնական շրջանում սպասում է ուժեղ հիաս-
թափություն, որովհետև մեր հասկացողությամբ հեղափոխու-
թյուն այստեղ չկա։ Այս, որպես անհրաժեշտ նախադրյալ պետք է
արձանագրել, որը կարող է դերծ պահել շատ սխալներից և տը-
հաճ դրույթներից։ Երկիրը մնում է ստրկության ու խավարի մեջ,
ինչպես նախկինում... Առաջվա պես ամբողջ իշխանությունը
կենտրոնացված է վալիի (նահանգապետի) և նշանակված աստի-
ճանավորների ձեռքին։ Մեծահարուստները քաղաքներում առաջ-
վա պես տոն են տալիս ամբողջ կյանքին։ Քաղաքային վարչու-
թյան, պրոգրեսիվ հարկի և այլ կարգի նորությունների մասին
խոսք անգամ չի կարող լինել։ Ընդհանրապես շատ դժվար է այ-
ժրմյան անատոլիական կառավարության գործունեության մեջ

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 55—58։

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 305։

²⁹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 42, էջ 154։

³⁰ Бюллетень НКВД РСФСР, 1921, № 23, стр. 485.

տեսնել պշանաչափ բարեփոխումների ինչ-որ նշաններ:

Ներքին վարչակարգը ամենադաժանն է. ոստիկանությունը, ժանդարմերիան և խուզարկությունը ծաղկում են...

Կոմունիստական կուսակցություն, որպես այդպիսին, Թուրքիայում ոչ մի տեղ, բացի թերևս ոչ մեծ էսկիշեհիթ քաղաքից, չկա. կան կոմունիզմը՝ «համակրող» վախեցրած, երկչոտ, անվերջ հսկողության տակ գտնվող անհատներ»³¹:

Քեմալական շարժման առաջացրած հույսի և պատճառած հիասթափության մասին է խոսվում Անկարայում ՌՍՖՍՀ-ի միսիայի քարտուղարի «Հեղափոխական» Թուրքիայի կծու բյուջեն» հոդվածում. «Քիշ առաջ, դեռևս անցյալ տարի, որքան վարդազուն հույսեր էին կապվում հեղափոխական Անատոլիայի հետ, որին լավատեսները կատարելապես համարում էին անգամ հեղափոխական Արևելքի վերահաս սոցիալական հեղափոխության առաջնորդ:

Թուրքիայում հեղափոխական շարժման տեմպի և վերելքի մասին Բաքվից որոշ կուսակցական ընկերների համառ, միտումնավոր ինֆորմացիաներից շատերին, անգամ պատասխանատու աշխատողներին, թվում էր, թե Անատոլիան համարյա կիսակոմունիստական է:

Ավաղ, իրականությունը ստացվեց միանգամայն հակառակը այն բանի, ինչ ասում էին առանձին շահագրգռված տեղեկատուները և Թուրքական տարբեր պատվիրակությունների ղեկավարները»³²:

Մի այլ հոդվածում, գրված 1921 թ. մարտին, նույնպես խոսվում է Թուրքիայում տիրող իրավիճակի մասին. «...Թուրքական աշխատավորական զանգվածների կերտվածքում, սուլթանական կառավարման ժամանակաշրջանի համեմատությամբ, ամենևին բան չի փոխվել... Թուրքիայի բնակչությունն ապրում է սաստիկ ավերման, ճնշման և իրավազրկության պայմաններում...»

Այս նույն ժամանակ մենք կանգնած ենք անտանտյան օկուպանտների դեմ ուղղված ուժեղ ազգային շարժման դեմ հանդիման... Շարժումն առաջացել է Թուրքիայի գոյությունն սպառնացող դրսի վտանգից, և դրանում է նրա օբյեկտիվ բովանդակությունը, բայց ոչ հեղափոխական ուժը:

...Հենց որ Թուրքիայի պայքարը Անտանտայի դեմ դադարի, «հեղափոխական Թուրքիայի» չակերտների մեջ կարող է ներսողալ սուլթանական Թուրքիան՝ Թուրքիայի ժողովրդական մեծ ժողովի ձեռնարկ, թե Մուստաֆա Քեմալ փաշայի անձնական կնիքով, միևնույն է»³³:

Դժբախտաբար հոդվածում տրված կանխատեսումը շուտով իրականացավ: Իրադարձությունների հետագա ընթացքը մեկ անգամ ևս հաստատեց, «...որ Թուրքական ազգային շարժման «հեղափոխական» բնույթը միայն շատ կարճ ժամանակաշրջանում գերակշռեց նրա ռեակցիոն ուղղությունը, քանի որ այդ շարժումը իրականում բոլորովին չփոխեց Թուրքական պետության դասակարգային կոշումը և չազատագրեց ճնշված Թուրք ժողովրդին»³⁴: Դեռ ավելին, արևմտյան և, մասնավորապես, ֆրանսիական ու իտալական իմպերիալիստների հետ լեզու գտնելու «հեղափոխական» Թուրքիայի առաջին անհամարձակ և վեհերոտ փորձերին շուտով հաջորդեցին Արևմուտքին հարելու ավելի որոշակի դիտավորությունները:

Դեռևս 1919 թ. դեկտեմբերի 5-ին Մուստաֆա Քեմալը Սվազում ընդունել էր Սիրիայի և Հայաստանի ֆրանսիական բարձր կոմիսար Ժորժ Պիկոյին և նրա հետ ստորագրել մի պայմանագիր, ըստ որի Ֆրանսիան հանձն էր առնում «...անհապաղ պարպել Կիրիկիան և դայն առանց պայմանադրության վերադարձնել Թուրքերուն. Ֆրանսա կը խոստանա դրապես պաշտպանել Օսմ. կայսրության հողային ամբողջականությունը ընդդեմ Անգլիո, Իտալիո և Հունաստանի: Ասոնց փոխարեն, Թուրքիա Ֆրանսայի կը խոստանա. կայսրության բոլոր հողամասերուն մեջ տնտեսական և ճարտարվեստական լայն և ընդարձակ մենաշնորհներ, առաջնության իրավունքով»³⁵: Բայց մինչև Պիկոյի Փարիզ ժամանումը փոխվում է կառավարությունը և ստորագրված պայմանագիրը չեղյալ է համարվում:

Հարկ է շեշտել, սակայն, որ թեև ֆրանս-թուրքական համաձայնագիրը կյանքում չիրագործվեց, այնուամենայնիվ Ժորժ Պիկոյի այցը Սվազ ամբողջությամբ բացահայտեց ֆրանսիական կառավարության քաղաքականությունը Կիրիկիայի նկատմամբ և

³¹ Бюллетень НКВД РСФСР, 1921, № 65, стр. 29—30.

³² «Известия ВЦИК», 13 июля, 1921, № 151 (1294) (բերվում է ըստ Ա. Նալայեի նշվ. աշխ., էջ 44—45):

³³ «Жизнь национальностей», № 4/10, 22 марта 1921, стр. 5—7 (բերվում է ըստ Ա. Նալայեի նշվ. աշխ., էջ 163—164):

³⁴ Ա. Նալայե, նշվ. աշխ., էջ 164:

³⁵ Ա. Արաճապյան, նշվ. աշխ., էջ 25:

որը հավասարազոր եղավ դաշնակիցների կողմից «ապստամբ» համարվող Մուստաֆա Քեմալի կառավարության պաշտոնապես ճանաչմանը: Դա Քեմալի առաջին խոշոր հաղթանակն էր Ֆրանսիայի նկատմամբ, որը մեծապես նպաստեց նրա հեղինակության ու քաղաքական կշռի բարձրացմանը:

ա. ՄԱՐՍԵՒ ՆԱՀԱՆՁԸ ԵՎ ԱՂԵՏԸ

1919 թ. սեպտեմբերին կայացած անգլո-ֆրանսիական համաձայնությանը նույն թվականի հոկտեմբերի 20-ից սկսվում է անգլիական զորամասերի դուրս բերումը Մարաշից, որը տևում է շուրջ տասը օր և ավարտվում ամսի վերջերին: Մարաշում ապաստանած ավելի քան 26 հազար հայերի համար ստեղծվում է միանգամայն անստույգ իրավիճակ: Քաղաքի անդորրը վերահսկող անգլիական ուժերի հեռացումը և նրանց փոխարինելու եկող ֆրանսիական զորքերի ուշացումը ամեն օր, ամեն ժամ կառոզ էր տեղիք տալ ծանր հետևանքներով հղի միջադեպերի: Դա էլ հենց ստիպում է Մարաշի Ազգային միությանը դիմել Ադանա և ֆրանսիական իշխանություններից խնդրել, որ մինչև անգլիական վերջին ջոկատի մեկնումը Մարաշ մտցվեն ֆրանսիական զինված ուժեր:

Մինչև ֆրանսիական զորամասերի գալը, 1919 թ. հոկտեմբերի 24-ին Մարաշ է այցելում կապիտան Անդրեն, հավանաբար, քաղաքում տիրող իրավիճակն ուսումնասիրելու և ֆրանսիական զորքերի մուտքը նախապատրաստելու համար: Մարաշահայությունը և որոշ թուրքեր իմամ Դայի Չադեի և Բայագիտ Չադեի գլխավորությամբ սիրալիր ընդունելությունն են կազմակերպում ֆրանսիացի զինվորականին: Անցնում է ևս մի քանի օր, և հոկտեմբերի 30-ին Մարաշ են մտնում ֆրանսիական շուրջ 200 զինվորներ՝ անգլիական մեծաքանակ զորքի փոխարեն: Հասկանալի է, որ այդքան փոքրաքանակ ֆրանսիական ուժերը, որոնց մի մասը հայ լեզոնականներ էին, առաջին իսկ օրվանից չափտի կարողանային կացության տերը դառնալ 60 հազար բնակչություն ունեցող Մարաշում:

Անգլիական զորքերը ֆրանսիականով փոխարինելու շրջանում ֆրանսիական իշխանությունները Գյոթսունի և Ազիզիյի շերտերից մի շարք դիմումներ են ստանում, որոնցով վերջիններս խնդրում էին ֆրանսիական զորամասեր ուղարկել ու իրենց ա-

դատել թուրքական լծից: Սակայն նկատի ունենալով, որ նման ակտը կարող էր գրգռել քեմալականներին, զնդապետ Բրեմոնը բարձր կոմիսարի հավանությունները 1919 թ. հոկտեմբերի 19-ին հեռագրում է Քեմալին և հայտնում, որ հիշյալ շրջանները չեն գրավվելու ֆրանսիացիների կողմից³⁶:

Այս առթիվ իր գոհունակությունը հայտնելով հանդերձ, Մ. Քեմալը 1919 թ. հոկտեմբերի 30-ի պատասխան հեռագրում, հանուն «Ֆրանսիայի նկատմամբ մեր ունեցած դարավոր բարեկամությունը վերականգնեցնելու», հույս է հայտնում, որ ֆրանսիական իշխանությունները կհերքեն նաև Մարաշի, Այնթապի և Ուրֆայի գրավման մասին լուրերը և նույնիսկ կհայտարարեն, որ Կիլիկիայի գրավումը ժամանակավոր է: Ինչպես իրավացիորեն նկատում է Բրեմոնը, դժվար թե Քեմալը անտեղյակ լիներ Մարաշի, Այնթապի և Ուրֆայի արդեն իսկ գրավված լինելու մասին: Պիտի կարծել, որ այս փաստը ավելի շուտ մատնում էր Քեմալի դիտավորությունները ոչ միայն վերոհիշյալ երեք քաղաքների, այլև ամբողջ Կիլիկիայի նկատմամբ: Որ դա այդպես էր, պարզորոշ երևում է Մուստաֆա Քեմալի հետագա գործունեությունից:

1919 թ. նոյեմբերի 19-ին Ռումելիայի և Անատոլիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի անունից Մ. Քեմալը հեռագրում է Ադանայի, Սսի, Մերսինի և Ջերեկ-Բերեքեթի իրավունքների պաշտպանության կոմիտեիներին և գտնում, որ Մարաշի, Այնթապի գրավումը հակասում էր «քաղաքացիական իրավունքներին և զինադադարի պայմաններին»³⁷: Հեռագրի վերջում նա վերոհիշյալ կոմիտեիներին կոչ էր անում կտրականապես պահանջել իրագործված անարդարությունների վերացումը:

Այս փաստերը ավելորդ անգամ վկայում են այն համագործակցության ու կապի մասին, որ 1919 թ. վերջերից արդեն գոյություն ունեւր Մ. Քեմալի և Կիլիկիայի տարբեր գավառներում գործող թուրքական ազգային կազմակերպությունների միջև:

Մարաշում պատեհ առիթի սպասող ազգայնականները, տեսնելով ֆրանսիական ուժերի փոքրաթիվությունը և զգալով նրանց անզորությունը, անմիջապես անցնում են գործի: Ֆրանսիական զորքի մուտքը Մարաշ փաստորեն ազդանշան է դառնում ընդդիմադիր տարրերի աշխուժացմանն ու բացահայտ ելույթին: Նրանց ջանքերով կազմակերպվում են ցույցեր ու միտինգներ, որոնցում

ֆրանսիական հրամանատարությունից պահանջում էին անհապաղ դուրս բերել զորքը Մարաշից և այն վերադարձնել Թուրքիային: Մյուս կողմից, Քեմալի հատուկ հանձնարարությամբ այստեղ են գործուղվում Քըլլը Ալին և Օսման Թուֆանը, առաջինը Մարաշ—Այնթապ, իսկ երկրորդը՝ Կիլիկիա: Նրանց հանձնարարված էր զինված ջոկատներ կազմակերպել և ռազմական գործողություններ ծավալել ֆրանսիացիների դեմ³⁸:

Միաժամանակ լուրջ աշխատանք է տարվում թուրք բնակչությանը զենքով ու զինամթերքով ապահովելու և գալիք զեպքերին բարոյապես նախապատրաստելու ուղղությամբ: «Աշնան սկզբից, — գրում է Վեուն, — Մարաշը զենքեր էր ստանում... Մահմեդականները պատրաստվում էին ջարդելու հայերին, իսկ հայերն էլ կազմակերպվում էին պաշտպանվելու»³⁹:

Նման լարված իրադրություն պայմաններում օրեցօր խախտվում էր Մարաշի բնականոն ներքին կյանքը: Օրավոր խորանում էր քաղաքի հայ և թուրք բնակիչների փոխադարձ անվստահությունը, որը շուտով ընդունում է բացահայտ թշնամական ընթացք: Մարաշի շրջակայքում գտնվող բազմաթիվ հայաբնակ գյուղեր, ինչպես Շամըսթըլը, էլ-Օղլուն, Պաղարճըքը, Ֆընտըճագը, Յենիճեկալեն, Ֆոնուզը, Կապանը, Ալապաշը և ուրիշները ենթարկվում են քեմալականների հարձակմանը: Լինում են պանություն և կողոպուտի զեպքեր⁴⁰: Քաղաքից դուրս վխտում են ավազակախմբերը, որի հետևանքով ընդհատվում է կապը շրջակայքի հետ:

Բարձր կոմիսարի 1919 թ. նոյեմբերի 18-ի № 621 հրամանով Մարաշի սանջակի վերահսկողությունը դրվում է Ջերեկ-Բերեքեթի կառավարիչ՝ կապիտան Անդրեի վրա: Չգալով քեմալական վտանգը և Մարաշում զեպքերի արագ զարգացումը, նա որոշում է Օսմանիեից գալ Մարաշ և կիլիկյան 150 ժանդարմներով (125-ը մահմեդական և 25-ը հայ), որոնց հրամանատարներն էին Ալեքսանդրեոսի 22-րդ թուրքական դիվիզայի շտաբի նախկին պետ Սըտիի բեյը և թուրքական բանակի նախկին կապիտան Միդհատ բեյը, վերականգնել քաղաքում անզորը և ապահովությունը: Կապիտան Անդրեն իր այդ որոշման մասին հեռագրում է զնդապետ Բրեմոնին ու նախապատրաստվում ճանապարհ ընկնելու:

³⁶ St' u Brémond E., նշվ. աշխ., էջ 37:

³⁷ Նույն տեղում:

³⁸ St' u Mustafa Kemal, նշվ. աշխ., հ. 2, էջ 90:

³⁹ Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 111:

⁴⁰ St' u Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 792:

Ինչպես Բրեմոնն է գրում, ինքը դեմ է եղել Անդրեի Մարաշ մեկնելուն և այդ իսկ պատճառով հեռագրել է նրան, որ սպասի մինչև ցնոր կարգադրություն: Բայց նորմալ կապի բացակայության պատճառով հեռագիրը ուշանում է և տեղ հասնում այն ժամանակ, երբ կապիտան Անդրեն ճանապարհվել էր դեպի Մարաշ: Նա Մարաշ է հասնում նոյեմբերի 14-ին⁴¹:

Կիլիկիայում տեղի ունեցող իրադարձություններին ուշի ուշով հետևող և տեղի ազգայնականներին ուղղություն տվող Մ. Քեմալը⁴² գրում է, որ Մարաշի մյուսթեսարըՖին հրահանգված է եղել ոչ մի դեպքում ընդունելություն չկազմակերպել Մարաշ ժամանող Զեբել-Բերբեթի կառավարչին⁴³: Չնայած դրան, քաղաքի թուրքերևելիները, քաղաքագլուխը, դադըն, մյուսթին դուրս են գալիս ֆրանսիացի զինվորականին դիմավորելու, իսկ մյուսթեսարըՖը կոնակում (կառավարչատանը) ընդունելություն է կազմակերպում և նրան ներկայացնում թուրք պաշտոնեությունը: Մեր կարծիքով սխալվում է Բրեմոնը, որը առերևույթ սիրալիր թվացող, բայց իրականում կեղծ ընդունելության ազդեցության տակ գրում է, թե իբր ամեն ինչ քաղաքում զոհացուցիչ էր⁴⁴: Հետագա դեպքերը այդ բանի լավագույն ժխտումն են:

Անդրեի ժամանումը ոչնչով չի փոխում իրադրությունը Մարաշում: Եվ իրականում դա անհնարին էր, քանի դեռ ուժերի հարաբերակցությունը մնում էր նույնը: Քաղաքում գտնվող 200 ֆրանսիական զինվորները, եթե նույնիսկ ընդունակ լինեին հըրաշքներ գործելու, պարզապես ի վիճակի էին դիմագրավելու վտանգը և դիմադրելու մինչև ատամները զինված հաղարավոր չեթեևներին: Դրությունը չէին կարող փոխել և այն ժանդարմները, որոնք Անդրեի հետ եկել էին Մարաշ: Տեղին է այստեղ հիշեցնել, որ ֆրանսիական իշխանությունները սկզբից ևեթ չուրջ սխալ էին գործում նման պատասխանատու հանձնարարությունները թուրք ժանդարմներին վստահելով, որոնք, ինչպես պիտի տեսնենք ըս-

տորև, ոչ միայն չէին կատարում իրենց պարտականությունները, այլև վճռական պահին խափանում էին այս կամ այն գործողության իրականացումը, զբաղվում էին վնասարարությամբ ու դասալքում էին:

Քաղաքում ապահովությունը վերահաստատելու և կացության տերը դառնալու համար անհրաժեշտ էր, որ ֆրանսիական հրամանատարությունը իր տրամադրության տակ ունենար գոնե բավարար քանակությամբ զորք, որն ընդունակ լիներ անհրաժեշտության դեպքում վճռական միջոցների դիմելու: Եվ ֆրանսիական իշխանությունները, դժբախտաբար, ի տես քեմալական շարժման աշխուժացմանն ու թուրք բնակչության զինմանը, շարունակեցին դիտորդի դերում մնալ այնքան ժամանակ, մինչև որ նախաձեռնությունը կամավոր զիջեցին հակառակորդին և փորձեցին ինչ-որ միջոցների դիմել կորցրածը վերականգնելու, երբ արդեն շատ ուշ էր:

Անորոշ կացությունը շարունակվում է մինչև 1919 թ. դեկտեմբերի 27-ը, երբ հանկարծակի Մարաշ են ներխուժում Ալբիստանի և Գյոքսունի կողմերից եկած շուրջ հարյուր չեթեևներ: Առանց դիմադրության հանդիպելու նրանք մեծ արագությամբ (բոլորն էլ հեծյալներ էին) շարժվում են քաղաքի փողոցներով և ամբանում միջնաբերդում, որի վրա այսուհետև պարզվում է թուրքական պետական դրոշը և տեկեն՝ մահմեդական կրոնական դրոշը կանաչ և կարմիր գույներով: Քիչ անց չեթեևները սկսում են կրակ բացել քաղաքի և, մասնավորապես, հայկական թաղամասերի վրա, որը գնալով սաստկանում է: Խուճապն ու իրարանցումը տիրում է Մարաշին:

Բազմամյա փորձառությունը, թուրքական իրականությանը քաջատեղյակությունը և թուրքերի հետ համատեղ կյանքը շատ բան էր սովորեցրել հայերին: Կանխազգալով բարձրացող վրտանգը և ճիշտ գնահատելով ստեղծված իրադրությունը, մարաշահայությունը անմիջապես փակվում է իր շորս պատերի ներսում: Կյանքը հայկական թաղամասերում կանգ է առնում: Փակվում են խանութներն ու արհեստանոցները: Այս պայմաններում անհասկանալի և նույնիսկ զարմանալի դիրք է գրավում ֆրանսիական հրամանատարությունը: Փոխանակ վճռական քայլերի դիմելու և ահաբեկիչներին սանձահարելու, ֆրանսիացի սպաները հայերից պահանջում են վերադառնալ շուկա և վերաբացել խա-

⁴¹ Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 32:

⁴² Պոլ Գյու վեոն գրում է, որ Մ. Քեմալը Փարիզում գտնվող իր բարեկամների միջոցով օրը-օրին իրազեկ էր պահում ֆրանսիական կառավարության ներսում և մամուլում մղվող պայքարի մասին՝ Կիլիկիան պահելու հարցի շուրջ: Այստեղից էլ ելնելով նա համոզված էր, որ ֆրանսիան ոչ մի լրացուցիչ ուժ չի ուղարկի Կիլիկիա (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 110):

⁴³ Տե՛ս Мустафа Кемаль, նշվ. աշխ., հ. 2, էջ 121:

⁴⁴ Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 32:

նութները, կարծես հայերը լինեին առաջացած խուճապի պատճառը:

Մյուս կողմից, տեսնելով իր և իր հրամանատարության տակ գրված զորքի անօգնականությունը, կապիտան Անդրեն հեռագրում է Այնթապի ֆրանսիական զորքերի հրամանատար գնդապետ Ֆլի Սենթ Մարիին և Մարաշում կարգը վերահաստատելու համար նրանից խնդրում է մոտ 300 հոգուց բաղկացած մի ջոկատ ուղարկել: Վերջինս խորհուրդ է տալիս կապիտանին դալ Այնթապ և տեղում բնեկ հարցը: Դեկտեմբերի 30-ին Անդրեն մեկնում է Այնթապ: Բայց լրացուցիչ զորքի հարցը այդպես էլ չի հաջողվում լուծել: Պատճառաբանելով, որ առանց այդ էլ իր վիճակն անկայուն է, գնդապետը մերժում է Անդրեի խնդիրը և խորհուրդ տալիս այդ կապակցությամբ դիմել Ադանա: Մինչ նրանք բանակցում էին Այնթապում, Մարաշի ֆրանսիական զորքերի հրամանատար է նշանակվում Մորբիսոն, իսկ Անդրեին ոչինչ չի մնում, քան վերադառնալ Օսմանիս:

Թուրքական պատմագրությունն ամբողջությամբ խեղաթյուրել ու կեղծել է Մարաշում դեպքերի զարգացման պատմությունը: Մարաշում քեմալականների խժոժություններն արդարացնելու միտումով, էնվեր Բեհնան Շապուլյոն նաև հանգամանորեն կանգ է առնում հայերի կողմից թուրք բնակչությանն անպատվելու, կողոպտելու, ծեծելու շինծու զրույցների վրա⁴⁵ և նոր միայն նկարագրում հետագա իրադարձությունները՝ իրեն հատուկ վիպական, հեքիաթային եղանակով:

Ըստ Շապուլյոյի, Մարաշում ազգայնական շարժումը ծնվում է այսպես: Հայերը ընդունելություն են կազմակերպում Մարաշ ժամանած ֆրանսիացի կառավարչի պատվին (ոչ մի խոսք, բնականաբար, նա չի ասում թուրք պարագլուխների կեղծ ընդունելության մասին): Ընդունելության ընթացքում կառավարիչը հայ օրիորդներից մեկին առաջարկում է պարել իր հետ: Օրիորդը մերժում է նրան հայտարարելով, որ ինքը ընդհանրապես դեմ չէ պարելուն, այլ չի ցանկանում պարել բերդի վրա ծածանվող թուրքական դրոշակի տակ: Կառավարիչը առանց երկմտանքի հրամայում է իջեցնել թուրքական դրոշակը: Դրանից էլ վիրավորված ու գրգռված թուրքերը մոլլայի գլխավորությամբ բերդի վրա նորից պարզում են դրոշակը: Եվ այսպես, մոլլայի մոգական գա-

վազանի մեկ հարվածով Մարաշում ծայր է առնում ազգայնական շարժումը⁴⁶:

Թուրքական դրոշակի իջեցման շուրջն ստեղծված սուտ զրույցների մասին է խոսում նաև Բրեմոնը: Յույց տալով նման զրույցների անհիմն լինելը, նա գրում է. «Այս միջադեպի կապակցությամբ ասում են, թե իբր կապիտան Անդրեն իջեցրել է թուրքական դրոշակը և պարզել ֆրանսիականը, որ դա էլ հանդիսացել է ապստամբության պատճառը: Կապիտան Անդրեն ոչ մի դեպքում թուրքական դրոշակը չի իջեցրել. երբեք նա ֆրանսիական դրոշակը չի բարձրացրել: Մարաշում մեր զորքերի տեղակայման վայրում մենք ունեինք ֆրանսիական մի դրոշակ, պարզված գեներալ Գուրոյի Բեյրութ ժամանելու առթիվ (26 նոյեմբեր 1919 թ.). թուրքական դրոշակը մշտապես ծածանվեց Մարաշի կոնակի վերա: Միջնաբերդի վրա բարձրացված դրոշակը թողնվեց, նկատի ունենալով նրա կրոնական բնույթը, որ նրան տալիս էր կից տեկկեն»⁴⁷:

Թուրք շեթենների կողմից Մարաշի միջնաբերդի գրավումը և քաղաքի գնդակոծումը իրականում ոչ այլ ինչ էին, քան քեմալականների բացահայտ ելույթի սկիզբը և ֆրանսիական հրամանատարությանը ուղղված մարտահրավեր: Մինչ ֆրանսիացիները տատանվում ու տարակուսում էին, ազգայնականները շթաքցնելով Մարաշը գրավելու իրենց դիտավորությունները, հարձակվում ու գրավում են քաղաքից դուրս գտնվող մի շարք կարևոր դիրքեր: Նրանք գրավում և իրենց հսկողության տակ են վերցնում Մարաշ—Այնթապ խճուղին, կտրում են հեռախոսալարերը: Շրջակա հայկական գյուղերի բնակիչները, թողնելով իրենց տունն ու տեղը, ահաբեկված փախչում են Մարաշ: Լեգեոնական Գրիգոր Աճեմյանը, որը եղել է Իսլահիեից շարժվող ֆրանսիական զորքերի կազմում, Մարաշում ստացած առաջին տպավորության մասին խոսելիս գրում է. «Իրազեկ կրլանք նաև շրջակա հայ գյուղերուն մեջ, թուրք շեթաներու գործ դրած խժոժություններուն: Փոքրիկ տղեկ մը հազիվ տասը տարեկան, կը պատմե իր հոր, մոր և պարագաներու սպանվիլը Մարաշեն մեկ ժամ հետո Ֆրենտրճագ գյուղին մեջ: Հայկական ծնունդի առթիվ կարտոնվինք քաղաքը շրջիլ, քայց միշտ զենքերով: Քաղաքին մեջ ավելի ակնհայտնի կերպով կերևան ապագա մեծ աղետի մը նախանշանները: Փոքրիկ ձայնի

⁴⁵ Sıkı Şapolyo Enver Behnan, նշվ. աշխ., էջ 170—172:

⁴⁶ Sıkı Şapolyo Enver Behnan, նշվ. աշխ., էջ 172—173:

⁴⁷ Brémond E., նշվ. աշխ., էջ 33—34:

մը կամ շշուկի մը վրա, թուրքերը իսկույն մղկիթներուն առջև կը հավաքվին»⁴⁸:

Գեպքերը մեծ արագութեամբ հաջորդում են իրար: 1920 թ. հունվարի 1-ին քեմալականները⁴⁹ հարձակվում են Մարաշի ֆերանսիական փոստատար ջոկատի վրա և ոչնչացնում այն Իսլահիեի կայարանում: Հունվարի 4-ին նրանք գրավում են Մարաշ—Բաղչե խճուղին, խրամատներ փորում նրա շուրջը և Մարաշը մեկուսացնում Ադանայից: Ստեղծված իրավիճակը հարկադրում է ֆրանսիական հրամանատարութեանը վերագրավել Մարաշ—Բաղչե գիծը և վերականգնել հաղորդակցութեանը Մարաշի հետ: Այդ նպատակով Կորնելուպի սենեգալական 17-րդ զորաբաժնին հրամայվում է Բաղչեից շարժվել Մարաշի հարավում գտնվող էլ-Օղլու գյուղը և այստեղ միանալով Մարաշից դուրս եկած մի այլ ջոկատի, նրա ուղեկցութեամբ մտնել Մարաշ: Սակայն Մարաշից դուրս եկած ջոկատը հասնում է մինչև Ղըզըլ-աղաջ, մուրդվում է և հարկադրվում վերադառնալ քաղաք: Կորնելուպի զորաստանը մեծ դժվարութեամբ հունվարի 7-ին հասնում է էլ-Օղլու, բայց չհանդիպելով Մարաշի ջոկատին, կանգ է առնում: Մի քանի օրանց միայն Մարաշից ուղարկված նոր ջոկատի ուղեկցութեամբ նրան հաջողվում է հունվարի 10-ին մտնել Մարաշ:

Քեմալականների դեմ մարտերը մոտիկից ղեկավարելու նըպատակով Մարաշի, Ալնթապի և Ուրֆայի ֆրանսիական զորքերի հրամանատար գեներալ Քերեթը Կիլիկիայում ֆրանսիական ուժերի հրամանատար գեներալ Դյուֆրեոյից հրաման է ստանում փոխադրվել Մարաշ: Միևնույն ժամանակ երկու սպաների՝ Մարթիին և փոխգնդապետ Թիբոլտին հանձնարարվում է վերադասավորել իրենց զորամասերը և նույնպես շարժվել Մարաշ: Առաջինը մոտ 400 զինվորով հունվարի 13-ին դուրս է գալիս Ալն-

⁴⁸ Կամավորը, էջ 48:

⁴⁹ Պոլ Դյու Վեու վկայում է, որ 1920 թ. հունվարի սկզբին Գիարբեթից Մարաշ էր եկել 5000-անոց մի զորախումբ (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 123): Մարաշում քեմալականների ունեցած ուժերի մասին որոշակի պատկերացում է տալիս նաև Մարաշի, Ալնթապի և Ալբիստանի ազգայնական զորքերի հրամանատար Ալի Քըլըջի՝ Կարա Հասանին ուղղված հետևյալ նամակը. «Մարաշ 20000 զինվոր ունինք, որ գյուղը որ մտնես, իսլամները զենքով շարժումին միացուր: Մեր հետ են Մուստաֆա Քեմալ փաշան և սուլթանը: Մեր հետ է ամբողջ իսլամութեանը, մեր հետ է Աստուծո մեծ մարգարեն: Մերն է հաղթանակը, թող մահանան ու փշրվին կյալուրները» (տե՛ս «Հայրենիք» լրագիր, 22-ը մայիսի 1920, № 2452):

թապից և թշնամու ուժերի հետ ունեցած մի շարք ընդհարումներից հետո հասնում նշանակված Բել-փունար գյուղը: Հունվարի 15-ին Իսլահիեից դուրս է գալիս նաև Թիբոլտի զորաստանը (մոտավորապես 1200 զինվոր), որը այնուհետև միանալով Բել-փունարում իրեն սպասող Մարթիի ուժերին, մտնում է Մարաշ: Հետագա մեկ-երկու օրերի ընթացքում ֆրանսիական զորքերը գրավում են գեպի Մարաշ տանող ուղիները երեք կողմերից: Այսպես. Թիբոլտի զորամասը ամրանում է քաղաքի հյուսիսում, իր համար հրամանատարական կետ դարձնելով ամբրիկյան կոլեջը: Այստեղ էր գտնվում նաև գեներալ Քերեթի շտաբը: Կորնելուպի և Մարթիի զորամասերը դիրքավորվում են հարավում, իսկ Հայկական լեգեոնի մի ջոկատն ու հեծելազորը՝ արևելքում:

Այգուհանդերձ ֆրանսիական զորքերին այդպես էլ չի հաջողվում կարգը վերահաստատել Մարաշում: Քեմալական ուժերը քաղաքում թե նրանից դուրս շարունակում են հարձակումները ֆրանսիական զորամասերի և հայկական թաղամասերի վրա: Հարձակումներին վերջ տալու նպատակով 1920 թ. հունվարի 21-ին գեներալ Քերեթը քաղաքի թուրք պարագլուխներին՝ մյուլթեսարըֆին, քաղաքագլխին, ժանդարմերիայի հրամանատարին, ոստիկանապետին և հոգևոր առաջնորդներին հրավիրում է իր մոտ խորհրդակցություն: Գեներալը նրանց հիշեցնում է ֆրանսիական զորքերի վրա կատարվող հարձակումները և խնդրում դադարեցնել դրանք ու համատեղ ջանքերով վերականգնել խախտված խաղաղությունը: Բայց թուրք երևելիները ոչ միայն չեն ընդունում իրենց մեղսակցությունը, այլև ֆրանսիական հրամանատարութեանը մեղադրում են հայերին հովանավորելու և հայերի վրա հենվելու մեջ, որոնք իրր շարշարում են թուրքերին⁵⁰: Փաստորեն համաձայնության եզր չգտնելով, գեներալը հրամայում է ազատարձակել նրանց, բացառությամբ մյուլթեսարըֆի, քաղաքագլխի, ժանդարմերիայի հրամանատարի ու երեք այլ երևելիների: Գեներալի մոտից վերջինը դուրս է գալիս ոստիկանապետը, որը հագիվ մի քանի քայլ հեռացած, սկսում է կրակել ատրճանակից՝ ազդարարելով համընդհանուր հարձակումը:

Քեմալականների հանկարծակի հարձակման առաջին զոհերն են դառնում գնումներ կատարելու համար քաղաքային շուկա դուրս եկած ֆրանսիացի զինվորները, որոնցից վեցը տեղն ու տեղը սպանվում են: Իրենց պահակակետերում գնդակահարվում

⁵⁰ Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 125:

են ֆրանսիական այն ժամապահները, որոնք թուրք ոստիկանների հետ մեկտեղ պարեկում էին քաղաքում: Հարձակման են ենթարկվում նաև շուկայում գտնվող հարյուրավոր հայեր, որոնց խուճապային փախուստից հետո թուրք խուժանը անմիջապես թալանում է նրանց ունեցվածքը:

Ֆրանսիական հրամանատարության դանդաղկոտության պատճառով մարտերի առաջին օրն իսկ նախաձեռնությունը ամբողջությամբ անցնում է քեմալականներին: Նրանց գերակշիռ ուժերը (շուրջ 5000 կանոնավոր զորք, հազարավոր շեփեներ և կողոպուտի ու ջարդի մոլուցքով այրվող բաշիբոզուկներ) գործում էին վաղօրոք մշակված ծրագրով, մինչդեռ ֆրանսիական հրամանատարությունը շուներ մարտական գործողությունների որոշակի որևէ պլան:

Քեմալականների առաջին իսկ հարձակումը վերջնականապես մեկուսացնում է Մարաշի տարրեր մասերում գտնվող ֆրանսիական զորախմբերին: Զարմանալի է, բայց փաստ, որ նրանց միջև բացակայում էր տարրական կապն ու համագործակցությունը, որի հետևանքով գլխավոր հրամանատար գեներալ Քերթեր ոչ մի տեղեկություն չունեի իր զորքերի դրության մասին: Ինչ հաջողություն պետք էր սպասել ֆրանսիական զորքերի գործողություններից, երբ անգամ Ադանայում գտնվող գեներալ Դյուֆրենոն անտեղյակ էր Մարաշի իրադարձություններից:

Ընդհարման սկզբում ունեցած որոշ հաջողություններից ոգևորված քեմալականները մի վերջնագիր են ներկայացնում ֆրանսիական հրամանատարությանը և պահանջում անձնատուր լինել: Մերժողական պատասխանից հետո թուրքերը հավատացած, որ իրական որևէ ուժ Մարաշում ի վիճակի չէ բռնելու իրենց ոճրագործ ձեռքը, սկսում են բացահայտորեն կոտորել քաղաքի հայ բնակչությանը: Պեթթուի, Զավուլու, Գայիշլի, Գուլաղբ բուրթլու, Տեվեճիլի, Զիչբելի և Սեքսենլիք թաղամասերի հայերը դիմադրելու բավարար ուժ չունենալով և քեմալականների խոստումներին հավատալով, որ չեն դիպչելու իրենց կյանքին, անձնատուր են լինում: Բայց դրժելով իրենց խոստումը, թուրքերը հետագա մի քանի օրերի ընթացքում Ուլու ճամփի ներսում պարզապես խողխողում են ավելի քան երեք հազար հայերի, հիմնականում կանանց, մեծահասակների ու երեխաների⁵¹:

Հայկական թաղերի հեռավորությունն ու կտրվածությունը միմյանցից և մարաշահայերի ցրվածությունը մեծապես խանգարում էին հաջող ինքնապաշտպանության կազմակերպմանը: Այդ իսկ պատճառով որոշվում է թողնել ծայրամասային թաղերը և կենտրոնանալ հիմնականում եկեղեցիներում (ս. Գևորգ, ս. Սարգիս, ս. Աստվածածին, ս. Քառասուն մանկանց, հայ կաթուղիկների, լատինաց Թերրա Սանտա և այլն), որոնք ֆրանսիական փոքրաթիվ ուժերի և հայ լեգեոնականների պաշտպանությամբ թվում էր, որ պիտի կարողանային հուսալի ապաստան հանդիսանալ հազարավոր հայերի համար: Բայց ուժերը խիստ անհավասար էին:

Հունվարի 23-ին քեմալականները, ի հաշիվ շրջակա թուրք գյուղացիության, լրացուցիչ ուժեր են ստանում և ավելի սաստկացնում հարձակումը: Նրանք ներխուժում են Շեքեր-դերե թաղամասը և ապա հրկիզում ս. Գևորգ եկեղեցին, որի շորս պատերին էին ապավինել հազարից ավելի հայեր: Եկեղեցին պաշտպանող ֆրանսիական ջոկատի նահանջից հետո դիմադրելու անկարող երեխաներն ու կանայք ընկնում են մարդասպանների ձեռքը և տեղն ու տեղը սրատվում, իսկ թաղման գործը հեշտացնելու համար բոլորին այնուհետև լցնում են կրի փոսերի մեջ: Խոսելով թուրք բարբարոսների գործողությունների մասին, Մարաշի լատին վանահայր Մաթերն Մյուրենն՝ մարաշահայության ողբերգության ականատեսն ու կենդանի վկան, գրում է. «Հունվարի 23-ին անոնք ևս (խոսքը օգնության եկած թուրք գյուղացիների մասին է—Շ. Թ.) իրենց հավատքեն դրված ազատ ասպարեզ գտան հարձակվելու մեր աղոթարաններուն և դարմանատուններուն վրա, մոլեգնած ամբոխը ինկավ եկեղեցին ապաստանած քրիստոնյաներու վրա, որոնք խորանի առջև ծնրադիր՝ կաղոթեին և մտիք կընեին իրենց հովիվներուն սփոփանքի վերջին խոսքը»⁵²: Հոգևոր պետերի սպանությունից հետո «...ժողովուրդը կորսվեցավ բոցերու մեջ», — շարունակում է նա:

Հունվարի 24-ից թուրքերը հրդեհում են հայկական թաղերը, իսկ համընթաց քամին մեծ արագությամբ ընդարձակում է նրա սահմանները: Լուրջ սպառնալիք է ստեղծվում ս. Աստվածածին եկեղեցում պաշտպանվող երկու հազար հայերի և քսան լեգեոնականների կյանքի համար: Լեգեոնականներն անկարող լինելով

⁵¹ Տե՛ս Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 814 և Հուլիանայան մեծ եղեռնի, էջ 837:
154

⁵² Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 796:

կասեցնել թշնամու գրոհները, ֆրանսիական հրամանատարությանն են դիմում և զինամթերք ու օգնական ուժեր խնդրում։ Մերժումից հետո որոշվում է նահանջել դեպի ս. Քառասուն մանկանց եկեղեցին։ Կեսգիշերին շուրջ 1500 հայեր լեզեոնականներին հետևելով փորձում են մոտենալ ֆրանսիական դիրքերին։ Սակայն, շնայած նախազգուշացմանը, ինչպես Հ. Տեր-Ղազարյանն է գրում⁵³, ֆրանսիական դիրքերից սևամորթ զինվորները հանկարծ սկսում են կրակել և սպանում մոտ 400 հայերի։ Հաջորդ օրն իսկ խուժանը հարձակվում է լքված ու անպաշտպան մնացած եկեղեցու վրա, առաստաղից նավթը լցնում և այրում ներսում գտնվող հայերին։ Ահա թե ինչ է գրում այս առթիվ Մ. Պայարեսը. «Սրով ու հրով բաշիբոզուքները կոտորեցին բոլոր քրիստոնյաներին, որոնք չէին կարողացել խույս տալ։ Կանայք, ծերեր և երեխաներ ընկան մարդասպանների դանակի հարվածների տակ, իսկ այս անմեղ զոհերը թաղելու ձանձրույթից խուսափելու համար կրի փոսերի մեջ նետեցին։ Հազարավոր դժբախտներ սարսափահար ու խելակորույս վազում էին տանիքների վրայով, սակայն տները փչուզվում և մարդկանց խմբերն ընկնում էին խարույկների մեջ։ Հայկական ս. Աստվածածին եկեղեցին ողողվեց նավթով և բոցավառվեց։ Փախչել փորձողներին խեղդում էին, իսկ մնացածները մոխրացել էին»⁵⁴։

Թուրք բարբարոսների ձեռքով եկեղեցիների վրա նավթ լցնելու և նրանցում ապաստանած երեխաներին ողջ-ողջ հրկիզելու մասին է վկայում նաև Գ. Աճեմյանը։ «Երկու անշափահաս մանուկներու կես այրած և ածխացած դիակները կենդանի վկաներ էին մեր աչքին առջև, — գրում է նա, — թե ինչպես քանի մը հարյուր մանուկներ ու որբեր թուրք հորդաներու ձեռքով, դեռ քանի մը օր առաջ՝ անոնց վրա առատ քարյուղ թափելէ հետո»⁵⁵ այրվելուն։

Առավել հաջող էր ֆրանչիսկյան վանքում գտնվող ավելի քան 3700 հայերի և շուրջ 200 ֆրանսիացի զինվորների ինքնապաշտպանությունը։ Նրանք հերոսաբար կուրծք էին տալիս թըշնամու գրոհներին և անառիկ պահում իրենց դիրքերը։ Բայց շուտով իրեն զգացնել է տալիս պարենի բացակայությունը։ Փրկություն միակ միջոցը խրամուղի փորել և վանքը ֆրանսիական զո-

րանոցի հետ միացնելն էր։ Այդ ծանր պարտականությունը իրենց վրա են վերցնում հայերը և շուտով փորում մոտ երկու հազար մետր երկարություն ունեցող խրամուղին և անմիջական կապ հաստատում զորանոցի հետ։

Հայկական եկեղեցիներից ամենաերկարը դիմադրում է ս. Քառասուն մանկանց եկեղեցին։ Այստեղ էին հավաքվել մոտավորապես հինգ հազար երեխաներ, կանայք, մեծահասակներ և մասամբ միայն զենք կրելու ընդունակ տղամարդիկ։ Չնայած ինքնապաշտպանների օրհասական ճիգերին, այնուամենայնիվ, հակառակորդին հաջողվում է հրկիզել և այս եկեղեցին։ Հայերը և եկեղեցում բուժվող ֆրանսիացի զինվորները հարկադրվում են փոխադրվել մոտակա մեծ խանը։

Ֆրանս-թուրքական ընդհարման հետևանքով մարաշահայության համար ստեղծված չափազանց հուսահատական կացություն մասին արժեքավոր տեղեկություններ է բովանդակում 1920 թ. փետրվարի 1-ին Մարաշից Հաճըն ուղարկված Ասատուր Սուլաքյանի ստորագրությունը կրող նամակը։ «Այսօր տասներկու օր է որ անընդհատ ընդհարումներ կըլլան, — կարդում ենք նամակում։ — Դժբախտաբար ֆրանսական ուժերը անբավարար ըլլալուն, և կամ հոռի տնօրինության հետևանքով հազիվ հազ իրենց շրջանակները կարող կըլլան պաշտպանելու։ Դարավոր մոլեռանդությունը նորեն խեղճ հայուն դիտուն պայթեցավ։ Շատ մը թաղեր 5—6 օր դիմադրելի վերջ բոլորովին բնաջինջ եղան։ Առայժմ մոտ 10000 հայ մարդ, կին և մանուկ ջարդված են։ Ոչ մեկ տարիք կամ սեռ չի խնայվիր... Մնացած 10000-ի մոտ հայությունը շորս-հինգ կեղրոններ ամրացած՝ ֆրանսական ուժերու պաշտպանության տակ կը ճգնին։ Թուրք ամեհի խուժանը և շեթենները օրե օր ավելի սպառնական դիրք կառնեն։ Ամեն կողմե օգնություն կը ստանան... Զարգերե խույս տված երիտասարդներս թախանձագին զենք կը խնդրենք (իրենց օգնելու) ֆրանսական հրամանատարութենեն ինքնապաշտպանության համար, «սակայն անգութորեն և անխիղճորեն կը մերժեն։ Վերջապես կացությունը խիստ սոսկալի և վտանգալից է։ Եթե առնվազն մինչև տասը օր օգնություն չհասնի, կը վախնամ թե Մարաշու բոլոր հայությունը և ֆրանսական բանակը, մոտ 2000 կամավոր և օտար, բնաջինջ կըլլան»⁵⁶։

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 815—816։

⁵⁴ Paillares M., նշվ. աշխ., էջ 111—112։

⁵⁵ Կամավորը, էջ 56։

⁵⁶ «Զարթոնք» լրագիր, 31-ր հուլիսի 1953, № 237 (4645)։

Մարաշը կրակներին մեջ էր: Հրդեհը իր ճանապարհին լափելով ամեն ինչ, անվերջ ընդարձակում էր իր սահմանները: Ֆրանսիական փոքրաթիվ զորքերը հայ ինքնապաշտպանների հետ ձեռք-ձեռքի տված կենաց ու մահու կռիվներ էին մղում: Դեռևս մարտերի առաջին օրերին գեներալ Քերեթը Ադանայի հետ կապի բացակայության պատճառով մի քանի զեյթունցիների միջոցով, որոնք պատրաստակամություն էին հայտնել մարաշահայերին օգնության ձեռք մեկնելու, գեներալ Դյուֆրեոյից լրացուցիչ զորք էր խնդրել: Օրերն անցնում էին, բայց օգնության մասին ոչ մի տեղեկություն չէր ստացվում: Սպասողական այդ վիճակի մասին իր հուշերում Գ. Աճեմյանը հետևյալն է գրում. «Հակառակ մեր հույսերուն, թե շուտով մեզ օգնության հասնող բանակ մը պիտի գար՝ ընդհակառակը թուրքերը ամեն օր նորանոր ուժեր կը ստանային դուրսեն, իսկ մենք միշտ արտաքին հարաբերութենն կը տրրված, ռազմամթերքին ու պաշարին սպառելուն վախն ու վրտանգը ունեինք միշտ, ու կը կռվեինք բավական ստվարացած, թրքական մեծ ուժերու դեմ»⁵⁷:

Փետրվարի 1-ին ֆրանչիսկյան վանքի վրա բարձրացվում է ֆրանսիական մի դրոշակ, որոնց թիվը հաջորդ օրը հասնում է 15-ի: Մաթերն Մյուրեն վկայում է, թե իբր Ադանայից լուրեր էին ստացվել դեպի Մարաշ ֆրանսիական մեծաքանակ զորքերի առաջխաղացման մասին և որ այդ դրոշակները քաղաքի ումբակոծության ժամանակ ուղեցույցի դեր պիտի կատարեին՝ մատնանշելով յուրայինների և թշնամու դիրքերը⁵⁸: Ասկայն Մարաշի և արտաքին աշխարհի միջև հաղորդակցության ու կապի բացարձակ բացակայության պայմաններում մեզ անհավանական է թրվում, որ դեռևս փետրվարի 1-ին Մարաշի ֆրանսիական զորքերի հրամանատարությունը տեղեկացված լիներ օգնության փութացող զորքերի մասին:

Դեպի Մարաշ ֆրանսիական զորքերի առաջխաղացումը գրելխավորում էր գնդապետ Նորմանը, որը, ինչպես երևում է գնդապետ Բրեմոնի Վեուի գրած նամակից, մինչ այդ գտնվել էր Բեյրութում՝ բարձր կոմիսար գեներալ Գուրոյի մոտ և նրանից էլ ըստացել Մարաշ մեկնելու հրամանը⁵⁹: Նորմանի զորասյունը ռազմամթերքի և պարենի բավականին մեծ պաշարներով Իսլահիեից

ճանապարհ է ընկնում փետրվարի 5-ին և մի շարք դժվարություններ հաղթահարելով (ցուրտ ձմեռ, ընդհարումներ թշնամու հետ) փետրվարի 6-ի երեկոյան հասնում էլ-Օղլու գյուղը և նույն գիշերն իսկ կապ հաստատում Մարաշի հարավային շրջանում դիրքավորված ֆրանսիական զորքերի հրամանատար Կորնելուպի հետ: Սակայն Իսլահիեի և էլ-Օղլուի միջև ընկած ճանապարհին տեղի են ունենում մի շարք դեպքեր, որոնց անտեսումը, կարծում ենք, Մարաշի իրադարձությունների մասին մեր պատկերացումները պիտի թերի դարձնեին: Ինչպես Վեուն է գրում, Նորմանի զորասյունը ուղեկցող թուրք ժանդարմները ճանապարհին բաց են թողնում զորասյան միակ փոխադրամիջոցը հանդիսացող 250 ուղտերից 135-ը՝ իրենց բեռներով, իսկ մի փոքր անց իրենք էլ լքելով Նորմանին, դասալքում են⁶⁰: Մեզ համար պարզապես անհասկանալի է մնում, թե ինչպես զորասյան հետ շարժվող, նրա շարքերում գտնվող ժանդարմները կարողանում են արձակել ուղտերը և ճողոպրել: Առավել զարմանալին այն է, որ այդ ամենը աննկատ է մնացել ֆրանսիական հրամանատարությունից: Առաջին հայացքից քիչ կարևոր թվացող այս դեպքերը, սակայն, մի շարք խորհրդածությունների տեղիք են տալիս:

Ուշադրության արժանի է նաև Վեուի հիշատակած հետևյալ փաստը: Այն պահին, երբ Նորմանի զորասյունը գտնվում էր էլ-Օղլուից մի փոքր հարավ, ֆրանսիական մի ինքնաթիռ զորասյան վրայով թռչելիս մի ծածկագիր է բաց թողնում, որի բովանդակության մասին, դժբախտաբար, ոչինչ հայտնի չէ: Շարունակելով թռիչքը, նույն ինքնաթիռն այնուհետև Մարաշի վրա ևս նետում է մի գրություն (պիտի ենթադրել, որ ֆրանսիական հրամանատարությունը հասցեագրված և գաղտնի), որը, սակայն, ընկնում է թուրքերի ձեռքը: Նույնը կրկնվում է նաև հաջորդ օրը, երբ ֆրանսիացիներին հասցեագրված գրությունը ինքնաթիռը երկրորդ անգամ նետում է թուրքական դիրքերի վրա⁶¹: Իհարկե, ճիշտ չէր լինի այս փաստերից ելնելով հասցեագրումը հեռուն գնացող ծանրակշիռ հետևություններ անել և այդ բոլորի մեջ ինչ-որ միտումնավորություն տեսնել, եթե չլիներ մի հանգամանք՝ Մարաշի խորհրդավոր նահանջը: Ինչևիցե, ամեն ինչ ըստ կարգի:

Վրա հասնող փետրվարի 6-ի լույս 7-ի գիշերը գնդապետ

⁵⁷ Կամավորը, էջ 54:

⁵⁸ Տե՛ս Գ. Գալուսյան, նշվ. աշխ., էջ 798:

⁵⁹ Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 133:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 126—127:

⁶¹ Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 127—128:

Նորմանի զորասյանը հարկադրում է մնալ էլ-Օղլու գյուղում: Հաջորդ օրը շարունակելով առաջխաղացումը, զորասյունը ընդհուպ մտնենում է Մարաշին և ամրանում նրա հարավ-արևմուտքում գտնվող Աթ-իշի կոչվող դաշտում: Նորմանի հրանոթները սկսում են ուժեղանալ քեմալականների դիրքերը: Մարաշի արևմուտքում գտնվող բարձունքները գրավելու և քաղաքը հյուսիս-արևմուտքից շրջանցելու նպատակով Նորմանի զորաբաժինը մի շարք գլխահարներ է կազմակերպում այս շրջաններում ամրացած թշնամու վրա: Գրավելով մի քանի կարևոր դիրքեր և դրանցից դուրս վանելով թուրքական զորքերին, Նորմանի զորասյունը հաջողությամբ ավարտում է մարտական առաջադրանքն ու անմիջապես կապ հաստատում Մարաշի հյուսիսում գտնվող գեներալ Քերեթի շտաբի հետ: Միաժամանակ ամբողջ ձայնով սկսում են խոսել ֆրանսիական այն ուժերն ու մարտկոցները, որոնք երկար ժամանակ մեկուսացված ու լուռության էին դատապարտված: Ֆրանսիական զորքերի արձակած արկերը սարսափելի ավերածության են ենթարկվում թուրքական դիրքերը: Ամեն ինչ կորչում է կրակի ու փոշու մեջ: Չկարողանալով դիմադրություն կազմակերպել, քեմալականները աստիճանաբար տեղի են տալիս ու խուճապահար լքում իրենց դիրքերը:

Մինչ իրավիճակը Մարաշում այսպիսին էր, փետրվարի 8-ի երեկոյան ժամը 8 անց 30 րոպեին գեներալ Քերեթին է ներկայանում կրտսեր լեյտենանտ Դյումենը և գնդապետ Նորմանի անունից հաղորդում հետևյալ բանավոր հրամանը. «Եթե 24 ժամվա ընթացքում Մարաշում դրուժյունը չվերականգնվի, հարկ կլինի դատարկել այն: Եթե դրուժյունը վերականգնվի, ապա հաստատապես պետք է մնալ: Այդ դեպքում գեներալ Քերեթը պետք է գնահատի այն ուժերը, որոնք պիտի մնային քաղաքում»⁶²: Խոսելով Նորմանի անունից հաղորդված վերոհիշյալ հրամանի մասին, Վեոն ավելացնում է, որ, ինչպես հետագայում է պարզվել, այն քիչ էր նմանվում գեներալ Դյուֆիեռյի արձակած հրամանին⁶³: Նույն օրվա ժամը 23-ին գեներալ Քերեթին է ներկայանում սպա Բոնուլրիեն և իր հերթին հաստատում Դյումենի հաղորդած հրամանի իսկությունը, ավելացնելով, որ Ուրֆայում ապստամբությունը պայթելու վրա է և որ դա գնդապետ Նորմա-

նին հարկադրում է հաջորդ օրն իսկ վերադառնալ Իսլահիե՝ արեւելքը մեկնելու համար⁶⁴:

Նույն երեկոյան Նորմանը մի բանավոր հրաման է ուղարկում նաև Մարաշի հարավային շրջանում և հիմնականում հայկական թաղերում դիրքեր գրաված Կորնելուպի զորքերին, որով պահանջվում էր անմիջապես թողնել զբաղեցրած դիրքերը և միանալ իրեն: Կորնելուպը մի պահ ապշած Նորմանի տարօրինակ թրվացող հրամանից, ի վերջո մերժում է կատարել այն, քանի որ իր զորքերը անմիջականորեն ենթարկվում էին գեներալ Քերեթի հրամանատարությունը: Սակայն փետրվարի 9-ի առավոտյան Կորնելուպն ստանում է Նորմանի նոր, այս անգամ արդեն գրավոր հրամանը և հարկադրվում տեղի տալ ու իր զորքերը հեռացնել գրաված դիրքերից:

Ֆրանսիական զորքերի հեռացման լուրը շփոթ ու խուճապ է առաջացնում հազարավոր անպաշտպան մնացած հայերի շրջանում: Վեոն նկարագրում է այն սրտաճմլիկ տեսարանը, երբ լքված ու թշնամուն թողնված հայ կանայք, ծերերն ու երեխաները փաթաթվում էին հեռացող ֆրանսիացի զինվորներին և աղաչում իրենց չհանձնել թշնամուն: Բայց ոչինչ չի օգնում: Թըշնամուն հանձնվելու վտանգը ստիպում է հայերին հապճեպորեն թողնելու ամեն ինչ և հետևել ֆրանսիական զորքերին: Հայերը, գրում է Վեոն, բացականչում էին, թե Ուրֆային օգնելու համար ֆրանսիացիները լքում են մեզ⁶⁵:

Ֆրանսիական զորքերի կողմից հայկական թաղամասերի լքումը անմիջապես օգտագործվում է քեմալականների կողմից: Նրանք, դուրս գալով իրենց դիրքերից, փորձում են գրավել լքված ֆրանսիական ամրությունները ու միաժամանակ հրկիզում հայկական թաղերը: Ավելի քան շորս ժամ կատաղի մարտեր են տեղի ունենում ֆրանսիական և քեմալական ուժերի միջև: Բայց Մարաշում քեմալականների դիմադրությունն արդեն կտրված էր: Չորս կողմից պաշարված ու անվերջ ուժեղացող թուրքական դիրքերը ավերակույտերի էին վերածվել: Թվում էր, որ հաղթանակը կատարյալ ու վերջնական էր:

Փետրվարի 9-ի երեկոյան ստեղծված իրավիճակի մասին Գ. Աճեմյանն այսպես է գրում. «Թրքական քանի մը մղկիթներ և մինարեններ քանդված և խորտակված էին տեղացող ուումբերեն:

⁶² Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 131:

⁶³ Տե՛ս նույն տեղում:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

⁶⁵ Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 131—132:

Թուրքերը լքած ամեն ինչ սարսափահար կը փախչեին դեպի լեռներն ու դաշտերը: Ամեն կողմեն տեղացող գնդակները կը տասանորդեին այս խուժանը: Թրքական ոչ մեկ դիրքե, նույնիսկ բերդեն հրացանի ձայն մը անգամ չէր լսվեր, հայ պաշտոնյաներն ու զինվորները իրարու բով գալով կուրախանայինք և կը մտածեինք վաղվան հաջողություններու և վերջնական հաղթանակի վրա»⁶⁶: Դժբախտաբար, այդպես միայն թվում էր:

Փետրվարի 9-ի երեկոյան, երբ հյուծված ու բարոյալքված թշնամին օրհասական ճիգեր էր գործադրում անելանելի կացութունից դուրս գալու համար, քաղաքի մյուս ծայրում վճռվում էր մարաշահայության ճակատագիրը: Գեներալ Քերեթը թողնում էր իր զորակայանը և շտապում գնդապետ Նորմանի մոտ խորհրդակցության՝ նախապատրաստելու ֆրանսիական զորքերի նահանջը: Մինչ այդ, օպտիկական նշաններով Նորմանը գեներալին էր հայտնել հետևյալը. «Իմ զորասյունը Սիրիայում վերջին ազատ ուժն է: Ֆրանսիան այլևս ոչինչ չի կարող ուղարկել: Կենտրոնացման համար պետք է նահանջել»⁶⁷:

Նույն այս ընթացքում գեներալ Քերեթին է ներկայանում ամերիկյան հիվանդանոցի գլխավոր բժիշկ Վիլսոնը՝ երիտասարդ թուրքերի և Մարաշի թուրք երեկիների պատվիրակ դոկտոր Մուստաֆայի տեսակցության խնդրագիրը հանձնելու նպատակով և ավելացնում իր կողմից, որ թուրքերը հանձնվում են: Բայց, դարմանալիորեն, գեներալը հրաժարվում է ընդունել թուրք պատվիրակին և այն հետաձգում է հաջորդ օրվան: Ժամը 21-ին կայանում է Քերեթի և Նորմանի հանդիպումը: Պատճառաբանելով, որ իր ուժերը խիստ ջլատվել են, որ չի բավարարում պարենը և ռազմամթերքը, գնդապետ Նորմանը համոզում է գեներալին նահանջել Մարաշից՝ ավելի մեծ ու կազմակերպված ուժերով այն վերագրավելու համար⁶⁸: Եվ այսպես, Մարաշը լքելու որոշումն ընդունված էր:

Փետրվարի 10-ին գեներալ Քերեթը վերադառնում է քաղաք և միայն ժամը 18 անց 30 բոպեին ամերիկյան կոլեջի շենքում, Թիբոլտի ներկայությամբ ընդունում է թուրք պատվիրակ դոկտոր Մուստաֆային: Վերջինս խոստովանում է, որ Նորմանի զորախմբի տեղ հասնելը, քաղաքի ավերումն ու հրկիզումը, մեծ թվով

զոհերն ու վիրավորները մի շարք հակասությունների առաջացման պատճառ էին դարձել, բարոյալքել թուրքերին և հարկադրել էին անձնատրուկյան⁶⁹: Հանդիպման ժամանակ գեներալը դոկտոր Մուստաֆային բանավոր կերպով հայտնում է ֆրանսիական հրամանատարության պայմանները և խոստանում, որ հաջորդ օրն իսկ այն գրավոր ձևով կուղարկի բժիշկ Վիլսոնի միջոցով, մի բան, որ երբեք չի կատարվում:

Իր «Մարաշի աղետը 1920-ին: Ասպետական Ֆրանսիայի անփառունակ նահանջը» հոդվածում Նշան Սաաթճյանը ևս անդրադառնում է Քերեթ—Մուստաֆա բանակցություններին և ավելացնում, թե երբ թուրք պատվիրակը ներկայանալով գեներալին հայտնում է, որ «թուրքերը առանց պայմանի անձնատուր կըլլան...», Քերեթը նրան պատասխանում է. «Հիմա ազատ եք այլևս, մենք պիտի մեկնինք, ձեզի կը թողունք հայերը, հաշտվեցեք անոնց հետ, ալ գործ շունիք մեզի հետ, այս է իմ ստացած հրահանգս...»⁷⁰:

Այսպիսով, մերժվում է անձնատրուկյուն աղերսող ձեռքը և ձեռնարկվում շափազանց անհեռատես ու արկածախնդրական մի քայլ՝ նահանջը: Ըստ Նորմանի և Քերեթի միջև կայացած պայմանավորվածության, նահանջը պիտի կատարվեր փետրվարի 10-ի լույս 11-ի գիշերը, Նորմանի կողմից տրված ազդանշանից հետո: Մինչ այդ, քաղաքում գտնվող ցիր ու ցան ֆրանսիական զորքերը և նահանջի մասին տեղեկացված ֆրանչիսկյան բարոզիչները, ինչպես նաև տարերայնորեն նրանց հետևող հայերի քաղմահազարանոց ամբոխը, կենտրոնանում են զորանոցում և կես գիշերն անց շարժվում դեպի Աթ-իշի դաշտը: Անաղմուկ ու գաղտագողի նրանք, գեներալի գլխավորությամբ, անցնում են քաղաքի արևմուտքում գտնվող այգիներով, ապա թեքվում դեպի հարավ և այստեղ միանում Նորմանի զորքերին: Երբ ամեն ինչ կազմ ու պատրաստ էր, գիշերվա ժամը 3 անց 15 բոպեին Նորմանի հրամանով սկսվում է Մարաշի անփառունակ նահանջը:

Նահանջի նախապատրաստության ամբողջ ընթացքում ֆրանսիական հրամանատարությունը քիչ ջանքեր չէր գործադրել այն մարաշահայերից գաղտնի պահելու համար: Եվ միանգամայն զուր են գնդապետ Բրեմոնի այն փորձերը, որոնք նպատակ ունեն

⁶⁶ Կամավորը, էջ 59:

⁶⁷ Du Vêou Paul, նշվ. աշխ., էջ 133:

⁶⁸ S' u Du Vêou Paul, նշվ. աշխ., էջ 134:

⁶⁹ S' u նույն տեղում, էջ 135:

⁷⁰ Հուշամատյան մեծ եղեռնի, էջ 839—840:

մի կերպ արդարացնել կամ գուցե թեթևացնել ֆրանսիական հրամանատարությունների հակամարդկային արարքը, հայտարարելով որ իբր «պարագաների հապճեպության հետևանքով հայ բնակչությունը նահանջի մասին շատ թերի էր տեղեկացված»⁷¹:

Եվ ինչու հորինել նահանջի իբր թե հապճեպության առասպելը, երբ հայտնի է, որ այն նախապատրաստվում ու նյութվում էր ավելի քան երկու օր: Հետևաբար, ֆրանսիական հրամանատարությունը ցանկության դեպքում ուներ և՛ ժամանակ, և՛ միջոցներ, նահանջի մասին հայերին իրազեկ պահելու համար: Ավելորդ չէ հարցնել Բրեմոնին, թե ինչպե՞ս տեղեկացվեցին քաղաքով մեկ ցրված ու իրարից կտրված ֆրանսիական զորքերը և ամերիկյան հիվանդանոցում տեղավորվեցին վիրավոր զինվորները: Չէ՞ որ առանց բացառության քաղաքի բոլոր շրջաններում հայերը կենտրոնացած էին ֆրանսիական զորքերի անմիջական շրջակայքում և անգամ ներսում: Անվիճելիորեն հնարավոր էր բայց հետին նպատակներով շարվեց:

Ժամանակակիցների ու ականատեսների վկայությունները անհերքելիորեն խոսում են այն մասին, որ ֆրանսիական հրամանատարությունը մարաշահայերին նահանջի մասին ոչ միայն չէր տեղեկացրել, այլ բազմապիսի միջոցներով ու եղանակներով, ընդհուպ մինչև զնդակահարում, աշխատել էր կասեցնել նահանջող ֆրանսիական զորքերին հետևելու հայերի փորձերը:

Ականատես Ն. Սաթթյանը, խոսելով Մարաշի ճակատագրական նահանջին նախորդող անորոշ վիճակի մասին, ավելացնում է, որ «...բաներ մը կը դառնան, շշուկ մը, փսփսուք մը, որմե շենք կրնար որոշ բան մը հասկնալ: Վերջապես փետր. 11-ի կես գիշերին ֆրանսիական միացյալ բոլոր ուժերը կը պարպեին քաղաքը և անձայն, անշշուկ, ջորիներու սմբակներուն թաղիքի կտորներ⁷² կապած կը փութային դեպի Աթ-իշի, գնդ. Նորմանի բանակատեղին...»: Ապա նա իրավացիորեն հարց է տալիս. «Ինչո՞ւ այս անփառունակ փախուստը... քանի վերջերս նկատված էր որ թուրքերը ռազմանյութի պակասեն կը տառապեին, որսի հրացաններ կը գործածեին, երկաթի կտորներ դնելով փամփուշտի տեղ: Նույնպես ֆրանսիական տեղեկաբերներ իմացուցած էին որ

թուրքեր իրենց ընտանիքները շրջակա թուրք գյուղեր փոխադրած էին և իրենք ալ դիրքերը լքած, անգն մնացած...»⁷³:

Ն. Սաթթյանը նկարագրելով ս. Քառասուն մականց եկեղեցու շրջակայքում ապաստանած և նրանց միացած շուրջ 4000 հայերի՝ հեռացող ֆրանսիական զորքին հետևելու, միանալու ճիգերը, գրում է. «Հանկարծ մեծ իրարանցում մը... ֆրանս. զինվորներ կարգիլեին իրենց հետևող հայերը, նույնիսկ հրացանի կոթերով անոնք գետին կը ձգեն, ոմանք, ափրիկեցի զինվորներ փամփուշտ ալ կը գործածեն և կվիրավորեն 8—10 հոգի»⁷⁴:

Վերոհիշյալ վկայությունները հաստատում են նաև Գ. Աճեմյանի հուշերի հետևյալ տողերը. «Երեկոյին մութը վրա կը հասնի և գոհ՝ այդ օրվան գեղեցիկ հաղթություններն, անգամ մըն ալ դիրքերը կայցելեմ և կառանձնանամ խուցս, պահ մը գոցելու համար աչքերս: Մեկ ժամ միայն կը տևե այս շնորհը, հանկարծ փոխհիսնապետը ձայն կուտա ինձ թե պետք է շուտով լուր տամ դիրքերուն, անմիջապես կազմ ու պատրաստ ըլլալու և մեկ ժամեն մեկնելու համար... Երազ էր թե իրականություն: Քիչ մը կը մտածեմ, կը տեսնեմ որ միևնույն բառերը կրկին ականջիս կը հասնին: Այլ տարակույս չկար որ նահանջի հրաման էր որ կը տըրվեր... Միևնույն ժամանակ մեր հրամանատար սպան կը հավաքե մեզ ու սպառնական ձևով մը կազդարարե, որ այդ շարժումի մասին ոչ ոքի չպետք է հայտնենք, այլապես իբրև զինվորական հրամանի անսատողներ մահվան պատիժ կա...»⁷⁵:

Որ նահանջը խիստ զաղտնի պայմաններում է կազմակերպվել, վկայում է նաև ֆրանսիացի վանահայր Մաթերն Մյուրեն: Նա գրում է, որ դեռևս փետրվարի 9-ի երեկոյան ֆրանսիացի սպաների հետ ունեցած զրուցի ժամանակ իր համար հայտնի էր դարձել Մարաշից նահանջելու մասին: Նույն սպաները, շարունակում է վանահայրը, միաժամանակ խնդրել էին իրենից այդ մասին չհայտնել ոչ ոքի⁷⁶:

Սա դեռ բոլորը չէր: Լեգեոնական Գասպար Մենակը «Փախուստը Մարաշեն» խորագրով իր հուշերում գրում է, որ շարաքաստիկ նահանջի գիշերը մի խումբ հայ լեգեոնականների հանձնարարված է եղել հսկելու այն փողոցը, որտեղով պիտի անցնեին

⁷¹ Brémond E., նշվ. աշխ., էջ 40:

⁷² Զիերի և ջորիների սմբակների թաղիքի կտորներ փաթաթելու փաստի մասին վկայում են նաև բազմաթիվ ականատես մարաշահայեր:

⁷³ Հուշամատյան մեծ եղևնի, էջ 839:

⁷⁴ Հուշամատյան մեծ եղևնի, էջ 841:

⁷⁵ Կամավորը, էջ 59:

⁷⁶ Տե՛ս Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 799:

Ֆրանսիական 150 հոգուց բաղկացած զորախումբը: Այն վաղուց հեռացել էր, գրում է նա, բայց այն սպան, որը պետք է հայտնի լեգեոնականներին դիրքերը թողնելու և իրենց միանալու մասին, այդպես էլ չի երևում: Պարզվում է, որ ...մոռացել էր⁷⁷: Նահանջի ժամանակ, երբ Ֆրանսիական զորքը արդեն հեռացել էր քաղաքի սահմաններից, հայտնի է դառնում, որ թուրքական գերեզմանոցի դիրքերում... մոռացվել էին ևս 15 հայ լեգեոնականներ⁷⁸:

Աթ-իշիի դաշտում հավաքված Ֆրանսիական զորքերը, որոնց ընդհանուր թիվը ըստ Վեուի հաշվումների շուրջ 2500-ի է հասել⁷⁹, ուղղութիւն են վերցնում դեպի հարավ: Նրանց էր հետևում սարսափահար ու խելակորույս մարաշահայերի բազմահազարանոց ամբոխը⁸⁰: Թե ինչպիսի իրարանցում ու խառնաշփոթ վիճակ էր տիրում նահանջողների շարքերում, վկայում են բժ. Մեյալ էլիոթի հետևյալ սեղմ, բայց պատկերավոր խոսքերը. «Զիերու խրխնջուն, զավակնին կորսնցուցած մայրերու ճիշեր, մայր փնտրող մանուկներու լաց, հրետակառքերու ճարճատյուն, սպաներու և մարդոց աղաղակներ և ձյունափոթորիկ»⁸¹:

Որպեսզի մինչև լուսաբաց դուրս գան Մարաշի սահմաններից, Ֆրանսիական նահանջող զորքերը մեծ արագությունով շարժվում են դեպի Ակ-սու գետի կամուրջը: Թուրք շեթենները, որոնք նախօրոք գրավել էին կամուրջը, կրակ են բացում առաջապահ զորախմբի վրա: Բայց նրանց դիմադրությունը շատ կարճատև է լինում: Շուտով Ֆրանսիական զորքերին հաջողվում է այնտեղից դուրս մղել թշնամուն, գրավել կամուրջը և ապահովել անցումը: Այստեղից արդեն նահանջողների առջև բացվում էր Իսլահիեի ճանապարհը:

Հայ կաթողիկոսների եկեղեցում գտնվող և նահանջից անտեղյակ շուրջ երկու հազար հայեր լուսադեմին, լսելով Ֆրանսիացիների փախուստի մասին, որոշում են հետևել նրանց: Բայց Ֆրանսիացիների փախուստից խրախուսված թուրք շեթեններն ու

խուժանը, դուրս գալով իրենց թաքստոցներից, հարձակվում են անպաշտպան ժողովրդի վրա և ջարդում բոլորին: Խոսելով այս մասին Վեուն գրում է, որ Ֆրանսիական վերջապահ զորքերից քիչ հեռու լսվում էին կոտորվող հայերի զարհուրանքի և թուրքերի հաղթական ճիշերը⁸²: Քաղաքից լսվող օրհասական աղաղակների մասին Ն. Սաաթճյանը գրում է. «...արդեն քաղաքեն կը լավեին մարդախոշոշ բորենիներու և գիշատիչ գայլերու ոռնոցները, նույնպես թաղերու մեջ փախուստ տվող սվինահար հայերու ճիշերը...»⁸³:

Մարաշում մնացած և քեմալականներին հանձնված հայերի նկատմամբ կիրառված բարբարոսությունների մասին է խոսվում նաև հնչակյանների մեզ ծանոթ գրությունում: «Թուրքական զորքերը, շեթենները և բաշիբոզուքները, — կարդում ենք նրանում, — իրագործեցին մռայլ ինկվիզիցիայի պատմության մեջ չսված այնպիսի գազանություններ, որոնց առջև գունատվում են նույնիսկ պատերազմի տարիների հայկական ջարդերի ամենասարսափելի տողերը:

Չեռքերը և ոտքերը կապած ութ հազար ծերեր և երեխաներ հրկիզվեցին կենդանի-կենդանի՝ այդ նպատակի համար հատուկ պատրաստված վիթխարի խարույկում, որի շուրջը երաժշտություն, երգ ու պարով ամենանողկալի եղանակով, իրենց ամուսինների, եղբայրների և հայրերի աչքերի առջև, բռնաբարեցին մերկացրած երիտասարդ կանանց ու աղջիկների, և բռնաբարություն զազրելի ակտից հետո զոհերին նետեցին բոցավառվող խարույկի մեջ: Իսկ մնացած մի քանի հազար հայերի, որպես իրենց դեմ ըմբոստացող հեղափոխականների, սարսափելի շարձարանքներից հետո գլխովին կոտորեցին»⁸⁴:

Բոցերի մեջ կորած Մարաշի մասին խոսելիս Մաթերն Մյուրեն գրում է. «Ժամանակ առ ժամանակ կանգ կառնեինք, տալու համար կաթիլ մը արցունք և վերջին «մնաս բարովը» Մարաշին, որ սարսափելիորեն ավերված՝ հեռուն մեզ կը բարևեր արհեստական ամենագեղեցիկ և գրավիչ բոցերով»⁸⁵: Իսկ Գ. Աճեմյանը, կարծես վանահորը լրացնելու նպատակով, գրում է. «Ակամա մենք ալ այդ կողմը դարձուցինք մեր աչքերը, անգամ մըն ալ

77 Տե՛ս Հուշամատյան մեծ եղևնի, էջ 847:

78 Տե՛ս նույն տեղում:

79 Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 137:

80 Ըստ Վեուի տվյալների, Ֆրանսիական զորքերին հետևող հայերի թիվը հավասար է եղել 8 հազարի (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 137), որը մեր կարծիքով չափազանցված է: Ըստ Ն. Սաաթճյանի՝ 4200 (տե՛ս Հուշամատյան մեծ եղևնի, էջ 842), ըստ Մաթերն Մյուրեի՝ 3200 (տե՛ս Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 802):

81 Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 810:

82 Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 137:

83 Հուշամատյան մեծ եղևնի, էջ 841:

84 ՉՍՄ ՊԿՁՁԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 3, թ. 29:

85 Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 802:

տեսնելու արյունոտ Մարաշը, ուր, ով գիտե, դեռ ինչեր կը շարունակվեն այդ պահուն: Բավական լավ երեցող այդ քաղաքը՝ ծխացող ավերակույտ մըն էր»⁸⁶:

Պակաս դաժան չէր նաև նահանջողների ճակատագիրը: Չընայած ձմռան խստությանը և ճանապարհի դժվարություններին, նահանջողները համեմատաբար անկորուստ ու տանելի պայմաններում, առանց թշնամու հետ որևէ ընդհարման, հասնում են Բել-փունար գյուղը: Գյուղից մեկ կմ դուրս գտնվող դաշտում էլ որոշվում է գիշերել բացօթյա: Բայց «...քանի մը ժամ վերջ փոթորիկ մը կը սկսի ու անոր հետ ձյուն մը: Գյուղեն կիլոմետր մը հեռացած ենք, վրան չկա, կերակուր չկա: Ձյունը և փոթորիկը անընդհատ կը շարունակվին, ու գետինները դեռ չթրջած տեղ մը կը փովինք, բնության այս հալածանքը ևս տանելու: Ով կրնար քնանալ: Տառապանքներով լի գիշեր մը անցուցինք. երբ ոտքի ելանք, ամենքը ձյունին տակ ծածկված գտանք: Հետզհետե ձյունին տակեն հարուստ կանոնին մեր տղաները...»⁸⁷:

Թե որքան տաժանալից է եղել նահանջողների հետագա ճանապարհը, երևում է Գ. Մենակի հետևյալ մահասարսուռ նկարագրությունից. «Քիչ ետք մարդիկ կը սկսին իյնալ, նախ քիչ քիչ, հետզհետե ավելի մեծ թիվով կիյնան ու կը թաղվին ձյունի տակ... Սրտառուշ աղաղակներ սիրտդ կը բզկտեն, բայց անգոր ենք ու անկարող: Վատուժ, անսվաղ ու դողդոջուն՝ քիչեր կը տոկան: Շարքերը կը նոսրանան ավելի: Անկարելի է հառաջանալ: Քանի մը ողջ մնացած ձիեր ու ջորիներ ճամփա կը բանան և քանի մը հազար մարդիկ կը հետևին անասուններուն, անոնց ոտքերու հետքերուն վրայեն... Բազմությունը, տասանորդված, կը քալեն. ձյունը կիջնեն անգթորեն, ձեռքերուս մատները սենալ կը սկսին. սառած են ու կարծրացած փայտի պես: Ուղեկից ընկերներս չկան, կորսնցուցած ենք զիրար: Ամեն քայլափոխին մեկը կիյնալու ու խորհրդավոր»⁸⁸:

«Ծնողները, — գրում է Մաթերն Մյուրեն, — իրենց երեխաները կը նետեն ճամփու եզերքներուն վրա, չկարողանալով այլևս կրել զանոնք իրենց կոնակներուն վրա»⁸⁹: «Հազարավոր սառածներ, գրում է էլիոթը, անկարող ընկնում էին ճանապարհին ու

մայրերը անտեղյակ դեռևս շարունակում էին շալակած տանել իրենց անշնչացած և քարացած հոգեհատորներին»⁹⁰:

Անընդհատ տեղացող ձյան շերտը տեղ-տեղ հասնում էր 1—2 մետրի, իսկ որոշ տեղերում քամին նույնիսկ ձյունն անանցանելի պատնեշ էր կանգնեցրել նահանջողների առջև: Այսպիսի դժվարին պայմաններում առաջապահ ջոկատը, որի հետքերով ընթանում էին և՛ զինվորները և՛ հայերը, մոլորվում ու կորցնում էին ճանապարհը: Եվ միայն ավելի քան 12 ժամ աննպատակ թափառումներից ու դեզերումներից հետո հանկարծ հեռվից լսված գնացքի սուլոցը ավետում է փրկությունը: Ուրեմն Իսլահիեն հետո շէր: Նահանջողների մնացորդները, հյուժված, քայքայված ու կիսամեռ, հազարավոր սառչողների թողնելով ճանապարհին, մտնում են Իսլահիե:

Անփառունակ նահանջ ու ահավոր վախճան: Այլ կերպ գնահատել չի կարելի ամոթալի այս նահանջի արդյունքները, որի ընթացքում Ֆրանսիական զորքերը կորցրին շուրջ 1200 զոհված և ավելի քան 200 խեղված զինվոր, այսինքն անհամեմատ ավելի, քան Մարաշի 21-օրյա մարտերի ժամանակ, իսկ զորքին հետևող 5000 հայերից շուրջ 3000-ը իրենց գերեզմանը գտան Բել-փունար—Իսլահիե ճանապարհի եզրերին:

Գեներալ Դյուֆիեոյին ուղղված 1920 թ. փետրվարի 25-ի նամակում Մ. Տամատյանը, քննադատելով Ֆրանսիական իշխանությունների և, մասնավորապես, գնդապետ Բրեմոնի վարած թրքապետ քաղաքականությունը, գրում է, որ «...իրականությունը այն է, թե վարչությունը հարկ եղածին պես չգնահատեց թյուրք շարժումին կարևորությունը, զոր ան կարծեց թե պիտի կրնար խեղդել մեղմ միջոցներով, մինչև իսկ պարզ համոզումով: Շատ ջանացինք զգուշացնել զինք թյուրք և իսլամ ցեղախումբերուն երկերեսությունեն՝ անխտիր: Ան ավելի արժեք ընծայեց անոնցմե ումանց բարեկամական հավաստիքներուն և հավատարմության:

Վստահ չենք թե վերջին օրերուս արյունոտ անցքերը զինք համոզած են այդ մասին: Ինչ ալ ըլլա, հայ արյունը չգաղթեցավ հոսելը կաթիլ առ կաթիլ՝ առաջին ամիսներուն և հետզհետե հորդառատ՝ ինչպես նախօրոք նախատեսած էինք, ի վերջո հանցելու համար անցյալ հունվարի և փետրվարի կանոնավոր ըմբոստությունաց, որոնց ընթացքին մեր զոհերը այլևս հազարներով կը

⁸⁶ Կամավորը, էջ 62:

⁸⁷ Կամավորը, էջ 63:

⁸⁸ Հուլիսամատյան մեծ եղեռնի, էջ 843:

⁸⁹ Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 803:

⁹⁰ Նույն տեղում, էջ 810:

հաշվվին: Գալով Մարաշի նահանջին կատարված խորհրդավոր պարագայից ներքև և որուն մասին դուք ևս ընդունեցաք քննության մը անհրաժեշտությունը, ան ունեցավ կրկնապես ցավալի հետևանքներ: Առանց հաշվելու ծանր կորուստները, որոնց ենթարկվեցան հայերը նահանջեն ետք փողոցային կոիվներու ընթացքին, նահանջողներեն երկու հազար մերայիններ մեռան ձյուներու մեջ թաղվելով Բել-փունարի և Իսլահիեի միջև, մինչ Մարաշ մընացած մոտ 10000 քրիստոնյաները լքված մնացին թյուրքերու քմայքին»⁹¹:

Առ այսօր բազմապիսի հանգամանքներ, և, մասնավորապես, Մարաշի նահանջի իրական պատճառների, ծրագրման ու կազմակերպման մանրամասնությունների քողարկումը ֆրանսիական պաշտոնական շրջանակների կողմից, խոչընդոտում են պատասխանելու խորհրդավոր թվացող նահանջի շատ հարցերին:

Հանգամանորեն խոսելով Մարաշի իրադարձությունների, առաջացած դժվարությունների ու բազմաթիվ այլ հարցերի մասին, որոնք անմիջականորեն առնչվում են Մարաշի նահանջի հետ, իր «Կիլիկիան 1919—1920 թթ.» գրքում Բրեմոնը այսպիսի եզրակացություն է հանգում. «Մարաշի պարսպումը պաշտոնական զեկուցագրերի առարկա դարձավ, այս կապակցությամբ ներկայումս հնարավոր չէ պատասխանել այդ հարցին»⁹²: Ապա խոսելով նահանջի որոշման մասին ավելացնում է. «Հետևաբար նահանջի վճիռը մնում է որպես գաղտնիք. այն ոչ Բեյրութում և ոչ էլ Ադանայում ընդունվեց, այլ Մարաշում»⁹³: Կոստելով Մարաշի նահանջի և առնչվող այլ դեպքերի պատասխանատվության մասին, Բրեմոնը բազմիմաստ եղանակով հայտարարում է, որ այն ընկնում է նրանց վրա, ովքեր չկարողացան Մարաշ բերել 200—300 մարդուց բաղկացած օգնական ուժեր ու թնդանոթներ՝ վախեցնելու համար առաջին տատանվող ապստամբներին⁹⁴: Թե ո՞ւմ մասին է ակնարկում Բրեմոնը, դժվարանում ենք որոշել: Մ. Տամատյանը ևս Մարաշի նահանջը համարում է «անակնկալ և հավետ անբացատրելի նահանջ»⁹⁵:

Դա 1921 թ. էր, երբ, հավանաբար, դեպքերի ու իրադարձու-

թյունների թարմության պայմաններում Բրեմոնին շատ բան հայտնի չէր, գուցե և այլ պատճառներով նա պարզապես իրավասու չէր գաղտնիքը բացահայտելու: Հետագայում, երբ տասնամյակներ էին անցել և շատ ջրեր հոսել, երբ ժամանակը արել էր իրենը, Բրեմոնն արգեն աշխատում էր լուծել հանգույցը և ուզի՞ր աչքերով նայել ճշմարտությունը: Վեուին ուղղված իր նամակում, որի մի հատվածը մեջքերված է Վեուի գրքում և որի թվականը դժբախտաբար չի նշված, Բրեմոնը շատ որոշակի գրում է. «Գեներալ Դյուֆիեոն հրամաններ արձակել էր, որոնք, սակայն, (Մարաշի—Շ. Թ.) դատարկմանը չէին վերաբերում: Նորմանը գալիս էր Բեյրութից և մեկ անգամ ևս իր առաքելությունն ստացել էր Գուրոյից: Մենք Ադանայում ոչինչ չգիտեինք անցուդարձերի վերաբերյալ: Գեներալ Դյուֆիեոն դատարկման մասին իմացավ Նորմանի զորասլան (Իսլահիե—Շ. Թ.) ժամանելը տեսնելով: Բայց նրա (Նորմանի Մարաշ—Շ. Թ.) մեկնելուց առաջ մենք շատ դարմացանք, երբ Գուրոյից հետևյալ բովանդակությամբ հեռագիրն ստացանք. «Անշուշտ, Մարաշը դատարկվելու մասին հարց չկա»: Գեներալ Դյուֆիեոն ինձ ասաց. «Բայց ինչու է այսպիսի հեռագիր ուղարկում ինձ, երբ ոչ ոք այդ մասին երբեք չի մտածել»: Սա քողարկման հեռագիր էր»⁹⁶:

Մարաշը լքելու մասին խոսվում է նաև հնչակյանների մեր հիշատակած գրությունում: Նրանում պարզորոշ ասվում է, որ Մարաշը թողնելու որոշումը ընդունվել է ոչ թե Մարաշում, այլ գրսում և որ ավելի հավանական է՝ Բեյրութում («Ֆրանսիական իշխանության գլխավոր պետի»՝ բարձր կոմիսար գեներալ Գուրոյի գրասենյակում): «20 օրյա պաշարումից ու բազմաթիվ անհաջող գրոհներից հետո թուրքերը, — կարդում ենք փաստաթղթում, — հնազանդություն հայտնեցին և պատերազմական գործողությունները դադարեցնելու համար բանակցություններ սկսեցին գրավող զինվորական իշխանությունների հետ: Բայց այս նույն ժամանակ Ադանայից ինքնաթիռով ժամանած զինվորական անձնավորության միջոցով կայազորի պետի անունով հանկարծ ստացված ֆրանսիական իշխանության գլխավոր պետի հրամանը՝ անմիջապես թողնելու քաղաքը և շարժվելու հարավ... Սկզբում տարբեր նկատառումներով հրաժարվելով կատարել հրամանը, հետագայում կայազորի պետը ժամանած անձնավորու-

⁹¹ «Հասկ» ամսագիր, 1951, № 1, էջ 12:

⁹² Brémond E., նշվ. աշխ., էջ 40:

⁹³ Brémond E., նշվ. աշխ., էջ 40:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

⁹⁵ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 326:

⁹⁶ Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 133:

թյան սպառնալիքների տակ համաձայնվեց իրագործել խիստ հրամանը—բուրժուական Ֆրանսիայի պիղատոսը Կիլիկիայում: Եվ ֆրանսիական կայսրորդ գիշերով, իր հեռացման մասին հայերին շահայտնելով և պայթեցնելով ռազմանյութերի պահեստները, թողեց Մարաշ քաղաքը»⁹⁷:

Պոլ Դյու Վեուն ևս գտնում է, որ Մարաշի նահանջի հրամանից գեներալ Դյուֆիեոն անտեղյակ էր և որ այն գալիս էր գեներալ Գուրոյից: Այն երևույթը, — գրում է նա, — որ գնդապետ Նորմանը խորհրդակցություն համար իր մոտ էր կանչում գեներալ Քերեթին, իսկ իրականում ըստ զբաղեցրած պաշտոնի և զինվորական աստիճանի ճիշտ հակառակը պետք է կատարվեր, վերկայում է այն մասին, որ Մարաշը թողնելու հրամանը գալիս էր վերևից⁹⁸:

Մարաշի նահանջի հրամանի կապակցությամբ, կարծում ենք ավելորդ չէ հիշեցնել այն ծածկագիրը, որ Մարաշի ճանապարհին գնդապետ Նորմանը ստացել էր ինքնաթիռից: Մեզ համար անհայտ է նրա բովանդակությունը: Բայց այնուամենայնիվ ինչո՞ւ չենթադրել, իսկ դա այնքան էլ անտրամաբանական չէ, որ Մարաշի նահանջի գաղտնիքը թաղված է հենց այդ ծածկագրի մեջ:

Հիմնավոր չեն նաև այն փաստերը, որոնցով գնդապետ Նորմանը և ուրիշներ փորձում են արդարացնել Մարաշի ողբերգական նահանջը: Խոսել Մարաշում պարենի և, մասնավորապես, ցորենի: պակասի մասին բացարձակ կեղծիք է, երբ, ինչպես Բրեմոնդն ու Վեուն են նշում, Մարաշում եղել է ցորենի մեծ պաշար և որ քեմալականների Մարաշի վրա հապճեպ հարձակման հիմնական նպատակներից մեկն էլ դրան տիրանալն է եղել⁹⁹:

Ինչ վերաբերում է Նորմանի այն հայտարարությանը, թե իբր իր ուժերը փոքրաքանակ էին և պետք էր նահանջել՝ ավելի մեծ ուժերով Մարաշը վերագրավելու համար, չի դիմանում որևէ քնննադատության: Տեղին է հարցնել Նորման մասնագետին, թե ո՞րն էր ռազմական առումով ավելի տրամաբանական, նահանջել Մարաշից՝ ավելի մեծ ուժերով այն վերագրավելու միտումով, թե՞ իր ու գեներալ Քերեթի հրամանատարության տակ գտնվող բավարար քանակությամբ զորքերով կարգը վերականգնել անձնատուր եղած քաղաքում: Ի՞նչ անհրաժեշտություն կար հեռանալու

և նոր միայն Մարաշը վերագրավելու, երբ արդեն իսկ այն գրավված էր: Ավելորդ չէ այստեղ վերհիշել, որ Սահակ կաթողիկոսի դեպի Եվրոպա կատարած ճանապարհորդության ժամանակ նրա անձնական քարտուղար Վ. Խուպեսերյանը Փարիզում հանդիպել էր գնդապետ Նորմանին և զրուցել կիլիկյան իրադարձությունների շուրջը: Գնդապետը հայտնել էր այն միտքը, թե Փարիզում մեծ կարևորություն են տալիս թուրք ազգայնականներին: «Մինչդեռ, — ավելացրել է նա, — ես թե՛ Կիլիկիո և թե՛ Սուրիո մեջ կատարած զինվորական գործողությանց միջոցին որևէ լուրջ ընդդիմության չհանդիպեցա» և թեյասեղանի վրա գտնվող դանակը կարագի մեջ խրելով, ասել է. «ահա այսքան դյուրին էր թուրքին հաղթել»¹⁰⁰:

Ինքնաարդարացման փորձեր է կատարում նաև գեներալ Դյուֆիեոն: Պատասխանելով Մ. Տամատյանի 25-ը փետրվարի 1920 թ. նամակին, նա գրում է. «Գալով անոր, զոր դուք չեք վախնար կոչել «Մարաշի գայթակղություն» բարձրորեն կը հաստատեմ, թե ֆրանսական զինվորական իշխանությունը, այդ ցավոտ պարագային, իրեն տրամադրած միջոցներու շահով ըրավ ամեն կարելին, և անկե ավելին: Չուզելով ոչինչ թողուլ մութի մեջ՝ կատարելապես լման ամբողջ թղթածրար մը կը դնեմ պետիս ձեռքը — զորավար Գուրոյի»¹⁰¹: Ավաղ, գեներալը կեղծում է իրականությունը:

Ավելորդ չէ նշել, որ կարծեք գեներալը նույնպես տարակուսում է իր խոսքերի ճշմարտացիության մեջ, երբ խոսելով ֆրանսիական կառավարության քաղաքականության մասին, բավարարվում է միայն հետևյալ հայտարարությամբ, «...որ ինձի չի պատկանիր դատել ֆրանսական կառավարության քաղաքականությունը Արևելքի մեջ և ես առավել անոր մասին մի՛հճաբանիլ, որու հետ ալ որ ըլլա: Այդ խնդրովը ինձ կմնա միայն փոխանցել Ձեր բողոքները և պահանջները բարձր կոմիսերին»¹⁰²:

Մեր կարծիքով, Մարաշի իրադարձությունների այսպիսի ընթացքը, ֆրանսիական զորքերի չպատճառաբանված փախուստը և իբրև այդ բոլորի արդյունք տասնյակ հազարավոր հայերի կոտորածը անխուսափելի չէին և որ հնարավոր էր կանխել դրանք, եթե ֆրանսիական իշխանությունները տրամադիր լինեին: Մեր նման եզրակացության համար հիմք են ծառայում շատ բան մատ-

⁹⁷ ՇՍՍԷ ՊԿԶԶԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 3, թ. 29:

⁹⁸ *Séu Du Vèou Paul*, նշվ. աշխ., էջ 134:

⁹⁹ *Séu Brémond É.*, նշվ. աշխ., էջ 40, *Du Vèou Paul*, նշվ. աշխ., էջ 134:

¹⁰⁰ Վ. Խուպեսերյան, նշվ. աշխ., էջ 76:

¹⁰¹ «Հասկ» ամսագիր, 1951, № 1, էջ 15:

¹⁰² «Հասկ» ամսագիր, 1951, № 1, էջ 15:

նող հետևյալ փաստերը, որոնց մեջ էլ պիտի փնտրել կիլիկեհայ-
յության ողբերգության արմատները: Կիլիկիա մեկնելուց առաջ
մամուլի ներկայացուցիչներին արած հայտարարության մեջ գե-
ներալ Գուրոն շեշտել է, թե «ինքը գնում է Կիլիկիա մուսուլմա-
նական քաղաքականություն վարելու»¹⁰³: Եվ ինչպես երևում է,
այդ ճանապարհին առաջին քայլը Մարաշի լքումն էր:

Միաժամանակ հայտնի է, որ Կիլիկիան Թուրքիային վերա-
դարձնելու Քեմալի պահանջին ֆրանսիական կառավարությունը
առանց որևէ մեկից քաշվելու պատասխանել էր, թե «Ձեռք ցան-
կանում պահել Ադանան: Այնտեղ ենք գտնվում պարզապես անգ-
լիացիների հաստատվելն արգելելու համար»¹⁰⁴: Եվ, ի հաշիվ
տասնյակ հազարավոր հայերի կյանքի, արգելեցին:

Մարաշի իրադարձությունները միակողմանի են արտացոլվել
նաև որոշ պատմաբանների աշխատություններում: Այսպես, խո-
սելով Նորմանի զորասյան գալու, թուրքերի անձնատուր լինելու
և այլ հարցերի մասին, Ն. էֆենդիևան գրում է, թե «...Քերեթը
գիտեր, որ եթե Նորմանի զորախումբը նահանջեր, նրա սեփա-
կան զորքերը կշրջապատվեին և կդատապարտվեին ոչնչացման:
Այս պատճառով էլ նա որոշեց նահանջել»¹⁰⁵: Կարծում ենք, ավե-
լորդ է խոսել ֆրանսիական զորքերի շրջապատման և ոչնչացման
վտանգի մասին, երբ քեմալականները արդեն իսկ հանձնվել էին
և ի նշան այդ բոլորի, չէին փորձել անգամ մեկ գնդակ արձակել
բաղաբի փողոցներով տեղաշարժվող ֆրանսիական զորքի վրա:
Օպա, թե «Մարաշի մարտերը ֆրանսիական զորքերի համար
հանդիսացավ ամենաողբերգականներից մեկը: Այս մարտերում
զավթիչները կորցրեցին 1200-ից ավելի զինվոր»¹⁰⁶: Պարզապես՝
ոչ: Մարաշի մարտերը ֆրանսիական զորքերի համար չհանդիսա-
ցավ ամենաողբերգականներից մեկը և նրանք այդ մարտերում
չէ, որ կորցրեցին 1200-ից ավելի զինվոր:

Մարաշի մարտերը առավել ողբերգական եղան քեմալական-
ների համար: Այլապես ինչով բացատրել նրանց անձնատուր-
թյունը: Ինչու՞ անպայման բնական աղետի (սառնամանիքի) հե-
տևանքով զոհված ֆրանսիական 1200 զինվորները գրանցել քե-
մալականների հաշիվին: Ի՞նչ անհրաժեշտություն կա դիմել փաս-

տական կեղծիքի և ցույց տալ, որ իբր Մարաշի մարտերի նա-
խօրյակին ֆրանսիական զորքերի թիվը քաղաքում 40 հազարից
ավելի է եղել, երբ հայտնի է, որ ֆրանսիական զորքերը Կիլիկիա-
յում ընդհանրապես 12 հազարից չեն գերազանցել, իսկ Մարա-
շում՝ 3 հազարից: Գուցե նրա համար, որ առավել լիարժեք դարձ-
վի քեմալականների «հաղթանակը» Մարաշում ֆրանսիական զոր-
քերի դեմ:

Մարաշի դեպքերը ճիշտ չեն լուսաբանված նաև Ա. Ժելտյա-
կովի մոտ: Նա գրում է, որ ֆրանսիական հրամանատարությունը
Մարաշում գտնվող զորքերին անխուսափելի ոչնչացումից փրկե-
լու համար մի քանի անգամ Այնթապից և Իսլահիեից զորքեր ու-
ղարկեց, բայց պարտիզանները նրանց բոլորին հտ շարտեցին:
Այնուհետև ավելացնում է, թե իբր նահանջի ճանապարհին ֆրան-
սիական զորքերը անվերջ հարձակման են ենթարկվել պարտիզան-
ների կողմից¹⁰⁷: Վերհիշելու համար միայն նշենք, որ Մարաշ
ուղարկված համարյա բոլոր զորամասերին էլ հաջողվել է մտնել
քաղաք և նահանջի ճանապարհին ոչ մի պարտիզան նրանց վրա
չի հարձակվել, եթե զանց առնենք Ակ-սուլի մոտ տեղի ունեցած
աննշան ընդհարումը:

Ա. Շամսուտդինովը գրում է, որ իբր թե 1919 թ. դեկտեմբե-
րի վերջերին Մարաշի բնակչությունը ապստամբել է, իբր քաղա-
քին օգնության են եկել շրջակայքի ապստամբները և 18 օր տևած
մարտերից հետո ֆրանսիացիները հարկադրվել են թողնելու քա-
ղաքը: Ապա, հունվարի 12-ին ֆրանսիական հրամանատարու-
նը Մարաշ է ուղարկել մեկ դիվիզիա ալժիրական զորք, որ իբր
թե մարտերը շարունակվել են մինչև հունվարի վերջը, որի ըն-
թացքում ապստամբները ջարդել են դիվիզիան ու ազատագրել
Մարաշը ֆրանսիացիներից¹⁰⁸:

Մարաշի դեպքերը միանգամայն աղավաղված ու աղճատված
ձևով է ներկայացնում թուրք պատմաբան Շապուլյոն: Նա գրում
է. «Մարաշում այլևս ոչ կրակելու գնդակ և ոչ էլ ուտելիք էր մը-
նացել: Դոկտոր Մուստաֆային ֆրանսիացիների մոտ ուղարկե-
ցին: Դոկտորը անձնատրություն սպիտակ դրոշ պարզած, կոլեջի
շենքում հանդիպեց ֆրանսիացի գեներալ Քերեթի հետ»¹⁰⁹: Պարզ
երևում է, որ թուրքերը տանուլ են տվել ու սպիտակ դրոշ պար-

¹⁰³ ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 92:

¹⁰⁴ Paillares M., նշվ. աշխ., էջ 103:

¹⁰⁵ Չփենդեբա Н. З., նշվ. աշխ., էջ 115:

¹⁰⁶ Նույն տեղում:

¹⁰⁷ Տե՛ս Желтяков А. Д., նշվ. դիս. աշխ., էջ 219—220:

¹⁰⁸ Տե՛ս Шамсутдинов А., նշվ. աշխ., էջ 127:

¹⁰⁹ Şapolyo Enver Behnan, նշվ. աշխ., էջ 176:

զած հանձնվել: Հակառակ պարզ տրամաբանության նա շարունակում է. «Քսան օր Մարաշը պաշտպանող հերոսները հաղթեցին»¹¹⁰: Բայց թե ինչպես են հանձնվողները հաղթում, մնում է գաղտնիք: Թուրք պատմաբանը վերջում միայն գրում է, որ ֆրանսիական զորքի փախուստը տեսնող թուրքերը դուրս են թռչում իրենց թաքստոցներից ու... հաղթում:

Եվ արդյոք իրավացի չէ՞ Մաթերն Մյուրեն, որը գնահատելով Մարաշից ֆրանսիական զորքերի ամոթալի նահանջը, գրում է. «Ասիկա անշուշտ ածան հաղթանակ մըն էր թուրքերուն համար: Աքաղաղը որ կը բնակի այդ տեղին վրա՝ իրավունք ունի երգելու, հաղթությունը ավետելու՝ տեսնելով որ հազար անգամ ավելի զորավոր հակառակորդը կը թողուր կերթար»¹¹¹:

Խոսելով Մարաշի աղետի մասին Մ. Պայարեսը գրում է. «Մարաշի ողբերգությունը մեր պատմության ամենատխուր էջերից մեկն է: Դրա մութ ծակքերը հետազայում էլ երբեք չբացահայտվեն և դա ավելի լավ մեր ազգային պատվի համար... Հաստատ է մի բան, որ հնարավոր ամեն ինչ շարվեց քրիստոնյաներին փրկելու համար, որոնք ծնկաչոք աղերսում էին մեր օգնությանը»¹¹²:

Քեմալականների ձեռքով հազարավոր անմեղ հայերի կոտորածը Մարաշում ամբողջ մերկություն բացահայտեց նրանց բուն նպատակները և մի պահ համայն մարդկության երևակայության մեջ վերակենդանացրեց արևմտահայության՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիների երիթթուրքական սարսափները:

Մարաշում տեղի ունեցած կոտորածը խոր հուզմունք ու զայրույթ առաջացրեց ամբողջ աշխարհում: Անգլիայում բարձրացած հուզումների մասին Ա. Ահարոնյանը իր զեկուցագրերից մեկում գրում է. «Եվ մինչդեռ ֆրանսիական մամուլը վրդովեցուցիչ լուծություն պահեց և շարունակում է պահել՝ ամբողջ Անգլիան դղրդաց իր մամուլի հուզումով: Հուզումն այնքան մեծ եղավ, որ պարլամենտը շտապեց օր նշանակել և պահանջել բացատրություն կառավարությունից: Այդ նիստին ներկայացանք և մենք՝ հայ ներկայացուցիչներս: Լրոյդ Զորջի բացատրությունները չգոհացրին

պարլամենտին և մեր բարեկամ լորդ Ռոբերտ Սեսիլ իր ամենեն ազդեցիկ ճառերեն մին արտասանեց համայնքների պալատում և մյուս բարեկամ Զեմս Բրայս՝ լորդերի պալատում, որով պահանջում էին հստակ, ավելի վճռական հայտարարություն կառավարությունից»¹¹³:

Այդ մասին է խոսում նաև Վեոն: Այն պահին, գրում է նա, երբ Անգլիայում և ԱՄՆ-ում մամուլը թուրք ոճրագործների դեմ ուղղված հողվածներ էր տպագրում, ֆրանսիական մամուլը և մասնավորապես, «Թան» պաշտոնական թերթը լուծություն էր պահանջում: Ֆրանսիան անտեղյակ էր Մարաշի իրադարձություններից, բանի որ այնտեղ գտնվող Ահմեդ Ռիզան ճնշում էր բանեցնում ֆրանսիական մամուլի վրա¹¹⁴:

Մարաշի շարդերին իր վերաբերմունքն է ցույց տվել նաև Մուստաֆա Քեմալը: Կեղծելով և գլխիվայր շրջելով պատմական հանրահայտ փաստերը, նա ցինիկաբար գրում է, որ Մարաշում հայկական շարդերի մասին պնդումները չեն համապատասխանում իրականությանը և որ հակառակը, հայերն են կոտորել հազարավոր անմեղ թուրքերի¹¹⁵: Եվ որպես վկայակոչում, Քեմալի ճառերի հրատարակիչները բերել են խեղաթյուրված «Tarih»-ի 4-րդ հատորից մի հատված¹¹⁶:

Բացահայտ մի կեղծիք էլ տեղ է գտել նույն հատորի ծանոթագրությունում: Տալով ղեպքերի ժամանակագրությունը, նրա հեղինակները գրում են. «1 նոյեմբեր—ղեպքերը Մարաշում: Թուրքի կոտորածը հայերի և ֆրանսիացիների կողմից. Մարաշի հրկիզումը նրանց կողմից»¹¹⁷:

Սուտն ու կեղծիքը այստեղ այն աստիճան են աչք ծակում, որ ավելորդ ենք համարում անդրադառնալ դրան:

Բ. ՉԱՃԸՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կիլիկիահայերի ինքնապաշտպանական կռիվների պատմության մեջ իր բացառիկ և ուրույն տեղն ունի Հաճընի 1920 թ.

¹¹⁰ Նույն տեղում:

¹¹¹ Գ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 802:

¹¹² Paillares M., նշվ. աշխ., էջ 113:

¹¹³ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 92:

¹¹⁴ *Séu Du Véou Paul*, նշվ. աշխ., էջ 139:

¹¹⁵ *Séu Mустафа Кемаль*, նշվ. աշխ., հ. 3, էջ 13:

¹¹⁶ *Séu նույն տեղում*, էջ 259—260:

¹¹⁷ *Мустафа Кемаль*, նշվ. աշխ., հ. 3, էջ 257:

հերոսական ինքնապաշտպանությունը: Երիտթուրքական գեհեներից հրաշքով փրկված մի բուռ հաճընցիներ, ավելի քան յոթ ամիս արտաքին աշխարհից մեկուսացված հեռավոր լեռներում, ծանր ու անհավասար գոյամարտի են բռնվում հայրենի տուն ներխուժած քեմալական հորդանների դեմ և ցույց տալիս հայրենասիրության ու հերոսության անկրկնելի օրինակներ:

1919 թ. փետրվարի 10-ին Ադանայում կազմակերպված և շուրջ 250 հոգուց բաղկացած ոստիկանական ջոկատը, որի ճնշող մեծամասնությունը հաճընցիներ էին, գնդապետ Բրեմոնից հրաման է ստանում շարժվել դեպի Հաճըն և գրավել այն: Մինչ այդ, Հաճընում և շրջակայքում տիրող իրադրությունը հետաքննելու նպատակով այնտեղ էին ուղարկվել Հ. Հովակիմյանն ու Մ. Ա. Ճեմյանը, որոնց տեղեկությունները միանգամայն հուսատու էին: Ոստիկանական ջոկատը Պ. Թուր-Սարգիսյանի հրամանատարությամբ և 300 հաճընցի ընտանիքների ուղեկցությամբ փետրվարի 15-ին ճանապարհ է ընկնում դեպի Սիս և մոտ մեկ ամիս տեղի հինավուրց բերդում մնալուց հետո, շարունակում է ճանապարհը դեպի Հաճըն: Վահկայի (Ֆեքեի) մոտ հաղթահարելով թուրքական շեփեական մի խմբի դիմադրությունը, մարտի վերջերին ջոկատը հասնում է Հաճըն¹¹⁸: Պ. Թուր-Սարգիսյանը իր հուշերում այսպես է նկարագրում դեպի Հաճըն ճանապարհորդությունը. «Ամեն տեղ բնությունը կը մասնակցեր մեր ուրախության և մեր ճամփուն վրա ամեն քայլափոխին թեև հայը լալու պատճառ մը ուներ, որովհետև ճիշտ նույն տեղերեն կանցներ, ուրկե իրեք տարի առաջ իր սիրելիներուն կոտորածին և մահվան ականատես եղած էր, բայց դարձյալ ինքզինքը կը մխիթարեր, և ինքնիրեն իրավունք կուտար իր մարտիրոսները հայրենիքին ազատության զոհերը հուշակելու: Անոնց անթաղ ոսկորներուն վրա տաճարներ կանգնեցնելու ուխտով և հույսով տոգորված իր ճամփան կը շարունակեր»¹¹⁹: Հաճընի նախադուռը հանդիսացող Սըլոք կոչվող վայրում հայերին դիմավորելու են գալիս քաղաքի և շրջակա գյուղերի թուրքերը¹²⁰: Նրանց դիմելով, Թուր-Սարգիսյանը կոչ է անում

մոռանալ դառն անցյալը և ձեռք-ձեռքի տված նոր կյանքի հիմքը գնել¹²¹:

1919 թ. գարնան-ամռան ամիսներին բուռն թափով շարունակվում է հաճընցիների վերադարձը դեպի իրենց հայրենի օջախները: Նրանց թիվը տարեվերջին արդեն հասնում էր շուրջ ութ հազարի¹²²: Հայերի վերադարձը վերակենդանության շունչ է հազորդում ավերված ու հրկիզված քաղաքին:

Գեռես 1919 թ. ապրիլի կեսերից Հաճընի պարենավորման հարցի կապակցությամբ տարածայնություններ են ծագում թուրք կայմակամի և Հաճընի Ազգային միության միջև: Այն հարթելու նպատակով Սսի կառավարիչ կապիտան Թայարդան կայմակամին և Հաճընի հայ երեկիւններին կանչում է իր մոտ՝ խորհրդակցության, բայց որևէ արդյունքի հասնել չի կարողանում: Այնուհետև հաճընցիները դիմում են Ադանա և պահանջում թուրք կայմակամին փոխարինել հայով¹²³: Շուտով ֆրանսիական իշխանությունների որոշմամբ, Հաճընի նոր կայմակամ է նշանակվում Ա. Քիրեճյանը, որը Հաճըն է հասնում 1919 թ. մայիսի 7-ին: Անկասկած է, որ կայմակամի պաշտոնում Քիրեճյանի նշանակումը խոշոր նշանակություն ունեցավ Հաճընի ինքնապաշտպանության կազմակերպման և քաղաքը պարենով ապահովելու գործում: Բայց միաժամանակ պիտի խոստովանել, որ դա սրեց հայ-թուրքական հարաբերությունները և արագացրեց Հաճընի շրջակայքում թշնամական ուժերի համախմբումը:

Ինչպես երևում է Թուր-Սարգիսյանի հիշատակագրից, 1919 թ. օգոստոսի սկզբներին արդեն Հաճընում լուրեր էին պտղտվում շրջակա թուրքական գյուղերում քեմալական առաջին շեփեախմբերի երևալու մասին: Թուր-Սարգիսյանը վկայում է, որ իր շրջագայությունների ընթացքում ինքը անձամբ համոզվել է նման լուրերի հավաստիության մեջ¹²⁴:

Մինչև 1919 թ. վերջերը հաճընցիները դեռևս մեծ հույսեր էին կապում նախ անգլիական, ապա և ֆրանսիական զինվորական իշխանությունների օգնության հետ: Նրանց բարձրաստիճան սպանների հաճախակի այցելությունները Հաճըն կրկնապատկում էին հայերի հույսն ու կորովը, թեև անգլիացի գեներալ Մաջի

¹¹⁸ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 599—600:

¹¹⁹ Ե. Տոլպագյան, Ամենուն նոր տարեցույցը, Բեյրութ, 1937, էջ 162:

¹²⁰ Մինչ տարագրությունը Հաճըն քաղաքը հիմնականում հայաբնակ էր և ուներ շուրջ 30 հազար բնակչություն: Առաջին աշխարհամարտի տարիներին տարագրված հայերի փոխարեն քաղաքում բնակություն էին հաստատել մի քանի հարյուրի հասնող թուրքեր:

¹²¹ Տե՛ս Ե. Տոլպագյան, նշվ. աշխ., էջ 164:

¹²² Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 46:

¹²³ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 604—605:

¹²⁴ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 617:

1919 թ. հունիսի 15-ի այցից հետո այն մեծ շահով ընկել էր, երբ վերջինս հայ ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարել էր, որ ռազմական ուժի պակասի պատճառով իրենք ի վիճակի չեն Հաճընը գրավելու:

1919 թ. աշնանը Հաճընում գտնվելու ժամանակ ֆրանսիացի գնդապետ Նորմանը նույնիսկ հաճընցիներին էր նվիրել ֆրանսիական երկու դրոշակ, կարծես շեշտելով, որ Հաճընը ևս դաշնակիցների կողմից գրավված գոտի է¹²⁵: Խոսելով վերոհիշյալ և ֆրանսիական վարչական ծառայության այլ սպաների դեպի Հաճըն կատարած շրջագայությունների մասին, գնդապետ Բրեմոնը եզրակացնում է. «Հետևաբար վեճի առարկա չէր կարող դառնալ այն փաստը, որ քաղաքը և նրա շրջակայքը ֆրանսիական գրավման ու վարչական գոտու մաս էին կազմում»¹²⁶: Բրեմոնի այս հայտարարությունը անհրաժեշտ է վերհիշել, քանի որ ինչպես Հաճընի պաշարման շրջանում ենք տեսնելու, գեներալ Դյուֆինոն հրաժարվելու է հաճընցիներին որևէ օգնություն ուղարկելուց, պատճառաբանելով, որ ֆրանսիական իշխանությունները երբեք չեն նման պարտավորություն չեն ստանձնել:

Այսպես թե այնպես, Հաճընի կացությունը օրեցօր ծանրանում էր: Ֆրանսիական զորքի բացակայությունը Հաճընում (հակառակ որոշ հեղինակների անհիմն պնդումների անհրաժեշտ է շեշտել, որ Հաճընում ընդհանրապես ոչ մի ֆրանսիացի զինվոր, էլ չենք խոսում կայազորի մասին, չի գտնվել)¹²⁷, քաղաքի հեռավորությունն ու կտրվածությունը, զենքի ու զինամթերքի պակասը, մի կողմից, և գլուխ բարձրացնող քեմալական սպառնալիքը, մյուս կողմից, հարկադրում են տեղի Ազգային միությունը անվերջ դիմումներ ուղղել ֆրանսիական իշխանություններին և օգնություն խնդրել: Այն բանից հետո, երբ ֆրանսիացիները հրաժարվում են զորքեր ուղարկել, հաճընցիները խնդրում են նրանց Հաճըն տեղափոխել Հայկական լեզեոնի մի ջոկատ: Բայց շուտով այն էլ է մերժվում: Այս առթիվ Բրեմոնը գրում է. «Բնակչությունը և հայ ղեկավարները բազմիցս պահանջել էին այնտեղ ուղարկել Հայկական լեզեոնի մի ջոկատ: Հրամանատարությունը չէր կարողանում ընթացք տալ այս պահանջներին, որովհետև

հնարավոր չէր ֆրանսիական համազգեստ կրող ջոկատը այնպիսի տեղ նետել, որտեղ ի վիճակի չէինք նրան պաշտպանելու՝ երկրամասի հեռավորության և խիստ լեռնային բնույթի պատճառով (3000 մ. ավելի)»¹²⁸:

Այս պայմաններում հապաղելը հավասարազոր էր անձնասպանության: Հաճընցիները որոշում են դիմել հուսալի ինքնապաշտպանության, որը պիտի ղեկավարվեր ընտրված «Ինքնապաշտպանության բարձրագույն ժողովի» կողմից: Ժողովի կազմում էին Պետրոս եպիսկոպոս Սարաճյանը, Ս. Գայյանը, Ս. Ծեպեճյանը, Հ. Տրդատյանը, Ռ. Երկաթը, Պ. Թերզյանը, Գ. Սվլինյանը, Մ. Մանիսաճյանը, Տ. Զիյերյանը, Հ. Չալճյանը և Մ. Շըխրրտըմյանը¹²⁹: Ըստ Ս. Թերզյանի Պ. եպո. Սարաճյանի, Հ. Տրդատյանի և Ռ. Երկաթի փոխարեն ինքնապաշտպանության կոմիտեի անդամներ են եղել Կ. Օղլուզյանը և Ռ. Երկաթագործյանը¹³⁰:

Քիչ անց ստեղծվում է նաև ինքնապաշտպանության հրամանատարությունը: Ընդհանուր հրամանատար է նշանակվում զորավար Անդրանիկի զինակիցներից մեկը՝ Սարգիս Ծեպեճյանը, իսկ Արամ Կայծակը՝ նրան օգնական: Ցուցակագրվում և պարտադիր զենքի տակ են կանչվում 15—50 տարեկան շուրջ 600 տղամարդիկ, որոնք այնուհետև բաժանվում են չորս վաշտերի Կ. Օղլուզյանի (Ա. վաշտ), Մ. Շըխրրտըմյանի (Բ. վաշտ), Մ. Մանասյանի (Գ. վաշտ), Վ. Ալթունյանի (Դ. վաշտ) հրամանատարություններ, ձեռնարկների խմբի՝ Պ. Թերզյանի և պահեստայինների՝ Ա. Կայծակի հրամանատարություններ: Վաշտերի հրամանատարների հսկողություններ էլ անցկացվում են կանոնավոր զինավարժություններ: Նույնիսկ որբանոցի սաներին սովորեցնում են զենքի օգտագործման և դրոշակներով հաղորդակցվելու գաղտնիքներին: Հաճընի շրջակայքը բաժանվում է պաշտպանական չորս շրջանների. հյուսիս-արևելքից՝ Իժ-Օլուզի, հյուսիս-արևմուտքից՝ Դոնուզ-սեքիի, հարավ-արևելքից՝ Կյոյնեկի և հարավ-արևմուտքից՝ Չալղանի դիրքերի¹³¹:

Այս բոլորից հետո հաճընցիները հանդիպում են նոր դժվարություն: Դա զենքի և զինամթերքի խիստ պակասն էր: Նրանց յուրյուրյալ տարբեր տեսակի շուրջ 70 հրացաններով, հասկանալի

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 615:

¹²⁶ Brémond E., նշվ. աշխ., էջ 45:

¹²⁷ Տե՛ս Желтяков А. Д., նշվ. դիս. աշխ., էջ 271 և Мустафа Кемаль, նշվ. աշխ., հ. 3, էջ 290:

¹²⁸ Brémond E., նշվ. աշխ., էջ 45:

¹²⁹ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 625:

¹³⁰ Տե՛ս Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 215:

¹³¹ Տե՛ս Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 217:

է, որ երկար դիմադրել չէր կարելի: Սսի և Ադանայի իշխանություններին կատարված բազմաթիվ դիմումներից հետո հաճընցիների պատվիրակությունը, որի կազմում էին Կ. Օղլուգյանը, Շ. Փոսթոյանը և Ե. Տարտաղանյանը, 1920 թ. հունվարի վերջերին ներկայանում է կապիտան Քայարդային: Հաճընի և շրջակայքի կացության մասին պատվիրակության հաղորդումները լսելուց հետո ֆրանսիացի սպան խոստանում է Հաճընի ինքնապաշտպաններին տրամադրել 300 հրացան և 3000 փամփուշտ: Հաճընցիների այն առարկությունը, թե այդքանը անբավարար է երկարատև ինքնապաշտպանության համար, կապիտանը պատասխանում է. «Ինչ է որ պիտի պատերազմի: Պատերազմը Ֆրանսան պիտի մղե, դուք պիտի դիմադրեք, մինչև որ ֆրանսիական ուժը հասնի»¹³²:

Որ իսկապես Քայարդան նման հուսադրիչ պատասխան է տվել, երևում է նաև պատվիրակության տեղեկագրից¹³³: Իսկ Ա. Թերզյանը իր գրքում մեջբերել է կապիտանի դրական պատասխանի հետևյալ տարբերակը. «Ինձի եկած հրամանը այս է. ասկե ավելի բան մը չեմ կրնար ընել: Հաճընցիներուն հանձնված զենքերը կանոնավոր պատերազմի համար չեն, այլ քանի մը օրվան ինքնապաշտպանության գործ մըն է, որ պիտի վարեն. արդեն ֆրանս. կառավարությունը ութ օրեն իր օգնական ուժը պիտի հասցնե»¹³⁴:

Հաճընի պատվիրակները և Սսի Ազգային միությունը նույն օրն իսկ միացյալ խորհրդակցություն են գումարքում և քննարկում Քայարդայի պատասխանը: Գտնելով, որ խոստացված օգնությունը աննշան է, խորհրդակցության մասնակիցները ընտրում են նոր պատվիրակություն և լիազորում այդ կապակցությամբ դիմելու Ադանայի ֆրանսիական իշխանություններին: 1920 թ. փետրվարի 4-ին Սսի Ազգային միության անունից Ադանա ուղարկված պաշտոնագրում կարդում ենք. «Մարաշի և շրջակա գյուղերու ջարդը քաղաքիս հասարակությանը խուճապի մատնած է: Մեր գլխուն վրա դամոկլյան սուրի պես կախված վտանգին զեմ մեր քով զենքի շոթությունը, ֆրանսիական կառավարության ուժին, զենքերուն և ռազմանյութին անբավարար ըլլալը, զմեզ բո-

ւորովին հուսալքած է, այնպես որ սպանդանոց տարվող ոչխարին կացութենեն ուրիշ կացություն չունինք:

Այսօր կաթ. փոխ. Տ. Եղիշե եպս. Կարոյան, հարանվանությունները, քաղաքիս երեւելիները և Հաճընեն եկած պատվիրակությունը, ի մի հավաքելով ժողով մըրինք: Սույն ժողովին մեջ հետ երկար բանակցությանց ? հողվածներե բաղկացյալ գիր մը մատուցեցինք տեղվույս զինվորական կառավարիչ Պ. Քայարդային և խնդրեցինք, որ այն գիրը ղրկե գնդ. Բրեմոնին»¹³⁵:

Փետրվարի 5-ին պատվիրակությունը Սսից մեկնում է Ադանա և մասի 10-ին իր առաքելության մասին տեղեկացնում Ադանայի Ազգային միությունը և Մ. Տամատյանին: Հաջորդ օրը պատվիրակության անդամները ընդունվում են գնդապետ Բրեմոնի կողմից: Գնդապետը խոստանում է հաճընցիներին տալ հազար հրացան և 100 հազար փամփուշտ:

Զավեն պատրիարքին հասցեագրված իր 8-ը փետրվարի 1920 թվակիր նամակում Մ. Տամատյանը խոսում է նաև գավառներում և, մասնավորապես, Հաճընում և Սսում ստեղծված ծանր իրավիճակի մասին: «Այս հուսահատական վիճակին բերմամբ մեր պահանջները հետզհետե խստացուցած ենք: Օրինակի համար, այսօր իսկ Հաճընի և Սսի պատգամավորները կը դիմեն ֆրանսիական վերին վարչության զենք և ռազմամթերք ուղելու և արդյունավոր ինքնապաշտպանության համար ուրիշ կարգ մը պահանջներ ներկայացնելու: Եթե այս պահանջները չընդունվին, պիտի սպառնան իրենց ընտանիքները, ծեղրը և մանուկները դեպի Ադանա ճամփու հանել և իրենք իրենց անբավական զենքերով լեռը բարձրանալ, փոխանակ կոտորածի անարգ մահվան՝ զենի ձեռին պատվով մեռնելու համար: Հուսահատական գերագույն միջոցն է այս, որուն վերջ ի վերջո պիտի ստիպվին դիմել բոլոր անոնք, որ կրնան: Հետևանքները դյուրին է գուշակել: Եվ թող երբեք չկարծվի թե կիլիկեցի հայը, թեև տարագրութենե ու ջարդե կոտորակված, անզոր պիտի ըլլար ինքզինք պաշտպանելու, եթե մեր բարեկամները աննախանձորեն անոր զենք տային: Կրովելու ընդունակ կտրիճներ տասնյակ հազարներով կը հաշվվին»¹³⁶:

Փարիզի Ազգային պատվիրակությանը հասցեագրված իր դիմումներից մեկում Մ. Տամատյանը գրում է. «Հաճըն պաշարված

¹³² Ա. Կեննյան, նշվ. աշխ., էջ 244:

¹³³ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 627:

¹³⁴ Ա. Թերզյան, նշվ. աշխ., էջ 214:

¹³⁵ Մ. Քելեշյան, նշվ. աշխ., էջ 606:

¹³⁶ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 26, թ. 7—8:

է: Ֆրանսական զինվորական իշխանությունք կը հայտարարեն թե շին կրնար ստանձնել այդ շրջանակի պաշտպանությունը: Շարժման մեջ դրած ենք հայկական ուժերը, որոնք զինված են ֆրանսացւոց կողմէ: Սակայն շատ մտահոգության մեջ ենք նըկատելով որ կը հապաղի մեր ուժերու կազմակերպությունն ու մեկնումը: Անհրաժեշտ է պնդել, ուր որ անկ է, լեռնային շրջանները բռնելու կարևորության վրա, երաշխավորելու համար դաշտավայրերու ապահովությունը: Ընդհանուր կացությունը հետզհետե կը ծանրանա: Քեմալական ուժերը, տեղացի մահմեդականներու գործակցութեամբ, ամեն կողմ կը սպառնան Կիլիկիո: Քրիստոնյա ժողովուրդը վտանգի մեջ է: Տեղական միջոցները անբավական կը թվին կացության դարձման տանելու համար: Կարևոր գումարներ հարկավոր են ազգային ուժերու կազմակերպման և պարենավորման համար»¹³⁷:

Հարկ ենք համարում մի փոքր առաջ անցնել և նշել, որ Բրեմոնի խոստացած զենքի-զինամթերքի փոխադրումը ամիսներով ձգձգվեց: Մեկ ամիս անց միայն այն ուղարկվեց Ադանայից Սիս, որտեղ Թայարդայի կարգադրութեամբ պահվեց ևս մեկ ամիս և ուղարկվեց այն ժամանակ, երբ Հաճընն արդեն պաշարված էր: Թայարդայի հրամանով առանձնացվում է 80 հոգուց բաղկացած հեծյալների մի ջոկատ Լաչինյանի հրամանատարութեամբ, որին էլ հանձնարարվում է զենքի փոխադրումը Հաճըն: Զոկատը անվտանգ հասնում է Սսի ու Հաճընի միջև գտնվող Ղարղա փաղար վայրը: Սակայն այստեղ ջոկատը անակնկալ հարձակման է ենթարկվում դարանակալ թուրք շեթենների կողմից, որի հետևանքով հեծյալների մոտ կեսը սպանվում է ընդհարման ընթացքում, իսկ զենքն ու զինամթերքը՝ հափշտակվում թուրքերի կողմից¹³⁸:

Հաճընի հերոսամարտի պատմության հեղինակներից ումանք անդրադարձել են Ղարղա փաղարի դեպքին և ենթադրել, որ շեթենների կողմից հարձակումը և զենքի հափշտակումը կատարվել էր Թայարդայի գիտութեամբ և անգամ դրդումով¹³⁹:

Ղարղա փաղարում զենքի հափշտակման և շուրջ քառասուն հայերի սպանության հանգամանքների մասին հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում Դալքըր Ռեջեպի մոտ, որը անվիճելիո-

րեն խոսում է այն մասին, որ վերոհիշյալ հեղինակների և ժամանակակիցների ենթադրությունները, տարաբախտաբար, համապատասխանում էին իրականությանը:

Ֆրանսիական իշխանությունները, գրում է թուրք հեղինակը, Հաճընում գտնվող հայերին օգնելու համար բավական քանակությամբ զենք, զինամթերք և պարեն են ուղարկում (92 բեռ): Մինչ այդ ֆրանսիական հրամանատարությունը Վահկայի (Ֆեքեի) գյուղապետ Ջեզմի բեյին էր դիմել և խորհուրդ հարցրել, թե ո՞ր ճանապարհն է ավելի նպատակահարմար զենքի տեղափոխութեան համար: Թուրք գյուղապետը զենքի տեղափոխութեան մասին իր հերթին հայտնում է կարաբուջաքցի Դելի Հաջի աղային, որի շեթեններն էլ այսուհետև հսկողութեան տակ են վերցնում Դաշլը գեղիկ-Սըրթ յուր ճանապարհը: Թուրք հեղինակի խոսքերով, իբր թե, ջոկատը իր ճանապարհին սկսում է կողոպտել թուրքական գյուղերը և նրանցից պարեն պահանջել, իսկ երբ հասնում է Ղարղա փաղար վայրը, որոշում է հանգստանալ: Այդ պահին էլ Հաջի աղայի շեթենները և նրանց միացած գյուղացիները հարձակվում են հանգստացող հայերի վրա ու ջարդում բոլորին¹⁴⁰: Անուղղակի, բայց այնուամենայնիվ կարևոր վկայություն:

Դժբախտաբար կապիտան Թայարդայի (կամ ավելի ճիշտ է ասել՝ ֆրանսիական իշխանությունների) նյութած դավերը միայն այսքանով շին սահմանափակվում: Ինչպես երևում է Թուր-Սարգիսյանի հիշատակագրից, դեռևս մինչ այդ Հաճըն կատարած իր այցելութեան ընթացքում նա քիչ ջանքեր չէր գործադրել սրելու համար ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունները, այլև երկպառակտում սերմանելու հայ քաղաքական կուսակցությունների միջև¹⁴¹: Պակաս քսու դեր չի խաղացել նաև նրա օգնական Սյուպհին: 1920 թ. հունվարին շրջագայելով Հաճընում ու շրջակա թուրքական գյուղերում, նա (պիտի ենթադրել, որ Թայարդայի ցուցումներով) բազմապիսի հանդիպումներ է ունենում թուրք պարագլուխների հետ և հրահանգավորում նրանց, որոնք հայտնի են դառնում նրա վերադարձից հետո միայն¹⁴²:

1920 թ. փետրվարի սկզբին Հաճընից հյուսիս գտնվող և նրա հյուսիսային դարպասը հանդիսացող Շար հայաբնակ գյուղից յուրեր են ստացվում քեմալականների նախապատրաստութեան-

¹³⁷ Մ. Ճիզմեյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց (1890—1925), Ֆրեզնո, 1930, էջ 452:

¹³⁸ Տե՛ս Մ. Քելեշյան, նշվ. աշխ., էջ 615:

¹³⁹ Տե՛ս Մ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 215 և 2. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 628:

¹⁴⁰ Տե՛ս Dalkir Recep, նշվ. աշխ., էջ 60—63:

¹⁴¹ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 614:

¹⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 624, Մ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 212:

ների և քեմալական զինված ջոկատների տեղաշարժերի մասին: Որպեսզի առժամանակ կանխի քեմալականների հարձակումը և ճնշում բանեցնի նրանց վրա, կառավարիչ Ա. Քիրեճյանը Հաճըն է հրավիրվում թուրքական գյուղերի երևելիներին և որպես պատանդների արգելափակում կառավարչատանը: Բայց նման իրավիճակը երկար չի տևում: Փետրվարի 19-ին, որպես նոր կայմակամ, Հաճըն է ժամանում ջիհանցի փաստաբան Կ. Չալյանը, իր հետ բերելով որոշ քանակությամբ զենք և զինամթերք¹⁴³: Ինչպես գնդապետ Բրեմոնն է գրում, Կ. Չալյանի՝ կայմակամի պաշտոնում նշանակվելը վավերացվել էր Կ. Պոլսում: Ապա խոսելով նրա մասին, գնդապետն ավելացնում է. «Մահվան ընդառաջ գրեալու կատարյալ գիտակցությամբ նա ընդունեց առաջապահ պաշտոնը»¹⁴⁴:

Իր պաշտոնավարության սկզբից ևեթ Կ. Չալյանը վարում է շատ փափուկ ու շրջահայաց քաղաքականություն: Նպատակ ունենալով սիրաշահել շրջակա թուրք գյուղացիությունը և փոքրացնել երկու ժողովուրդների միջև առաջացած թշնամության վիճը, նա փորձում է սրբազրել իր նախորդի քաղաքականությունը: Որպես նոր քաղաքականության նախապայման, նա ազատ է արձակում թուրք պատանդներին և վերադարձնում իրենց տները: Բայց դա էլ շոշափելի արդյունք չի տալիս և ոչնչով չի թեթևացնում Հաճընի սպառնալից վիճակը: Պիտի խոստովանել, թե որևէ բարելավում ակնկալել Կ. Չալյանի ջանքերից չէր էլ կարելի, քանի որ մինչև Քիրեճյանի կողմից թուրք երևելիների արգելափակումը արդեն իսկ հարաբերությունները սրվել էին: Հետևաբար դա սոսկ պատրվակ էր ու Հաճընի վրա կատարված հարձակման արդարացում, ինչպես անում է Դալքըր Ռեջեպը¹⁴⁵, քան իրական պատճառ:

Շարից ստացված նոր ու մտահոգիչ լուրերը հարկադրում են հաճընցիներին մի այլ պատվիրակություն ուղարկելու Ադանա: Պետրոս եպոս. Սարաճյանի գլխավորությամբ նրա կազմի մեջ են մտնում նաև Հ. Խաչատրյանը և Շ. Փոսթոյանը: Պատվիրակությունը լիազորված էր բանակցելու Ադանայի Ազգային միության,

¹⁴³ Ըստ Ս. Թերզյանի և Հ. Պողոսյանի, Կ. Չալյանը Հաճըն է բերել 300 հրացան և 50000 փամփուշտ, իսկ ըստ Բրեմոնի՝ 1200 հրացան և 125 հազար փամփուշտ:

¹⁴⁴ Brémond E., նշվ. աշխ., էջ 45:

¹⁴⁵ Sht'u Dalkir Recep, նշվ. աշխ., էջ 106—113:

Մ. Տամատյանի և Ֆրանսիական իշխանությունների հետ՝ շտապեցնելու խոստացված օգնությունը և կամ էլ կազմակերպելու Հաճընի նահանջը, եթե Ֆրանսիական իշխանությունները զլանային օգնել: Ինչպես երևում է պատվիրակության տեղեկագրից, փետրվարի 26-ին նրանք հանդիպում են ունեցել կապիտան Թայարդայի հետ: Հանդիպման ընթացքում թեև Թայարդան խոստացել է օգնել հաճընցիներին, բայց միաժամանակ շեշտել է, որ իրավիճակը այնքան էլ լարված չէ, ինչպես հայերն են ներկայացնում¹⁴⁶:

Այս արդյունքներից դժգոհ պատվիրակությունը մարտի 5-ին Ֆրանսիական մի զորամասի հետ հասնում է Ադանա: Բայց գրեալապետ Բրեմոնի հետ առաջին հանդիպումը, որին ներկա էր նաև Մ. Տամատյանը, գնդապետի հիվանդության պատճառով կայանում է մարտի 8-ին միայն: Գնդապետը սիրալիք ընդունելությունից հետո պահանջում է իրեն ներկայացնել հաճընցիների պահանջները: Մարտի 9-ին պատվիրակությունը Հաճընից ստանում է մի հեռագիր, որն արդեն հայտնում էր քաղաքի վրա քեմալականների կատարած հարձակման մասին: Պատվիրակությունը՝ Մ. Տամատյանի ուղեկցությամբ անմիջապես նորից է այցելում Բրեմոնին և հայտնում հարձակման լուրը: Բրեմոնը խոստանում է տրամադրել անհրաժեշտ քանակությամբ զենք և զինանյութ, եթե հայերը կարողանան ցուցակագրել և Հաճըն ուղարկել 300—400 կամավորներ, իսկ Ֆրանսիական զինված ուժեր ուղարկելու հնարավորության մասին խոստանում է հայտնել գեներալ Դյուֆիեռոյի հետ ունենալիք հանդիպումից հետո¹⁴⁷:

Մարտի 11-ին Մ. Տամատյանը և Ազգային միությունը ստանում են Բրեմոնի պատասխանը, որից պարզ է դառնում, որ Ֆրանսիական իշխանությունները հրաժարվում են զորքեր ուղարկել Հաճըն: Բրեմոնի պաշտոնական պատասխանի ազդեցության տակ էլ նույն օրը Մ. Տամատյանի գլխավորությամբ Ադանայում գումարվում է ընդլայնված մի խորհրդակցություն: Քննարկման միակ հարցը, ինչպես Ա. Չալյանն է իր հուշերում վկայում, Հաճընին օգնություն կազմակերպելու հարցն էր: Նկատի ունենալով ստեղծված դժվարին իրավիճակը և Ֆրանսիական իշխանությունների հրաժարումը, խորհրդակցության մասնակիցները որոշում

¹⁴⁶ Sht'u Z. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 637:

¹⁴⁷ Sht'u Z. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 639:

են հավանութիւն տալ Հաճընի կայմակամ Կ. Չալչանի նահանջի ծրագրին և հաճընցիներին գաղթեցնել Սիս¹⁴⁸:

Մարտի 12-ի գիշերը Սսի և Հաճընի միջև տեղի է ունենում հեռախոսային հետևյալ խոսակցութիւնը: Սսի կառավարիչ Թայարդան Հաճընի կայմակամ Կ. Չալչանից պահանջում է իրեն հայտնել, թե ա) քանի հազար բնակչութիւն ունի Հաճընը և թե նրանցից քանիսն են տասը տարեկանից փոքր, բ) ինչ միջոցներ են անհրաժեշտ հաճընցիներին Սիս փոխադրելու համար: Կ. Չալչանի այն խնդիրքին, որ Ֆրանսիական ուժերը ապահովեն Հաճըն—Սիս ճանապարհի միայն Վահկա—Սիս հատվածը, իսկ Հաճըն—Վահկա հատվածը հաճընցիները կարող են անցնել սեփական ուժերի ուղեկցութեամբ, Թայարդան կտրուկ պատասխանում է, որ մեկ զինվոր իսկ չի կարող տրամադրել և որ 15 օր ևս դիմադրեն, մինչև օգնական ուժերի տեղ հասնելը¹⁴⁹:

Սակայն բոլորի համար անսպասելի մարտի 13-ին Մ. Տամատյանը Ֆրանսիական իշխանութիւններից ստանում է պաշտոնական մի գրութիւն, որտեղ Հաճընի նահանջի կապակցութեամբ ասվում էր. «Ամոթ է, որ քաջ Հաճընը առանց կռիւի լքե իր հայրենիքը: Ինչպես կուզեք որ արդարանա այս ժողովուրդը Կիլիկիոս ազատագրական պահանջքին մեջ. պետք է անպայման հոն մնա և ճակատ ճակատի կռիւի թշնամիին դեմ»¹⁵⁰: Ա. Կենճյանը այս կապակցութեամբ գրում է, որ գնդապետ Բրեմոնը միաժամանակ հարց էր տվել Մ. Տամատյանին, մի՞թե «Ձեր մեջ չկան 1200-ի մոտ երիտասարդներ հայրենիքի պաշտպանութեան երթալու համար»: Տամատյանի դրական պատասխանից հետո գնդապետը խոստացել է զինել հայ կամավորներին և ուղարկել Հաճըն¹⁵¹:

Գնդապետ Բրեմոնի խոստումներով ոգևորված, Ադանայի հայ հասարակական-քաղաքական և հայրենակցական կազմակերպութիւնները ձեռնարկում են կամավորների ցուցակագրմանն ու նյութական միջոցների հայթայթմանը: Հաճըն մեկնելու պատրաստակամութիւն են հայտնում հարյուրավոր երիտասարդներ: Իսկ մարտի 16-ին Ադանայի առաջնորդարանում գումարված խորհրդակցութիւնը, որին ներկա են եղել քաղաքական կազմակերպութիւնների և հարանվանութիւնների ներկայացուցիչները,

ընտրում է նաև կամավորական խմբերի հրամանատարին: Միաձայն հրամանատար է նշանակվում Ս. Արմաղանյանը:

Որ իրապես ֆրանսիական իշխանութիւնները պարտավորվել էին զինելու 1200 կամավորների, պարզորոշ երևում է նաև Մ. Տամատյանի տեղեկագրից: «Երբ Հաճըն պաշարվեցավ և հասկացվեցավ,— գրում է նա,— որ Ֆրանսիացիք այնտեղ զորք ուղարկելու բնավ տրամադիր չէին, թախանձագին դիմումներով այնտեղ մաս առ մաս ընդամենը 1200 հոգի բաղկացյալ արշավախումբ մը ղրկելու հրաման ստացանք»¹⁵²:

1200 հայ կամավորներին զինելու և Հաճըն ուղարկելու մասին իր «Կիլիկյան նամականի» խորագրով հոգվածում Մ. Վերածինը գրում է, որ ի պատասխան գնդապետ Բրեմոնի «1200 վճռական հայեր չկա՞ն արդյոք Հաճընի օգնութեան փութալու համար» դիտողութեանը, մեծ խանդավառութեամբ սկիզբ առավ կամավորական շարժումը և ավելացնում. «Եվ պահանջված այդ ուժը տրամադրվելու վրա էր, կամավորները կը հավաքվեին Սիս, և կարելի պիտի ըլլար անոնցմե մարզված և կարգապահ շոկատներ կազմել ու ծառայեցնել այն նպատակին, որուն համար զենքի կոչված էին անոնք»¹⁵³:

Երբ Ադանայում բնակցութիւններ էին վարվում Հաճընին օգնելու, կամ դեպի Սիս տեղափոխելու հարցերի շուրջ, մարտի 13-ին Հաճընից ստացվում է հետևյալ հեռագիրը, որն ուղղված էր Ադանայի Ազգային միութեանը, Մ. Տամատյանին, «Տավրոս», «Հայ ձայն» ու «Կիլիկիա» թերթերի խմբագրութիւններին: Հեռագիրն ստորագրել էին Մ. Գայանը և Հ. Չայճյանը:

«Ձեզմե հույսերնիս կտրած ենք, քանի որ մեր բոլոր օգնութեան ազադակներուն միայն երեկ պատասխան ստացանք, որով կը մտածեք հոս գտնվող բոլոր կիները, մանուկները, որբերն ու ամերիկացիները»¹⁵⁴ Սիս փոխադրել, ան ալ առանց որևէ դրական ապահովութեան: Դուք այս կարգադրութեան համամիտ եք: Ասիկա կը նշանակե հաճընցին մուրացկան դարձնել, մեռցնել: Մենք մեր ընտանեկան պատիվը և հարազատները դաժան բախտին հանձնելի վերջ հանուն որո՞ւ պիտի կռուինք: Եթե կը փափաքվի որ դիմադրենք, Կիլիկիոս սահմանը պահելու համար, մեզի զորք և ռազմանյութ ղրկեցեք: Մենք կրնանք երկար ատեն պաշտպանել մեր

148 Տե՛ս Ա. Թերզյան, նշվ. աշխ., էջ 381:

149 Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 648—649:

150 Ա. Թերզյան, նշվ. աշխ., էջ 383:

151 Տե՛ս Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 49:

152 Տ. Պոյաճյան, նշվ. աշխ., էջ 332:

153 «Հայրենիք» լրագիր, 10-ը հուլիսի 1920, № 2492:

154 Նկատի ունեն որբանոցի ամերիկացի միսիոներներին:

հարազատները, մեր ազգային արժանապատվությունը, Կիլիկիան և Ֆրանսական ասպետական դրոշակը: Մենք շուտափույթ ուղմանյութի և զորքի կը սպասենք հակառակ պարագային՝ բոլորին արյունը ձեր վիզը թող ըլլա: Թշնամիին թիվը մեծ է, մեկ ժամ հեռու «Չարտաք թեփե» է»¹⁵⁵:

Ստեղծված կացութիւնը քննարկելու համար մարտի 14-ին Ադանայում հրավիրվում է նոր խորհրդակցութիւն Սարաճյան եպիսկոպոսի նախագահութեամբ: Չկարողանալով որևէ եզրակացութեան հանգել, խորհրդակցութեան մասնակիցները որոշում են նորից դիմել գնդապետ Բրեմոնին: Սակայն նրանից հուսադրող պատասխան չստանալով, Սարաճյան եպիսկոպոսը, Տամատյանից գաղտնի, հեռագրում է Հաճըն և հայտնում, որ օգնութեան ոչ մի հույս չկա, պետք է լքել ամեն ինչ ու նահանջել Սիս¹⁵⁶:

Հաճընում Սարաճյանի հեռագրի ստացումից մի քանի ժամ էր անցել միայն, երբ ստացվում է երկրորդ հեռագիրը Մ. Տամատյանի, հարանվանութիւնների պետերի և Հաճընի հայրենակցական միութեան ստորագրութեամբ: «Գաղթը ազգային արժանապատվութեան դեմ է: Դուք հայու վայել և հաճընցի քաջութեամբ կռիվը շարունակեցեք, քանի մը օրվան մեջ ձեզի 1200 հոգինոց օգնական ուժ պիտի հասնի: Օգնալով ալ պիտի ղրկենք, Ս. Սարգիս բլուրին վրա ճերմակ խաչ մը շինեցեք որպեսզի ծրարները հոն նետե»¹⁵⁷:

Սակայն ֆրանսիական իշխանութիւնների բացահայտ դավաճանութեան հետևանքով մեծ զոհողութիւնների գնով ստեղծված կամավորական ջոկատներին չի հաջողվում հասնել մինչև Հաճըն: Այդ մասին իր տեղեկագրում հանգամանորեն խոսում է Մ. Տամատյանը, որը և մեջ ենք բերում:

«Երկու հարյուր հոգի բաղկացյալ առաջին խումբը վայրկենապես կազմվեցաւ և ճամփա հանվեցաւ Միսիսի գծով Սիս երթալու և հոն հաջորդ խումբերուն սպասելու կարգադրութեամբ: Համաձայնված էր որ այս խումբերը ճամփան որևէ արգելքի կամ միջամտութեան պիտի չհանդիպին ֆրանսիական իշխանութիւններու կողմէ. բայց առաջին խումբը հազիվ Միսիս հասած, զինվորական իշխանութեան կողմէ այնտեղ օրերով վար դրվեցաւ, ինչ որ տեղի տվաւ կամավորներուն մեջ կասկածանքի ու բարո-

յալքումի, և նոր դիմումներու պետք տեսնվեցաւ ասոնց անարգել Սիս մեկնելուն արտոնութիւնը ստանալու համար:

Այս առաջին խումբը առանց միջադեպի հասաւ Սիս: Երեքշորս օր վերջը ճամփա ելաւ 200 հոգինոց երկրորդ խումբը, որ Միսիսի մեջ նույն արգելքներուն և ժամավաճառութիւններու հանդիպելի վերջը հաջողեցաւ ճամփան շարունակել և հասնիլ նույնպես Սիս: Դարձյալ 200 հոգինոց երրորդ խումբը Միսիսի մեջ նույն բախտին վիճակվելի վերջ երբ հասաւ Թումու-գալիի առջև, թուրք չեթեններու հետ ընդհարումի հանդիպելով, նահանջեց դեպի Միսիս: Պատճառներ ունինք կարծելու, որ Թումուլուի առջև երեցող չեթենները զրգված և պատրաստված էին Ջիհանի մեջ տեղվույն ֆրանսացի զինվորական հրամանատարին և կայմակամ շերքեզ Իբրահիմ բեյի կողմէ (այս վերջինը հետո հայտնապես չեթեններուն միացաւ և պատուհաս մը եղաւ երեմնի իր պաշտպաններուն գլխուն):

Նահանջող հայ խումբին մեկ մասը բարոյալքված Ադանա վերադարձաւ և այս դեպքին անախորժ տպավորութեան տակ շորորդ խումբը միայն 100 հոգի կարելի եղաւ հանգեցնել: Այս խումբը Միսիսի մեջ նախորդ խումբին շքրված լավագույն տարրին հետ միանալով, մոտավորապես 175 հոգի լեյտենանտ վահան Փորթուգալյանի, Մկրտիչ Եփրեմյանի և Ռուբեն Հերյանի նման լուրջ և կարող առաջնորդներով հառաջացաւ դեպի Թումուլու, ուր անգամ մըն ալ ընդհարում տեղի ունեցաւ իրենց և չեթեններու միջև: Այս ընդհարման միջոցին հայերը իրենց վրա կրակող չեթեններուն իբրև որ ծառայող, իրենց բնակիչներեն պարպված մեկ քանի աննշան գյուղեր կրակի տվին: Հրկիզումի այս դեպքը իբրև պատրվակ ծառայեց ֆրանսիացիներուն ոչ միայն խումբին պաշար տանող կարավանին Միսիսեն մեկնումը արգիլելու, որպեսզի խումբը անոթի մնալով ստիպվեր նահանջել, ինչ որ տեղի ունեցաւ իսկույն, այլ նաև զինվորական ատյանի բաշելու խմբին երկու պետերը՝ Փորթուգալյան և Եփրեմյան, և անոնց հետ մեկ քանի տասնապետներ շարագործներու հետ գործակցութեան և կամավոր հրկիզումի ամբաստանութեամբ»¹⁵⁸:

Ա. Կենճյանը հիշատակում է նաև ֆրանսիական հրամանատարութեան դավադրութիւնը մերկացնող հետևյալ միջադեպը: Երբ կամավորական առաջին ջոկատը Ս. Արմաղանյանի հրա-

¹⁵⁵ Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 50:

¹⁵⁶ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 651:

¹⁵⁷ Ս. Թերգյան, նշվ. աշխ., էջ 258:

¹⁵⁸ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 332—333:

մանատարութեամբ հասնում է Միսիս, Սսից ստացվում է մի հե-
ռագիր, որով պահանջվում էր մինչև հաջորդ հեռագիրը լշարու-
նակել ճանապարհը: Արմաղանյանը կասկածելով ֆրանսիացի-
ների անկեղծութեան վրա և ինչ-որ վատ բան գուշակելով դրանից,
առանց ժամանակ կորցնելու հրամայում է խմբին առաջանալու
դեպի Միս: Շուտով պարզվում է գաղտնիքը: Հետախուզության
դուրս եկած առաջապահ մարտիկները հայտնում են հրամանա-
տարին, որ շրջակա թուրք գյուղացիները արդեն իսկ գիտեին Միս
մեկնող կամավորական ջոկատի մասին և նույնիսկ գիտեին նրա
կազմում գտնվող կամավորների թիվը¹⁵⁹: Ինքնին հարց է ծա-
գում. ո՞վ կարող էր այդ բոլորը հայտնել թուրքերին, եթե ոչ ֆը-
րանսիական հրամանատարությունը: Եվ եթե հրամանատարի
զգոնության շնորհիվ առաջին խումբը, այնուամենայնիվ, խուսա-
փեց ընդհարումից, ապա ֆրանսիական հրամանատարությունը,
որը հավանաբար այս ճանապարհով էր ուղում խափանել կամա-
վորների մեկնումը, կարողացավ իրագործել իր մտադրությունը
մյուս խմբերի նկատմամբ:

Թուրքական գյուղերը այրելու և թուրք խաղաղ բնակչությանը
կոտորելու անվան տակ ֆրանսիական իշխանությունները կազ-
մակերպում են կամավորական խմբերի հրամանատարներ Վ.
Փորթուգալյանի, Մ. Եփրեմյանի, Ծ. Սիմոնյանի և Հ. Վեքիլյանի
դատախազը: Պատերազմական ատյանի նախագահ ֆրանսիացի
սպան, հիմք ընդունելով թուրք վկաների կեղծ ու շինծու վկայու-
թյունները, իր մեղադրական խոսքում մահապատիժ է առաջար-
կում: Եվ միայն իրավաբան Հ. Ազատյանի ջանքերի շնորհիվ, բա-
րեբախտաբար, մերկացվում է կեղծիքը և հայ զինվորականները
անպարտ են ճանաչվում¹⁶⁰:

Լեգեոնական Տ. Պոյաճյանը խոսելով Վ. Փորթուգալյանի և
Մ. Եփրեմյանի ձերբակալման մասին, գրում է. «Անոնց ձերբա-
կալումը մեծ հուզում և ցասում պատճառեց, որովհետև հայտնի
էր, որ սոսկ քաղաքական շահերու հետապնդումով, ֆրանսիական
իշխանությունները այս երկու պատվական հայերու դուռ ինքնա-
պաշտպանության նվիրված գործերու բնույթը աղարտելով՝ դա-

¹⁵⁹ Տե՛ս Ա. Կենեյան, նշվ. աշխ., էջ 71:

¹⁶⁰ Հայ կամավորների մեղադրման, ձերբակալման, ֆրանսիական իշխա-
նությունների սարքած դավերի ու պատերազմական ատյանի մանրամասնություն-
ների մասին տե՛ս Վ. Խուպեսերյան, նշվ. աշխ., էջ 178—183:

նոնց դատապարտելու և մահվամբ պատժելու նպատակ ունե-
ին»¹⁶¹:

Բայց այս բոլորը դավադրության միայն սկիզբն էր: Նախան-
ձելի շէր նաև մինչ այդ բարեհաջող Միս հասած շուրջ 400 հայ
կամավորների վիճակը: Միս հասնելուց անմիջապես հետո կա-
պիտան Թայարդայի հրամանով կամավորները զինաթափվում և
վերցվում են խիստ հսկողության տակ: Ա. Կենեյանը իր գրքում
զետեղել է Հաճընի պատվիրակներից մեկի՝ Ե. Տարտաղանյանի
հուշերը: Իր հուշերում նա գրում է, որ մարտի 28-ին կապիտան
Թայարդան իր մոտ է կանչում կամավորական խմբերի հրամա-
նատարներին և հայտնում. «Որքան որ Ադանային եկած եք Ազգ-
միություն կարգադրությամբ և զոր. Դյուֆիեռյի արտոնությամբ
Հաճնո օգնության երթալու. բայց ինձի եկած հեռագրով կը պա-
հանջվի, որ սպասեք Միս, մինչև նոր հեռագրի՝ բոլորդ ալ պիտի
մտնեք հարյուրապետ Ժյուլիենի հրամանատարության տակ: Ան՝
օրվան կացության համաձայն՝ ձեզի պիտի հաղորդե իր հրա-
հանգները: Կը պահանջեմ, որ կես առ կես գործադրեք»¹⁶²:

Այսպիսով, այն կամավորները, որոնք Հաճըն մեկնելու նպա-
տակով էին դուրս եկել Ադանայից, ֆրանսիական իշխանություն-
ների կողմից դատապարտվում են արգելափակման Սսում մինչև
Հաճընի նահանջը:

Մինչ Ադանայում ֆրանսիացիները համառորեն սակարկում
էին օգնության խնդիրը, մինչ բանակցություններ էին վարվում
կամավորական խմբերի ստեղծման շուրջ և բազմապիսի խորհրդ-
դակցություններ գումարվում, Հաճընի դրությունը օրավուր ծան-
րանում էր:

Մարտի սկզբներից արդեն քեմալականները սկսում են ա-
նարգել երևալ Հաճընի անմիջական մատուցներում և մարտի 8-ին
Ռումլու գյուղի մոտակայքում նույնիսկ հարձակվում են հետա-
խուզության դուրս եկած Պ. Թերզյանի ջոկատի վրա: Մարտի 12-
ին առանց որևէ դժվարության նրանք գրավում են Հաճընը Սսի
հետ կապող ու կարևոր դիրք ունեցող Վահկան, որով Հաճընը մե-
կուսացվում էր հարավից: Երկու օր անց նրանք կտրում են հեռա-
խոսալարերը և խզում Հաճընի կապը արտաքին աշխարհի հետ:

Մարտի 18-ին Հաճընից ստացված հեռագրում ասվում էր.
«Հաճըն շարաթե մը ի վեր խստորեն պաշարված է թուրք զորա-

¹⁶¹ Տ. Պոյաճյան, նշվ. աշխ., էջ 306:

¹⁶² Ա. Կենեյան, նշվ. աշխ., էջ 91:

վոր ուժերն. ֆրանսիական իշխանութունք կը մերժեն որևէ ուժ ղրկել. Հայերը հուսահատորեն կը կուլին, զրկված ըլլալով ինքնապաշտպանութան միջոցներն»¹⁶³:

Երկու անգամ (մարտի 16-ին և 28-ին) ֆրանսիական մի ինքնաթիռ պտույտ է կատարում Հաճընի և Ս. Սարգիս լեռան վրա, որտեղ մինչ այդ վայրէջքի համար հատուկ հրապարակ էր պատրաստվել, նետում նամակների, թերթերի ու կոշերի մի ծրար, իսկ երկրորդ թռիչքի ժամանակ նաև՝ մի արկղ փամփուշտ: Մարտի 14-ին գրված կոշերից մեկը, որը ստորագրել էին Մ. Տամատյանը, Պետրոս եպոս. Սարաճյանը և Գևորգ Ժ. վրդ. Ասլանյանը, հուսադրող էր: Կոշի հեղինակները գրում էին. «Ամուր կեցեք ձեր դիրքերուն մեջ. անպատճառ օգնութեան պիտի հասնինք: Սպառազինված երկու հարյուր քաջեր այս օրերս ճամփա կելեն, որոնք Սիսի մեջ համախմբվելով՝ շուտով Հաճըն պիտի մեկնին: Լեռնային դիրքերուն ուշադրութուն, որպեսզի շահնդիպի օգնական բանակը դժվարութեանց»¹⁶⁴:

Միաժամանակ հայտնի է դառնում, որ հաճընցիներին հասցեագրված նամակները, այդ թվում Մ. Տամատյանի և Հաճընի պատվիրակության, երկրորդ ինքնաթիռը նետել էր թուրքական դիրքերի վրա: Հետագայում դրանք հայերենից թարգմանվել էին թուրքերեն և ուղարկվել հաճընցիներին¹⁶⁵:

Քեմալականների առաջին կանոնավոր ու կազմակերպված հարձակումը Հաճընի վրա կատարվում է մարտի 28-ին, բայց որևէ հաջողության հասնել թշնամուն չի հաջողվում: Չնայած այն բանին, որ հաճընցիները կարողանում են կասեցնել թշնամու գրրոհները և նրան ետ շարտել դեպի ելման գիծը, բայց և այնպես առաջին հարձակումն ու հրաձգութունը, որոնք այնուհետև այնքան սովորական էին դառնալու ավելի քան յոթ ամիս, խուճապային վիճակ է առաջացնում ինքնապաշտպանների շարքերում: Դրանից էլ ելնելով հետագայում արգելվում է առանց թուլտվության տեղափոխությունը մի դիրքից մյուսը և առանց հրամանի շրջելը քաղաքի փողոցներում: Միաժամանակ նկատի ունենալով հայկական դիրքերի հեռավորությունն ու ցրվածությունը, ինչպես նաև դրանք պաշտպանող ուժերի փոքրաքանակությունը, որոշ-

վում է լքել հեռավոր ամրությունները և դիրքավորվել Հաճընի անմիջական շրջակայքում:

Հաճընցիների պաշտպանական դիրքերի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Գալքեր Ռեչեպը: «Քաղաքի շուրս բոլորը,— գրում է նա,— ոչ մի ազատ կետ չթողնելու պայմանով ամրացված էր: Այս ամրություններում դրված ավազե պարկերի արանքներում պատրաստված հրակնատներից բոլոր ուղղություններով կարողանում էին կրակ բացել: Չորից չոր վերցնելու նպատակով կառուցվել էին ծածկված մկան ճամփաներ: Այնպես որ թշնամին բոլորովին աննկատ կարող էր իր ուժերը մի դիրքից մյուսը տեղափոխել: Բացի այդ, քաղաքում գտնվող և իշխող դիրք ունեցող տները ամրացվել ու բերդերի էին վերածվել»¹⁶⁶: Ապա խոսելով հաճընցիների ուժի մասին, թուրք հեղինակը գրում է, որ Պողոս Ճեպեճյանը (պետք է լինի Սարգիս Ճեպեճյան) զինել էր նույնիսկ կանանց և իր զորքի ընդհանուր թիվը, այսպիսով, հասցրել 1000—1500-ի, որն անկասկած չափազանցված է: Քեմալական հետագա վայրագությունների արդարացման համար հող նախապատրաստելու մտահոգությամբ էլ թուրք հեղինակը, միամիտ ձևանալով, ընթերցողին փորձում է համոզել, թե իբր վերոհիշյալ ուժերով հայերը նպատակադրվել էին ոչնչացնել թուրքերին¹⁶⁷:

Ստեղծված իրավիճակը հաճընցիների համար կազմակերպչական բնույթի նոր պահանջներ ու խնդիրներ է հարուցում: Մինչ այդ գոյություն ունեցող միակ կազմակերպությունը ինքնապաշտպանության կոմիտեն էր, որը զբաղվում էր ինչպես ռազմական, այնպես էլ տնտեսական կարգի այլ հարցերով: Կոմիտեի ուշագրությունը հիմնականում զինվորական բնույթի խնդիրների վրա քեմալական նպատակով կյանքի է կոչվում մի նոր հասարակական կազմակերպություն՝ պարենային հանձնաժողովը: Հանձնաժողովը պետք է հաշվառման ենթարկեր պարենի խիստ սահմանափակ պաշարը, հսկողություն սահմաններ նրա սպառման վրա ու զբաղվեր ռազմիկների և բնակչության մատակարարումը կանոնավորելու հարցերով: Բացի այդ, բացվում է 30 մահճակալանոց հիվանդանոցը, զինարան-արհեստանոցը, որտեղ օրեկան լցնում էին 500—600 փամփուշտ, տասնյակ նոնակ, վերանորոգում հրքացաններ և այլն:

¹⁶³ Գ. Ահարոնյան, Մեծ երազի ճամփուն վրա, Բեյրութ, 1964, էջ 140:

¹⁶⁴ Ս. Թեքչյան, նշվ. աշխ., էջ 265:

¹⁶⁵ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 657:

¹⁶⁶ Dalkir Recep, նշվ. աշխ., էջ 148:

¹⁶⁷ Տե՛ս նույն տեղում:

Ինքնապաշտպանության ամբողջ յոթ ամիսների ընթացքում հաճրնցիները ցուցաբերում են բացառիկ արիություն, կաղմակերպվածություն և դժվարությունները հաղթահարելու անհողորդ կամք, գործոններ, առանց որոնց դժվար թե Հաճրնը ի վիճակի լիներ միայնակ կուրծք տալ թշնամու տասնապատիկ գերակշիռ ուժերին: Տղամարդկանց կողքին համահավասար կռվում էին կանայք, կիսում նրանց ուրախությունն ու դառնությունը:

Կապավորների պարտականությունը մեծ հաջողությամբ կատարում էին որբանոցի 10—12 տարեկան սաները, որոնց մասին Ս. Թերզյանը գրում է. «Անոնք կը նմանեին պատերազմի արհավիրքի մեջ ծնած և մեծցած կայծակնեղեն ու հրավառ այծյամներու, որոնց համար գոյություն չունեի վախն ու վտանգ:

Իրենց մեջքին կապած ատրճանակ մը և կուրծքերին վարդարված փամփուռակալներով, փոքրիկ հայդուկներու հոգեկան արիություն, հայրենասիրության ու ծառայության ոգով զինովցած, լուռ, պատրաստակամ, սիրով ու հաճույքով նվիրված էին սուրհանդակի պաշտոնին»¹⁶⁸:

Առաջին պարտությունը քեմալականներին հարկադրում է առժամանակ դադարեցնել գրոհները և նախապատրաստվել նոր ու ավելի կազմակերպված հարձակումների: Ապրիլի 5-ից սկսվում է նրանց երկրորդ գրոհը, որը տևում է ամբողջ տասը օր: Քեմալականները փորձում են հանկարծակի ու միաժամանակյա հարձակումներով ջլատել ինքնապաշտպանների ուժերը, բայց միշտ անհաջող: Ամեն անգամ հաճրնցիները, թաքլ տալով թշնամուն մոտենալու մինչև անվրեպ կրակելու տարածություն, դիպուկ կրակոցներով մեծ վնաս են պատճառում:

Տասը օր տևած անհաջող մարտերը քեմալական ուժերի հրամանատար Կոզան Օղլու Գոզան բեյին ստիպում են նոր բանագնացներ ուղարկել Հաճրն և բանակցությունների միջոցով հարկադրել հաճրնցիներին անձնատուր լինելու: Այդ նպատակով ապրիլի 17-ին Հաճրն են գալիս ամերիկյան դպրոցի տնօրենուհի Կոլար և ամերիկյան որբանոցի տնօրեն Իբին, իրենց հետ բերելով Գոզան բեյի պայմանները: Բայց հաշտություն կնքելու ինչպես այս, այնպես էլ նախորդ ու հետագա բոլոր փորձերը որևէ արդյունք չեն տալիս և իրականում չէին էլ կարող տալ, քանի որ թուր-

քական կողմը, որպես նախապայման, համառորեն պահանջում էր իրեն հանձնել հաճրնցիների զենքն ու ռազմանյութը:

Հատկանշական է, որ հաճրնցիների հերոսական դիմադրությունը ընկճել էր քեմալականներին ու կոտորել Հաճրնը զենքով գրավելու նրանց հավատքը: Այդ մասին պերճախոս վկայում է Ս. Քեմալին ուղղված Գոզան բեյի հեռագիրը: Ապրիլի 30-ի անհաջող հարձակումից հետո նա արդեն խոստովանում է, որ «Մեր հարձակումները ապարդյուն անցան: Հաճրնը զենքով գրավել անկարելի է: Պիտի սպասեմ որ անոթությունեն ուժասպառ անձնատուր ըլլան: Արդեն քանի մը ամսվա բավելիք ուտելիք ունին»¹⁶⁹:

Բայց քեմալականների հարձակումները չեն դադարում նաև հետագա ամիսներին: Գործի ղեկով լեռնային թնդանոթներն ու գնդացիները, նրանք գերակշիռ ուժերով ընդհուպ մոտենում են հայկական դիրքերին, որոշ հատվածներում նույնիսկ սվինամարտի բռնվում հայ մարտիկների հետ: Բայց Հաճրնը գրավել, այնուամենայնիվ, չեն կարողանում:

Հաճրնի ինքնապաշտպանների միակ հույսն ու մխիթարությունը, որը կրկնապատկում էր նրանց կորուլն ու հաղթանակի հավատքը, անկասկած, դրսից ակնկալվող օգնությունն էր: Բայց այն չկար ու չկար: Եվ հանկարծ, գիշերվա խավարում փայլատակող կայծակի նման, մայիսի վերջերին Սսից Հաճրն է հասնում սուրհանդակ Ասատուր Սաչյանը: Նա ավետում է, որ մոտ օրերս հայ կամավորական ուժերը, որոնք կազմ ու պատրաստ հրամանի են սպասում, Սսից շարժվելու են Հաճրն: Սաչյանը իր հետ բերել էր նաև Ս. Ծեպեճյանին ուղղված Ծ. Չանգալյանի հետևյալ նամակը.

«Սիրելի Ծեպեճյան,

Բավական օրեր եղան, որ հինգ հարյուր զինված մարտիկներով Հաճրնի օգնության փութալու համար Սիս կը սպասենք: Հաճրնցիներուն մինչև հիմա ողջ մնալով պատերազմիլը, իսկապես մեր մեջ ստեղծած է հոգեկան այն տեսակ դրություն մը, որ չեմ կարող բացատրել:

Այլևս, մի հուսահատիք, ընդհանուր հայության աչքը դեպի ձեզ ուղղված է, և այդ ուղղությամբ աշխատանքներուն գործնական արդյունքը քանի մը օրեն պիտի տեսնեք: Բոլոր ուժովս կը

¹⁶⁸ Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 304:

¹⁶⁹ Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 316:

պատրաստվում օգնության հասնելու: Հաճրնի ներկա կացության տեղյակ ըլլալու փափաքով կը ղրկենք Ասատուր Սաշյան»¹⁷⁰:

Նորից բարձրանում է հաճրնցիների մարտական տրամադրությունը: Նույնիսկ նշանակվում են հատուկ դիտորդներ, որոնք պետք է հետևեն կամավորների հայտնվելուն և հեշտացնեն նրանց մուտքը Հաճրն: Անմիջապես խմբագրվում են Հաճրնի ողբալի կացությունը պատկերող մի շարք գրություններ և հանձնվում Սիս վերադարձող Սաշյանին:

Բայց այս ընթացքում կատարվում է անհավատալին: Մայիսի վերջերին, մինչև Սաշյանի Սիս վերադառնալը, կնքվում է Ֆրանսուզեմալական զինադադարը, որի կետերից մեկի համաձայն Ֆրանսիական իշխանությունները Սիսը հանձնում էին թուրքերին, իսկ այստեղ գտնվող ֆրանսիական զորքն ու մի քանի հազար հայությունը՝ նահանջում Ադանա: Եվ այն կամավորական ջոկատները, որոնք այնքան մեծ զոհողությունների գնով էին կազմակերպվել ու դժվարությամբ հասել Սիս, ֆրանսիական իշխանությունների հրամանով դատապարտվում են կատարելու նահանջող հայերի հուղարկավորի տխուր պարտականությունը:

Մինչդեռ պաշարված Հաճրնում հազարավոր հայեր, աչքերը հեռունները հառած, օգնություն էին աղերսում, քաղաքում հանկարծ լուրեր են շրջում ֆրանսիացիների կողմից Սիսը լքելու մասին: Թեև սկզբում ոչ մի հաճրնցի հակված չէր հավատալու ֆրանսիացիների նման դավաճանությանը, բայց մարտերի ընթացքում գերված թուրք զինվորներն ու փաստաթղթերը, մի կողմից, և օգնության ուշանալը, մյուս կողմից, համառոտ են խոսում էին լուրերի իսկության մասին:

Սաի հանձնումը քեմալականներին և հայ կամավորների հարկադրված նահանջը առաջին խոշոր հարվածն էր Հաճրնի ինքնապաշտպաններին: Այն խոր հիասթափություն ու հուսալքություն է պատճառում հեռավոր լեռներում կղզիացած և հերոսաբար պաշտպանվող հաճրնցիներին: Ամիսներ շարունակ պաշարվածների սիոփանքն ու փայփայած երազանքը ակնկալվող օգնությունն էր եղել, որն այժմ անգթորեն ի չիք էր դառնում ֆրանսիացիների դավաճանության հետևանքով:

Հաճրնի համար կարևոր նշանակություն ունեն Շարի հաջող ինքնապաշտպանությունը: Ավելի քան չորս ամիս այս ոչ

մեծ գյուղի մի քանի տասնյակի հասնող պաշտպանները աննկարագրելի համառությամբ ու քաջությամբ դիմադրում էին քեմալական անհամեմատ մեծ ուժերին: Բայց ուժերը խիստ անհավասար էին: Ինքնապաշտպաններին տանջում էր պարենի ու ռազմամթերքի պակասը: Շարի դրությունը օրհասական է դառնում հատկապես 1920 թ. հուլիսի սկզբներից, երբ քեմալականների ստացած թնդանոթները սկսում են ուժեղանալ հայկական դիրքերը և գյուղը հավասարեցնում հողին: Ի վերջո, մեծ զոհերի գրնով, քեմալականներին հաջողվում է կոտրել շարքիների դիմադրությունը և ներխուժել գյուղ: Նրանց առաջնահերթ գործն է լինում անպաշտպան կանանց ու երեխաներին կոտորելը: Մոտ 70 մարդու է հաջողվում դուրս գալ պաշարումից և լեռներով նահանջել դեպի Հաճրն: Նահանջի ճանապարհին թշնամու հետ ունեցած ընդհարումների ընթացքում զոհվում է նաև նրանց կեսը և միայն 35 մարդու է բախտ վիճակվում հասնել Հաճրն:

Հաճրնի ողբալի կացության պատկերը ամբողջացնելու համար նշենք, որ հուլիսի կեսերից սպառվել էր նաև պարենի խոճուկ պաշարը: Քաղաքի վրա շրջում էր սովի ուրվականը: Ականատեսների վկայությամբ Հաճրնում չէր մնացել նույնիսկ շուն ու կատու, էլ շենք խոսում ընտանի անասունների մասին: «Օգոստոս ամսվա սկիզբն ենք... Բառեր կը պակսին և անկարող ենք կսկիծով ու անհեծքով տվայտող վեց հազար ժողովուրդի մը կյանքը, կենցաղը, ապրելակերպը և անոր սիրտն ու հոգին քամող անհամբերության, անհանդուրժողականության, թշվառության, ցավի ու տառապանքի անպատմելի վեպը նկարագրել... Հինգ ամիս անցած է, ոչ ավելի ոչ պակաս, հինգ ամիս այն օրեն երբ ֆրանս. սավառնակ մը կեղծ ու պատիր ժպիտներ շոռայլեց և Ադանային բերավ թոուցիկներ, ավետելով օգնական բանակի հառաջխաղացումը դեպի Հաճրն»¹⁷¹:

Հաճրնի համար ծանր այս օրերին իր բողոքի ձայնն է բարձրացնում Ադանայի հայությունը: Ի նշան ֆրանսիական իշխանությունների անտարբեր քաղաքականության փակվում են արհեստանոցներն ու խանութները, ֆրանսիական գրասենյակների առջև տեղի են ունենում ցույցեր ու միտինգներ: Յուցարարները պահանջում են ամեն գնով օգնել ուժասպառ Հաճրնին: Աշխարհի

170 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 324:

171 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 437:

կանանց ուղղված կոչով հանդես են գալիս հաճընցի կանայք և խնդրում նպաստել Հաճընի փրկութեան գործին:

1920 թ. մայիսի 2-ին Ազանայի Աբգարյան դպրոցի բակում կայացած միտինգի բանաձևում ասվում էր.

«Նկատի ունենալով, որ Ֆրանսիայի պաշտպանութեան հանձնըված Կիլիկիայի հայերը իրավունք ունեն պահանջելու ֆրանսիական իշխանութուններից ապահովելու իրենց ունեցվածքն ու պատիվը, և շնայած դրան, պաշարված Հաճըն քաղաքը դրական ու գործնական ոչ մի օգնություն չի ստանում և թողնված իր անբավարար միջոցներին, գտնվում է հոգեվարժի արհամիրքներում:

Նկատի ունենալով, որ օղային որևէ կապ չի հաստատվել (Հաճընի հետ—Շ. Թ.), Ազանայում գտնվող հաճընցիները, ինչպես նաև ամբողջ հայ ժողովուրդը, իրենց դժբախտ եղբայրների ապագայի մասին սրտաճմլիկ անապահովության ապրումների մեջ շեն:

Նկատի ունենալով, որ նման վիճակի անվերջ երկարաձգումը անպայման կհանգեցնի ութ հազար հայերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների անխուսափելի բնաջնջման,

Մենք պահանջում ենք Հայ Ազգային միութունից, որ անմիջապես դիմի մեր ժողովրդի բարեկամ, դաշնակից և պաշտպան ֆրանսիական իշխանութուններին, աղաչի նրանց, որ այլևս առանց հապաղելու հարկ եղած միջոցները ձեռնարկեն Հաճընը պաշարումից ազատելու համար:

Մինչ այդպիսի միջոցառումների իրագործումը, մենք Հայ Ազգային միութունից պահանջում ենք, որ նա միջամտի ինչպես որ հարկն է, որպեսզի հենց այսօրվանից ապահովվի ինքնաթիռների կանոնավոր մեկնումը ու վինամթերք տեղափոխելը դեպի Հաճըն. միաժամանակ դա կբարձրացնեք պաշարված հերոս բռնակշիռության բարոյականը:

Վստահ լինելով Ֆրանսիայի մեծահոգութեանը, մենք շենք կասկածում, որ վերևում ձևակերպված մեր արդարացի պահանջները բարյացակամ ուշադրության կարժանանան և կբավարարվեն:

Բայց և այնպես սպասելն անհնար համարելով, այժմյանից ստիպված ենք հայտարարելու, որ այն դժբախտ դեպքում, երբ մեր այս վերջին միջոցառումը անմիջական հետևանք չունենա, էլ շենք սպասի, որ վրա հասնի Հաճընի անխուսափելի վախճանը,

այլ այժմյանից կհրավիրենք Ազգային Միութեանը՝ ամբողջ Կիլիկիայում ազգային սուգ հայտարարելու¹⁷²:

Ֆրանսիական իշխանութուններին և, մասնավորապես, գեներալ Դյուֆինոյին ու գնդապետ Բրեմոնին ուղղված իր պաշտոնական գրությունում Մ. Տամատյանը մերկացնում է նրանց վարած հայադավ քաղաքականությունը և ստեղծված իրավիճակի ամբողջ պատասխանատվությունը դնում նրանց ուսերին: Բրեմոնին ուղղված 1920 թ. մայիսի 5-ի գրությունում Հաճընի գրության կապակցությամբ նա գրում է.

«Դուք Ձեր գրությունը կը վերջացնեք պաշտպանելով ֆրանսիացիներուն վերաբերումն ու դիրքը: Բան մը որ բնավ պիտի չկրնանք ընդունիլ:

Որքան ատեն որ Հաճըն ազատված չէ, որքան ատեն որ Տազար էրիկ մարդիկ, կին ու մանուկներու կյանքը վտանգի տակ կը մնա, մեզի հնարավոր չէ ֆրանսիական իշխանութունները զերծ նկատել որևէ պատասխանատվութենե:

Եթե Հաճընի վրա հարձակումը կարելի ըլլար ներկայացնել որպես աննախատեսելի, եթե հերոսական այդ քաղաքը անձնատուր ըլլար առաջին իսկ հարձակումին, եթե ան երկու ամիս դիմադրած ըլլար, եթե ֆրանսական իշխանութունները չունենային երկու երկար ամիսներու միջոցը՝ պատրաստվելու և հարկ եղած միջոցները ձեռք առնելու այդ քաղաքը փրկելու մտք, թերևս պիտի կարողանայինք—դուք և մենք—լվալ մեր ձեռքերը և ողբալով հանդերձ եղած դժբախտությունը, մեզ զերծ պահել որևէ պատասխանատվութենե:

Երկու ամսվա պաշարումեն վերջն ալ քաղաքը կը դիմադրե դեռ: Ան մեզի միշտ ալ ժամանակ թողուց իրեն օգնության փութալու, ու մենք ամենքս ալ չկրցանք ոչինչ ընել: Մենք ոչինչ ըրինք անոնց հասցնելու համար օգնություն, սննդամթերք, ռազմանյութ և նույնիսկ հրահանգներ՝ իրենց ընելիքներուն, ու դուք կուզեք որ կարողանանք քննալ:

Մենք՝ պարզ մահկանացուներս, որ շենք հասկնար դիվանագիտության նրբությունները և պետությանց քաղաքական բաժանումներուն հետևանքները, և ոչ ալ ձեռք առած միջոցները՝ մեծ պետության մը, որ ստանձնած է երաշխավորությունը Կիլիկիո ազգաբնակչությանց ապահովության, մենք, որ միանգամայն շենք

¹⁷² Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 391:

ըմբռններ ռազմավարութեան պահանջները, ոչ իսկ զինվորական արհեստին գործնական արժեքը, այո, շենք դադրիր կրկնելե եթե ոչ բան մը միայն: Այն է՝ Հաճըն ամբողջական վտանգի ներքև է, թե հայ վարիչները մեկ կողմե և մանավանդ գրավման իշխանութիւնները մյուս կողմե, ունին անուրանալի պարտականութիւն ձեռք առնելու ազդու միջոցներ՝ զայնս փրկելու: Ու մենք, դժբախտաբար, հետո ենք խորհելե թե ամեն ինչ ի գործ դրված է այդ տեսակետին: Եվ թե, հետևաբար, չկա այլևս ոչինչ ընելիք քան եթե ստոյիկաբար սպասել այդ անցքերուն ողբերգական վախճանին»¹⁷³:

Ապա անդրադառնալով կամավորական ջոկատների կազմալուծումն արդարացնելու ֆրանսիական իշխանութիւնների փորձերին, Տամատյանը ցույց է տալիս պատճառաբանութիւնների կեղծ ու անհիմն լինելը և շարունակում. «Դուք նախ և առաջ որպէս ճշմարտութիւն կընդունիք թե՛ կամավորները Հաճըն մեկնեցան առանց ռեկորտի, թե՛ մեծ դժվարութիւններ եղան զայնս արձանագրելու համար, և ալ ավելի զայնս պահելու, թե՛ անոնք երբեք անխառն փափաք չհայտնեցին Հաճըն երթալու, թե անոնց մեջ հազիվ 100—120 արժեքավորներ կային:

Այս մասին Ձեզ դիտել կուտամ թե՛ կամավորները զինվորներ չէին՝ ընդունելով հանդերձ թե անոնց մեջ արդարև գտնվեցան ոմանք, որ հարմարութիւն շունեցան ազդուպես ծառայելու այդ նպատակին: Սակայն այդպիսյաց թվական համեմատութիւնը խիստ շատ նվազ էր, քան այն ինչ որ Ձեզ հաճաք կը թվի ներկայացնել: Վկա նույնինքն Ձեր գրութիւնը:

Եթե կամավորներն մաս մը բարոյական անկում ունեցավ, այդ մասը իրականին մեջ խիստ աննշան էր: Բայց կը խոստովանիմ, որ ան օրեց օր կը շատանա և թե կազմալուծումը շատ շանցած պիտի տարածվի բոլոր կամավորներուն մեջ: Ատոր պատճառը այլուր է»¹⁷⁴:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ադանայի ներգաղթի և հանրային նպաստի գրասենյակի պետ Գանյուն 1920 թ. մայիսի 4-ին դնդապետ Բրեմոնին ներկայացրած իր № 2771 հիշատակագրում, որից քաղվածքներ է կատարել Մուշեղ արքեպս. Սերոբյանը՝ ֆրանսիական կառավարութեանն ուղղված բողոքագրում և

որի մասին ակնարկվում է նաև Մ. Տամատյանի վերոհիշյալ գրութիւնում, նույնպես անդրադառնում է Հաճընի ծանր դրութեանը և ֆրանսիական իշխանութիւններին մեղադրում պաշարված հայերին լքելու մեջ: «Բայց ֆրանսիացիք,— գրում է նա,— բան մը չկրցին ընել հոն կարգ կանոնը հաստատելու և պաշտպանելու քրիստոնյա ժողովուրդը, որ ֆրանսիացիներուն կողմը բռնեց: Հաճըն պիտի կրնար պաշտպանվիլ և փրկվիլ առանց կաթիլ մը արյուն թափելու: Հարյուրավոր հայեր ինքզինքնին կը տրամադրեին. բավական էր անոնց քիչ մը ռազմանյութ տալ: Այդ բանը սակարկեցին անոնց հետ. հետո մերժեցին: Ինչու. որովհետև հակառակ գործված բոլոր սոսկումներուն, ֆրանսիական քաղաքականութիւնը ուղեց խնայել թուրքերը. ան շուղեց, իր անկարողութիւնը հայտարարելով հանդերձ, զանոնք պաշտպանել, ներել հայերուն, որ իրենք պաշտպանեն ինքզինքնին... Ամեն պարագայի մեջ այս ընծայվելիք դյուրութիւնները ֆրանսական իշխանութիւնները զերծ պիտի կացուցանեին Կիլիկիո քրիստոնյա ժողովուրդներու հանդեպ անտարբերութեան ամեն մեղադրանքի, առանց վնասելու անկե ստացվելիք հնարավոր արդյունքներուն»¹⁷⁵:

Գնդապետ Բրեմոնին ուղղված 1920 թ. հունիսի 23-ի № 2859—2 բողոքագրում Մ. Տամատյանը՝ խոսելով Կիլիկիայում հայերի համար ստեղծված անապահով ու անկայուն վիճակի մասին, եզրակացնում է, որ երկրամասում անվերջ ընկնում է ֆրանսիական իշխանութիւնների ազդեցութիւնը և վախ հայտնում, որ եթե չբարելավվի կացութիւնը, ապա անհնար է դառնալու ժողովրդական հուզումների զսպումը: Այնուհետև իրեն հատուկ ոճով Տամատյանը շարունակում է. «Դուք լքեցիք Հաճընը, Սիսը, Այնթապը առանց հաշվի առնելու մեր մարտիրոսները: Վաղը դուք պիտի լքեք ուրիշներ ևս: Եվ մենք որ ձեր դաշնակիցներն էինք, մենք ավելի թշվառ պիտի ըլլանք քան ինչ որ էինք նախքան պատերազմը: Ծշմարտութիւն է որ հաղթանակը, ձեր կողմե, մեզ որևէ օգուտ չի բերավ... Անոնք (հայերը) ներկայիս, բան մը միայն կուզեն. այլևս ենթակա չըլլալ թուրք տիրապետութեան»: Հայերը, սակայն, մտահոգված են, «որովհետև ձեզ տրամադիր կը տեսնենք՝ ընել ամեն ինչ գոհացնելու համար թուրքերը՝ որոնք սակայն բնավ պիտի չգոհանան... Թող փութան մեր

¹⁷³ «Ձարթոնք» լրագիր, 10-ը հունիսի 1953, № 193 (4601):

¹⁷⁴ Նույն տեղում:

¹⁷⁵ «Հայրենիք» լրագիր, 11-ը հուլիսի 1920, № 2493:

ընելիքը անկեղծ կերպով ճշտել, թող դադրին մեզի հետ բանակ-
ցություններու ընթացքին, վարվիլ որպես զոհերու, զայնս գոր-
ծածելով որպես միջոց և փոխանակելի դրամ փոխադարձ զիջո-
ղություններու»¹⁷⁶:

Ինչպես երևում է Բրեմոնին ուղղված գեներալ Դյուֆիեռի
1920 թ. մայիսի 5-ի գրությունից, մայիսի 2-ին Աբգարյան դպրո-
ցի բակում կայացած միտինգի բանաձևը հանձնվել էր Բրեմոնին,
իսկ վերջինս էլ իր հերթին այն հանձնել էր գեներալին: Պատաս-
խանելով միտինգի բանաձևին, գեներալը, խեղաթյուրելով փաս-
տերը, աշխատում է իրեն այնպես ներկայացնել, թե իբր Ֆրան-
սիական իշխանությունները արել են հնարավոր ամեն ինչ Հաճը-
նի վիճակը բարելավելու համար: Ապա հայերին մեղադրելով ան-
արդարացի պահանջկոտության մեջ, գեներալը գրում է, որ Ֆրան-
սիական իշխանությունները երբևիցե պաշտոնական խոստում-
ներ ու հավաստիացումներ չեն տվել հայերին՝ Հաճընին օգնելու
համար, մի բան, որ հակասում է Բրեմոնի խոստովանությունը:

«Բայց և այնպես, — շարունակում է գեներալը, — ճիշտ չէ
պնդել, որ այս քաղաքը ստիպված է ապավինել միայն իր սեփա-
կան միջոցներին: Ֆրանսիական իշխանությունները նրան հայ-
թայթել են զենք, զինամթերք, կենսամթերք և համաձայնվել էին
Հաճընի պաշտպանությունն ամրապնդել կամավորներով, բայց
վերջիններս չկարողացան Սսից այն կողմ անցնել»¹⁷⁷: Կեղծիքը
բացահայտ է: Հիշեցնելու համար միայն ավելացնենք, որ ուղարկ-
ված զենքն ու զինամթերքը ֆրանսիացիների իսկ մեղսակցու-
թյամբ հափշտակվեցին քեմալականների կողմից, իսկ ինչ վերա-
բերում է կամավորներին, ապա նրանք Սիս հասնելուց հետո
նույն իշխանությունների կողմից զինաթափվեցին, ավելի քան
երկու ամիս արգելափակվեցին Սսում ու ապա վերադարձվեցին
Ադանա:

Կացությունը Հաճընում դառնում էր օրհասական: Շուրջ ութ
հազար հաճընցիներին սպառնում էր սովամահ լինելու վտանգը:
Հենց դա էլ ինքնապաշտպանության կոմիտեին և հրամանատա-
րությանը մղում են շափազանց խիզախ, բայց միաժամանակ
վտանգավոր մի ծրագրի իրագործմանը, որի հաջող ելքը մեծա-
պես պիտի թեթևացներ պաշարվածների, թեև ժամանակավորա-

պես, պարենավորման հարցը և բարձրացներ նրանց մարտական
կորովը: Երկու հարյուր մարտիկներ թշնամական ուժերից ան-
նկատ պետք է ացնեին ու դիրքեր գրավեին նրա թիկունքում, իսկ
Հաճընում մնացած ուժերը և ողջ բնակչությունը հրամանատա-
րության կողմից տրված ազդանշանի վրա պետք է գրոհեին թուր-
քական դիրքերի վրա: Եվ որպեսզի այն տպավորությունն ստեղծ-
վեր, որ թշնամու թիկունքում գործող ուժերը Ադանայից օգնու-
թյան փութացող կամավորներն էին, նրանց համար պատրաստ-
վում է 200 ձեռք միատեսակ հանդերձանք:

Օգոստոսի 5-ին մարտիկները երեք խմբով՝ Ա. Կայծակի,
Ղարա-ձեհենեմի և Վ. Եղեկիելյանի հրամանատարությամբ իջ-
նում են ձորը, բարեհաջող շրջանցում թուրքական դիրքերը և թաք-
նրվում անտառում: Այս նույն ժամանակ հայկական դիրքերից
սկսում են կրակ տեղալ թշնամու վրա և կեղծ հարձակում ձևաց-
նում: Իրականում նրանց նպատակն էր շեղելու թուրքական զոր-
քի ուշադրությունը և ապահովելու շրջանցումը: Հաջորդ գիշեր
Հաճընի ողջ բնակչությունը անաղմուկ ընդհուպ մոտենում է թուր-
քական դիրքերին և տրված ազդանշանի վրա «ուռա»-ներով խո-
յանում նրանց վրա: Ենթադրելով, որ հայերը փորձում են ճեղքել
պաշարման օղակը և դուրս գալ քաղաքից, թշնամին նույնպես
կրակ է բացում: Փոխհրաձգության թեժ պահին, թշնամու համար
բոլորովին անսպասելի, գրոհի են նետվում անտառում թաքնված
երկու հարյուր մարտիկները: Աբցանի մեջ մնալով, թուրքական
զորքը խուճապահար լքում է ամեն ինչ ու փախչում: Այս առթիվ
Ս. Թերզյանը գրում է. «Ո՞վ կարող էր այս ափ մը հայ երիտա-
սարդներու դուրսգաղնական մարտնչումները նկարագրել: Կո՞վ
չէ այս, այլ սրտերու կատաղություն: Անձնվեր խոյանք չէ, այլ
հրեղեն մահախաղ, աստվածային զայրույթը բովանդակող ոգի-
ներու շանթարձակ պոռթկում, փոթորկում... Ոչ ոք կը լսե թշնա-
միին խլացուցիչ փողերուն ձայնը, ոչ ոք կը տեսնե թուրքը, որ
կանգնած մեր առջև սուրը հայ տղոց կուրծքին կը խրե, ոչ ոք կը
լսե զնդակներու կրակոցը զայրագին, որ կրակ կը ցանե ու կը մա-
ղե ճարահատ ամեն կողմ, հայկական դիրքերու վրա:

Զարմանալի ոչինչ կա. ամենքս ալ մեծ ու պզտիկ, զինված
թե անզեն մեր շուրջ ստեղծված անհանդուրժելի կացութենն վեր-
գովված, մահվան գիրկը կը փնտրենք հանգստանալու համար, մի
անգամ ընդմիջտ ազատելու սովի ճիրանեն, հեղձուցիչ ու գեհե-
նական անիծյալ մթնոլորտեն... Այո, մահը կը նախընտրեինք

¹⁷⁶ «Պայքար» տարեգիրք, 1950, էջ 87:

¹⁷⁷ Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 392:

քան ապրիլը, գերեզմանը ավելի նախամեծար կը համարենք քան անոթի կոիվը»¹⁷⁸։

Հաճընցիների հաղթանակը լիակատար էր։ Այս մարտերի ընթացքում թշնամին տվել էր ավելի քան 200 սպանված, մինչդեռ հայերի կորուստը 15 մարդ էր միայն։ Թշնամու լքած վրաններում հաճընցիները գտնում են մեծ քանակությամբ պարեն ու զինամթերք՝ մեկ թնդանոթ իր 350 արկերով, երկու գնդացի, հարյուր հրացան, 25 արկղ փամփուշտ, 5 արկղ նոնակ, մի քանի հեռախոսային սարք, փաստաթղթեր և այլն¹⁷⁹։

Հետաքրքիր է, որ հաճընցիները չեն կարողանում քանդել գերված թնդանոթը՝ այն Հաճըն տեղափոխելու համար։ Եվ որպեսզի այն նորից թշնամուն չմնա, որոշում են գլորել ձորն ու ոշնչացնել։ Բայց, ի բարեբախտություն հաճընցիների, թնդանոթը չի ջարդվում։ Հետագայում այն փոխադրվում է Հաճըն ու տեղավորվում ս. Աստվածածին եկեղեցու բակում, որտեղից էլ սկսում է կրակ տեղալ իր երեկվա տերերի գլխին։

Սակայն հաղթանակը արմատական բեկում չմտցրեց հաճընցիների կյանքում։ Ուժերը չցրելու նպատակով գրավված դիրքերը շուտով վերադարձվում են թշնամուն և փաստորեն վերականգնվում է նախկին դրությունը։ Վերջնականապես չի լուծվում նաև պարենի հարցը։ Թշնամուց խլված ավարը մի քանի օրով միայն կարող էր ուշացնել սովը Հաճընում։

Երբ պաշարված Հաճընի վիճակն այսպես ծայրահեղ թշվառ էր, օգոստոսի 20-ին Աղանայից Հաճըն են հասնում երեք նոր լրաբերներ։ Նրանք իրենց հետ բերել էին Հաճընի հայրենակցական միության գրությունը, որտեղ ասվում էր, որ ամենաուշը ութ օրից օգնական ուժը լինելու է Հաճընում, որ շուտահաստվեն ու դիմադրեն մինչև նրանց տեղ հասնելը։ Փրկության հույսը նորից ոգևորում է ինքնապաշտպաններին, բարձրացնում նրանց բարոյականը։

Եվ իսկապես, Մ. Տամատյանի, Հաճընի հայրենակցական միության, Հաճընին օգնություն կազմակերպելու նպատակով ըստեղծած հանձնախմբի, Աղանայի Աղզային միության անդուլ ջանքերի և, անտարակույս, բազմահազարանոց ցույցերի ու միտինգների ճնշման տակ ֆրանսիական իշխանությունները հավանություն են տալիս Հաճընի պաշարումը վերացնելու երկրորդ

ձեռնարկին¹⁸⁰։ Կամավորագրվել էին հարյուրավոր երիտասարդներ, ձեռք էր բերվել բավարար քանակությամբ հանդերձանք, ռազմամթերք, շուրջ 100 ձի, կառքեր և անհրաժեշտ այլ նյութեր¹⁸¹։ Կամավորական ջոկատները սկզբում Մ. Արմաղանյանի, իսկ ապա Գևորգ Չավուշի հրամանատարությամբ նախապատրաստվում էին Հաճըն մեկնելու։ Զինավարժությունները անցկացվում էին Աղանայից ոչ հեռու գտնվող Ախարճա վայրում։

Իր տեղեկագրում Մ. Տամատյանը խոսելով երկրորդ ձեռնարկի նախապատրաստական աշխատանքների և ֆրանսիացիների բարեմիտ թվացող վերաբերմունքի մասին, գրում է. «Մեր առաջադրած նպատակն էր 1200-ի շափ կամավոր արձանագրել և զանոնք մեր սեփական միջոցներով զինելով անոնց միջոցով գրավել նախ Սիսը և անկե հառաջանալով վերցնել Հաճընի պաշարումը, և վերջապես Հաճընի և Զեյթունի միջև հարաբերությունը վերահաստատել։

Այս ձեռնարկը հնարավորության և մեր ուժերու տարողության սահմանին մեջ էր...»¹⁸²։

Բայց կատարվում է անհավատալին։ Սեպտեմբերի 22-ին կամավորական խմբերը, ըստ նախօրոք ընդունված որոշման, պիտի մեկնեին Հաճըն։ Ամեն ինչ կազմ ու պատրաստ էր արշավի համար։ Կամավորները սրտատրոփ սպասում էին շարժվելու հրամանին։ Այս ընթացքում ճամբարը հանկարծ շրջապատվում է ֆրանսիական զորքերով։ Սկսվում է կամավորների զինաթափումը։ Ապա անգն կամավորները ֆրանսիական զորքի հսկողության ներքո տարվում են Կարաթաշ նավահանգիստը և այստեղից էլ արտաքսվում Աֆրիկա¹⁸³։

Օգնության հույսը կորցրած հաճընցիները պարեն ձեռք բերելու նպատակով նախաձեռնում են մի նոր համարձակ քայլ։ Մշակվում է Ռումլու և Կյուզելլիմ գյուղերի վրա հարձակվելու ծրագիրը, որոնցում, ինչպես Հաճընում էին ենթադրում, կարելի էր գտնել պարենի մեծ պաշարներ։ Այդ նպատակով ընտրվում են շուրջ 300 քաջեր, որոնք էլ սեպտեմբերի 22-ի իրիկնամուտին անաղմուկ շարժվում են Դոնուզ-սեքիի բլուրն ի վեր։ Շուրջ հարյուր հոգուց բաղկացած հիմնական ուժը Արամ Կայծակի գլխավորու-

178 Մ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 441։

179 ՏՆՍ Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 684—687։

180 ՏՆՍ Լ. Անեմյան, Եգիպտահայ տարեցույց, Ալեքսանդրիա, 1925, էջ 116։

181 ՏՆՍ Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 691։

182 Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 337։

183 ՏՆՍ նույն տեղում, էջ 339։

թյամբ շրջանցում են Ռումլուն և հաջորդ օրը անցկացնում մոտակա անտառում: Մնացած ուժերը բաժանվում են փոքրիկ խմբերի ու դիրքերը գրավում նահանջի ճանապարհի մոտակայքում:

Սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը Ա. Կայծակի ջոկատը հանկարծակի գրոհում է Ռումլուի վրա: Գյուղում խուճապն ավելի է մեծանում, երբ հաճընցիների կողմից հրկիզվում են խոտի մի քանի դեզերն ու ծայրամասային հյուղակները: Մի քանի ժամ տևած փոխհրաձգությունից հետո թշնամին դադարեցնում է դիմադրությունը և փախչում: Հայ մարտիկներին հրամայված էր ամեն կերպ ձեռք գցել Գողան բեյին, որը, ինչպես հայտնի էր դարձել նախորդ օրը գերված Երկու թուրքերի տեղեկություններից, գիշերում էր գյուղում: Մի քանի հաճընցիների հաջողվում է պաշարել այն բնակարանը, որտեղ գտնվում էր թուրք հրամանատարը, նոնակներ նետել ու հրկիզել այն: Բայց գերել Գողան բեյին չի հաջողվում: Օգտվելով խավարից ու խառնաշփոթ վիճակից, նա կարողանում է խույս տալ ու գիշերանոցով փախուստի դիմել:

Ռումլու գյուղի վրա կատարված գրոհի մասնակիցներից մեկի՝ Վարդան Ճեքեճյանի հուշերի համաձայն, որը հենց Գողան բեյի բնակարանի վրա կատարված հարձակման ընթացքում կորցրել էր թևը և որի հետ առիթ ենք ունեցել զրուցելու, թուրքական ուժերի հրամանատարը ծանրորեն վիրավորվել էր: Նույնն է վրկայում Դալքերը Ռեջեպը: Նա մեջբերել է Աղանայի ռազմաճակատի հրամանատար Սելահետտինի հրամանը, որտեղ շեշտվում է, որ Գողան բեյի վիրավորվելու պատճառով այս շրջանի բեմալական զորքերի հրամանատարությունը հանձնվել է Թուֆան բեյին¹⁸⁴:

Միաժամանակ հիսուն հոգուց բաղկացած մի այլ ջոկատ նույնանման հարձակում է կազմակերպում հարևան Կյուզելլիմ գյուղի վրա: Լուսադեմին թուրքական երկու գյուղերն էլ գրավված էին: Հաճընցիները գյուղերում գտնում են բավականին քանակություն պարեն՝ 25 սալլ հացամթերք, մի քանի հարյուր խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, ավելի քան հիսուն ձի և այլն¹⁸⁵: Գրավված ավարով, այդ թվում Գողան բեյի անձնական ձին, հեռադիտակը և հեռախոսային սարքը, հաճընցիները հաղթականորեն վերադառնում են Հաճըն:

Հաճընցիների երկու փայլուն հաղթանակները, Ռումլու և Կյուզելլիմ գյուղերի գրավումն ու Գողան բեյի վիրավորվելը, ի վերջո, լրջորեն մտահոգում են բեմալական հրամանատարությունը: Եվ ինչպես պարզ երևում է Սելահետտինի վերոհիշյալ հրամանից, բեմալականները որոշում են ինչ գնով էլ լինի գրավել Հաճընը, որն արդեն ավելի քան չոթ ամիս շարունակ կաշկանդել էր մեծաքանակ ուժեր: Թուրքական հրամանատարությունը ստանում է զգալի շափով լրացուցիչ օգնություն: Դալքերը Ռեջեպի իսկ վկայություններ, Հաճընի վրա արշավելու համար զորք էր բերվել Սսից, Վահկայից, Անդրբերնից, Գյոքսունից, Ազիզիեից, Դեվլեիից և այլ վայրերից, ինչպես նաև երկու նոր թնդանոթ Կեսարիայից և Բողանթըրից¹⁸⁶:

Թշնամու ճամբարում տեղի ունեցող նախապատրաստությունն ու եռուզեռը գրավում են Հաճընի ինքնապաշտպանության հրամանատարության ուշադրությունը: Հոկտեմբերի 13-ին և 14-ին ուղարկված հետախույզները, որոնք կարողացել էին անցնել թուրքական զորքերի թիկունքը, լրտեսել նրանց տեղաշարժերը և բարեհաջող վերադառնալ Հաճըն, հրամանատարությանը հայտնում են նոր ուժերի ժամանման ու նախապատրաստվող հարձակման մասին:

Սև ամպերը գնալով թանձրանում են Հաճընի վրա: Սպառվել էր Ռումլուից և Կյուզելլիմից բերված պարենը: Ինքնապաշտպանների մոտ մնացել էին հաշվված փամփուշտներ: Ընկճվել էր բազմիցս խաբված ու հուսաբեկված ինքնապաշտպանների կորովը:

Հոկտեմբերի 15-ի վաղ առավոտյան սկսվում է թուրքական բազմահազարանոց բանակի հարձակումը: Մինչև ուշ գիշեր շեն լուում թնդանոթները: Ավերվում են դիրքերն ու անցուղիները, շենքերը: Արյունալի, կենաց-մահու մարտերը շարունակվում են ամբողջ օրը: Չնայած հաճընցիների ցուցաբերած հերոսական ու համառ դիմադրությանը, թուրքական տասնապատիկ զերակշիռ ուժերին հաջողվում է քաչլ առ քաչլ մոտենալ հայկական դիրքերին և ավելի սեղմել պաշարման օղակը: Գիշերը վրա է հասնում, բայց մարտերը շեն դադարում: Եվ հանկարծ Ղանլը-փազարի հայկական դիրքերում լուում են հրացանները: Սպառվել էր ինքնապաշտպանների վերջին փամփուշտը: Դիմադրության թուլացու-

¹⁸⁴ Տե՛ս Dalkir Recep, նշվ. աշխ., էջ 156—157:

¹⁸⁵ Տե՛ս Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 700:

¹⁸⁶ Տե՛ս Dalkir Recep, նշվ. աշխ., էջ 156—157:

մից և գիշերվա խավարից օգտվելով, թուրքական մի փոքր ջոկատ, յոթ ամիս տևած կռիվների ընթացքում առաջին անգամ, հայտնվում է Հաճընի ծայրամասում և հրկիզում մի քանի տներ: Թուրքական մի այլ ջոկատ ներխուժում է նաև Կիլիկիա թաղամասը: Շուտով ընկնում են նաև մյուս դիրքերը:

Թուրքական զորքի մուտքը քաղաք, բորբոքվող հրդեհը և սվինահարվող ու գնդակահարվող հաճընցիների օրհասական աղաղակները ավելի են խորացնում խուճապը: Ոչ ոք չգիտեր, թե ինչ վիճակում է հարևանը: Եվ այս համընդհանուր խառնաշփոթության մեջ սկսվում է հաճընցիների անկազմակերպ նահանջը: Փոքրիկ խմբերով և հաճախ միայնակ նրանք փորձում են ճեղքել քաղաքը շրջապատող թշնամու օղակը և հեռանալ դեպի լեռները: Բայց միշտ հանդիպելով թշնամու մեծաքանակ ուժերին, հարկադրվում են վերադառնալ Հաճըն:

Նման մի անհաջող փորձ է կատարում նաև մի քանի հազարանոց բազմությունը, որը քաղաքի ոստիկանատան մոտ հավաքվելուց հետո շարժվում է դեպի Ադանա տանող կամուրջը: Բայց իզուր: Այն արդեն գրավվել էր թուրքերի կողմից: Գնդացրային ուժեղ կրակի հանդիպելով, բազմությունը մի պահ տատանվում է, ընկրկում և փորձում վերադառնալ բոցերի մեջ կորած քաղաք:

Հաճըն ներխուժած թուրքական զորքը դաժան դատաստան է տեսնում հայ բնակչության հետ: Անասելի վայրագությունը ու բարբարոսությունը թուրք զինվորները և բաշխողուկները խողխողում, սրատում են ավելի քան յոթ հազար մարդու՝ հաշվի չառնելով ոչ սեռը և ոչ էլ տարիքը: Շուրջ ութ հազար հաճընցիներից փրկվում է միայն մի մեծ խումբ, որը Արամ Կայծակի գլխավորությամբ ճեղքելով պաշարման գիծը, նահանջում է դեպի Սաղըրսեքիի անտառները: Ճանապարհին Կայծակի խմբին են միանում նաև մի քանի տասնյակ հաճընցիներ, որով նրանց ընդհանուր թիվը հասնում է մոտ 400-ի: Նահանջողները՝ ոմանք զինված, ոմանք անզեն, միշտ թշնամու հետապնդմանը ենթակա, շարունակում են երկար ու տաժանալից ճանապարհը դեպի հարավ և Թըլանի վրայով հոկտեմբերի 28-ին հասնում Ջիհան, որտեղից էլ այնուհետև շարժվում դեպի Ադանա:

Չենք ցանկանում Հաճընի հերոսական ինքնապաշտպանության այս գլուխը եզրափակել առանց անդրադառնալու մի հարցի, որի շուրջն այնքան աղմուկ է բարձրացրել Ս. Թերզյանը:

Եսոսքը Հաճընի անկման և ողբերգական վախճանի պատասխանատվության մասին է:

Հաճընի անկման պատասխանատվության հարցում, կարծում ենք, երկու կարծիք լինել չի կարող: Հաճընի յոթամսյա հերոսամարտի հանգամանքները խոսում են այն մասին, որ նրա անկման և հազարավոր հաճընցիների բնաջնջման ամբողջ պատասխանատվությունը ընկնում է ֆրանսիական կառավարության վրա: Եվ այդ տեսակետից Հաճընի գոյամարտի պատմությունը ամբողջությամբ վերցված ոչ այլ ինչ է, եթե ոչ մի մեղադրական ֆրանսիական կառավարության հասցեին: Կիլիկիայում ֆրանսիական իշխանություններն էին, որ դրվատեցին ու կազմակերպեցին տարագիր հաճընցիների վերադարձը իրենց հայրենի օջախները և, բնականաբար, նրանք էլ պարտավոր էին ստանձնելու նրանց անվտանգությունն ու պաշտպանությունը: Բայց նրանք տարբեր պատրվակներով ոչ միայն հրաժարվեցին զորքեր ուղարկել Հաճըն և այն վերցնել իրենց պաշտպանություն տակ, այլև բոլոր միջոցներով խանգարեցին հայերի սուղ միջոցներով հայթայթված օգնության առաքմանը, զինաթափեցին կամավորական խմբերը, ցրեցին ու աքսորեցին անձնակազմը և դրանով իսկ Հաճընը դատապարտեցին անխուսափելի բնաջնջման:

Այդպես է կարծում նաև Ս. Թերզյանը: «Ավաղ, սակայն, — գրում է նա, — չէինք գիտեր, հավատացեք լուր անգամ շունեիներ, թե ֆրանսիացիները թշնամական դիրք բռնած են Հաճընի և Ադանայի հայության դեմ...»¹⁸⁷ և «Ամենքիս ծանոթ է թե Ֆրանսա ինչ հայատյաց քաղաքականություն վարեց Կիլիկիո մեջ...»¹⁸⁸: Եվ ուրիշ ոչինչ: Այնինչ, հերոսական Հաճընի ինքնապաշտպանության պատմությունը անառակելիորեն պիտի շահած լիներ, եթե նրա անկումը ողբացող Ս. Թերզյանը ամենայն հետևողականությամբ և, որ ամենագլխավորն է, անաշուկությամբ ու սառը դատողությամբ քննարկեր կամավորական խմբերի ստեղծման ու նրանց զինաթափման հարցերը, ուղղամտորեն վեր հաներ Հաճընի անկման իրական պատճառները և մերկացներ, ինչպես ինքն է գրում, ֆրանսիական կառավարության «հայատյաց» քաղաքականությունը:

187 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 376:

188 «Հայրենիք» ամսագիր, 1954, № 3 (337), էջ 54:

Փաստորեն հրաժարվելով այդ բոլորից և բավարարվելով մի
ձրկու համընդհանուր հայտարարություններով, նա Հաճընի անկ-
ման և հաճընցիների ջարդի համար գլխավոր պատասխանատու
է համարում Մ. Տամատյանին: Ս. Թերզյանի կարծիքով «...մեր
ժողովրդին ծանոթ չէ, թե ինչ տխուր դեր խաղաց հայ մարդ մը,
որուն անունն է Միհրան Տամատյան, իբրև ներկայացուցիչ Փա-
րիզի Ազգ. պատվիրակության և կամ «Ամբողջական Հայաստանի
Կիլիկիո լիազոր ներկայացուցիչ»¹⁸⁹: Եվ Տամատյանին մեր ժո-
ղովրդին «ծանոթացնելու» նպատակով էլ հետևում են Ս. Թերզ-
յանի անհիմն ամբաստանություններն ու զրպարտությունները,
Տամատյանին որակելով որպես անպատասխանատու և արկա-
ծախնդիր գործչի, «...որ կարծես եկած էր Ադանա՝ արյան մեջ
խեղդելու համար Կիլիկիո հայության մնացորդները»¹⁹⁰, որ
«...Տամատյանի ծրագիրն էր կարծես լրացնել այն պակասը, որ
թուրքը ձգած էր: Այն է, ջարդել տալ մնացորդ հայությունը, ինչ-
պես ջարդել տվավ Հաճընի մեջ մեր եղբայրներն ու քույրերը»¹⁹¹:
Նա չի քաշվում անգամ հայտարարելու, որ «Այս փառահեղ դրվա-
զը (Հաճընի հերոսամարտը—Շ. Թ.) վեց հազար նահատակներով
վերջացավ Տամատյանի և նմաններուն հաճույք պատճառելու հա-
մար...»¹⁹²:

Դժբախտաբար, ինչպես մեզ է թվում, վերոհիշյալ որակա-
վորումների հեղինակը ոչ այլ ոք է, քան կուսակցական նեղ շա-
հեր հետապնդող և իր կուսակցության, այն է՝ դաշնակցության,
վարկը բարձր պահելու մոլուցքով այրվող մեկը: Այլապես, ինչ-
պես վերծանել նրա հետևյալ միտքը. «Ահ, եթե մարդիկ անա-
շառ ըլլային իրենց գրածին ու խոսածին մեջ, այդ նետը, զոր
ուրիշին վրա կը փորձեն արձակել և այդպիսով իրենց կուսակցա-
կան խիղճը հանդարտեցնել, որն է բանն առաջ պիտի արձակեին
իրենց կուսակցության ու համախոհներուն վրա»¹⁹³:

Ամբաստանելու համար մի մարդու, որն իր ողջ ուժն ու ե-
ռանդը չէր խնայել Հաճընի պաշարումը վերացնելու, նրան օգ-
նության ձեռք մեկնելու համար, Ս. Թերզյանից պիտի պահանջ-

վեին ավելի հիմնավոր փաստարկներ, քան 1920 թ. մարտի 14-ի
հեռագիրն է:

Բոլորովին էլ ավելորդ չէ այս առթիվ մեջբերել նույնպես
դաշնակցական Մինաս Վերածինի հետևյալ գնահատականը, որը
հանգամանքների բերումով, անկասկած, ավելի իրազեկ էր ու
ծանոթ Մ. Տամատյանի գործունեությանը. «Իրերու աննպաստ ելքը
օգտակար վախճանի մը հասցնելու համար պարոն Միհրան Տա-
մատյան և կուսակցությանց գլխավորները կը ջատագովեին Հա-
ճընի արշավախումբը զորացնելու պետքը...»¹⁹⁴: Ապա. «Այս մի-
ջոցին պարոն Միհրան Տամատյան շնորհազուրկ վիճակ մը ունե-
նալով (նկատի ունի 1920 թ. օգոստոսի 5-ից հետո ստեղծված
իրավիճակը—Շ. Թ.), լքված իր բազմաթիվ «բարեկամներն»,
սակայն, կը գործեր լռիկ և քաշված: Հայ Ազգ. միության և քա-
ղաքական կուսակցություններու հետ ան կը ջանար քաղաքական
ձախողանքին՝ այնպիսի ընթացք մը տալ, որ փրկվեր ազգային
արժանապատվությունը: Այս բանը կրնար ձեռք բերվիլ միայն
Հաճընի արշավախումբին հաջող կազմակերպությունովը և մեկնու-
մով: Պ. Տամատյանը կը ջանար իր տրամադրության տակ գտնը-
ված բոլոր նյութական միջոցները ի սպաս դնել այս ձեռնարկին
և բոլոր զինվորական ուժերը գործածել»¹⁹⁵: Եվ վերջապես, «Տա-
մատյանը, ինչ դիմումներ, ինչ պաղատանք և լեզու ի գործ չդրավ
համոզելու համար ֆրանսիացիները Հայաստանի վերջին մայրա-
քաղաքը՝ Հաճընի օգնության հենարան ծառայեցնելու հա-
մար...»¹⁹⁶, ապարդյուն անցան:

¹⁸⁹ «Հայրենիք» լրագիր, 14-ը դեկտեմբերի 1920, № 2623:

¹⁹⁰ Նույն տեղում, 15-ը դեկտեմբերի 1920, № 2624:

¹⁹⁶ Նույն տեղում, 17-ը դեկտեմբերի 1920, № 2626:

¹⁸⁹ «Հայրենիք» ամսագիր, 1954, № 3 (337), էջ 54:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 66:

¹⁹¹ Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 683:

¹⁹² «Հայրենիք» ամսագիր, 1954, № 3 (337), էջ 56:

¹⁹³ Նույն տեղում, էջ 70:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՌՁԱԿՈՒՄԸ

Մարաշի անակնկալ լքումը ֆրանսիացիների կողմից շերտադարձային նշանակություն ունեցավ Կիլիկիայի համար: Ֆրանսիական զորքերի ամոթալի փախուստով ձեռք բերված էժանագին հաղթանակը նոր լիցք հաղորդեց թուրքական ազգայնական շարժմանը և կրկնապատկեց ֆրանսիական իշխանությունների անզորություն վերաբերյալ քեմալականների հավատքը: Մահմեդական բնակչության այն մասը, որը մինչ Մարաշի իրադարձությունները կասկածանքով ու թերահավատություններ էր նայում ազգայնական շարժմանը, վերջնականապես որոշում է իր դիրքորոշումը և հարում նրան: Դա էլ քեմալականներին հնարավորություն է տալիս մարդկային ու նյութական նոր միջոցներ հայթայթել ու ամբողջ ճակատով անցնել հարձակման:

Այս բոլորի դիմաց ֆրանսիական կառավարությունը Կիլիկիայում կացությունը բարելավելու ոչ մի փորձ չի կատարում: Մարաշի խայտառակ նահանջից և Ուրֆայում ֆրանսիական կայազորի ջարդից հետո ֆրանսիական կառավարությունը, իհարկե, համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ, հարկադրվում է լրացուցիչ ութ գումարտակներ ուղարկել Կիլիկիա: Սակայն նրանք, ինչպես գրում է Վեոն, հարբածների պես ամիսներ շարունակ զիզազաձև դեգերելով սիրիական ավազուտներում, աննպատակ հերկելով այն ծայրե ծայր, փաստորեն անգործության էին մատնվել, մինչդեռ ստեղծված իրավիճակը խիստ կարիք ուներ նրանց ներկայությունը Կիլիկիայում¹:

Դեռ ավելին. այն դեպքում, երբ Կիլիկիայում ֆրանսիական զորքերի հրամանատարությունը փորձում էր ցրված ու մեկուսացված փոքրաքանակ զորքերի կենտրոնացման հաշվին ամ-

բացնել որոշակի կետեր, գեներալ Գուրոն արգելում է այն և միաժամանակ հրաժարվում նոր համալրումներ ուղարկել Կիլիկիա²: Հետևաբար, 1920 թ. գարնան-ամռան ամիսներին Կիլիկիայում ստեղծված ծանր դրություն պատասխանատվությունն ամբողջությամբ ծանրանում է ֆրանսիական կառավարության և նրա արևելյան սատրապի՝ բարձր կոմիսար գեներալ Գուրոյի ուսերին, որոնք քեմալականներին սիրաշահելու իրենց քաղաքականության արդարացման ճանապարհին ամեն կարգի արհեստական դժվարություններ էին հարուցում Կիլիկիայում ֆրանսիական զորքերի համար:

Կանգ առնելով ֆրանսիական զորքերի համար առաջացած արհեստական խոչընդոտների վրա և քննադատելով Գուրոյի վարած թրքամոլ քաղաքականությունը, Մ. Պայարեսը եզրակացնում է, որ քեմալականները «...որոշ առավելության էին հասնում միայն մեր խեղճ ու փոքր կայազորների նկատմամբ, կայազորների, որոնք Բեյրութի բարձր կոմիսարության անհավատալի անտարբերության շնորհիվ, կարծես մի անիմաստ մահվան էին դատապարտվել»³:

Կիլիկիայում Ազգայն պատվիրակության լիազոր ներկայացուցիչ և Ադանայի ֆրանսիական իշխանությունների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների, կիլիկեհայերի համար սպառնալից կացության և այս պայմաններում ֆրանսիական իշխանությունների կեղծ ու երկերեսանի խոստումների մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում գեներալ Դյուֆիեյոյին հասցեագրված Մ. Տամատյանի 1920 թ. փետրվարի 25-ի նամակը: «Անցյալ օգոստոսին ասդիլին, — գրում է Տամատյանը, — ես ուրիշ ոչինչ կրնեմ քան ատոնք, ըլլա բերանացի թե գրավոր: Ու շատ կը ցավիմ որ վեց ամսվան այդ ժամանակամիջոցին մեջ, մենք անցանք այդ հանգրվաններեն՝ սկսյալ իրերու պարզ բացատրություններեն մինչև դիմումներ, բաղձանքներ, թելադրություններ և անմիջական պահանջներու համար ևս ուժգին բողոքներ ու մինչև իսկ հայ իշխանությանց միասնական հրաժարականը: Գրեթե ամեն անգամուն ալ հայրենակիցներու բողոքները նկատվեցան որպես չափազանցված, երբեմն նույնիսկ անբարեխիղճ: Եվ ընդհակառակն, միշտ խնդրո առարկա կըլլային հայ ժանդարմներուն, ղինվորներուն և անհատներուն կողմե առանց հետին մտքի ըրած կամ պատահած սխալները: Ամեն անգամ, վերջա-

¹ Stéou Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 192:

² Stéou Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 194:

³ Paillares M., նշվ. աշխ., էջ 168:

պես, երբ մեզ կը վստահեցնենին թե կացութիւնը երթալով կը բարեկամութիւնը կամաց-կամաց բայց ստուգապես, ընդհակառակը կացութիւնը երթալով կը ծանրանար: Ոչ ոք կամբաստանեմ, միայն իրողութիւնը կը պարզեմ: Բոլոր մեր այս նախատեսութիւնները, մտահոգութիւնները, դժբախտաբար, կետ առ կետ իրականացան: Միայն Մարաշի նահանջը խուսափած էր մեր նախատեսութիւններէն, ատիկա ալ պատճառով մը—մենք չէինք կրնար հավատալ նման պատահարի մը՝ ծանրակշիռ իր անհաշվելի հետեանքներով⁴: Ապա, նկատի ունենալով մի շարք հայաբնակ գյուղերի և քաղաքների վրա կատարվող բեմալականների հարձակումները, Տամատյանը շարունակում է. «Արդ, Մարաշի խնդիրն էտք, մինչ ցավագին տպավորութիւն մը կը ճնշեր բոլորիս հոգիներուն վրա, Կիլիկիո ամեն կողմերն զմտումներ կը ստանայի լեցուն ահագանգային և մտահոգիչ տեղեկութիւններով⁵»:

1920 թ. փետրվարի 8-ին Ջավեն պատրիարքին ուղղված իր նամակում ևս Մ. Տամատյանը հանգամանորեն կանգ է առնում Կիլիկիայի քաղաքական վիճակի, հայ-ֆրանսիական հարաբերությունների վրա և մերկացնում Կիլիկիայում ֆրանսիական իշխանությունների վարած երկդիմի ու խարդախ քաղաքականությունը: «Մինչ երկրին մեջ,— գրում է նա,— այս պահուս արդեն կանոնավոր պատերազմ կը մղվի ընդ մեջ թուրքերուն և իրենց, տակավին պատրաստ են անոնց հետ հաշտարար քաղաքականության մը թեքվելու, եթե միայն կարելի ըլլա»: Եվ ապա խոսելով հայերին տրված խոստումների ու խոստացված զիջումների մասին, ավելացնում է. «Դժբախտաբար ամեն ինչ ցույց կուտա, թե արդեն տազնապալի կացութիւն մեջ հայկական տազնապ մըն աչ շատեղծելու մտահոգութիւն մը էր, որ ակամա և ըստ ձևականին կարգ մը զիջողութիւններ ըրին մեզի: Իրականին մեջ գրեթե ոչինչ կա փոխված, եթե մեզի զենք կը խոստանան (եղածը պարզ խոստում կը մնա ցարդ, այն առարկութիւն մը թե պատրաստ չունին, այլ կը սպասեն ի մոտո ստանալու), մյուս կողմէ նույն խոստումը կընեն նաև զանազան իսլամ տարրերուն, իրենց խաղաղ նկատած, բայց իրականին մեջ միշտ կասկածելի թուրքերուն իսկ...»: Այնուհետև Տամատյանը խոսում է Ազգային միութեան, իր և ֆրանսիական իշխանությունների փոխհարաբերությունների

մասին ու գրում. «Երևակայեցեք, որ զորավար Գուրոյին շնորհակալական հեռագիր մը ուղղելու կը վարանիմ, քանի որ տրված խոստումներու արժեքին և մանավանդ անկեղծութեանը վրա հավատքս խախտած է, և կը վախնամ որ մի քանի օրն բողոքի հեռագիրներ իրեն ուղղելու հարկին տակ գտնվինք: Մենք մեր կողմն ամեն միջոց սպառեցինք ֆրանսական իշխանութեանց վստահութիւն ներշնչելու համար: Բայց ակներև կը տեսնենք, որ մեզի հետ անկեղծ ու անվերապահ վերաբերում մը իրենց գործին չի գար: Այս հանգամանքներու մեջ իմ և Ազգային միութեաններու պաշտոնին կիրառութիւնը խիստ դժվարացած է: Բոլորովին տաժանալի և ապերախտ դեր մըն է զոր ի սեր ազգին կը կատարենք ու պիտի կատարենք: Այս աստիճան հեղհեղուկ, տատամսկոտ, երկդիմի... քաղաքականութեան մը թուրքերն անգամ մեզի վարժեցուցած չէին»⁶:

Կիլիկիայում ֆրանսիական իշխանությունների վարած խարդախ, «բաժանիր, որ տիրես» գաղութարարական քաղաքականութեան մասին է վկայում նաև Գուրոյին եպոս. Մխիթարյանը: Իր հուշերում նա գրում է, որ 1919 թ. դեկտեմբերին Կ. Պոլսից Խարբերդ մեկնելու ճանապարհին այցելել էր Ազանա և որը զուգահիսի էր գննելու Գուրոյի Ազանա կատարած այցելութեանը: Եպիսկոպոսը մասնակցել էր գննելու պատվին կազմակերպված ընդունելութեանը, որտեղ Մ. Տամատյանը «...շնորհավորած էր ժեներալի մուտքը հայկական ազատ Կիլիկիո հողը և «բարի գալուստ» մաղթած»⁷:

Այնուհետև եպիսկոպոսի և զնդապետ Բրեմոնի միջև կատարած հանդիպման ժամանակ վերջինս դժգոհել էր Տամատյանի նման արտահայտութեան, այն է՝ «հայկական ազատ Կիլիկիո հողը» հայտարարութեան համար ու ավելացրել. «Մենք չենք ժխտեր Կիլիկիո ձեր ըլլալը. կընդունինք, որ անիկա ձեր բացարձակ իրավունքն է, միայն, դուք հոս փոքրամասնութիւն կը կազմեք, մեր փափաքն է, Կիլիկիան գոնե 25 տարիներ մեր հոգատարութեան տակ պահել, որու միջոցին դուք նյութական և թվական առավելութիւններով գերակշիռ դիրք կունենաք և բնականորեն ձերը կըլլա Կիլիկիան»⁸:

Թե որքան կեղծ էին զնդապետի վերոհիշյալ խոսքերը, պարզ

⁴ «Հասկ» ամսագիր, 1951, № 1, էջ 10—11:

⁵ Նույն տեղում, էջ 11:

⁶ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 26, թ. 1—3:

⁷ Գ. Մխիթարյան, Հուշեր և վերհիշումներ, Անթիլիաս, 1937, էջ 34:

⁸ Նույն տեղում:

երևում է Գուրգեն եպիսկոպոսի և Աղանայի կուսակալին փոխարինող թուրք պաշտոնյայի ոչ պաշտոնական հանդիպման ընթացքում կայացած զրույցից: 180 աստիճանի շրջադարձ կատարելով, Բրեմոնը կուսակալի պաշտոնակատարի հետ ունեցած հանդիպման ժամանակ Կիլիկիայի նկատմամբ Ֆրանսիական իշխանութունների դիրքորոշման մասին հայտարարում է. «Այս շրջանին մեջ դուք մեծամասնություն կը կազմեք, հետևաբար Կիլիկիան ձերն է. միայն երկրին մեջ գտնվող այլակրոն և դժգոհ ցեղերը ձեր դեմ չըմբոստացնելու համար, առայժմ կուզենք մեր հոգատարութեան տակ պահել զայն որոշ ժամանակի մը համար»⁹:

Կիլիկեհայության համար տազնապալի այս օրերին Սահակ կաթողիկոս խապայանը հարկադրվում է ուղևորվել Եվրոպա և բախել Ֆրանսիական կառավարության ղեկավարների դռները՝ կիլիկեհայության ֆիզիկական գոյությունն ապահովող նոր երաշխիքներ ձեռք բերելու համար: Ուշագրավ է կաթողիկոսի՝ Գեվորգ Մ. վրդ. Ասլանյանին գրած անթվական նամակը, որը իրականում մի քանի ամիս տևած նրա ճանապարհորդության ու կատարած դիմումների համառոտ հաշվետվությունն է: Խոսելով իր առաքելության նպատակների մասին, կաթողիկոսը գրում է. «Ինչո՞ւ համար էր անակնկալ ուղևորությունս, և կամ ի՞նչ բանն թելադրյալ ցամաքի և ծովու տաժանքոտ և երկար ճամփորթությունը: Մինչև մեկնիլս, ոչ ոք գիտեր ինչ որ մտադրած էի. հետևաբար ոչ ոք կրնար թելադրել, թեև շատ կանուխեն անհատներ ու մարմիններ անցողակի փափաքներ հայտնած էին: Միայն Մարաշի ահալոր ջարդը և օրհասի վտանգը Կիլիկիո բովանդակ քերիատոնեություն թելադրողներն եղան ուղևորությանս կամ դիմումիս Ֆրանսայի, զոր նորին վսեմություն Պողոս փաշա կոնդոնեն հեռագրավ գնահատեց:

Նպատակս ինքնին պարզ ու որոշ էր, փրկել ժողովուրդիս կյանքը վերահաս մահվան: Դիվանագիտական հովեր և երազներ չկային ծրագրիս մեջ. այս պատճառով զգուշացա ուրիշ մայրաքաղաքներ դիմել և տարբեր դռներ բախել»¹⁰:

Միաժամանակ նամակից շատ որոշակի երևում է, որ կաթողիկոսը Ֆրանսիական կառավարությունից խնդրել էր լրացուցիչ զորքեր ուղարկել չկարողանալու դեպքում զինել հայերին: Ֆրանսիական կառավարությունը հավաստիացրել էր կաթողիկոսին

հայերի համար դժվարին պահին միայնակ շթողնել նրանց և խոստացել էր նոր զորամասեր ուղարկել Կիլիկիա¹¹:

Բայց կաթողիկոսի առաքելությունը ոչնչով չփոխեց և իրականում չէր էլ կարող փոխել կացությունը Կիլիկիայում, քանի դեռ Ֆրանսիական կառավարության վերաբերմունքը դեպի քեմալական Թուրքիան մնում էր նույնը: Ինչպես Ֆրանսիայի հանրապետության նախագահ Դեշանելը, այնպես էլ վարչապետ Միլերանն ու մյուս մինիստրները իրականում սնամեջ խոստումներից այն կողմ չգնացին և միայն տեղի ունեցած աղետի համար փարիսեցիաբար ցավ հայտնեցին:

Ֆրանսիական կառավարության անվճռականությունը, քեմալականների վայրագությունների նկատմամբ Կիլիկիայի ֆրանսիական իշխանությունների անտարբեր վերաբերմունքը, հայկական կամավորական ջոկատների զինաթափումն ու հայերին ինքնապաշտպանության տարրական միջոցներից զրկելը ավելի ու ավելի սանձարձակ էին դարձնում թուրքերին: Այն տպավորություն էր ստացվում, որ կարծես Ֆրանսիացիները անուղղակիորեն արձակում էին ոճրագործների ձեռքերը և նրանց զրդում նոր գազանությունների: Եվ իրապես, Ֆրանսիացիների շարժումներն ուղի-ուղով հետևող քեմալականները շեն դանդաղում օգտվելու իրենց համար ստեղծված նպաստավոր իրավիճակից ու 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներից մեծաքանակ ուժերով նորանոր հարձակումներ են գործում հայաբնակ շրջանների վրա:

1920 թ. մարտի վերջերից Սսի վրա կատարած քեմալականների հարձակումը անակնկալի չի բերում տեղի հայերին: Դեռևս հունվար-փետրվար ամիսներին քաղաքում լուրջ աշխատանք էր կատարվել թշնամու հարձակումը կազմ ու պատրաստ դիմագրավելու համար: Ստեղծվել էին զինվորական, ոստիկանական, պարենավորման, դատական և այլ մարմիններ¹²: Կամավորական հիմունքներով կազմավորվել էին ինքնապաշտպանական շորս վաշտեր և ոստիկանական ջոկատներ, որոնք էլ քաղաքում գտնվող Ֆրանսիական զորքերի և Աղանայից ժամանած հայ կամավորների հետ հաջողությամբ կասեցնում էին քեմալականների բոլոր գրոհները: Սսի ինքնապաշտպանության մասին խոսելիս իր տեղեկագրում Մ. Տամատյանը շեշտում է, որ «...զլխավորապես սսեցի կտրիճները և Աղանայեն Հաճըն օգնության փութացող,

⁹ Գ. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 35:

¹⁰ Վ. Խուպեսեթյան, նշվ. աշխ., էջ 199—200:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 201:

¹² Տե՛ս Մ. Քելեշյան, նշվ. աշխ., էջ 610—611:

բայց Սիս մնալու բռնադատված 400 հայ կամավորներն էին որ խրամներու մեջեն գիշեր ցերեկ կը դիմադրեին պաշարողներու հարձակումներուն»¹³։

Բայց երկարատև դիմադրութեան բոլոր նախադրյալները ունեցող Սիսը շուտով դառնում է 1920 թ. մայիսի վերջերին կընքված ֆրանս-քեմալական զինադադարի զոհը։ Մինչ Սիսը համառորեն շարունակում էր ետ մղել քեմալականների հարձակումները, մայիսի 31-ին Սսում վայրէջք է կատարում ֆրանսիական մի ինքնաթիռ։ Քիչ անց կապիտան Քայարդան իր մոտ է կանչում Աղզալին միութեան ներկայացուցիչներին և անում հետևյալ հայտարարութիւնը. «Ֆրանսիական կառավարութեան վերին կարգադրութեամբ, համաձայն ֆրանկո-քեմալական ուժերու միջև կայացած 24 ժամվա զինվորական զինադադարին, մինչև 24 ժամ պետք է պարպել քաղաքը. ամեն մարդ բացի շորս օրվան պաշարե ոչ մեկ բան պետք է ունենա իր հետ։ Անոնք որ չեն անսար հրամաններու՝ պիտի ենթարկվին ամենախիստ պատիժներու. պիտի ուժեղացան քաղաքը զոր պիտի տեսնեք բոցերու մեջ։ Ձեր հանգստութիւնը ապահովված է. մինչև Միսիս ձեզ պիտի պաշտպանեն ֆրանսիական զորաստիճանը և հայ կամավորները։ Ֆրանսիական իշխանութիւնը ամեն բան ապահոված է. նյութականի համար բնավ մի մտահոգվիք։ Կը կարծեմ որ ներկան ձեզի անհաճո պիտի թվի, սակայն ներկայի պահանջը, ձեր և մեր շահը ալս կը պահանջե. առանց սակարկութեան պատրաստվեցեք»¹⁴։

Սիսը դատարկելու և քեմալականներին ֆանձնելու լուրը քաղաքում կայծակի արագութեամբ է տարածվում, որն էլ ի վերջո աննկարագրելի խուճապի տեղիք է տալիս։ Ֆրանսիական զինվորներն ու հայ կամավորները ինքնազուխ թողնում են իրենց պաշտպանութեանը հանձնված դիրքերը և նախապատրաստվում նահանջի։ Հունիսի 1-ի կեսօրն անց ֆրանսիական հրամանատարութեան կարգադրութեամբ հրկիզվում են տասնյակ շենքեր և պայթեցվում զինապահեստները։ Արցունքն աչքերին ստահալութիւնը, այս անգամ էլ ֆրանսիական կառավարութեան կամայականութեամբ, հարկադրվում է թողնելու իր տունն ու ինչքը թուրքերին։ Հայերի բազմահազարանոց բազմութիւնը գլխիկոր հըրաժեշտ է տալիս հայրենի Սսին և շարժվում դեպի կամուրջը՝ միանալու ֆրանսիական զորքին։

¹³ Տ. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 327։

¹⁴ Մ. Քելեշյան, նշվ. աշխ., էջ 622։

Անհամեմատ երկարատև ու համառ էր Այնթապի հայերի տասնմեկամսյա հերոսական գոյակոխիլը։ Որքան էլ ծանր էր Մարաշի աղետն իր հազարավոր զոհերով, բայց և նույնքան էլ ուսանելի դաս էր հայաբնակ մյուս քաղաքների համար։ Այդ տեսակետից խիստ հատկանշական է Այնթապի օրինակը։

Մարաշի արյունալի իրադարձութիւններից հետո այնթապահայութիւնը Աղզալին միութեան գլխավորութեամբ լուրջ նախապատրաստական աշխատանք է կատարում հայկական թաղամասերը թուրքական հարձակումներից պաշտպանելու համար։ Այստեղ ևս ստեղծվում են մի շարք մարմիններ՝ զինվորական, պարենավորման, ոստիկանական, բանվորական, առողջապահական, դատական և այլն, որոնք այնթապահայութեան ինքնապաշտպանութեանը տալիս են միանգամայն կազմակերպված բնույթ։

Միաժամանակ հայկական թաղամասերը բաժանվում են ինքնապաշտպանական մի քանի շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր զինված խումբը՝ հրամանատարական անձնակազմով։ Կռիվների ողջ ընթացքում անգերագնահատելի աշխատանք է ծավալում ինքնապաշտպանութեան հրամանատարութիւնը Ա. Լևոնյանի և Ա. Գալեմբյարյանի գլխավորութեամբ։ Կազմակերպվում է շուրջ 800 մարտիկներից բաղկացած հայկական զինյալ ուժ, ստեղծվում է զինարան-արհեստանոց, որտեղ տասնյակ վարպետներ օր ու գիշեր զենք ու զինամթերք էին մատակարարում ինքնապաշտպաններին։

1920 թ. ապրիլի 1-ին Այնթապից Քիլիս է մեկնում ֆրանսիական մի զորաստիճան։ Հարձակման համար ժամանակը նպաստավոր համարելով, քեմալականները նույն օրն իսկ խոտվութիւն են բարձրացնում քաղաքում և սպանում ֆրանսիական մի քանի զինվորների ու հայերի։ Բայց ոչ ապրիլի 1-ի հանկարծակի և ոչ էլ հետագա մի քանի օրերի բուռն հարձակումները քեմալականներին փաստորեն ոչ մի առավելութիւն չեն տալիս։ Եվ դեռ ավելին. ամրացնելով և անառիկ դարձնելով իրենց շենքերն ու փողոցները, հայկական ուժերը անցնում են հակազոհի և գրավում հայկական դիրքերի համար շարիք դարձած Կողանլը և Շեյխ Շամիսի մղկիթները։ Երկաթագործ վարպետ Կյուլիյանի առաջարկով ու մտահոգմամբ այնթապահայերը նույնիսկ պատրաստում են «Վրեժ» թնդանոթը, որի հանկարծակի որոտալը ապշեցնում է ինչպես թուրքերին, այնպես էլ ֆրանսիացիներին։

Այնթապահայերի գրութիւնը անհամեմատ անապահով է

դառնում մասնավորապես ֆրանս-քեմալական զինադադարին հաջորդող ժամանակաշրջանում: Զինադադարի 2-րդ հոդվածի համաձայն, ֆրանսիական զորքերը թողնում են քաղաքամիջում գտնվող իրենց դիրքերը և քաշվում քաղաքի ծայրամասում գրտնրվող բանակատեղին: Դրանով փաստորեն հայերը լքվում են ֆրանսիացիների կողմից և միայնակ դեմ հանդիման կանգնում թուրքերին: Ֆրանսիական հրամանատարությունը հայերից նույնիսկ պահանջում է ոչնչացնել ամրություններն ու պատնեշները և ենթարկվել թուրքական իշխանություններին: Սակայն նկատի ունենալով, որ նման քայլը առավել շահավտ պիտի վտանգեր հայերի վիճակը, Ազգային միությունը մերժում է ֆրանսիացիների ոչնչով չհիմնավորված և խիստ կասկածելի պահանջը:

Ֆրանսիական զորքերի Այնթապից հեռանալու և իրենց դիրքերը պահելու հայերի անհողորդ որոշման մասին գնդապետ Բրեմոնը հետևյալն է գրում. «Արևելյան գոտում Այնթապը մեր զորքերի կողմից դատարկվեց և հանձնվեց քեմալական իշխանություններին, որոնք նույնիսկ հավակնում էին գրավելու հայկական թաղը: Սակայն հայերը, որոնք մինչ այդ գործուն ու պատվավոր մասնակցություն էին ունեցել պայքարին, հրաժարվեցին թուրքերին ընդունել զինված վիճակում, պատնեշներ կանգնեցրին և պահեցին իրենց դիրքերը, մինչ ֆրանսիական զորամասերը նահանջեցին մոտակա բանակատեղին»¹⁵:

Հայերին սիրաշահելու քիչ ջանքեր չի գործադրում նաև թուրքական հրամանատարությունը: Չնայած հայ և թուրք համայնքների մերձեցման ուղղությամբ կատարված բազմապիսի փորձերին, Ազգային միությունը մերժում է զենքի-զինամթերքի հանձնման թուրքական պահանջը՝ մինչև վերջնական հաշտության կընթումը: Այս բոլորից հետո թուրքական կողմը փորձում է զորքեր մտցնել ու գրավել հայկական դիրքերը, բայց միշտ հանդիպելով հայերի վճռական դիմադրությանը, հրաժարվում է նաև այդ մրտքից:

Զինադադարը քեմալականների կողմից օգտագործվում է ուժերը վերադասավորելու, համալրելու և նոր հարձակման նախապատրաստելու համար: Եվ երբ այդ աշխատանքներն ավարտվում են, հուլիսի 29-ի առավոտյան, քեմալականները, խախտելով զինադադարը, վերսկսում են հարձակումը:

Նկատի ունենալով զինադադարի միջոցին ֆրանսիական հրամանատարության վարած խարդախ քաղաքականությունը, Ազգային միությունը որոշում է շմասնակցել վերսկսած պատերազմին և շեղոթություն պահպանել: Սակայն նման իրավիճակը երկար չի տևում: Օգոստոսի 16-ին ֆրանսիական հրամանատարությունը Ազգային միությունից պահանջում է վերջ տալ շեղոթությանը և իրենց կողմում վերսկսել պատերազմը: Ազգային միությունը մերժում է ֆրանսիացիների նաև այս պահանջը: Այնթապահայերին փաստի առաջ կանգնեցնելու նպատակով ֆրանսիական զորքերը սկզբում սկսում են «թյուրիմացաբար» գնդակոծել հայկական թաղամասերը, իսկ մի քանի օր անց մտնում են հայկական դիրքերը և գրավում: Դրանով, փաստորեն, այնթապահայությունը նորից, իր կամքից անկախ, ներքաշվում է ֆրանս-թուրքական պատերազմի մեջ:

1920 թ. աշնանը Այնթապ են հասնում ֆրանսիական նոր համալրումներ, որով զորքի ընդհանուր քանակը հասնում է 12 հազարի: Գնալով սեղմվում է թուրքական դիրքերի պաշարման օղակը: Թուրքական թաղամասերն ու դիրքերը ենթարկվում են անվերջ ուժեղացող զրույթության: Քեմալականների դրությունը օրեցօր ծանրանում է: Այն չի բարելավվում նաև Մարաշի 15 հազարանոց բանակի օգնության գալով, որը մի քանի անհաջող մարտերից հետո ստիպված նահանջում է:

Այնթապում արյունաքամ եղած քեմալական զորքերին այս պայմաններում ոչինչ չէր մնում, քան անձնատուր լինել: 1921 թ. փետրվարի 8-ին երկու թուրք պատվիրակներ ներկայանում են ֆրանսիական հրամանատարությանը և հայտնում քեմալականների անձնատրությունը: Հաջորդ օրն էլ ստորագրվում է ֆրանս-քեմալական պայմանագիրը: Ըստ Այնթապի անձնատրության պայմանագրի նախատեսվում էր.

1. Այնթապը հանձնվում և ճանաչում է ֆրանսիական գերիշխանությունը:
2. Թուրքական զորքի և ոստիկանության անձնատրությունը:
3. Բոլոր տեսակի թուրքական զենքերի հանձնումը ֆրանսիացիներին:
4. Այնթապում կառուցված ամրությունների և պատնեշների քանդում:
5. Ֆրանսիական զորքերի կողմից քաղաքի կարևոր կետերի գրավումը:

¹⁵ Brémond E., նշվ. աշխ., էջ 54—55:

6. Թուրքական վարչության վերակազմումը ֆրանսիացիների կողմից նշանակված պաշտոնյաներով՝ ֆրանսիական հովանավորության ներքո և այլն¹⁶։

Թուրքական կողմից փաստաթուղթը ստորագրել էին. Այնթապի սանջակի թարգմանիչ Նեճմետտինը, Այնթապի ժամանակավոր կառավարիչ դոկ. Մեջիտը, դոկ. Իբրահիմը, Նուրի բեյը և Ֆախրետտին Հոջան, իսկ ֆրանսիացիների անունից՝ Այնթապում ֆրանսիական զորքերի հրամանատարներ Աբատին և Անդրենն։

Սակայն այնթապահայերի ցնծությունը կարճատև է լինում։ Արյունալի ու երկարատև մարտերի գնով ազատագրված Այնթապը ևս արժանանում է Մարաշի բախտին։ 1921 թ. մարտի 15-ից սկսվում է ֆրանսիական զորքերի հեռացումը։ Հասկանալի է, որ ֆրանսիական ուժերի նահանջից հետո հայերը չէին կարող մնալ Այնթապում։ Եվ ինչպես մնային, երբ Թուրքերը սպառնում էին, որ «հայերի գանգերով պիտի վերակառուցենք քանդված մզկիթները»¹⁷։ 1921 թ. գարնանից էլ ծայր է առնում այնթապահայության արտագաղթի նոր ու վերջին շրջանը դեպի աշխարհի հեռավոր անկյունները։

Մ. Տամատյանը բարձր է գնահատում Այնթապի ինքնապաշտպանությունը և նշում, որ այն «...կիլիկեցիին քաջությունը, ռազմագիտական ճարտարությունն ու հնարամտությունը պանծացուց և բոլոր ֆրանսիացիներուն անվերապահ հիացման առարկա եղավ»¹⁸։ Իսկ ֆրանսիացի Պոլ Դյու Վեոն Այնթապը համարում է Անատոլիայի Վերդենը¹⁹։

Մինչ 1920 թ. գարնան ամիսներին Կիլիկիայի տարբեր շրջաններում շարունակվում էին կանոնավոր ընդհարումները ֆրանս-հայկական և քեմալական ուժերի միջև, Բեյրութի ֆրանսիական բարձր կոմիսարության քարտուղար Ռոբեր դը Քեն ուղեվորվում է Անկարա և բանակցում Մուստաֆա Քեմալի հետ։ Սակայն բանակցությունների ընթացքից և արդյունքից դժգոհ դը Քեն հրաժարվում է ստորագրել Քեմալի առաջարկած ծանր պայմանները։ Բայց այն բանից հետո, երբ գլխավոր հրամանատարը

պահանջում է անպայման ստորագրել այն, դը Քեն հարկադրվում է կատարել իր վերադասի հրամանը²⁰։

Ա. Աթանասյանը մեջբերել է Մուստաֆա Քեմալի կողմից 1920 թ. մայիսի 27-ին մամուլին հանձնված զինադադարի հետևյալ տեքստը.

«1. Ֆրանսիացիներու հետ թշնամությունը պիտի թեթևանա մեր կողմեն՝ ամբողջ ֆրանսիական ճակատին վրա, 29—30 մայիսի գիշերը, կես գիշերին սկսած։ Թշնամություններուն դադարը տևելու է քսան օր։

2. Ֆրանսական զորքերը, որ այժմ կը գտնվին Բոզանթըր և Միս, պիտի քաշվին իրենց զենքերով, Ադանա—Մերսին գծի վրա։ Այնթապ քաղաքը պիտի պարպվի ֆրանսիացիներեն, այս քաղաքի մեջ գտնվող ֆրանսական բանակը պիտի քաշվի քաղաքին դուրս գտնվող ֆրանսական բանակատեղին։ Բոզանթըրի, Սիսի, Այնթապի պարպումը վերջացած պիտի ըլլա զինադադարի առաջին օրը։

3. Զինադադարի առաջին տասը օրերուն մեջ, մենք պիտի սկսինք հանձնել ֆրանսացի զերինները որ մեր ձեռքը կը գտնվին։ Ֆրանսիացիք ալ իրենց կողմեն մեզ պիտի հանձնեն քաղաքական ոճիրի համար բանտարկված մահամեղականները և մեր զինվորներեն անոնք որ գերի բռնված են։

4. Ադանայի վալին և օսմանյան կառավարության պաշտոնյաները կրնան իրարու հետ թղթակցիլ՝ ազատորեն և արձակ համարձակ։ Հրահանգներ պիտի ղրկվին հետո Բոզանթըրի, Միսի և Այնթապի պարպվելու պայմաններու ինչպես և ֆրանսացի զերիներու փոխանակության մասին։ Առայժմ պետք է ապահովել զինադադարը՝ 1920 թ. մայիսի 30-ի առավոտեն սկսած»²¹։

Մայիսյան զինադադարը անվիճելի առավելություն էր տալիս քեմալականներին, և Ֆրանսիան փաստորեն ընդունում էր իր պարտությունը ֆրանս-թուրքական պատերազմում։ Զինադադարի պայմանների անարդարացիությունը ընդունում է նաև զնդապետ Բրեմոնը²²։ Զինադադարը մի նոր քայլ էր ֆրանս-քեմալական մերձեցման և Ֆրանսիայի կողմից Կիլիկիան թողնելու ճա-

¹⁶ Տե՛ս «Ջարթոնը» լրագիր, 11—12-ր սեպտեմբերի 1952, № 4398—4399։

¹⁷ Paillares M., նշվ. աշխ., էջ 373։

¹⁸ Տ. Պոլյանյան, նշվ. աշխ., էջ 327—328։

¹⁹ Տե՛ս Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 263։

²⁰ Brémont E., նշվ. աշխ., էջ 53։

²¹ Ա. Աթանասյան, նշվ. աշխ., էջ 48—49։ Զինադադարի պայմանների տարբերակները, որոնք հիմնականում համընկնում են վերոհիշյալի հետ տե՛ս նաև Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 89 և Du Véou Paul, նշվ. աշխ., էջ 219։

²² Տե՛ս Brémont E., նշվ. աշխ., էջ 54։

նապարհին: Ֆրանսիական զորքերի նահանջը Ադանա—Մերսին գծից հարավ և այդ գծից հյուսիս ընկած շրջանների զիջումը քեմալականներին, վերջիններիս հնարավորություն էր տալիս անմիջականորեն մտենալ ու անկաշկանդ շփման մեջ մտնել Դաշտային Կիլիկիայի քեմալական ուժերի հետ:

Ֆրանս-քեմալական զինադադարը թիկունքից հասցրած լուրջ ու ծանր հարված էր կիլիկահայությունը՝ նրա մղած ազգային-ազատագրական պայքարում: Զինադադարի կնքումով Ֆրանսիական իշխանությունները փաստորեն կղզիացման ու մեկուսացման դատապարտեցին Լեռնային Կիլիկիայի տարբեր մասերում անհավասար ինքնապաշտպանական մարտեր մղող հայերին և, առաջին հերթին, Հաճընին ու Զեյթունին: Զինադադարը վերջնականապես խզեց Դաշտային ու Լեռնային Կիլիկիայի կապը և քեմալականներին թույլ տվեց սեպի պես խրվելու նրանց միջև: Դրանով անհնար դարձավ օգնությունը պաշարված Հաճընին ու Զեյթունին:

Ինչպես և պետք էր ակնկալել, զինադադարը ոչ միայն չբարելավեց, այլև ավելի ծանրացրեց Կիլիկիայի քաղաքական կացությունը: Ավարտելով նախապատրաստական աշխատանքները և օգտվելով զինադադարի ընձեռած առավելություններից, քեմալականները խոշոր ուժերով հունիսի 18-ին, մինչև զինադադարի պայմանաժամի լրանալը, հարձակվում են Մերսինի վրա: Դա պատերազմական գործողությունները վերսկսելու ազդանշան էր: Հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը նրանք պայթեցնում են նաև Յենիճեի կամուրջը և կտրում Ադանա—Տարսոն գիծը²³:

Քեմալականների նոր հարձակումը դժվարին վիճակ է ստեղծում անմիջականորեն Ադանայի, Տարսոնի, Դյորթ-Յուլի, Մերսինի և այլ բնակավայրերի համար: Իրենց անհեռատես քաղաքականությունը Ֆրանսիացիները իրականում օգնել էին քեմալականներին ռազմաճակատի գիծը դեպի հարավ՝ մինչև Ադանայի մատուցները տեղափոխելու համար: Թուրքական հրանոթները դիրքեր էին գրավել Ադանայից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա և կրակի տակ վերցրել այն:

Այդ կապակցությամբ բոլորովին էլ ավելորդ չէ հիշել հետևյալ խիստ հատկանշական փաստը, որը, մեր կարծիքով, ամբողջությամբ լույս է սփռում իրադարձությունների ընթացքի վրա և վկայում Կիլիկիայում ստեղծված ծանր կացության համար Ֆրան-

սիական կառավարության մեղսակցությունը: Զինադադարի օրերին (հունիսի 6—9) գեներալ Դյուֆիեոն գտնվում էր Բեյրութում: Գլխավոր հրամանատարությունը գեներալին խոստացել էր Կիլիկիա ուղարկել երեք գումարտակ համարում՝ Ադանայի պաշտպանությունը կազմակերպելու համար: Եվ երբ հունիսի 21-ին գեներալը դրուժյան լրջության մասին հայտնում է Բեյրութ և խնդրում հաղորդել խոստացված գումարտակների Ադանա ժամանելու ճիշտ օրը, գլխավոր հրամանատարությունից պատասխանում են, որ վերոհիշյալ գումարտակներն արդեն ուղարկվել են այլ տեղ և որ չպետք է սպասել ոչ դրանց, ոչ էլ ուրիշների ժամանելուն²⁴:

Երեք գումարտակների Ադանա ժամանելու առասպելը առժամանակ սաստում է քեմալականներին: Բաց երբ հայտնի է դառնում, որ խոսքը գործի չի վերածվելու, քեմալականները սաստկացնում են հարձակումը Ադանայի վրա: Քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով գեներալ Դյուֆիեոն որոշում է Զիհանում և Ամանոսում գտնվող փոխգնդապետ Լորանի ուժերից երկու գումարտակ տեղափոխել Ադանա: Այս անգամ էլ Բեյրութից ստացված հրամանը պահանջում է այդ գույժարտակները, որպես պահեստային ուժեր, ուղարկել Դյորթ-Յուլ: Բարեբախտաբար, գրում է Բրեմոնը, այս հրամանը չիրագործվեց, բայց այն մեկ անգամ ևս ցույց տվեց, որ Բեյրութում Ադանայի կացության լրջության մասին մտահոգվող չկար, ինչպես շեղավ Ուրֆայի և Բոզանթրի մասին²⁵:

Ստեղծված իրավիճակը չէր կարող չլիտանգել Ադանայում խոնված հայերի կյանքը, որոնց թիվը Մարաշի, Սսի և այլ հայաբնակ քաղաքների ու գյուղերի նահանջից հետո հասել էր շուրջ 100 հազարի²⁶: Ադանայի շրջակա այգիներում ամեն օր տեղի էին ունենում հայ գյուղացիների սպանություններ և ունեցվածքի հափշտակում: Բացառված չէր նաև այն, որ քեմալականները հանկարծ հայտնվեին պաշտպանությունից համարյա զուրկ քաղաքում և կոտորեին անզեն բնակչությանը:

Այս պայմաններում հայ քաղաքական և հոգևոր կազմակերպությունների ուշադրությունը բևեռվում է սեփական միջոցներով Ադանան պաշտպանելու խնդրի վրա: Բազմաթիվ դիմումներից

²⁴ S^t Brémond E., նշվ. աշխ., էջ 59:

²⁵ S^t Brémond E., նշվ. աշխ., էջ 60:

²⁶ S^t S. Պոլյանյան, նշվ. աշխ., էջ 336—341:

²³ S^t Brémond E., նշվ. աշխ., էջ 57—58:

և երկարատև ձգձգումներից հետո, ի վերջո, գնդապետ Բրեմոնը 1920 թ. հունիսի 8-ին ստորագրում է հայկական զինված ուժեր ստեղծելու հրամանը: Ազգային միութեան և քաղաքական կուսակցությունների համատեղ նիստում այդ ուժերի հրամանատար է նշանակվում Հայկական լեգեոնի սպա Ճան Շիշմանյանը, իսկ Ճ. Չանգալյանն ու Լ. Փորթուզալյանը՝ օգնականներ: Նրանց իրավունք էր վերապահվում «...վերակազմել և կենտրոնացնել հայկական բոլոր ուժերը, պաշտպանել հայկական թաղը, ապահովել հայոց ձեռք գտնված զինվորական զենքերուն հակակշիռը և հաստատել հաստատուն ու կարգապահ կազմակերպություն մը»²⁷:

Գնդապետ Բրեմոնին հասցեագրված Մ. Տամատյանի 1920 թ. մայիսի 20-ի նամակից պարզվում է, որ դեռևս մինչ այդ ֆրանսիական իշխանությունները համաձայնվել էին քրիստոնյաներից բաղկացած ազգային միլիտի ստեղծմանը, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով չէր իրականացել: Տամատյանը գրում է. «...որ Զոր. Դյուֆիեոն, համաձայն անցյալ 3 փետր. թվակիր թիվ 89/R նամակին, մեզի կը հաղորդեր բարձր կոմիսերություն հեռագիրը ի մասին քրիստոնյաների բաղկանալի ազգային միլիտի մը (կազմակերպություն մը, որուն գործադրության հանգամանքները ցարդ թույլատու չեղան՝ հակառակ գործադրելու սկզբնավորության մը) և որուն դուք ևս համաձայն էիք Զեր ապրիլ 10 թվակիր 1124/M նամակովը՝ ուղղված պր. Տամատյանի, ըստ որուն բարձրագույն հրամանովը և թույլտվությամբը, հետ այսու միայն նման «Ժամանակավոր կազմակերպություններ»՝ այն սպ ֆրանսական սպայից հրամանատարության տակ պիտի կրնային թույլատրվի ու հանդուրժվի»²⁸: Ապա Տամատյանը շեշտում է, որ հայկական զինված ուժերը ֆրանսիական սպաների հրամանատարության տակ ընդունակ պիտի լինեին «...իրենց սահմանված բաժնին մեջ թե պահպանելու համար կարգը և թե թշնամի ավազակախումբերու հարձակմանց կամ ըմբոստությունց պարագային կռվելու համար անոնց դեմ որպես օժանդակ ուժեր»²⁹: Վերջում Տամատյանը հույս է հայտնում, որ հայկական ազգային զինված ուժերի ըստեղծումը «...այն առավելությունը պիտի ունենա նաև, որ գեթ մասամբ ազատ պիտի ըլլան քաղաքաց մեջ գտնվող մյուս կա-

²⁷ Եզիպտահայ տարեցույց, էջ 113:

²⁸ «Զարթոնք» լրագիր, 2-ր ապրիլի 1954, № 158 (4850):

²⁹ Նույն տեղում:

նոնավոր ուժերը՝ զայնս այլուր ավելի արդյունավորությամբ օգտագործելու»³⁰:

Այս բոլորից հետո էլ, սակայն, ֆրանսիական իշխանությունները շատ քիչ բան արեցին հայկական զինված ուժերի ստեղծման և նրանց գործնական օգնություն ցույց տալու գործում: Բայց այդքանն էլ բավական էր, որ հայերը մոռանային տխուր անցյալը և եռանդով նվիրվեին Ադանայի պաշտպանությանը: Շուտով Ադանայի մեծ շենքերից մեկը տրամադրվում է հայկական ուժերի հրամանատարությանը, որը հետագայում վերածվում է զորանոցի: Մեծ թվով հայեր, այդ թվում կանայք, հոժարակամ ցուցակագրվում և ցանկություն են հայտնում ծառայելու հայկական զինված ուժերի շարքերում: Նրանցից էլ հետագայում ըստեղծվում են փոքրիկ ջոկատներ, որոնք շուրջօրյա պարեկություն էին կատարում Ադանայում և շրջակայքում:

Սակայն վրա հասնող մի դեպք գալիս է նորից սրելու հայ-ֆրանսիական հարաբերությունները: 1920 թ. հուլիսի 10-ին Սիհուն գետի ձախ ափին գտնվող գնչուների թաղամասում ծայր է առնում հրաձգություն: Դա, գրում է Բրեմոնը, սովորական երևույթ էր Ադանայի համար: Բայց շուտով հրաձգությունը տարածվում է նաև Ադանայի մյուս թաղամասերում և բոլորը, մահմեդական թև քրիստոնյա, սկսում են կրակել, առանց որևէ նշանակետ ունենալու: Քիչ անց ֆրանսիական իշխանություններին հաջողվում է վերականգնել քաղաքի անդորրը: Բայց այս անգամ էլ սկսվում է ադանաբնակ թուրքերի զանգվածային փախուստը դեպի քեմալականների ճամբարը: Նրանց մեջ էր նաև ժանդարմերիայի մայոր Զեմիլ բեյը: Այս ընթացքում փախած թուրքերի թիվը, ըստ Բրեմոնի, հասնում էր 40 հազարի³¹:

Խոսելով հուլիսի 10-ի խուճապի առաջացման մասին, Բրեմոնը նշում է երեք գործոն, որոնք նրա կարծիքով պատճառ դարձան իրարանցումին և թուրքերի փախուստին: 1. Ֆրանսիական կայսրոսի թուլությունը, որը վստահություն չէր ներշնչում բնակչությանը: 2. Քեմալականների՝ Ադանան ումբակոծելու և հրկիզելու մասին հայտարարությունները, ինչպես նաև նրանց այն սպառնալիքները, որ քաղաքում մնացող թուրքերի հետ վերաբերվելու

³⁰ Նույն տեղում:

³¹ Sés Brémond E., նշվ. աշխ., էջ 61:

են այնպես, ինչպես ֆրանսիացիները: 3. Հայ ծայրահեղ տարրերի՝ թուրքերին ջարդելու մասին հայտարարությունները³²:

Ինչպես երևում է Ս. Կեպենլյանի հուշերից, որն այս շըրջանում Ադանայում լույս տեսնող «Հայ ձայն» թերթի խմբագիրներից էր, ֆրանսիական իշխանությունները առաջացած խուճապի և թուրք բնակչության փախուստի համար մեղադրել են հայերին ու նույնիսկ սպառնացել զինաթափել նրանց: Եվ որքան էլ հայերը փորձել են համոզել ֆրանսիացիներին, որ թուրքերի փախուստը պայմանավորված էր քեմալականների կողմից Ադանան ու մերակոծելու հայտարարությամբ, ապարդյուն է անցել: Բանը հասել է այնտեղ, որ հուլիսի 11-ին գնդապետ Բրեմոնը հայերին զինաթափելու և պատժելու գրավոր սպառնալիքներ է տեղացել Մ. Տամատյանի վրա³³:

Իր տեղեկագրում այս հարցին անդրադարձել է նաև Մ. Տամատյանը: Նա նույնպես շեշտում է, որ խուճապը ֆրանսիացիները վերագրել են հայերին: Մինչդեռ, գրում է նա, այն սկիզբ էր առել ալժիրցի զինվորների անխոհեմ ընթացքից: Այնուամենայնիվ, շարունակում է Տամատյանը, թուրք բնակչության հեռացումը Ադանայից կարևոր նշանակություն ունեցավ հատկապես քեմալականների հետագա հարձակումների ժամանակ Ադանայի անվտանգությունն ապահովելու համար: Ո՞վ կարող էր գուշակել, թե ինչ տխուր հետևանքներ կարող էր ունենալ թուրք բնակչության ներկայությունը Ադանայում քեմալականների հարձակումների ժամանակ³⁴:

Հուլիսի 10-ի միջադեպի մասին Մ. Վերածինը իր հուշերում գրում է, որ փոխհրաձգությունը Ադանայում սկսվեց հանկարծակի և ոչ ոք չգիտեր, թե ուր և ինչու է կրակում: Հայերի կատարած բնությունից պարզվում է, որ այն սկսվել էր ֆելլահների ձեռքից մի քանի հայերի ազատելու պահին ալժիրցի զինվորների անհարկի միջամտությունից: Այնինչ, շարունակում է Վերածինը, խուճապը հրահրելու մեջ ֆրանսիացիները մեղադրում էին հայերին³⁵:

Հուլիսի 11-ից սկսված քեմալականների հարձակումը, սակայն, գալիս էր հերքելու ֆրանսիական իշխանությունների ամ-

բաստանությունները և թուրքերի փախուստի մեջ հայերին մեղադրելու անհիմն լինելը: Քեմալականները մի քանի ուղղություններով հարձակվում են Ադանայի ու շրջակայքի՝ Տարսուսի, Մերսինի և Դյորթ-Յուլի վրա: Քեմալական մի հրոսակախմբի նույնիսկ հաջողվում է անցնել Ադանայից հարավ և հարձակում գործել պարեն փոխադրող զորասյան վրա: Նրանց արձակած արկերը մեծ վնաս են պատճառում Ադանային և ամեն օր նորանոր կյանքեր խլում:

Հունիսի 8-ի որոշումից անցել էր ամիսուկես, բայց ֆրանսիական իշխանությունները չէին էլ մտածում կատարելու հայկական զինված ուժեր կազմակերպելու իրենց խոստումը: Եվ միայն քեմալականների հարձակման և Ադանային սպառնացող անմիջական վտանգի ներքո նրանք փորձում են խոսքից անցնել գործի: Հուլիսի 23-ին գնդապետ Բրեմոնը իր մոտ է հրավիրում Մ. Տամատյանին ու քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին և հետևյալ հայտարարությունն անում. «Ես առաջվրեն ի վեր փափաքող եղած եմ որ հայերը զինյալ ուժեր ունենան, բայց պարագաներու բերումով մինչև հիմա կարելի չեղավ իրականացնել այս փափաքը, այժմ, 5000 հոգինոց միլիտի մը կազմակերպումը կուզեմ որ իրականանա. կոչ կընեմ ձեր բոլորին ալ, որպեսզի համերաշխորեն ձեռք-ձեռքի տաք և կը պահանջեմ որ վաղն իսկ հարյուր, իսկ հետևյալ օրն ալ՝ երեք հարյուր զինյալ հայեր տրամադրեք մեզ զրկվելու համար Գատիր բեյի ազարակը, ցորենի փոխադրությունը ապահովելու, որովհետև քաղաքին մեջ հազիվ երեք օր բավելու շափ ցորեն մնացած է. երկրորդ, 1500 հայեր իրենց զենքերով պետք է ընկերակցին Ադանայեն այս օրերս Մերսին մեկնելիք մեր զորասյունին»³⁶:

Ս. Կեպենլյանը միաժամանակ նշում է, որ հայ ներկայացուցիչները խոստացել էին պարենավորման նպատակով անմիջապես ապահովել 400 հայերի, բայց առարկել, որ 1500 զինված հայերի միաժամանակ հեռացումը կարող էր վտանգել քաղաքի ապահովությունը: Բայց հայ մարտիկները այնուամենայնիվ ուղեկցում են Մերսին մեկնող զորագնդին և պատվով կատարում ամենադժվարին առաջադրանքները (կամուրջների պայթեցում, արգելքների ոչնչացում, զորքի առաջնորդում և այլն)³⁷:

³² Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 61—62:

³³ Տե՛ս Եգիպտահայ տարեցույց, էջ 115:

³⁴ Տե՛ս Ս. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 336:

³⁵ Տե՛ս «Հայրենիք» լրագիր, 30-ը նոյեմբերի 1920, № 2611:

³⁶ Եգիպտահայ տարեցույց, էջ 118:

³⁷ Տե՛ս նույն տեղում:

Մ. Տամատյանը գովասանքով է խոսում այն 400—500 հայ մարտիկների մասին, որոնք իրենց վրա էին վերցրել Ադանան պաշտպանելու ծանր պարտականությունը: Քեմալականների հետ ունեցած ընդհարումների ընթացքում հայ մարտիկներին հաջողվում է մաքրել Սիհուն և Ջիհուն գետերի միջև ընկած տարածքը և վերացնել Ադանային սպառնացող սովի վտանգը³⁸: Ճ. Շիշմանյանը նշում է, որ հայկական ջոկատները գրավել էին Ադանայից արևելք գտնվող Արդոզլու, Թաշճըք, Սուլաբլը, Միրմանդա, Ախարճա հացամթերքներով հարուստ գյուղախումբը, որը հայտնի էր Յուրեյլի ընդհանուր անունով³⁹: Այս նույն ուժերը կարողանում են վերաբացել Ադանա—Կարաթաշ ճանապարհը և վերացնել Ադանային սպառնացող կղզիացման վտանգը⁴⁰: Լուրջ ուշադրություն է դարձվում նաև Ադանայի և Դյորթ-Յուլի միջև անխափան հաղորդակցության ապահովմանը: Այս բոլոր գործողությունների հետևանքով մեծապես կայունացվում է Ադանայի և շրջակայքի անվտանգությունը:

Այս նույն օրերին կայացած նիստերից մեկում Աղզային միությունը բոլոր քրիստոնյաներին պարտադիր ղինվորական ծառայության կանչելու մի օրինագիծ է մշակում: Սակայն պատճառաբանելով, որ «Աղզ. միությունը իրավասություն չունի օրենքներ մշակելու», ֆրանսիական իշխանությունները մերժում են այն⁴¹: Այս կապակցությամբ Մ. Տամատյանը գրում է, որ «...Աղզ. միության այս նպատակով կատարած կրկնակի դիմումները մերժվեցան ֆրանսիական ղինվորական իշխանությանց կողմն, որոնք կառարկեին թե այդպիսի քայլ մը հեռահաս քաղաքական հետեւանքներ կրնար ունենալ»⁴²:

1920 թ. ամռանը լուրջ հաջողությունների են հասնում նաև Դյորթ-Յուլի հայերը: Դյորթ-Յուլի շրջակայքում գտնվող Քուզուլուջու, Քարաբլիսես, Օճագլը, Չայլը և Կիրիտլի թուրքական գյուղերը իրականում վերածվել էին քեմալական հրոսակների որջերի: Նրանց ավազակային հարձակումներն ու գործադրած բռնությունները Դյորթ-Յուլի հայերին դրել էին նեղ կացության մեջ: Այն բանից հետո, երբ քաղաքի ֆրանսիական կայազորի հրամա-

³⁸ Տե՛ս Ս. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 335—336:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 343—344:

⁴⁰ Տե՛ս Ս. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 335—336:

⁴¹ Տե՛ս Եգիպտահայ տարեցույց, էջ 121:

⁴² Ս. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 338:

նատարությունը իր անտարբերությամբ փաստորեն խրախուսում էր ավազակներին ու ոճրագործներին և հրաժարվում սանձահարել նրանց, Դյորթ-Յուլի ճարահատված հայերը 1920 թ. հուլիսի 22—23-ին անցնում են հակահարձակման: Գրավվում են վերոհիշյալ թուրքական գյուղերը և քաղաքը առժամանակ ազատ շունչ է քաշում: Մ. Տամատյանը ընդգծում է, որ Դյորթ-Յուլը «...անմատչելի հայկական ամրոցի մը համբավը ստացած է և քեմալականներու բազմաթիվ հարձակումներուն միշտ հաջողապես դիմադրավելով իր այդ համբավը լիուլի կերպով արդարացույց»⁴³: «Դյորթ-յուլցիք,— շարունակում է նա,— ի վիճակի էին ավելի ընդարձակ ղինվորական գործողությանց ձեռնարկելու իրենց անմիջական շրջակայքից մեջ, եթե չըլլար իրենց քաղաքին մեջ ներկայությունը ֆրանսական զորքերուն և իշխանություններուն...»⁴⁴:

Գնդապետ Բրեմոնի իսկ խոստովանությամբ հայերը 1920 թ. գովասանքի արժանի գործունեություն ծավալեցին: Այդ մասին են վկայում ֆրանսիացի բարձրաստիճան ղինվորականների՝ Յլի Սենթ Մարիի, Լորանի և, մասնավորապես, գեներալ Դյուֆիեռոյի բարձր գնահատականները: Այդ տեսակետից խիստ ուշագրավ է գեներալի հրահանգներից մեկի հետևյալ հատվածը՝ ուղղված բարձր կոմիսարին. «Բարձրաձայն պիտի հայտարարել, որ եթե մինչ այժմ Ադանան մնաց հանդարտ, ապա դա անպայման պիտի վերագրել հայերի ղինված լինելուն: Թուրքերը գիտեն, որ եթե հարձակվեն, ապա հեշտ ու հանգիստ չեն կարող ջարդել և որ դա թանկ կնստի նրանց վրա»⁴⁵:

* * *

1919—1920 թթ. կիլիկիահայ հասարակական-քաղաքական կյանքի ամենաուշագրավ ու կարևոր երևույթը, անտարակույս, կիլիկիայի ինքնավարության հռչակման ակտն է, որն իր էությունով ծնունդ էր 1920 թ. գարնան-ամռան ամիսներին կիլիկիայում ստեղծված շափաղանց ծանր, կիլիկիահայության ֆիզիկական գոյության տեսակետից խիստ վտանգավոր քաղաքական կացության: Հետևաբար, կիլիկյան ինքնավարական շարժումը արդյունք է պատմական շատ որոշակի պայմանների ու պատճառ-

⁴³ Ս. Պոյանյան, նշվ. աշխ., էջ 329:

⁴⁴ Նույն տեղում, էջ 329—330:

⁴⁵ Brémond E., նշվ. աշխ., էջ 73:

ների և իր հետապնդած նպատակներով հանդիսանում է կիլիկե-հայերի մղած ինքնապաշտպանական-ազատագրական շարժում-ների օրգանական, տրամաբանական շարունակությունը:

Իր աշխատության 66-րդ էջի տողատակի ծանոթագրությունում գնդապետ Բրեմոնը գրում էր, որ ինքնավարության հռչակման օրը Մ. Տամատյանի սեղանի վրա գտնվել էր բեյրութաբնակ մի հայի (Մալեզյան թե Մալոյան) կողմից գրված մի նամակ, որտեղ ասվում էր. «Պատկառելի մի անձնավորության հետ տեսակցեցի և հարցրեցի, թե մենք ի՞նչ պետք է անեինք կամ մեզ ի՞նչ խորհուրդ կարող էր տալ: Նա սկսեց ծիծաղել և գրեց. «դ՛Աննունդիտ, Վենիգիլոս, Մուստաֆա Քեմալ»: Եվ ասում են, շարունակում է Բրեմոնը, որ այս նամակն է ողբալի արկածախնդրության պատճառը⁴⁶:

Ըստ Բրեմոնի այնպես է դուրս գալիս, որ 1920 թ. օգոստոսի 4—5-ի շարժումը հետևանք էր մի անձնավորության սուբյեկտիվ խորհրդի և ոչ մի առնչություն չունեի Կիլիկիայում ստեղծված քաղաքական անկայուն և կիլիկեհայերի համար սպառնալից իրավիճակի հետ:

Բարեբախտաբար պահպանվել են ինքնավարական շարժման անմիջական ղեկավարների, ժամանակակիցների և ականատեսների ղեկուցագիր-տեղեկագրերն ու հուշերը, որոնք իրենց ներկայացրած հետաքրքրության հետ միաժամանակ ամենայն մանրամասնությամբ լույս են սփռում շարժման ինչպես պատճառների, այնպես էլ ընթացքի և հետևանքի վրա:

Գեռես 1920 թ. մարտի 31-ին Կիլիկիայի հայ և այլազգի քրիստոնյա համայնքների ներկայացուցիչները մի ղիմում էին հղել խաղաղության խորհրդաժողովին, որտեղ մասնավորապես մտավախություն էր հայտնվում Կիլիկիան քեմալականներին հանձնելու և այնտեղ բնակվող 275 հազար քրիստոնյաների անորոշ ապագայի համար: Խնդրելով հանդերձ, որ Կիլիկիայի ապագան վճռելիս անպայման հաշվի առնվեին քրիստոնյաների ինքնօրոշման արդարացի պահանջները, այն է՝ Կիլիկիայի անջատումը Թուրքիայից և որևէ մեծ տերության հովանավորության ներքո վարչաձևի ստեղծումը, ղիմումի հեղինակները ամենայն վճռականությամբ հայտնում էին Գերագույն խորհրդին, որ «...մենք որևէ կերպով չպիտի ընդունինք այնպիսի որոշում մը, որ մեզ

նորեն կը հանձնե մեր բռնապետներու իշխանության: Մենք կը բողոքենք որևէ որոշումի դեմ, որ Կիլիկիո վրա կը վերակենդանացնե թրքական գերիշխանության հետքը կամ ստվերը: Մենք հոգնած ու զզված ենք այլևս այն կիսամիջոցներեն, որոնց արդյունքը եղած է գետի պես հոսող արյուն ու արցունք: Մենք երբեք այլևս չպիտի ենթարկվինք թրքական իշխանության: Մեր բողոքներու արդարության ի պաշտպանություն մենք կոչ կընենք բոլոր քաղաքակիրթ երկրներու հանրային կարծիքներուն, մարդկության խղճին, վերահաս որոշումի մը դեմ, որ այնքան անարդարանալի է և ըմբոստացուցիչ: ...Մենք ջերմապես կը խնդրենք և կը թախանձենք դաշնակից պետություններե, մասնավորապես Ֆրանսային... փրկել Կիլիկիան մի անգամ ընդմիշտ թրքական գերիշխանության այդ զարհուրելի մղձավանջեն, որու վերապահպանումը պիտի նշանակե հավերժացնել անցյալի խժոժությունները և մահվան դատապարտել ժողովուրդը մը, որ այնքան երկար ատենն է վեր տառապած է իր ազատագրումին համար»⁴⁷:

Բայց 1920 թ. ապրիլի 9—26-ը Սան Ռեմոյում գումարված մեծ տերությունների խորհրդաժողովը ոչ միայն չբավարարեց քրիստոնյա մեծամասնության իրավացի պահանջը, այլև Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագծի համաձայն Կիլիկիայի մեծագույն մասը վերադարձվում է Թուրքիային: Անտեսվեց նաև 1920 թ. մայիսին Գերագույն խորհրդին ուղղված երկրորդ ղիմումը: Միաժամանակ ապրիլ ամսից Կիլիկիայում սկսում են լուրեր շրջել, թե Ֆրանսիական կառավարությունը ռազմական ու տնտեսական բավարար միջոցներ չունի այն իր ձեռքում պահելու համար⁴⁸: Ինչպես Ա. Կենճյանն է վկայում, 1920 թ. մայիսին Փարիզից ստացվում է Ռեշիդ բեյի ստորագրությունը կրող մի հեռագիր, որով Թուրքերին կոչ էր արվում թշնամական ակտեր չգործել Ֆրանսիացիների դեմ, քանի որ նրանց Կիլիկիայում մնալը օրերի հարց է: Իսկ Ադանայի վալին զուտ մահմեդական կազմ ունեցող մի խորհրդակցություն է հրավիրում, որը նույնպես անհրաժեշտություն է համարում մինչև Ֆրանսիացիների հեռանալը հանդարտ մնալ և դրանից հետո միայն հաշիվ տեսնել հայերի հետ⁴⁹:

Նման լուրերի տարածումը, ինչ խոսք, ինչպես նաև քեմա-

⁴⁶ Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 66:

⁴⁷ «Հայրենիք» լրագիր, 21-ը մայիսի 1920, № 2451:

⁴⁸ Տե՛ս Եգիպտահայ տարեցույց, էջ 121:

⁴⁹ Տե՛ս Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 77:

լաւանները շղաղարող հարձակումները ավելի էին խորացնում քաղաքական ճգնաժամը Կիլիկիայում ու հայ հասարակական-քաղաքական կազմակերպություններին հարկադրում միջոցներ որոնել, որոնք ապահովեին կիլիկիայի ազգային իրավունքների պաշտպանությունը և նրա ֆիզիկական ապահովությունը:

1920 թ. հունիսի 24-ին Մ. Տամատյանի կողմից գրված տեղեկագիրը այն առաջին փաստաթուղթն է, որտեղ ուղղակիորեն ակնարկվում է Կիլիկիայում թուրքական վարչության վերահաստատմանը ընդդիմանալու և դրան հետևող միջոցառումների մասին՝ որպես փրկության ծայրահեղ, բայց միակ միջոցի: Տեղեկագրում Տամատյանը գրում է. «Քաղաքական կացությունը օրեցօր ավելի վատթարանալու վրա է՝ այն ինչ որ կը վերաբերի ազգաբնակչությանց, մանավանդ հայ ժողովուրդին, որ իրականին մեջ, կը գտնվի անհանդուրժելի կացության մեջ:

Բոլորովին տարակույսն դուրս է որ ներկայիս վարիչ շրջանակները որոշած ըլլալ կը թվին ազատ թողուլ թուրքերը ընկու ուզածնին՝ առանց կարողանալու պաշտպանել քրիստոնյա ժողովուրդները, և մյուս կողմեն՝ առանց իսկ թույլատրելու անոնց, որ ինքզինքնին պաշտպանեն:

Իրողությունները մեջտեղն են: Ատոնք բավականն ավելի պերճախոս, ոչ մեկ բացատրություն պիտի կրնար գայնս արդարացնել և կամ՝ ուրանալ:

Այս պայմանաց տակ կա հարցը գոյություն քրիստոնեից, կամ ավելի ճիշտ, հայ ժողովուրդին: Բնական օրենք մըն է ինքզինք պաշտպանելը, երբ մեկը հարձակում կը կրն: Այդ իրավունքը անջնջելի է: Ոչ ոք իրավունք չունի այդ իրավունքն զրկել որևէ մեկը»: Ապա, շարունակում է Տամատյանը, եթե «վերին վարիչ շրջանակները», այսինքն Կիլիկիան գրավող իշխանությունները, անկարող գտնվեն զսպելու քեմալական հրոսակներին, ապա հայ ժողովուրդը, որպես մեկ ամբողջություն, պարտավոր է պաշտպանելու իր հայրենիքը և արգելելու «...վերադարձը գարշելի և դճրարույր թուրք տիրապետության»:

Թուրքիային պարտադրված հաշտության պայմաններից երեւում է, շարունակում է Տամատյանը, որ Կիլիկիայի մի մասը պիտի վերադարձվի թուրքերին: Բայց նման որոշում կայացնելիս ոչ ոք չհարցրեց հայերի տեսակետը, որոնք երկրի համեմատական մեծամասնությունն են կազմում: «Հայը, ընդհակառակը, զոհվեցավ ծառայելու համար թուրքական շահերուն, իրողություն

մը, որ կը կազմե աննախընթաց անարդարություն մը և բացարձակապես անըմբռնելի հայերուն ըրած ահագին զոհողություններուն տեսակետեն՝ ի նպաստ դաշնակցաց հաղթության, ըլլալ պատերազմի ընթացքին, թե պատերազմն ետք՝ ամենուրեք և ի մասնավորի Կիլիկիո մեջ:

Այս պարագայից տակ հայ ժողովուրդին համար կան միայն երկու կարելի լուծումներ՝ տրված ըլլալով որ թուրքական վայրագ լուծին վերսդարձը անհանդուրժելի և բացարձակապես անընդունելի է»:

Ըստ Տամատյանի, առաջին լուծումը Կիլիկիայում բնակվող հայերի արտագաղթն է, որի ճակատագրական հետևանքը պիտի լիներ նրանց քայքայումը անտեսապես ու նյութապես, սովը և սպիտակ ջարդը: Երկրորդ լուծումը հետևյալն է. հայերը մնում են տեղում և ընդդիմանում թուրքական վարչակարգի վերահաստատմանը՝ «...վստահելով իր ամբողջական ուժերուն, և երբեք գործոն կամ լռելյայն աջակցությանց վրա ֆրանսայի, որուն սակայն հայությունը հանձն կառնե ապահովելու այնպիսի շահեր և արտոնություններ, որ ոչ մեկ քեմալական մը, ոչ մեկ թուրք իշխանություն կրնա երաշխավորել...»:

Օրկրորդ լուծումը լավագույնն է, և կամ ներկայիս միայնակն է որ կարելի ու գոհացուցիչ ըլլա: Անտարակույս ան մեծ վտանգներ ունի, բայց ամեն պարագայի կարմիր ջարդը՝ իր բոլոր արհավիրքներովը, անտարակույս նախապատվելի է քան ապագայի ճերմակ ջարդը, սպանությունները և այժմ եղածին պես ինչքերուն հափշտակությունը:

Կիլիկիո ինքնավար երկրի մը վերածելը՝ իր ազատ կամքով գետեղված ֆրանսական հովանավորության տակ—ինքնավարություն մը որմե հավասար շարժով պիտի օգտվին բոլոր տարրերը՝ քրիստոնյա թե իսլամ—կազմելով կիլիկյան ազգաբնակչությունը—ատով միայն կրնար իրեն հետ բերել խոշոր առավելություններ Ֆրանսայի համար, որուն վարկը, ազդեցությունը, պատիվը և քաղաքակրթիչի անհրաժեշտ համբավը, մեկ խոսքով, խաթարված են Արևելքի մեջ 1918-ի զինադադարն ասդին:

Հայ տարրը առաջնորդված կարող վարիչներե, ատով անգամ մը ևս պիտի կատարե Արևելքի մեջ՝ քաղաքակրթության իր առաջապահի պատմական դերը և նոր ապացույց մը պիտի տա իր մեծանձնության հանդեպ իր երեկվան դահիճներուն, մոռանալով անցյալը ու պիտի հիմնե նոր շրջան մը բարգավաճումի և եր-

ջանկութեան ուր ֆրանսական եռագույնը պիտի խորհրդանշե խաղաղություն, արդարություն և շինարար աշխատություն:

Ու բոլոր ասոնք կախում ունին միայն Ֆրանսայեն⁵⁰:

Հավանաբար ինքնավարութեան ակտը նկատի ունի Մ. Տամատյանը, երբ 1920 թ. հունիսի 23-ին գնդապետ Բրեմոնին հասցեագրված բողոքագրի վերջում նկատել է տալիս, որ եթե ֆրանսիական իշխանութիւնները չհարգեն կիլիկեհայերի իրավունքները, ապա մենք՝ հայերս «...հարգել պիտի տանք մեր գոյութեան իրավունքները»⁵¹: Որ իրապես խոսքն այստեղ ինքնավարութեան մասին է, կարելի է նկատել երկու փաստաթղթերի հենց նույն օրերին (հունիսի 23-ին և 24-ին) գրվելու իրողութեամբ:

Միևնույն հարցին Մ. Տամատյանը անդրադառնում է նաև 1920 թ. հուլիսի 2-ի տեղեկագրում: Հանգամանորեն խոսելով Կիլիկիայի քաղաքական կացութեան, այն ծնող պատճառների, քեմալականների նպատակների ու քրիստոնյաների համար անտանելի դարձած կյանքի մասին, նա եզրակացնում է, որ փրկութեան միակ ելքը ֆրանսիացիների՝ Կիլիկիայում հայերի ու քրիստոնյա մշուս տարրերի վրա հենվելու, նրանց աջակցելու մեջ է: Այդ նրպատակի համար ֆրանսիացիները պետք է զինեն հայերին ու քրիստոնյաներին ընդհանրապես, համեմատական սկզբունքով նրանցից ստեղծեն ժամանակավոր կառավարութիւն, նյութական միջոցներ տրամադրեն և այլն: Այս միջոցառումները, վերջում շեշտում է Տամատյանը, պատենշ պիտի հանդիսանային քեմալականների համաթուրանական ծրագրերի դեմ և ապահովեն ինչպես ոչ թուրքերի գոյութիւնը, այնպես էլ Ֆրանսիայի շահերը Արևելքում⁵²:

Կիլիկյան վերջին իրադարձութիւնների մասին «Հայրենիք» օրաթերթում ընդարձակ հուշերով հանդես է եկել ինքնավարական շարժման մասնակիցներից և Կիլիկիայում դաշնակցութեան պարագլուխներից մեկը՝ Մինաս Վերածինը: «Խորհրդածութիւններ Կիլիկիո վերջին դեպքերու մասին» խորագրով հոգվածաշարում Վերածինը նախ փորձում է պարզաբանել Կիլիկիայի՝ Հայաստանին միացնելու հարցը և գտնում, որ «...Կիլիկիայեն դուրս այն կարծիքը տրված է թե մենք կուզենք այս հողամասը մեծ Հայաստանի կցել տալ, որ մեր բոլոր քաղաքական ու զինվորա-

կան գործունեութիւնը այս նպատակը կը հետապնդե»: Սակայն «...բնավ մեր մտքն չէ անցած նման գաղափար մը, և հետևաբար ուղիղ չէ արտասահմանի հայութեան վրա թողված այդ տրպավորութիւնը»: Մինչև ԱՄՆ-ի կողմից Հայաստանի հոգատարութեան հարցի ճշտումը, շարունակում է նա, մենք համամիտ էինք Ազգային պատվիրակութիւնների պահանջների հետ: Բայց «...այնուհետև կարևոր նահանջ մը տեղի ունեցավ և հայերը, մանավանդ Կիլիկիա բնակողներս՝ անվերապահորեն փարեցանք Ֆրանսայի, որմն ակնկալեցինք կարգի և կանոնի վերահաստատումը, և պայմաններ՝ որոնք պիտի նպաստեն մեր մշակութային և ֆիզիկական զարգացմանը»:

Խոսելով այս շրջանում կիլիկեհայերի վարած քաղաքականութեան ու հետապնդած նպատակների մասին, Վերածինը նշում է հետևյալ խնդիրները. 1. Պայքար քեմալական հարձակումների դեմ և ինքնապաշտպանութիւն՝ ֆիզիկական գոյութեան համար: 2. Զինվորական զրավման փոխարեն հակակշռի ուժի մի հաստատում: 3. Ֆրանսիայի հոգատարութիւնը Կիլիկիայի վրա: 4. Կիլիկիայում բնակվող քրիստոնյաների քաղաքական իրավունքի հարցը: Այսպիսով, եզրակացնում է Վերածինը, «Կիլիկիան անկախ երկիր մը դարձնելու, Հայաստանի կցելու կամ հայկական ինքնավարութիւն մը ստեղծելու որևէ ձգտում չկար մեր մեջ, և մենք այդպիսի գաղափար մը ոչ միայն անգործնական կը նկատեինք, այլև աննպատակահարմար»⁵³:

Սակայն իրադրութիւնը փոխվում է Սան Ռեմոյի խորհրդածողովի որոշումներից հետո, երբ Կիլիկիայի մեծագույն մասը խոստացվում էր Թուրքիային: «Սան Ռեմոյի որոշումներուն տեղեկանալի հետո, արդեն կիլիկյան հայութիւնը սարսափի մատնելված էր, և կը խորհեր այնպիսի միջոցներու վրա, որոնք հուսահատական ըլլալով հանդերձ, նպատակ ունեին մասամբ ազդել կնքվելիք հաշտութեան դաշնագրին վրա» և «...տանելի պայմաններ ստեղծել Զիհունի արևմտյան և հյուսիսային մասը բնակող սովարաթիվ հայութեան համար»: Ապա անդրադառնալով «Ամանոսի ինքնավարութեան» շուրջն ստեղծված աղմուկին, Վերածինը գրում է, որ դա իրականում առասպել էր և հնարված էր «Օտար շրջանակներու» կարծիքը շոշափելու, հայերին սրտապնդելու «...և

⁵⁰ «Պայքար» տարեգիրք, 1951, էջ 53—54:

⁵¹ Նույն տեղում, 1950, էջ 87:

⁵² Տե՛ս «Պայքար» տարեգիրք, 1951, էջ 61—62:

⁵³ «Հայրենիք» լրագիր, 25-ը նոյեմբերի 1920, № 2608:

մտքերու պատրաստութեան հայկական կամ քրիստոնեական ինքնավարութեան մը գաղափարին»⁵⁴ համար:

Մ. Վերածինը նշում է ևս մի պարագա, որը, նրա կարծիքով, ուժ էր տվել ինքնավարութեան գաղափարին ու ձգտումներին: Դա Աղանայից թուրք բնակչութեան, թուրքական ոստիկանութեան և պաշտոնյաների փախուստն էր, որով քաղաքը ստացել էր հայկական կերպարանք⁵⁵:

Ե. Կենճյանը նկատել է տալիս, որ դեռևս 1920 թ. մայիսի կեսերից Կիլիկիայում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ հայերն այլևս իրենց կյանքը չէին կարող վստահել ֆրանսիական իշխանություններին, երբ հնչակյան կուսակցությունը առաջ էր քաշել բոլոր պետական մարմինները, որոնցում տեղ էին գրավել թուրք պաշտոնյաները, բոյկոտելու և Ազգային միությունը որպես ժամանակավոր կառավարություն ճանաչելու առաջարկ⁵⁶:

Ինքնավարութեան մղող պարագաների թվում, կարծում ենք, պետք է հիշատակել ևս մեկը: 1920 թ. ամռանը Կիլիկիայում ըստ ստեղծված բարդ ու ծանր քաղաքական կացությունը հայ քաղաքական կուսակցություններին հարկադրել էր, գեթ առժամանակ, վերջ տալու միջկուսակցական հակամարտություններին, մերձենալու, միևնույն նպատակի համար միավորելու իրենց ուժերը և ընդհանուր ջանքերով կիլիկիայության փրկության համար ուղիներ որոնելու: Այդ մասին բազմապիսի պնդումներ կան ժամանակակիցների հուշերում: Այդ մասին է վկայում նաև Մանասե Սևակը, որը իր «Խորհրդածություններ Կիլիկիո մասին» հոդվածում գրում է, որ հայ քաղաքական կուսակցությունների համագործակցությունն այն աստիճան կատարյալ էր, որ նույնիսկ հրեա արավորություն էր ստեղծվել միության կապ հաստատելու մյուս ազգությունների հետ, բացառությամբ թուրքերի: «Ոչ մեկ կուսակցություն, — գրում է նա, — և կուսակցական անհատ չէր կարող անկախաբար որևէ բայլ առնել. այդ կը նշանակեր թշնամական արարք՝ ընդհանուրի շահերուն և կյանքի դեմ»⁵⁷:

Այսպիսով, ինքնավարութեան հռչակման ներքին ու արտաքին պայմանները միանգամայն նպաստավոր էին: Ինքնավարութեան հռչակումը նախապատրաստելու նպատակով էլ 1920 թ.

ամռանը Աղանայում ստեղծվում է Ազգային Գերագույն խորհուրդը: Մ. Վերածինը գրում է, որ Գերագույն խորհուրդը ստեղծվել էր մայիսի վերջերից մինչև հուլիսի սկիզբը «սկանավոր քաղաքական գործիչի մը» բնակարանում կայացած խորհրդակցություններից հետո, որտեղ քննարկման էին ներկայացվել ինքնավարութեան հռչակման հետ կապված ինչպես դիվանագիտական, այնպես էլ քաղաքական հարցեր⁵⁸:

Ա. Քեչյանի կարծիքով Գերագույն խորհրդի ստեղծման և Կիլիկիայի ինքնավարութեան հռչակման ծրագիր-ուղեցույցը կազմել էին երկու հայ լեզոնական սպաներ⁵⁹, որը այնքան էլ հավանական չի թվում: Մ. Գ. Հնչակյան կուսակցության պատմությունների մեջ ավելի որոշակի նշվում է, որ քաղաքական կուսակցությունների և հարանվանությունների ներկայացուցիչների ժողովը Մ. Տամատյանի նախագահությամբ ստեղծում է «Ազգային Գերագույն խորհուրդը», որի անդրանիկ նիստն էլ գումարվում է 1920 թ. հունիսի 23-ին⁶⁰: Ա. Կենճյանը Գերագույն խորհրդի ըստ ստեղծման օրը համարում է հունիսի 18-ը⁶¹, իսկ Ա. Կեպենյանը՝ հուլիս ամիսը⁶²:

Գերագույն խորհուրդը շուրջ մեկ ամիս գաղտնի նիստեր է գումարում: Օրակարգում միևնույն՝ ինքնավարութեան հարցն էր, որը պետք է իրականացվեր Սևրի դաշնագրի ստորագրումից առաջ⁶³: Մ. Տամատյանը դա այսպես է պատճառաբանում. «...քանի որ դաշնակիցները խուլ կը ձևանային իրենց բոլոր թախանձագին ազերսանքներուն և ամենաբուռն բողոքներուն, անհրաժեշտ էր որ դաշնագրին ստորագրութենեն առաջ անոնք հանդիսավոր գործողությամբ մը անգամ մըն ալ վճռականորեն հայտնեին իրենց կամքը երկրին ապագա բախտին նկատմամբ... Որպեսզի ապագային կարելի չըլար կիլիկիցիին պահանջումներուն հակադրել սա շնական առարկությունը թե՛ «ինչ ընել, դաշնագիր մը կա ստորագրված, ստիպված ենք հարգել մեր ստորագրությունը և գործադրել զայն» պետք էր որ Կիլիկիո քրիստոնյաները նախ-

⁵⁸ Տե՛ս «Հայրենիք» լրագիր, 9-ը դեկտեմբերի 1920, № 2619:

⁵⁹ Տե՛ս Ա. Քեչյան, նշվ. աշխ., էջ 91:

⁶⁰ Տե՛ս Պատմություն Մ. Գ. Հնչակյան կուսակցության, հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 570:

⁶¹ Տե՛ս Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 157:

⁶² Տե՛ս Եզրի պատմական տարեցույց, էջ 115:

⁶³ Տե՛ս «Հայրենիք» լրագիր, 9-ը դեկտեմբերի 1920, № 2619:

⁵⁴ Նույն տեղում, 28-ը նոյեմբերի 1920, № 2610:

⁵⁵ Տե՛ս «Հայրենիք» լրագիր, 30-ը նոյեմբերի 1920, № 2611:

⁵⁶ Տե՛ս Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 79:

⁵⁷ «Հայրենիք» լրագիր, 1-ը հոկտեմբերի 1920, № 2562:

քան այդ դաշնագրի ստորագրությունը նոր կացություն մը, կատարված իրողություն ստեղծելին, կամ փորձելին ստեղծել»⁶⁴:

Մ. Տամատյանը միաժամանակ շեշտում է այն միտքը, որ գնդապետ Բրեմոնի հետ ունեցած անձնական հանդիպումների ընթացքում իր ծրագրերի մասին հայտնել էր նրան և արժանացել նրա հավանությունը: «Արդ,— գրում է Տամատյանը,— երբ գնդ. Բրեմոնին անպաշտոն կերպով բացատրեցի իմ տեսակետներս, ինձի ըսավ թե՛ եթե ինք հայ ըլլար՝ կատարելապես ինձի պես պիտի խորհեր: Նույնիսկ ինձի անձնապես խոստացավ ալ հարմար ժամանակը ինձի հայտնելու: Այդ ժամանակը սակայն երբեք չեկավ... ու վերջին անգամ իրեն շեշտեցի թե դաշնագիրը ստորագրվելու վրա է և թե կարելի չէ լռությամբ թողուլ որ մեր իրավունքները ոտնակոխ ըլլան, ինձի պատասխանեց թե՛ իր կարծիքով արդեն ուշացած էինք, միևնույն ատեն հայտնեց թե այդպիսի գործ մը իրեն և ժեներալին շահերուն ուղղակի կը հակառակեր»⁶⁵:

Երկարատև նիստերից և խորհրդակցություններից հետո, ի վերջո, 1920 թ. հուլիսի 31-ի նիստում Գերագույն խորհուրդը որոշում է Կիլիկիան հռչակել ինքնավար: Հեղինակների մի մասի պնդմամբ ինքնավարության հռչակման օրը նախատեսված էր օգոստոսի 4-ին⁶⁶: Այս առթիվ Մ. Կեպենլյանը գրում է, որ խորհրդի դաշնակցական և հնչակյան ներկայացուցիչների պահանջով որոշվել էր այն կատարել օգոստոսի 2-ին: Բայց միաժամանակ, ավելացնում է Կեպենլյանը, խորհուրդը նշանակել էր երեկոյան մի նիստ, որտեղ էլ պիտի ընդունվեր վերջնական որոշումը⁶⁷:

Գերագույն խորհրդի ցերեկային նիստից հետո ուսմկավար կուսակցության ներկայացուցիչը իր կուսակցությանը հայտնում է ընդունված որոշման մասին: Անմիջապես ակումբում հրավիրվում է ուսմկավար կուսակցության արտակարգ նիստ, որտեղ էլ ընդունվում է հետևյալ բանաձևը.

«1. Ֆրանսիացիներու գրավման շրջանակին մեջ անկախության հռչակումը ճակատագրված է անկատար գործ մը ըլլալու:

⁶⁴ «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 48:

⁶⁵ Նույն տեղում, էջ 49—50:

⁶⁶ Տե՛ս Ա. Կենեյան, նշվ. աշխ., էջ 158, Պատմություն Ս. Գ. Հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 570:

⁶⁷ Տե՛ս Եգիպտահայ տարեցույց, էջ 122:

2. Այդ ակտը կրնա դժգոհություններու և անհաճո թյուրիմացություններու տեղի տալ:

3. Այն պարագային երբ ֆրանսացիք ընդդիմանան այդ քայլին, կասկածանքով պիտի վերաբերվին մեզի հանդեպ և առաջին ու գլխավոր վնասվողը պիտի ըլլա Հաճընի արշավախումբը:

4. Խոհեմություն է նախ և շուտով լրացնել Հաճընի արշավախումբին պատրաստությունները, հետո, զորացնել Յուրեյլի մեջ գործող կովող խումբերը և այսպես հաշվի առնվելիք ուժով մը հեռանալ ֆրանսիական գրավման շրջանակեն դեպի պարպված ու թուրքերու ձգված վայրերը, ի հարկին մինչև Սիս ու հոն հրոշակել անկախությունը, ապահովելով նաև Հաճնո ուժերուն գործակցությունը»⁶⁸:

Համանման որոշում է կայացնում նաև ազատագրական կուսակցությունը⁶⁹:

Սիսը վերագրավելուն, Հաճընի պաշարումը վերացնելուն և ապա միայն ինքնավարությունը հռչակելուն, հավանաբար, համամիտ է եղել նաև Մ. Տամատյանը: Իր տեղեկագրում նա շեշտում է, թե «Մենք շատ հեռահաս հետևանքներ կակնկալեինք մանավանդ Սիսի և Հաճընի վերագրավման փորձն մը և երեքուկես ամիս շարունակ այս գործը իմ ամբողջ մտահոգությանս և տքնություններուս առարկան եղավ»⁷⁰:

Մ. Վերածինը ևս վկայում է, որ «Գերագույն խորհրդի կարևոր մեկ անդամը նպատակ ուներ նախ Սիսը գրավելու, հոն ինքնավարության գործ պարզելով և ապա Ադանայի և շրջականերու նկատմամբ կարգադրություններ ընելու»⁷¹: Գերագույն խորհրդի այդ «կարևոր մեկ անդամը», հավանաբար, Մ. Տամատյանն էր: Կարծում ենք, որ ստեղծված պայմաններում դա միակ ճիշտ ու որևէ հաջողություն խոստացող, թեկուզ և Հաճընի պաշարումը վերացնելու առումով, որոշումն էր:

Սակայն դեպքերը ավելի արագ են զարգանում, քան նախատեսել էր Գերագույն խորհուրդը: Հուլիսի 31-ի ցերեկային նիստից հետո խորհրդի դաշնակցական ներկայացուցիչը (Մնացականյան) ընդունված որոշման մասին իրազեկ է պահում իր կուսակցությանը, որն էլ Մինաս Վերածինին լիազորում է 1920 թ.

⁶⁸ Նույն տեղում, էջ 122—123:

⁶⁹ Տե՛ս Եգիպտահայ տարեցույց, էջ 123:

⁷⁰ «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 49:

⁷¹ «Հայրենիք» լրագիր, 11-ը դեկտեմբերի 1920, № 2621:

օգոստոսի 2-ին, մյուս կուսակցություններից և Գերագույն խորհրդից գաղտնի, հուշակելու Կիլիկյան Միջագետքի (Սիհուն և Ջիհուն գետերի միջև ընկած շրջանների) ինքնավարությունը՝ ֆրանսիական կառավարության հովանավորության ներքո: Մ. Վերածինը անմիջապես մեկնում է Յուրեյլի և գնդապետ Բրեմոնին, Գերագույն խորհրդին, Աղզային միությանը, կուսակցություններին ու թերթերի խմբագրություններին ուղղված հայտարարություններով հուշակում Կիլիկիայի ինքնավարությունը⁷²:

Ակնհայտ է, որ մենատիրական ու փառամոլ ձգտումներ ունեցող դաշնակցությանը ավելի շատ ու շուտ մտահոգում էր Կիլիկիայի ինքնավարության դափնին, քան դրա հետևանքներն ու ազգային շահերը: Եվ նորից դաշնակցությունն էր, որ նման քայլերով սրում էր միջկուսակցական հանդարտված թվացող պայքարն ու վեճերը, մեծապես վնասելով ընդհանուր գործի հաջողությանը:

Մ. Վերածինի արարքը, որը, անտարակույս, նրա կուսակցության արարքն է, առաջ է բերում ժողովրդի լայն խավերի և հասարակական-քաղաքական կազմակերպությունների խոր դայրույթը: Օգոստոսի 2-ին կայացած նիստում Աղզային միությունը Վերածինին վտարում է իր շարքերից: Ինքնավարության հայտարարությամբ շանթահարված Մ. Տամատյանը հանդիմանում է դաշնակցության պարագլուխներին, որոնք արդարացման նպատակով, սակայն, հայտարարում են, թե իբր Վերածինը գործել է ինքնագլուխ՝ առանց իր կուսակցության համաձայնությունն ստանալու: Սակայն հենց Վերածինի իսկ խոսքերը անհերքելիորեն վկայում են, որ ինքնավարության որոշումը ընդունել էր «դաշնակցության կենտրոնական մարմինը»: Այս մասին նա գրում է, որ Սևրի դաշնագրի ստորագրման օրը մոտենում էր, բայց Գերագույն խորհուրդը «...կը տատաներ ու կը տատամսեր որևէ դրական քայլ առնելու դեպի այն նպատակին իրականացումը, որուն համար ինքը գոյություն կոչված էր... Ուստի, ինքնավարության փորձի կառքին անիվները շարժել տալու համար դաշնակցության կենտրոնական մարմինը ինձի պաշտոնը կը հանձնեիր թալ կիլիկյան Միջագետք և ինքնավարություն հռչակել»⁷³:

Կիլիկիայի ինքնավարության հռչակումը, այսպիսով, իրողություն էր դարձել և Գերագույն խորհուրդն ու կիլիկեհայություն-

նը կատարված փաստի առաջ էին կանգնել: Այս պայմաններում Գերագույն խորհրդին այլևս ոչինչ չէր մնում, քան դարգացնելու այն:

Օգոստոսի 3-ի իր նիստում Գերագույն խորհուրդը որոշում է միավորել կուսակցությունների գործունեությունն ու ջանքերը և օգոստոսի 4-ին Ադանայում հայտարարել Կիլիկիայի ինքնավարությունը⁷⁴: Ա. Կեննյանը նշում է, որ օգոստոսի 3-ին ռամկավար և վերակազմյալ կուսակցությունները արդեն հանդես էին եկել նման հայտարարություններով⁷⁵, իսկ Վերածինի վկայությամբ՝ միայն վերակազմյալները⁷⁶:

Օգոստոսի 4-ի և հետագա մի քանի օրերի իրադարձությունների և ինքնավարության հռչակման մանրամասների մասին Մ. Տամատյանը հանգամանորեն խոսում է Աղզային պատվիրակությանը հղած իր տեղեկագրում: Ըստ այդ փաստաթղթի, օգոստոսի 4-ի առավոտյան ժամը 10-ին Աղզային միության հրավերով միության ղահլիճն են հավաքվում երեք հարանվանությունների պետերը, Աղզային պաշտպանության գերագույն մարմնի անդամները, հունական, ասորական, գաղղեական և սիրիական համայնքների ներկայացուցիչները, որոնք միանալով Ամբողջական Հայաստանի պատվիրակության լիազոր ներկայացուցչին և Աղզային միության անդամներին, կազմում են «Կիլիկիո միջբրիտոնեական արտակարգ խորհուրդը»: Բացելով խորհրդի նիստը, Մ. Տամատյանը ներկաներին բացատրում է խորհրդի հրավերման դրդապատճառը, «...որ էր նույն օրն իսկ հռչակել Կիլիկիո անկախությունը Թուրքիայեն և անոր օժտումը ինքօրեն վարչությամբ մը՝ ֆրանսական մանդատի տակ»⁷⁷:

Միջբրիտոնեական արտակարգ խորհրդի ներկայացուցիչները այնուհետև ծանոթանում են Մ. Տամատյանի խմբագրած ու խորհրդի վավերացմանը ներկայացված հայտարարության հետ, որն էլ ապա հավանության է արժանանում և ստորագրվում նրանց կողմից: Հայտարարությունում ասվում է.

«Ստորագրյալներս, Կիլիկիո բոլոր բրիտոնյա հասարակությանց պաշտոնական ներկայացուցիչներս, ներկայիս կը հայտարարենք.

⁷⁴ Տե՛ս Ա. Կեննյան, էջ 127:

⁷⁵ Տե՛ս Ա. Կեննյան, նշվ. աշխ., էջ 162:

⁷⁶ «Հայրենիք» լրագիր, 11-ը դեկտեմբերի 1920, № 2621:

⁷⁷ «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 41:

⁷² Տե՛ս Ա. Կեննյան, նշվ. աշխ., էջ 159—161:

⁷³ «Հայրենիք» լրագիր, 11-ը դեկտեմբերի 1920, № 2621:

Նկատելով, որ մեծ պատերազմին իբր իրավունք Կիլիկիան գրավվեցավ դաշնակից ուժերու կողմե և թե Կիլիկիո մեջ Ֆրանսական գրավումն ու վարչությունը պահպանվեցան ամբողջ զինազաղարի տեղությանը,

Նկատելով, որ ամբողջ այս ժամանակամիջոցին թուրքերը շղաղրեցան երկրին խաղաղությունն ու անդորրությունը խանգարելե, սփռելով երկրին մեջ մահ, ավերում և սարսափ, որով բացե ի բաց դրժեցին իրենց հանձնառությունները և բռնաբարեցին զինազաղարը,

Նկատելով, որ թուրքիո հետ հաշտության նախօրյակին իսկ մեր բազմաթիվ քաղաքները դեռ սպառնալիքի տակ կը գտնվին, ըլլալով պաշարված կամ ումբակոծումի ենթարկված՝ արյունարբու խուժանին կողմե, որը կազմակերպված է նույն ինքն թուրք իշխանությանց աչք խփելովը, և որ թուրք իշխանությունները՝ ինչպես միշտ անկարող պիտի ըլլան սանձել այս տեսակ ըմբոստություններ ու բարբարոսություններ, թե իսկ հոժարեին առ այն,

Նկատելով, որ խաղաղության շրջանին իսկ, դեռ երկար ատեն մենք պիտի շարունակենք ապրիլ պատերազմական վիճակի մը մեջ, որը վերջ պիտի գտնե մի միայն Ֆրանսական քաջարի զորքերուն կողմե ձեռնարկված կանոնավոր գործողությանց շնորհիվ, և որոնք միշտ անվերապահ օժանդակությունը պիտի վայելեն քրիստոնյա բնակչությանց՝ որոնց արժեքավոր պաշտպանությանը իր մասնակցությունը բերած է Ֆրանսական զինուց հաշտություն,

Նկատելով, որ այն պահուն, ուր մենք այս հայտարարությունը կը խմբագրենք, այս երկրի հին տերերու գնդակները կը սուլեն մեր գլուխներուն վրայեն, և որ նույն դրությունը խստորեն գոյություն ունի այս բոսնիս Տարսոնի և Մերսինի մեջ,

Նկատելով, որ անըմբռնելի է արտաքին աշխարհի մեջ կընքված խաղաղություն մը, որ ոչ մեկ ուշադրություն կը դարձնե այս կացության վրա,

Նկատելով, որ Կիլիկիո 275000 քրիստոնյաներ սերտորեն միացած եղբայրական զգացումներով, շահերու նույնությամբ, թուրքին հանդեպ իրենց զզվանքով՝ իսկ Ֆրանսայի հանդեպ իրենց ունեցած համակրությամբ, առանց նույնիսկ պետք զգալու ոգեկոշիլ անիծյալ անցյալի այն սարսուղոգեցիկ հիշատակները՝ որոնք լի են ջարդերով, տեղահանություններով, անարգանքի և խոշտանգումի բոլոր տեսակներովը, անոնք հպարտ են ընկրկած

ընդամենը համար բոլոր ճնշված ազգերու անկախությունը կերտող ոչ մեկ զոհողության և ճիգի առջև, այլ ընդհակառակը, անոնք կրնան մեջ բերել իրենց ի նպաստ այն փաստը, թե պատերազմի ընթացքին և զինազաղարի երկար ու տառապալից շրջանին, փրկվանքներու ամենասուղն ու ամենասոսկալին հատուցած են,

Նկատելով, որ Կիլիկիո քրիստոնյա հասարակությունները վճռապես հայտնած են թե թրքական տիրապետության պիտի չհանդուրժեն, և այս հայտարարությունները եղած են ու կրկնված են ամեն առիթով՝ ամերիկյան երկու քննիչ հանձնախումբերու անքեթի ատեն, ինչպես նաև Ֆրանսական իշխանության մոտեղած բոլոր դիմումներով,

Նկատի ունենալով մանավանդ որ, վերջին մարտ 31-ի և մայիսի 15-ի բոլոր համաձայնական պետությանց և խաղաղության համաժողովին ուղղված իրենց հավաքական բողոքներովը, ինչպես նաև ատկե ետք ալ ըրած իրենց բոլոր դիմումներովը, որոշակի իմացուցած են թե իրենք ոչ մեկ կիսամիջոցե, արվեստական կարգադրություններ և խորթ ու անհարազատ լուծումներ կան պիտի չխաբվին, և թե իրենց կորովի վերջին թափով բողոքած են խաղաղության դաշինքի այն ծրագրին դեմ որ պատմական՝ ցեղազրական՝ ռազմագիտական՝ տնտեսական տեսակետներով մեկ և անբաժանելի Կիլիկիան՝ երկու արվեստական հատվածներու բաժնելով, մին՝ Ֆրանսական Սուրիո, իսկ մյուսը՝ թուրքիո կը տրամադրե,

Նկատելով, որ մինչև ներկա վայրկյանը անոնք շունեցան ոչ մեկ հավաստիք թե իրենց պահանջները պիտի ընդունվին և հաշտության ստորագրման նախօրյակին իսկ, թողված են կատարյալ անստուգության և ծայրաստիճան մտահոգիչ անորոշության մեջ,

Նկատելով, որ իրենց ներկայացուցած ժողովուրդները՝ դաշնակից պետության արդարամտության վրա վստահությամբ մը սպասելե ետք, ամենագուր չուսախաբության պիտի մատնվին, և թե խաղաղության համաժողովի վերջնական որոշումները գոհացում չտան իրենց արդարացի խնդրանքներուն և ամենն ավելի փայփայած հույսերուն, այդ պարագային, ստորագրող ներկայացուցիչները որևէ պատասխանատվություն պիտի չկրնան վերցնել, թե իրենց պատկանած համայնքները ամբողջությամբ ըմբոստանան Կիլիկիո մեջ թրքական վեհապետության և վարչության վերահաստատման հրեշային հատվածին դեմ,

Նկատելով նաև, որ ներկա անկարգ և անիշխանական վիճակը անգամ, մասամբ հետևանք է լուրջ ուրվականի հանգամանքն առած թրքական տեղական վարչության անգամալուծության, և թե այս պայմաններուն մեջ, ամենուն վստահության և հարգանքին արժանի և հարկ եղած հեղինակությամբ օժտված տեղական վարչության մը անմիջական հաստատումովն է միայն որ երկիրը կրնա փրկվիլ անիշխանութենէ և վերջնական քայքայումէ,

Հիմնվելով բոլոր այս պատճառաբանությանց և վերոհիշյալ մարտ 31, և մայիս 15 թվակիր երկու հիշատակագիրներով մանրամասն իրավանց, փաստերու և նկատողությանց վրա, որոնց տրամաբանական հետևանքն է ներկա ակտը, և հիմնվելով մանավանդ ժողովուրդներու ինքնորոշման անկապտելի իրավունքին վրա, որը կը բղխի Ֆրանսական հեղափոխության անմահ սկզբունքներէն,

Այսօրվընէ սկսյալ, Կիլիկիան հանդիսավորապես կը հռչակենք թուրքիայէն բոլորովին անկախ ազատ երկիր մը, օժտված տեղական քրիստոնեական ինքնավար վարչությամբ, և Ֆրանսայի մանդայի տակ դրված: Նախկին Օսմանյան կայսրութենէն Կիլիկիո այս անջատումը կը նկատենք այնքան վերջնական և լիակատար և միևնույն իրավունքով որքան Հայաստանի՝ Սուրիո՝ Պաղեստինի՝ Միջագետքի և Արաբիո անջատումը:

Այս անկախութիւնը իրագործելու և պահպանելու համար, թշնամին մեր դռներէն վանելու, պաշարված քաղաքները ազատելու, ոտքի կոխան եղած քաղաքներն ու զավառները վերագրավելու և մեր քրիստոնյա եղբայրները գերութենէ ազատելու համար, մեր ժողովուրդին բոլոր կենդանի ուժը կը տրամադրենք հայրենիքի և հոգատար Ֆրանսայի ծառայության:

Կուսակցություն, հարանվանություն, համայնք, քրիստոնյաց եղեր, ամենքս միացած ենք միևնույն նվիրական նպատակին համար:

Ձեռք ձեռքի տված պիտի աշխատինք երկրին բարոյական, մշակութային և տնտեսական վերականգնումին համար՝ Ֆրանսայի հովանիին տակ: Մեր բաղձանքն է Կիլիկիան դարձնել Եվրոպայի շարունակությունը, քաղաքակրթության և հառաչագիմության նոր կենտրոն մը, ուր բնիկ իսլամ ցեղերը պիտի վայելեն հավասարապես թուրք կառավարության օրոք իրենց անձանոթ բարգավաճում, ազատություն ու ապահովություն ու պիտի փառք տան թուրքիայէն իրենց բաժանման այսօրին:

Ֆրանսայի մանդայի տակ դրված այս անկախութիւնը, քրիստոնեից գոյության լինել չլինելու պայմանն է: Կը նախընտրենք մեռնիլ քան ընդունել տարբեր որևէ լուծում:

Վստահ ենք, որ Արևելքի քրիստոնեից ավանդական պաշտպան, վեհանձն ու ասպետական Ֆրանսան՝ պիտի գնահատե մեր պահանջներուն թեզը և պիտի հաճի ճանչնալ մեր անկախութիւնը և զայն իր պաշտպանության տակ դնել:

Կեցցե անկախ Կիլիկիան

Կեցցե Կիլիկիո հոգատար Ֆրանսան

4 օգոստոս, 1920
Ադանա

Ստորագրությունք՝

- Ամբողջական Հայաստանի ներկայացուցիչ՝ Մ. Տամատյան
- Առաջնորդ հայոց՝ Գ. վրդ. Ասլանյան
- Առաջնորդ կաթ. հայոց՝ Հ. Ֆ. Քելիկյան
- Նախագահ հայ Ազգային միության՝ զոկ. Մնացականյան
- Քարտուղար հայ Ազգային միության՝ Վ. Ժամկոչյան
- Հույն հասարակության պատվիրակներ՝ Ա. Սիմեոնօղլու, զոկ. Ը. Տափելիտիս և Պարպուր
- Օրթոտոքս ասորիներու Ազգային կոմիտեի նախագահ՝ Ժան Կաթ. քաղղեացիներու պատրիարքական փոխանորդ՝ Թյուֆենկճի
- Կաթ. սուրիացիներու պատրիարքական փոխանորդ՝ Հայր Յիլիպոս»⁷⁸:

Հայտարարությունը ֆրանսիական իշխանություններին հանձնելու նպատակով խորհրդի մի խումբ ներկայացուցիչներ այցելում են գնդապետ Բրեմոնին, որը «...հետ ընթերցման, բարյացակամ վերաբերում մը ունեցավ և խոստացավ այդ կարևոր հայտարարության ամփոփումը նույն օրն իսկ հեռագրով հաղորդել Սուրիո և Կիլիկիո բարձր կոմիսար զորավար Գնորոյին: Իսկ ամբողջական բնագիրը անոր հասցնել առաջին թղթատարով, իր կողմէն հաղորդվելու համար՝ ֆրանսական կառավարության»⁷⁹:

⁷⁸ Ա. Կենյան, նշվ. աշխ., էջ 172—177:

⁷⁹ «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 41:

Բնակչութեանն ուղղված միջբրիստոնեական արտակարգ խորհրդի օգոստոսի 4-ի պաշտոնական հայտարարութեան մեջ շեշտվում էր այն միտքը, թե ինքնավարութեան հռչակման հանդես գնդապետ Բրեմոնը «խիստ համակիր վերաբերում» է ցույց տրվել⁸⁰: Այս կապակցութեամբ Բրեմոնը գրում է, որ թեև ինքը խոստացել էր ինքնավարութեան հռչակման մասին հայտնել վերադաս մարմիններին, բայց միաժամանակ զգուշացրել էր փաստաթուղթը իրեն հանձնող խորհրդի անդամներին, թե այն արդեն ուշացել էր մեծ տերութունների որոշման վրա որևէ ազդեցություն թողնելու համար⁸¹:

Օգոստոսի 4-ի ակտի մասին խոսող հայ հեղինակները նույնպես վկայում են, որ ինքնավարութեան հայտարարությունը ֆրանսիական իշխանությունների և անձամբ գնդապետ Բրեմոնի վրա լավ տպավորություն է թողել: Մ. Կեպենլանը նույնիսկ գրում է, թե նույն օրն էլ Բեյրութից ստացվել էր գեներալ Գուրոյի պատասխան հեռագիրն այն մասին, որ հաճութեամբ է ընդունել Կիլիկիայի ինքնավարութեան հռչակման լուրը⁸²:

Օգոստոսի 5-ին միջբրիստոնեական արտակարգ խորհուրդը գումարում է երկու նիստ՝ առավոտյան և կեսօրին: Նկատի ունենալով մարտի 31-ի և մայիսի 15-ի հայտարարությունների անհետևանք մնալը և այն մտավախությունը, որ օգոստոսի 4-ի հայտարարությունը նույնպես կարող էր արժանանալ նախորդների բախտին, խորհուրդը որոշում է խոսքից անցնել գործի և ստեղծել կիլիկյան անդրանիկ կառավարությունը: Կառավարության նախագահ՝ վարչապետ է ընտրվում Մ. Տամատյանը, իսկ միստրական պաշտոններին՝ դոկ. Մնացականյանը՝ արտաքին գործերի, դոկ. Պեղիբճյանը՝ ներքին գործերի, Կ. Ժամկոչյանը՝ պատերազմական, Ա. Կենճյանը՝ ֆինանսների, Կ. Նալպանտյանը՝ պարենավորման և երկրագործության, Ժանը՝ կրթական, Նիքոլաքին՝ դատական: Մինիստրական երկու պոստեր (հաղորդագրության և հանրօգուտ շինարարության) մնացել էին թափուր: Հետագայում դրանցից մեկը տրվելու էր թուրքի, իսկ մյուսը՝ արաբի⁸³:

Օգոստոսի 5-ին, կեսօրն անց, առանց միջադեպի, հայ ստեղծականներին ու զինվորներին հաջողվում է կառավարչատնից հեռացնել վալիին և թուրք մյուս պաշտոնյաներին, ապահովելով ժամանակավոր կառավարության մուտքը: Քիչ անց կառավարչատուն է գալիս ֆրանսիական տեղեկատու բյուրոյի պետ Մ. Կիզը և գնդապետ Բրեմոնի անունից Տամատյանից ու կառավարության մյուս անդամներից պահանջում հեռանալ շենքից: Մ. Տամատյանը փորձում է համոզել ֆրանսիացի պաշտոնյային, որ իրենք ֆրանսիական կառավարության դեմ ուղղված ոչինչ չունեն, թե շարունակում են մնալ նրա դաշնակիցն ու բարեկամը: Կիզը հեռանում է և մի փոքր անց վերադառնում ու ավելի խիստ ձևով պահանջում կատարել հրամանը: Մ. Տամատյանը նորից է պարզաբանում Կիզին, որ ժամանակավոր կառավարությունը ինքնագլուխ չի եկել կառավարչատուն, որ իրենք կատարում են Կիլիկիայի ամբողջ բրիստոնյա բնակչության պաշտոնական օրգանի՝ միջբրիստոնեական արտակարգ խորհրդի կամքը և այլն: Այս ընթացքում Կիզը կտրում է հեռախոսալարը և կառավարչատունը մեկուսացնում արտաքին աշխարհից: Այս բոլորից հետո է, որ Մ. Տամատյանը վճռապես մերժում է կատարել ֆրանսիական իշխանությունների հրամանը և հայտնում, որ միայն գեներալ ուժով կհեռանա շենքից: Անմիջապես կառավարչատուն են մտնում, ևս երկու ֆրանսիացի սպաներ, իսկ մի քանի լոպս անց նաև ինքը՝ գնդապետ Բրեմոնը, որը, ինչպես Տամատյանն է գրում, սովորականից խիստ ու այլալված էր: Տամատյանից նույն պատասխանն ստանալուց հետո Բրեմոնը ներս է կանչում շորս ալժիրցի սպառազինված զինվորների և նրանց օգնությամբ կառավարչատնից դուրս հանում Տամատյանին ու ընկերներին⁸⁴:

Օգոստոսի 4—5-ի իրադարձությունների մասին խոսելիս Բրեմոնը այն միտքն է շոշափում, որ այս օրերին Ադանայում ոչ մի միջադեպ տեղի չի ունեցել: Այս փաստից էլ նա բխեցնում ու զարգացնում է այն թյուր կարծիքը, թե ինքնավարութեան հռչակումը ոչ մի ժողովրդականություն չի վայելել, թե հայ զանգվածները բոլորովին անտարբեր են գտնվել դեպի շարժումը և նույնիսկ քողոք հայտնել, Բրեմոնի ձևակերպմամբ, կատակերգության հեղինակներին, թե միայն շուրջ հիսուն կողմնակիցներ էին պաշտպանում շարժումը և այլն⁸⁵: Բայց հակառակ Բրեմոնի պնդումնե-

⁸⁰ Տե՛ս Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 162—163:

⁸¹ Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 66:

⁸² Եգիպտահայ տարեցույց, էջ 127, «Հայրենիք» լրագիր, 11-ը դեկտեմբերի 1920, № 2621, Ա. Կենճյան, նշվ. աշխ., էջ 165:

⁸³ Տե՛ս «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 42:

⁸⁴ Տե՛ս «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 43:

⁸⁵ Տե՛ս Brémond E., նշվ. աշխ., էջ 66—67:

բի, «Աղանայի քրիստոնեութունը խանդավառ եռուզեռի մեջ է: Շիշմանյանի զինվորները՝ հրամանատար Շիշմանյանի առաջնորդութեամբ գեղեցիկ տողանցք մը կը կատարեն: Փողոցները բերնե բերան խոնված հասարակութիւնը բուռն ծափերով կողջունեն Հայկական բանակի կորիզին փայլուն գնացքը»⁸⁶: Ս. Կեպենլյանի վկայութեամբ «...Աղանայի ժողովուրդը բուռն ոգևորութիւն ցույց կուտար» դեպի ինքնավարութեան հռչակումը և «Ժողովրդային այդ տաք հետաքրքրութենէն մղված...» ձեռնարկվում է կառավարութեան ստեղծումը⁸⁷:

Բրեմոնի և որոշ հեղինակների անհիմն պնդումներին իր տեղեկագրում պատասխանում է նաև Մ. Տամատյանը: Այն հարցին, թե ինչու ինքնավարութեան հռչակման ծիսակատարութիւնները այդքան անշուք կատարվեցին, Տամատյանը պատասխանում է. «մի միայն ի սեր Ֆրանսայի»⁸⁸: Ապա Տամատյանը պարզաբանում է, որ իրենք ի վիճակի էին 5—6 հազարանոց թափորով ու զինված ջոկատներով մտնել կառավարչատուն, այլ ոչ թե վեց հոգով: Այդ դեպքում, գրում է Տամատյանը, հնարավոր էին անխուսափելի թվացող ընդհարումներն ու նույնիսկ մարդկային զոհերը: Բայց հարցը մի քանի և անգամ մի քանի հարյուր մարդու զոհվելու մեջ չէ, շեշտում է նա: Ընդհարման ժամանակ բավական էր, որ զոհվեր թեկուզ և մեկ սեամորթ զինվոր «...կամ ալճերիացի զինվորի մը գզակը ծակեր հայու մը կողմն արծակված գնդակն մը», որպեսզի եղելութիւնը խեղաթյուրվելով այն երեւոյթը ստանար, որ իբր հայերը ապստամբել էին Ֆրանսիացիների դեմ⁸⁹: «Այս ամենակարևոր կետը մենք այստեղ, — գրում է Տամատյանը, — դեպքէն հետո, առիթ ունեցած ենք համոզիչ կերպով պարզաբանելու Ֆրանսական իշխանութեան, որոնք հիմա կընդունին ու կը գնահատեն մեր իրենց նկատմամբ բռնած ընթացքին խղճահարութեան հասնելու աստիճան անկեղծ և ուղիղ հանգամանքը»⁹⁰:

Այս կապակցութեամբ պիտի հիշատակել նաև այն փաստը, որ օգոստոսի 4-ի՝ ժողովրդին ուղղված հայտարարութիւնում

⁸⁶ Ա. Կեպենյան, նշվ. աշխ., էջ 165:

⁸⁷ Տե՛ս Եգիպտահայ տարեցույց, էջ 126—127:

⁸⁸ «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 52:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

⁹⁰ «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 52—53:

շեշտվում էր, որ գնդապետ Բրեմոնը «խիստ պատվեր տվա՛վ մեզ հաղորդել մեր ժողովուրդը հանդարտութեան և կարգապահութեան»:

Ազգ. պաշտոնական մարմինները պարտք կը համարեն հորդորել բոլոր ժողովուրդը... ցույց տա անթերի կարգապահութիւն, զգուշանալով ամեն կարգի ցույցերն և համախմբումներն»⁹¹:

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձութիւնները, իդուր էին Մ. Տամատյանի և ինքնավարական շարժման մասնակիցների զգուշութիւնները: Օգոստոսի 5-ից Ֆրանսիայու մասնակիցների զգուշութիւնները: Օգոստոսի 5-ից Ֆրանսիական իշխանութիւնները խզում են կապը Տամատյանի ու հայ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների հետ, որպես հայ ժողովուրդը ներկայացնող միակ պաշտոնական մարմին ճանաչելով միայն հոգևոր կազմակերպութիւնները: Նույն օրն էլ հրապարակվում է գեներալ Դյուֆիեռի հրամանը, որով Աղանայում հայտարարվում էր պարետային ժամ, արգելվում էին ցույցերն ու հավաքույթները, իսկ ինքնավարութեան նախաձեռնողները որակվում էին որպես վատ հովիվներ ու թշվառականներ⁹²:

Օգոստոսի 5-ից հետո էլ ժամանակավոր կառավարութիւնը մի քանի նիստեր է գումարում Թուրինյան ակումբում, բայց գործնական որևէ քայլ կատարել այդպես էլ չի կարողանում: Այս պայմաններում, գրում է Տամատյանը, օգոստոսի 6—7-ի նիստերում ժամանակավոր կառավարութիւնը որոշում է. ա) հանդարտութիւն պահպանել և Ֆրանսիացիների հետ որևէ միջադեպի տեղիք չտալ և բ) շահել Ֆրանսիական իշխանութիւնների համակրանքն ու վստահութիւնը: Առաջին պայմանը կենսագործվում է լիուլի-իսկ երկրորդը և կարևորը՝ մնում անիրագործելի⁹³:

Ֆրանսիական իշխանութիւնների հետագա բռնութիւնները կիլիկահայերի նկատմամբ գալիս են հաստատելու այն միտքը, թե որքան անհիմն ու խախուտ էին Մ. Տամատյանի և կիլիկյան ինքնավարական շարժման պարագլուխների ու, մասնավանդ, Պողոս Նուբարի հավատքը դեպի Ֆրանսիական գաղութարարների բարեմտութիւնն ու մեծահոգութիւնը:

Ֆրանսիական գաղութարարների հայասիրական կեղծ դիմակը վերջնականապես պատռվում ու քողաղերծվում է մասնավորապես օգոստոսյան իրադարձութիւններից հետո: Նախ, 1920 թ.

⁹¹ Նույն տեղում, էջ 47:

⁹² Տե՛ս «Հայրենիք» լրագիր, 3-ը հոկտեմբերի 1920, № 2564:

⁹³ Տե՛ս «Պայքար» տարեգիրք, 1953, էջ 43:

աշնանը նրանք ցրում են Ադանայի Ազգային միությունը և նրա անդամների մեծ մասին արտաքսում Կիլիկիայից: Ապա նրանք քիչ ջանքեր չեն գործադրում հայրենի Կիլիկիայից վտարելու ուղղությամբ, դրանով իսկ հեշտացնելով Կիլիկիան հայազուրկ դարձնելու քեմալականների ծրագրի իրականացումը:

Այսպիսով, ֆրանսիական գաղութարարների հայադավ քաղաքականությունը, մի կողմից, և քեմալականների անվերջ հարձակումներն ու նորանոր խժոժությունները, մյուս կողմից, արգելակեցին կիլիկահայերի հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացումը, որի հետևանքով կիլիկահայությունը կորցրեց իր հայրենիքը և սփռվեց աշխարհով մեկ՝ էլ ավելի ստվարացնելով արդեն գոյություն ունեցող հայկական գաղթօջախները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Յ Ա Ն Կ

1. Մարտիզմի դասականներ

Վ. Ի. Անիև, *Ելժ*, հ. հ. 15, 21, 42:

2. Արխիվային նյութեր

ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գգ. 668, 672, 690, 761, 762, 745, 838, 2021, 2033, 2046:

ֆ. 200, ց. 1, գգ. 193, 290, 845:

ֆ. 282, ց. 1, գգ. 19, 26:

ՀՍՍՀ ՊԿՀՀԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 3:

3. Հրատարակված աղբյուրներ և գրականություն

Ադամյան Գ., *Կիլիկյան դրվագներ, Ֆրանսիական հերոսամարտը, Փարիզ, 1921:*

Արանասյան Ա., *Կիլիկիո մոտավոր անցյալին*, Փարիզ, 1937:

Անարոնյան Գ., *Մեծ երազի ճամփուն վրա*, Բեյրութ, 1964:

Անարոնյան Գ., *Հուշամատյան մեծ եղեռնի*, Բեյրութ, 1965:

Անեմյան Լ., *Եզիպտահայ տարեցույց*, 1925, *Ալեքսանդրիա*, 1924:

Անդրեսյան Տ., *Զեյթունի տարագրությունը և Սուեի ապստամբությունը*, Հալեպ, 1935:

Անտոնյան Ա., *Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները*, Բոստոն, 1921:

Ապահ, *Հայ արժիվներու բույնը (դրվագներ Զեյթունի 1895 թ. դեպքերին)*,

Կահիրե, 1918:

Գեորգյան Կ., *Ամենուն տարեգիրքը*, Բեյրութ, 1965:

Գալուստյան Գ., *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն*, Նյու-Յորք, 1934:

Եսայան Ա., *Հայաստանի միջազգային-իրավական դրությունը*, Երևան, 1967:

Զավեն Արեպիսկոպոս, *Պատրիարքական հուշերս, վավերագրեր և վկայություններ*, Կահիրե, 1947:

Զարթոնք բացառիկ, Բեյրութ, 1962:

Զեյթունցյան Ն., *Զեյթունի վերջին դեպքերը (1919—1921)*, *Ալեքսանդրիա*, 1922:

Թարաբյան Մ., *Կամավորի մը հուշերը*, *Անթիլիաս*, 1960:

- Թեոդիկ Ա., Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910:
- Թերզյան Հ., Աղանայի կյանքը, Կ. Պոլիս, 1909:
- Թերզյան Ա., Հանրի ութամսյա դուցազնամարտը, Բուստոն-Այրևս, 1956:
- Թյուրապյան Ա., Հայ ժողովուրդի դատաստանին առջև (1914—1924), Մարտի, 1925:
- Լազյան Գ., Հայաստան և հայ դատը, Կահիրե, 1946:
- Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
- Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935:
- Խաչատրյան Վ., Օրագրություն ուղևորության յմվրոպա Սահակ Բ կաթողիկոսին Կիլիկիո, Հալեպ, 1928:
- Կամավորը, Կահիրե, 1927:
- Կեննյան Ա., Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցությունը և Կիլիկյան ինքնավարության արթը (Կիլիկյան հուշեր պատմության համար), 1919—1921, Բեյրութ, 1958:
- Կեսար Ա., Այնթապի գոյամարտը, Բոստոն, 1945:
- Կիլիկիա, Փորձ աշխարհագրության արդի Կիլիկիո, Պետերբուրգ, 1894:
- Կիլիկյան կակիժներ, Վավերագրեր Կիլիկիո կաթողիկոսական ղեկավանն, 1903—1915, Բեյրութ, 1927:
- Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914—1916 թթ., Երևան, 1965:
- Կիրոս Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Բեյրութ, 1949:
- «Համազգային»-ի տարեգիրք, Բեյրութ, 1953:
- Հայ ժողովրդի պատմության, ԳԱ. հրատ. հ. VI, Երևան, 1981:
- Հայ ժողովրդի պատմության, ԳԱ. հրատ. հ. VII, Երևան, 1967:
- Ճիզմենյան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանը (1890—1925), Ֆրեզնո, 1930:
- Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967:
- Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալերը, Բեյրութ, 1938:
- Մխիթարյան Գ., Հուշեր և վերհիշումներ, Անթիլիսս, 1937:
- Մուշեղ Եպիսկոպոս, Աղանայի շարքը և պատասխանատուները, Բոստոն, 1910:
- Չոսմիսյան Լ., Կուսակցությունները, Բեյրութ, 1965:
- Պալաթյան Գ., Հայ գողոթան, զրվագներ հայ մարտիրոսագրություններն Բեռլինի դեպի Ձոր, հ. Ա, Վիեննա, 1922, հ. Բ, Փարիզ, 1959:
- Պահակ քաջառիկ, Բոստոն, 1921:
- Պապիկյան Հ., Աղանայի եղևոնը: Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի, Ֆրանսիա զր ֆրեսանների առաջաբանով, Կ. Պոլիս, 1919:
- Պամություն Ս. Գ. հնչական կուսակցության, հ. Ա, Բեյրութ, 1962:
- Պարբեյան Ա., Կիլիկյան արհավիրքը, Կ. Պոլիս, 1909:
- Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967:
- Պողոսյան Հ., Հանրի ընդհանուր պատմությունը և շրջակա Գողանդաղի հայ գյուղերը, Լոս-Անջելես, 1942:

- Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը 1909—1921 թթ., Երևան, 1969:
- Պոլյանյան Տ., Հայկական լեզուներ, Ուոթերթոն, 1965:
- Սաղբրյան Ս., Կեսղարյան հուշամատյան (1895—1945), Փարիզ, 1948:
- Սահակյան Թ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970:
- Սարաֆյան Գ., Պատմություն Անյթապի հայոց, հ. Ա և Բ, Լոս-Անջելես, 1953:
- Սերոբյան Մ., Գիտումներ և դատումներ, Բեյրութ, 1932:
- Տոլպազյան Ե., Ամենուն նոր տարեցույցը, Բեյրութ, 1937:
- Քելեշյան Մ., Սիս մատյան, Բեյրութ, 1949:
- Քելյան Ա., Կարմիր զրվագներ հերոսներու կյանքին, հ. Ա, Բ և Գ, Պուրթեշ, 1938—1940:
- Քյուրբեյան Վ., Հայկական Կիլիկիա, Նյու-Յորք, 1919:
- Օրմանյան Մ. Արքեպիսկոպոս, Ազգապատում, մասն երրորդ (1808—1909), Երուսաղեմ, 1927:

ՌՌԻՍԵՐԵՆ

- Акопян С. А., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967.
- Геноцид армян в османской империи, сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.
- Гранкур К., Тактика на Ближнем Востоке, М.-Л., 1928.
- Желтяков А. Д. Турецкое крестьянство—решающая сила в борьбе за национальное освобождение страны в 1918—1920 годах (канд. диссертации), Ленинград, 1955.
- История дипломатии, т. 2—3, Москва, 1963, 1965.
- Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, Москва, 1966.
- Кемаль Муштафа, Путь новой Турции (1919—1927), ч. 1—4, Москва, 1929—1934.
- Миллер А. Ф., Очерки новейшей истории Турции, М.-Л., 1948.
- Первый съезд народов Востока, Петроград, 1920.
- Раздел Азиатской Турции. По секретным документам б. министерства иностранных дел, под ред. Адамова, Москва, 1924.
- Саркисян Е. К., Экспансионистская политика османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.
- Шамсутдинов А., Национально-освободительная борьба в Турции (1918—1923), Москва, 1966.
- Эфендиева Н. З., Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии (1919—1921 гг.), Баку, 1966.

ՕՏԱՐ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ

- Ahmed Bedevi Kuran, Osmanlı imparatorluğunda ve Türkiye cumhuriyetinde inkilâp hareketleri, İstanbul, 1959.
- Akşin Aptülâhat, Atatürkün dış politika ilkeleri ve diplomasisi, İstanbul—Ankara, 1964.

Arikoğlu Damar, Hatıralarım. Milli mücadele Çukurovada. Fransız işgali ve kanlı savaşlar, İstanbul, 1961.

E. Brémond, La Cilicie en 1919—1920, Paris, 1921.

Dalkir Recep, Yiğitlik günleri. Milli mücadelede Çukurova, İstanbul, 1961.

Du Véou Paul, La passion de la Cilicie (1919—1922), Paris, 1954.

Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950.

M. Paillares, Le Kemalisme devant les Allies, Paris, 1922.

Şapolyo Enver Behnan, Kuvayı milliye tarihi, Ankara, 1957.

Söylemezoğlu Galip Kemali, Yok edilmek istenen millet, İstanbul, 1957.

Yazgan Fahriye ve Serdarlar Neriman, Türkiye cumhuriyeti tarihi (1918—1955), İstanbul, 1956.

4. Պարբերական մամուլ

Հասկ, Անթրիլիաս, 1950, №№ 7—8, 1951, № 1

Պայքար տարեգիրք, Բոստոն, 1950, 1951, 1953

Հայրենիք, Բոստոն, 1931, № 3, 1954, № 3, 1956, № 6

Бюллетень НКВД РСФСР, 1920, № 4, 1921, № 23, № 65.

Вестник НКВД РСФСР, 1920, № 9—10.

Լ ր ա գ ր ե ր

Չարթունք, Բեյրութ, 1952, №№ 2, 97, 245—246, 1953, №№ 97, 193, 237, 1954, №№ 99, 158

Հայրենիք, Բոստոն, 1920, №№ 2449, 2451, 2452, 2492, 2493, 2562, 2564, 2606, 2610, 2611, 2619, 2621, 2623, 2624, 2626, 1921, №№ 2657, 2665

ժամանակ, Կ. Պոլիս, 1919 թ. 24-ր մարտի

Վերջին լուր, Կ. Պոլիս, 1919 թ. 27-ր մարտի

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբառի 224

Արղույ Գատեր 27

Արղույ Համիդ 18

Աղամյան Գ. 56, 57, 255

Աղամյան 96

Աղատյան Հ. 192

Աթանասյան Ա. 6, 63, 110, 143, 225, 255

Ալեմբի 69, 78, 80, 81

Ալեքսանդր 3-րդ 40

Ալթոնյան Վ. 181

Ալի 22

Ալի Իհսան 76

Ալի Սաիր 75

Ակշին Արղույաճատ 41, 257

Ակո (Հակոբ) Չավուշ 57

Ահարոնյան Ա. 4, 84, 103—107, 121, 176

Ահարոնյան Գ. 6, 194, 255

Աճեմյան Գր. 151, 156, 158, 161, 165, 167

Աճեմյան Լ. 207, 255

Աճեմյան Խ. ԲՆ. 62, 65, 67

Աճեմյան Մ. 178

Անդրանիկ 181

Անդրե 115, 123, 145, 147, 148, 150, 151, 224

Անդրեասյան Տ. 55, 56, 255

Անտոնյան Ա. 49, 50, 58, 136, 255

Աշտարակեցի Ե. 126

Առաքել Նուրար 62

Ասլանյան Գ. Մ. Վրդ. 194, 218, 249

Ավետիս Չավուշ 57

Արթուրյան Գամար 9, 16, 18, 29, 30—32, 47, 258

Արմաղանյան ս. 189, 191, 192, 207

Բազիլի Ն. 44

Բահրի 20

Բայազիտ 2-րդ 11

Բայազիտ Զադե 145

Բայրաթարզազե բեքիր 27

Բայու 66

Բենլիվե Պ. 98

Բոհրի 26

Բրայս Ջեյմս 177

Բրեմոն Է. 9, 17, 75, 76, 79, 80,

82, 84, 85, 90, 97, 109, 111,

113—115, 120, 122, 123, 146—

148, 151, 158, 163, 164, 169—

172, 178—180, 183, 186—190,

201—204, 217, 222, 225—231,

233, 234, 238, 242, 244, 249,

250, 251—253, 258

Բրիտոն Ա. 62, 97

Բուլոն Ֆ. 98

Գարրիելյան Ս. 38

Գալաթյան Խ. 57

Գալաթյան Մ. 57

Գալեմբյարյան Ա. 221

Գալուստյան Գ. 4, 19, 90, 147, 154, 155, 158

Գալյան Մ. 181, 189

Գանյո 202

Գարակյոզյան Մ. 37

Գյուտ 55

Գոզնաբի 15

Գրանկուր Կ. 119, 120, 257

Գրիգորյան 96

Գուտուլյան Գ. 17

Գուրո 151, 158, 174, 217, 249—251

Գևորգ 5-րդ կաթողիկոս 95, 98

Գևորգ Չավուշ 201
Գևորգյան Կ. 49, 255

Գալբերր Ռեզեպ 9, 88, 184—186,
195, 208, 209, 258

Գամատ Ֆերիտ 135, 136, 138, 139

Գամլամյան 96

Գ'Աննունզյիտ 134

Գալի Զադե 145

Գելանել 219

Գերվիշ 12

Գրնի Քոչեր 98

Գր Փրեփափ 82

Գր Քեն Ռ. 224, 225

Գր Օնեյ Կ. 98

Գյումեն 160

Գյու Վեու Պոյ 9, 71, 78, 80—
82, 85, 109, 112, 117, 139, 147,
148, 152, 153, 158—162, 166,
167, 171, 172, 177, 201, 204, 214,
215, 224, 258

Գյուֆինո 152, 154, 158, 160, 169,
171—173, 180, 187, 193, 201,
204, 215, 227, 228, 233, 253

Դոդան Կոզուն օղլու 196, 197, 208,
209

Ծղեկիելյան Վ. 205

Նսայան Ա. 133, 143, 255

Նրկաթ Ռ. 181

Նրկաթագործյան Ռ. 181

Նփրեմյան Մ. 191, 192

Չավեն Արքեպիսկոպոս 36, 37, 46,
107, 183, 216, 255

Չատիկյան Ս. 68

Չելվուեցյան Ն. 85, 255

Չինովե 34

Էզանյան Ռ. 85

Էլիոթ Մ. 166, 168

Էնվեր 42, 43, 49, 109, 133, 134

Էնվեր Բեհնան Շապուլո 9, 132, 150,
151, 175, 258

Էտհեմ 22

Էֆենդյիևա Ն. 8, 42, 71, 72, 79, 80,

112, 120, 174, 257

Թաղվորյան Ս. 21

Թաթարյան Մ. 68, 255

Թալեաթ 42, 49, 51, 58, 133

Թալարդա Պ. 179, 182—185, 187,
188, 193, 220

Թեոդիկ Ա. 35, 256

Թերզյան Հ. 15, 21, 27, 256

Թերզյան Պ. Պ. ԺԳ 98

Թերզյան Ս. 4, 5, 18, 185, 186,
188, 190, 194, 196—199, 205,
206, 210—212, 256

Թերզյան Պ. 181, 193

Թերեյան Տ. 70, 71

Թիրուտ 152, 153

Թյուրապյան Ա. 64, 107, 108, 256

Թուր-Սարգիսյան Պ. 178, 179, 185

Թուֆան Օ. 147, 208

Ժամկոչյան Վ. 249

Ժան 249, 250

Ժելտյակով Ա. 8, 86, 87, 111, 175,
180, 257

Ժուլիեն 193

Ժորժ Պիկո 61, 70, 96, 97, 143

Իրի 196

Իրրահիմ 12

Իրրահիմ զոկ. 191, 224

Իրրահիմ Տալի 42

Իսմայիլ 12

Իսմայիլ Սեֆա 31

Իստվուտ 118

Լազյան Գ. 65, 106, 256

Լամի Է. 98

Լաշինյան 184

Լենին Վ. Ի. 102, 140, 255

Լեո 6, 7, 64, 99, 256

Լեսլի 81, 120

Լերկ Ժ. 98

Լիման Ֆոն Սանդերս 39, 67

Լյույզ Զորջ 176

Լյուպեր 111

Լոթի Պիեր 102

Լորան 233

Լուդշուվեյտ Ե. 42, 43, 67, 112, 257

Լուսինյան Ք. 125

Լևոն 4-րդ 10

Լևոնյան Ա. 221

Խաչատրյան Հ. 186

Խապայան Սահակ 27, 37, 50, 51,
55—57, 59, 95, 173, 218

Խոջա Իզզեթ 19

Խրիմյան Հայրիկ 22

Խուպեհերյան Վ. 6, 123, 173, 192,
218, 256

Սիրենց 21

Կայծակ Ա. 181, 205, 207, 208, 210

Կամբոն 61

Կապիստի 40

Կարա Հասան 152

Կարալ Էնվեր Զիյա 41

Կարոյան Ե. ծ. եպ. 183

Կենեյան Ա. 5, 99, 182, 188, 190—
193, 235, 240, 242, 244, 245,
249, 250, 251, 256

Կեպեղյան Ս. 230, 231, 241, 242,
250, 251, 252

Կեսար Ա. 6, 16, 90, 94, 256

Կեստնի Ա. 19

Կերկելի Ա. 27

Կիզ Մ. 251

Կիզիրյան Կ. 53

Կիտուր Ա. 21, 256

Կիրակոսյան Զ. 8, 49, 256

Կլեյտոն 61

Կլեմանտ Ժ. 98

Կլոտ Ֆարտեր 102

Կյուլիյան 221

Կյուլպենկյան Գ. 94

Կուլա 196

Կորենլուպ 152, 153, 159, 161

Կուզաշև 44

Կուրան Բ. 23

Հակոբյան 22

Հակոբյան Ս. 40, 257

Համբարյան Ա. 8

Համլեն 78, 80

Հայդար 54

Հայրենյան 96

Հանըմյան Ա. 65

Հաշիմ 79, 111, 113, 114

Հաշի Գ. 185

Հերյան Ռ. 94, 191

Հերպերտ 106

Հյուպիլ-օղլու 11

Հոջա Ֆախրետտին 224

Հովակիմյան Հ. 178

Հովսեփ 57

Հուսեյն Հյուսնի 54

Հուսեյն Ռատֆ 74

Ճեպեճյան Ս. 181, 195, 197

Ճերեճյան Վ. 208

Ճիզմեճյան Մ. 6, 184, 256

Ճիլերյան Տ. 181

Մարթեր Մյուրե 155, 158, 165, 167,
168, 176

Մալեզյան Վ. 96

Մալեզյան (Մալոնյան) 234

Մահմուդ 2-րդ 11

Մանիսեճյան Մ. 181

Մանկոյան 96

Մանուկյան Ա. 94

Մաշ 115, 179

Մասեճյան 96

Մավրոմատի 34, 37

Մարթի 152, 153

Մենակ Գ. 165, 168

Մեմլան զադե Բիֆաթ 133—136, 256

Միզատ 147

Միլերան 219

Միլեր Ա. 257

Միլիթարյան Գ. 217, 218, 256

Մնացականյան (Բժիշկ) 96

Մնացականյան 243, 249, 250

Մոստիլյան Հ. 33

Մորրիեո 150

Մուհեդտին 28

Մուշեղ եպիսկոպոս 25, 27, 28, 32, 256
 Մուստաֆա 162, 163, 175
 Յազղան Ֆահրիե 9, 23, 132
 Յուզենիչ 25, 34
 Յուսուֆ (քուրդ) 115
 Նազարեթ Չավուշ 54
 Նազըմ 26, 113, 114
 Նաթանյան Մ. 4, 62, 137
 Նալբանդյան Մ. 21
 Նալպանտյան Կ. 250
 Ներսես 37
 Նիքոլաբի 250
 Նորման 158—163, 171—174, 180
 Նուրի 224
 Շահնազարյան Կ. 21
 Շամսուտդինով Ա. 8, 175, 257
 Շըխրտըմյան Մ. 181
 Շիշմանյան Ճ. 68, 89, 228, 232, 251
 Շյուքրի 133
 Չազմագճյան Գ. 12, 19, 89, 115, 118
 Չալյան Կ. 186—188
 Չալճյան Հ. 181, 189
 Չանգալյան Ե. 83, 197, 228
 Չարբկով 34
 Չափան-օղու 11
 Չոպանյան Ա. 113
 Չորմիսյան Լ. 73, 256
 Պալաքյան Գ. 45, 50, 51, 58, 59, 110, 256
 Պալիոլոպ 44
 Պալարես Մ. 9, 98, 100, 102, 108, 110, 138, 139, 156, 176, 215, 224, 258
 Պապաշանյան Մ. 61
 Պապիկյան Հ. 27, 29, 31—34, 256
 Պասթանճյան Ս. 52
 Պարթևյան Ս. 33, 35, 51, 256

Պարպուր 249
 Պարսամյան Վ. 7, 14, 24, 256
 Պեղիբեկյան 250
 Պիշո 105
 Պողոս Նուբար 61, 62, 64, 73, 98, 103, 105, 107, 218, 253
 Պողոսյան Հ. Պ. 10
 Պողոսյան Հ. 4, 8, 11, 13, 29, 52, 53, 178, 179, 181, 182, 188, 190, 194, 206, 207, 209, 256
 Պոյաճյան Ա. 55
 Պոյաճյան Տ. 6, 61—63, 70, 71, 83, 84, 94, 95, 117, 118, 121, 124, 126, 127, 129, 170, 189, 191—193, 207, 220, 224, 227, 230, 232, 233, 257
 Պուանկարե 98
 Ջավիդ 40
 Ջեզմի 185
 Ջեմալ 43, 50, 51, 59
 Ջեմիլ 229
 Ջեհատ 28, 31
 Ռաշիդ 235
 Ռատֆ 42
 Ռելատ Հիրմեթ 74
 Ռեմզի 22
 Ռենոն Լ. 98
 Ռընե Բինոն 98
 Ռիզա Ահմեդ 117
 Ռոլան Լուի 83, 84
 Ռոմիեո 63, 69—71, 78, 79
 Սաադուլլա 74
 Սաաթճյան Ե. 163—167
 Սալիհ 139
 Սահակյան Ե. 138
 Սահակյան Ռ. 7, 257
 Սաղբրյան Ս. 6, 50, 52, 90, 91, 257
 Սամարյան 96
 Սալբու Մարի 61, 63
 Սալյան Ա. 197, 198
 Սապուհ-Գյուլյան Ս. 65, 102
 Սարաճյան Պ. 181, 186, 190, 194

Սարաֆյան Գ. 5, 16, 19, 46, 52, 59, 257
 Սարգսյան Ե. 7, 8, 42, 257
 Սարգսյան (բժիշկ) 96
 Սարգսյան (բուժ. բույր) 96
 Սարբո Ս. 98
 Սեսիլ Ռ. 177
 Սերդարլար Ն. 9, 23, 132
 Սերոբյան Մ. Շ. 115, 123, 202, 257
 Սըտկի 147
 Սիմեոնօղու Ա. 249
 Սիմոնյան Ճ. 192
 Սոլաքյան Ա. 157
 Սոմերսեթ Քալթոբի 74
 Սվաճյան Հ. 21
 Սվզնյան Գ. 181
 Սուբիսի 141
 Սուլեյման 54
 Սուլեյման Նուրի 141
 Սևակ Մանասե 240
 Վազարդին Շաքիր 42
 Վանգենհայմ 51
 Վարդանյան 96
 Վենիզիլոս 234
 Վերածին Մ. 189, 213, 230, 238—241, 243—245
 Վեթիլյան Հ. 192
 Վիլսոն 162, 163
 Տամատյան Մ. 3, 65, 91, 115, 122, 123, 125, 126, 129, 137, 169, 170, 173, 183, 187—190, 194, 201, 202, 206, 207, 212, 213, 215—217, 219, 224, 228, 230—235, 237, 238, 241—245, 249—253
 Տարտաղանյան Ե. 182, 183
 Տափեղիտի Ճ. 249
 Տեր-Վարդանյան Հ. 57
 Տիգրանյան Պ. 106

Տուպազյան Ե. 178, 179, 180, 257
 Տրդատյան Հ. 181
 Բեֆիբե Խալիտ 134
 Ուրան Էսատ 9, 18, 23—25, 31, 32, 34, 258
 Փափան օղու Մ. 115
 Փորթուգալյան Վ. 70, 71, 191, 192
 Փորթուգալյան Լ. 228
 Փոսթոյան Շ. 182, 186
 Քանիրազե Սալիդ 27
 Քաջբերունի 96
 Քարամյան 96
 Քելեշյան Մ. 5, 50, 89, 93, 184, 219, 220, 257
 Քեհյան Ե. 57
 Քեղյան Ա. 58, 89, 95, 241, 257
 Քեմալ Յ. 31
 Քեմալ Մ. 74, 75, 77, 97, 100, 102, 132—141, 143, 144, 146—148, 152, 174, 177, 197, 224, 234, 257
 Քերեթ 152—154, 158, 160—163, 172, 174, 175
 Քերիբեյան Հ. 249
 Քըրը Ս. 147, 152
 Քիրեճյան Ա. 179, 186
 Քյոբ Ահմեդ 28
 Քյուրբեճյան Վ. 17, 257
 Օղուզյան Կ. 181, 182
 Օսման 12
 Օտյան Գր. 21
 Օրմանյան Մ. 17, 257
 Ֆալիդ 33
 Ֆիլիպոս 249
 Ֆլանդին Է. 98
 Ֆլի Սենթ Մարի 150, 233
 Ֆոն դեր Հուլց 39
 Ֆրանս Անատոլ 98

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբղղու 232
 Ագապե, թաղամաս, 114
 Ադանա 12, 15—19, 21, 25—34, 36, 37, 47, 50, 52, 53, 58, 79—82, 84, 85, 90—97, 113—115, 128, 140, 145, 146, 154, 158, 170, 171, 174, 178, 179, 182—184, 186, 187, 189—191, 193, 199, 200, 202, 204—206, 208, 210, 212, 215, 217—219, 227, 229—233, 243, 245, 249, 252, 254
 Ազիզիի շրջան 145, 209
 Աթ-իլի, դաշտ, 160, 163, 164, 166
 Ալապաշ, հայկական գյուղ, 147
 Ալրիստան, գավառ, 12, 17, 149, 152
 Ալեքսանդրես 17, 70, 78, 82, 83, 116—118, 120, 121, 125, 147
 Ալեքսանդրիա 16, 85, 207
 Ալեքսանդրեսի շրջան 40
 Ալեքսանդրեսի ծոց 44
 Ալժիր 14, 123
 Ախարճա 207, 232
 Ակ-սու գետ 116, 175
 Աղթամար 59
 Ամանոս 128, 227
 Ամանոսի լեռներ 57, 114, 115
 Ամասիա 139
 ԱՄՆ (Ամերիկա) 15, 65, 106, 107, 108, 122, 177
 Այաս 33
 Այնթապ 4, 12, 15—17, 22, 33, 36, 59, 79, 80, 81, 85, 88, 90, 94, 128, 146, 147, 150—153, 175, 203, 221—225

Այրանի շրջան 58, 123
 Անատոլիա 97, 109, 133—137, 139, 142, 143, 146, 224
 Անգլիա 15, 39, 41, 44, 80, 82, 100—102, 135, 143, 176, 177
 Անդրբրն 209
 Անդրհորդանան 60
 Անթիլիաս 4, 68, 217
 Անկարա 134, 137, 139—142, 224
 Անտիոք 17, 22, 37
 ա. Աստվածածին, Եկեղեցի, 155, 156, 206
 Ավստրիա 42
 Ատլանտյան օվկիանոս 65
 Արարիա 248
 Արարա, լիս, 69, 70, 72
 Արեհիք 16, 39, 40, 69, 77, 83, 94, 101, 102, 107, 141—142
 Արեմտյան Հայաստան 40, 45, 54, 60, 90
 Արևմուտք 143
 Աֆղանստան 39
 Աֆրիկա 207

Բաղդատ 77, 80, 121
 Բաղշե, գավառ, 28, 33, 57, 152
 Բաղշե-Բուլանլի 17
 Բաքու 8, 42, 142
 Բել-փունար, գյուղ, 153, 163
 Բելլան 33
 Բելլոսթ 4, 5, 6, 16, 21, 28, 49, 58, 65, 70, 71, 73, 74, 83, 94, 133, 158, 170, 171, 178, 194, 215, 224, 227, 241, 250
 Բողանլի, քաղաք, 77, 79, 126, 209, 225, 227

Բոստոն 4, 6, 26, 49, 137
 Բորգո, նավահանգիստ, 65

Գայիլի, թաղամաս, 154
 Գասթ էլ հարամի, թաղամաս, 114
 Գերմանիա 38, 39, 40, 42, 43, 101, 122
 Գյոթունի շրջան 145, 149, 209
 Գուլադը բուրջու, թաղամաս, 154
 ս. Գևորգ, Եկեղեցի, 52, 53, 155

Դամասկոս 74, 105
 Դաշտային Կիլիկիա 19, 128
 Դեվլի 209
 Դերբեքոյ, գյուղ, 57
 Դիարբեքիր 152
 Դյոբլ-յու, բնակավայր, 17, 21, 33, 36, 37, 54, 78, 82, 90, 94, 112, 128, 226, 227, 231, 232, 233
 Դոնուլ-սեբի, բլուր, 181, 207

Եգիպտոս 10, 14, 32, 41, 61, 118
 Եվրոպա 45, 65, 104, 218, 248
 Երուսաղեմ 13, 59, 66, 69
 Երևան 7, 8, 20, 40, 133
 Եփրատ 79

Չեյնուն 10—12, 15, 17, 19, 21, 22, 26, 33, 37, 54—56, 59, 85, 88, 89, 128, 207, 226
 Չժյուտնիա 16, 105

էլ-Օղլու, հայաբնակ գյուղ, 147, 152, 159, 160
 էսկիշեհիր, քաղաք, 142

Թումլու 191
 Թաշճըզ 232
 Թերրա Սանտա, Եկեղեցի, 155
 Թրլան 210
 Թիֆլիս 6, 141
 Թոփրակ-Կալե, բնակավայր, 78
 Թրբահայաստան 64
 Թումլու- գալե 191
 Թունիս 41

Թուրքական Ասիա 72
 Թուրքիա 14, 22—24, 38—44, 51, 59—61, 63—65, 70, 71, 74, 75, 80, 82, 101, 102, 131, 133—135, 137—143, 147, 174, 219, 234, 235, 247, 248

Իժ-Օլուզ, շրջան, 181
 Ինթիլիի շրջան 58
 Իլիլ (Սեյկիկիա) 12
 Իսթամբուլ, տե՛ս Կոստանդնուպոլիս
 Իսլահիե, բնակավայր, 57, 78, 114, 151, 152, 153, 158, 159, 161, 166, 169, 170, 175
 Իտալիա 45, 101, 143
 Իրան 39

Լափաշլը, գյուղ, 33
 Լեմնոս, կղզի, 74
 Լենինգրադ 8
 Լեոնային Կիլիկիա, տե՛ս Կիլիկիա
 Լիրանան 13, 60, 70
 Լոնդոն 61—63, 72, 103, 218
 Լոս-Անջելես 4, 5
 ս. Լուսավորիչ, Եկեղեցի, 52

Խառնը, գավառ, 57
 Խարբերդ 15, 88, 217

Կահիրե 22, 46, 61—63, 66
 Կամա 41
 Կապան, հայաբնակ գյուղ, 10, 147
 Կարաթաշ, նավահանգիստ, 207
 Կարին 88
 Կարս 28
 Կարս-Բաղար 17
 Կեսարիա 52, 209
 Կիլիկիա 3, 14—19, 21, 22, 25, 27, 32, 35—37, 39, 40, 44, 45, 47, 50, 52—54, 58, 59, 73—75, 77—84, 87—100, 102—109, 111—116, 119—123, 125—129, 132, 137, 138, 143, 146—148, 152, 172, 174, 175, 184, 188—

190, 200—203, 210—212, 214—
219, 224—227, 233—238, 240—
242, 244—251, 254

Կիլիկիայի դարպաս 77

Կիլիկիան միջագետք 244

Կիպրոս 61, 63, 65, 66, 71, 78

Կիրիտի, գյուղ, 232

Կյոյննկի շրջան 181

Կյուզեղիմ, գյուղ, 207—209

Կոզան, տե՛ս Սիս

Կոզանլը 221

Կոկիսոն 17

Կոնյա, քաղաք, 109, 139

Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) 3, 9,
15, 16, 19, 21, 23, 26, 28, 29,
34, 35, 40, 45, 50, 51, 59, 77,
88, 102, 105, 113, 134, 135,
137—140, 217

Կովկաս 40, 41

Հալեպ 6, 11, 12, 13, 17, 19, 22,
26, 32, 36, 55, 57, 74, 83, 94,
105, 114

Հաճըն 4, 5, 10, 15—17, 19, 21,
22, 26—28, 33, 36, 37, 52, 54,
59, 85, 90, 94, 128, 157, 177—
190, 193—195, 197—213, 219,
226, 243

Համիդիե, գյուղ, 33

Համիդիե-Ջիհան 17

Հայաստան 3, 10, 80, 92, 98, 99,
103—107, 121, 124, 131—133,
135, 136, 143, 212, 213, 238,
245, 248, 249

Հայկական լեռնաստան 105

Հայֆա 86

Հասան-Բեյլի 33

Հարունիե 94

Հյուսիսային Աֆրիկա 41

Հյուսիսային Սիրիա 13

Հնդկաստան 39, 41

Հովուս, վայր, 116

Հորդանան, գետ, 66

Հունաստան 14, 143

Ղանլը-փազար 209

Ղարդա փազար, վայր, 184, 185

Ղըզըլ-աղաջ 152

Ղրիմ 41

Ճամաա բազազ, թաղամաս, 114

Ճամըսթըլ, հայաբնակ գյուղ, 147

Մարաշ 4, 12, 15—17, 21, 22, 26,
36, 40, 54, 55, 59, 79, 80, 81,
88, 89, 90, 94, 128, 132, 145—
155, 157—172, 174—177, 182,
214, 216, 218, 219, 221, 223,
224, 227

Մարոկկո 123

Մարսել 64, 65

Մերձավոր Արևելք 38, 40, 101

Մերսին, քաղաք, 15, 16, 17, 19,
20, 34, 36, 44, 78—80, 83, 90,
94, 121, 146, 226, 231, 246

Միջագետք 39, 44, 54, 59, 70, 77,
82, 248

Միջերկրական ծով 40, 65, 66

Միսիս 33, 190—192, 220

Միրմանդա 232

Մոնարկա, բնակավայր, 65

Մոսկվա 8, 39, 41, 42, 74, 119

Մոսուլի վիլայեթ 45, 79

Մուղրոս 70, 74, 75, 77, 79, 80, 83,
86

Յարփուզ 17

Յենիճե 126, 226

Յենիճե-կալե, հայաբնակ գյուղ, 147

Յըլըզլի պալատ 26

Յոզղատ 11

Յումուրթալըք, նավահանգիստ, 44

Նաբլուս, քաղաք, 66

Նաջարլը 28

Նյու-Յորք 4, 17, 89

Նուբարյան մատենադարան 3

Շապանիե, հայկական թաղամաս, 30

Շար, գյուղ, 198, 199

Շելիս-Մուրադ, հայկական գյուղ, 28,
33, 115

Շելիս Ճամիսի 221

Շեքեր-գերե, թաղամաս, 155

Չաթախ 53

Չալդան 181

Չալլը, գյուղ, 232

Չավուչու, թաղամաս, 154

Չիչեբլի, թաղամաս, 154

Չոք-Մարզվան, տե՛ս Դյուրթ-Յոլ

Պազարճըք, հայաբնակ գյուղ, 147

Պաղեստին 12, 39, 44, 60, 61, 65,
72, 74, 248

Պալաս 29, 33, 112

Պապ ուլ Ճընեյնի, թաղամաս, 114

Պալ ուլ Նասրի, թաղամաս, 114

Պետրոգրադ 17, 42

Պերթուֆիե, թաղամաս, 154

Պորտ-Սալիդ 61, 65, 66

Պուրթեշ 58

Ջերիկ 123

Ջերիկ-Բերեբեթ (Օսմանիե) 12, 146,
147, 148

Ջիհան 191, 210, 227

Ջիհուն, գետ, 26, 77, 232, 244

Ռաֆաթ, գյուղ, 69

Ռաֆաթ-Արարա (Հաուարա), բար-
ձունք, 66, 67, 69

Ռումելիա 30, 146

Ռումլու, գյուղ, 193, 207, 208, 209

Ռուսաստան (ՌՍՖՍՀ) 39, 40, 44,
45, 102, 123, 142

Սաղըր-սերի 210

Սամարա 67

Սանկուս, թաղամաս, 114

Սան Ռեմո 235

Սասուն 22

ս. Սարգիս, եկեղեցի, 155

ս. Սարգիս, լեռ, 194

Սարոնի դաշտավայր 67

Սելանիկ 48

Սեքենլեր, թաղամաս, 154

Սըլոք, վայր, 178

Սիհուն, գետ, 26, 77, 232, 244

Սիս 5, 10, 12, 13, 17, 21, 33, 59,
90, 115, 146, 178, 179, 182—
184, 188—194, 197, 198, 203,
204, 209, 219, 220, 225, 227,
241, 243

Սիրիա 12, 44, 45, 47, 54, 59—
61, 70, 72, 74, 77, 78, 82, 104—
108, 110, 122, 143, 162, 247—
249

Սուլաբը 232

Սովետական Հայաստան 3, 4

Սովետական Ռուսաստան, տե՛ս
ՌՍՖՍՀ

Սվազ 143

Ստամբուլ 77 (տե՛ս Կ. Պոլիս)

Սուեզի ջրանցք 47

Սև ծով 40, 104

Վահկա (Ֆեքե) 17, 178, 185, 209

Վան 55, 88

Վոլգա 41

Տավրոս 10, 75

Տավրոսյան լեռնաշղթա 44

Տարսոն (հետագայում՝ Մերսին) 12,
33, 79, 90, 94, 114, 115, 231,
246

Տեվեհիլի, թաղամաս, 154

Տիգրանակերտ 15, 45

Տիգրիս 79

Տրապիզոն 134

Ուլու ճամի 27, 154

Ռանբյար-Իսթեյնսի 12

Ռոթթաուն 6

Ռոֆա 79—81, 146, 152, 160, 161,
214, 227

Փարիզ 3, 4, 6, 9, 56, 62, 63, 78,
96, 103, 122, 124, 143, 148, 183,
212

Փորք Ասիա 17, 61, 103, 132

Օսմանյան կայսրություն 11, 12, 13, 15, 23, 33, 40, 133, 143, 248

ա. Քառասուն մանկանց եկեղեցի 155—157, 165

Ֆամակուստա 65

Քասթելորիզո 65

Ֆրնտրճազ, հայարնակ գյուղ, 33, 56, 57, 85, 147, 151

Քարաքիլիսի, գյուղ, 232

Ֆրանսիա 9, 15, 39—41, 44, 61, 62, 64, 65, 72, 73, 78, 80—82, 97—109, 116, 121—123, 125, 126, 135, 143, 144, 148, 162, 163, 172, 182, 200, 211, 218, 219, 225, 235, 237, 238, 246, 248, 249, 252

Քեշիֆլի 57

Քեսաբ 33

Քըշլա-Մեյդան, գորանոց, 30

Քըբըթ-հան, գյուղ, 33

Քիլիս 17, 81, 88, 221

Քուզուլուջու, գյուղ, 232

Քուրդ Պաղը 115

Յնազլը, գյուղ, 232

Ֆրեզնո 6

Յսմանիե 17, 33, 94, 112, 147, 150

Ֆոնուզ, գյուղ, 85, 147

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ	
Կիլիկիեայերի պատմական անցյալից	10
ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ	
Մուրթոսի զինադադարը և Կիլիկիան 1919 թվականին	74
ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐԴ	
Կիլիկիայի հայերի ինքնապաշտպանական կոիվները 1920 թվականին	128
ա) Մարաշի նահանջը և աղետը	145
բ) Հաճընի հերոսական ինքնապաշտպանությունը	177
ԳՆՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ	
Կիլիկիայի ինքնավարության հռչակումը	214
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	255
Անճանաչողների ցանկ	259
Տեղանունների ցանկ	264

ԹՈՐՈՍՅԱՆ ՇՄԱՎՈՆ ԹՈՐՈՍԻ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՅԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1919—
1920 թթ.

Հրատարակության է ներկայացրել համալսարանի
հայ ժողովրդի պատմության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝
Գ. Գ. Բրուսյան

Նկարիչ՝ Լ. Ա. Սաղոյան

Գեղարվեստական խմբագիր՝
Ն. Ա. Թովմասյան

Տեխնիկական խմբագիր՝
Հ. Ս. Ալվրցյան

Վերստապող սրբագրիչ՝
Մ. Գ. Յավրյան

ԻԲ 717

Հանձնված է շարվածքի 09.07.1986 թ.
Ստորագրված է տպագրության 08.01.1987 թ.
ՎՅ 00601: Չափսը 84×108¹/₃₂: Թուղթ տր-
պագրական № 1: Տառատեսակը «Սովորական»:
Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակ-
չական 13,8 մամուլ: Տպագրական 8,5 մա-
մուլ = 14,3 պայմանական մամուլ: Տպարա-
նակ 5000: Պատվեր 1815: Գինը՝ 1 ո. 60 կ.:
Երևանի համալսարանի հրատարակչություն,
Երևան, Մռավյան փ. № 1:

Издательство Ереванского университета,
Ереван, ул. Мравяна, № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան,
Աբովյան փ. № 52:

Типография Ереванского университета,
Ереван, ул. Абовяна, № 52.